ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

ԱԼՔԻՄԻԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

КАРО КАФАДАРЯН

АЛХИМИЯ В АРМЕНИИ В ИСТОРИЧЕСКОМ ПРОШЛОМ

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1940

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

5ա(47.925)(09
Ղ-54
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

ԱԼՔԻՄԻԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1940

Տպագրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության որոշմամբ:

A II/5127

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

1. *Алхимия в Армении в историческом прошлом (краткое сообщение)* 5

2. Մասն Ա. Ներածություն

I. *Ծածկագրեր և գաղտնանուններ* 13
II. *Ալքիմիական ձեռագրերը* 32
III. *Նյութերը խմբավորելու փորձերը* 40

3. Մասն Բ. Բնագրեր քաղած ձեռագրերից

I *Խրատներ և բացատրություններ* 57
II *Գործողությունների նկարագրեր* 77

4. Մասն Գ. Բառարան նյութերի անունների, գաղտնանունների և արտասովոր դարձվածքների 121

5. Համառոտագրություններ 165

Ձ-իր Ա.—Գրական Թանգարանի № 753 ձեռագիր
» Բ—Ձի օգտագործված այս հրատարակության մեջ
» Գ—Գրական Թանգարանի № 752 ձեռագիր
» Դ—նույն Թանգարանի № 1291 ձեռագիր։

АЛХИМИЯ В АРМЕНИИ В ИСТОРИЧЕСКОМ ПРОШЛОМ

(Краткое сообщение)

Первые рукописи по алхимии проникли в Армению из Аравии, во времена арабского влияния, вместе с другими, имеющими практическое значение рукописями („Коневодство" и „Книга земледелия" *(Գիրք վաստակոց)*).

Точно установить время проникновения в Армению алхимии пока невозможно ввиду недостаточности имеющихся в нашем распоряжении источников. Но мы знаем, что в Киликийский период уже были армянские переводы, например: в Парижской National Bibliotheque рукопись № 248 (Ancien fond armènien 109) стр. 59 V° начинается статьей, о которой Fr. Macler пишет, что этот отрывок алхимии переведен на армянский язык с персидского по просьбе царя Этума (1244—1269) диаконом Степаносом.

О „тайном искусстве" древние историки не упоминают. Впервые об этом пишут в XII в. киликийские авторы Саркис Шнорали и Нерсес Ламбронаци.

Заимствовав алхимию у арабов, армяне не пошли по пути рабского повторения и на основании новых опытов обогатили рукописи дополнительными записями.

Из армянских алхимиков, являющихся авторами целого ряда открытий, известны: Даниел Абега армянский, Оган Тохатци, тер-Арутюн Эрзерумский, Дбир Микаэл, сын Овсепа, и другие, которые в рукописях значатся как авторитетные лица.

Свою рукопись сын Овсепа Дбир Микаэл составил в 1629 г., остальные же названные алхимики армяне жили ранее XVII в., так как все они уже упоминаются в этой

рукописи. В Киликийский период (XIII в.) армяне переводили и персидские рукописи по алхимии, что видно из приведенной выдержки из каталога Fr. Macler-a, где говорится о переводе с персидского, в дни Этума, по его просьбе, отрывка, начинающегося со страницы 59 рукописи № 248.

Это сведение весьма сомнительно, так как в древности слово *ի պարսկաց* (с персидского) часто путали с *ի տաճկաց* (с арабского).

Несколько позже из Европы в Армению проникли труды европейских алхимиков с описаниями многих разнообразных технологических процессов. Это произошло не позже XV—XVI в.в., так как в начале XVII в. уже имелись не только одни переводы, но и различные варианты и редакции этих переводов.

В этот период труды Абусины вновь переводятся на армянский язык, но уже не с арабского подлинника, а с латинского перевода. Например, приписываемый Абусине отрывок § 261 переведен с латинского: в нем, взамен арабского влияния, сильно заметно латинское.

Тогда же переведены на армянский язык некоторые известные работы знаменитых европейских алхимиков. Из этих переводов особенно достойны упоминания труды *„Доминикос“* и *„Ричард де Фюрниваль“*.

В XVIII столетии борьба между химией и алхимией проникла в Армению.

В начальной стадии эта борьба ограничивалась исключительно вопросами теоретического характера и, в частности, рядом обобщений, относящихся к свойствам веществ, а в практической работе она почти не проявлялась.

Об этом говорит то обстоятельство, что характер сочинений сторонников химии немногим отличается от записей алхимиков.

Если в теоретических вопросах алхимики стремились к разрешению неосуществимых задач, то в практической работе, в результате разнообразных опытов, они сделали

много открытий, которые впоследствии были унаследованы химией. В этой неравной борьбе, в конце концов, была сокрушена алхимия, окончательное поражение которой произошло в Армении довольно поздно. Еще в первой половине XIX столетия встречались люди, пытавшиеся испробовать свои силы в этой области; живший в XIX веке ванский армянин Карумисян занимался алхимией.

Практические результаты работы алхимиков и сейчас находят применение у сельского населения особенно в деятельности кустарей ремесленников. Окраска шерстяных материй, выделка сыромяти, добывание „калакар"-а из растения „шоран" (на местном наречии), литье металлов кустарным способом и пр.—все это унаследовано от алхимии.

Сельское население Октемберянского района до сих пор пользуется пеплом „калакар", химический анализ которого выявил щелочные соли: натрий углекислый (сода) 20% и калий углекислый (поташ) около 11%, которые в настоящее время применяются на заводах для изготовления мыла. Повидимому, с древнейших времен население применяет пепел „калакар" для той же цели.

Если не принимать в расчет отрицательные стороны алхимии (стремление получить золото в целях обогащения), то надо признать, что в народной экономике Армении она сыграла в прошлом крупную положительную роль.

К. Кафадарян

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայկական գիտական գրականությանը հայտնի չէ ալքիմիան, որ երբեմն գոյություն է ունեցել Հայաստանում։ Այս ուսումնասիրությամբ աշխատել ենք, ձեռագրական մնացորդների հիման վրա, տալ ալքիմիայի պատմական անցյալը։ Որպես ոչ մասնագետ քիմիկոսի կողմից կատարվող առաջին փորձ, հարկավ, այս աշխատությունը զերծ չի լինի թերություններից. այնուամենայնիվ այս աշխատանքը տպագրության ենք հանձնում իբրև մի ուղեցույց, որն առիթ կծառայի հիմնավոր ուսումնասիրությունների, որոնց պակասը խիստ զգալի է բնական գիտությունների անցյալը լուսաբանելու տեսակետով։

Վերջում հարկ ենք համարում զգուշացնել մեր ընթերցողներին, որ մեր այս աշխատությունը լոկ բանասիրական մի գործ է և բնավ հավակնություն չունի քիմիայի մասնագիտական խնդիրները շոշափելու։

Կ. Ղ.

1940 թ. հունիսի 25.

Երևան

Մ Ա Ս Ն
Ա
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաքել Դավրիժեցու Պատմության մեջ թանկարժեք քարերին վերաբերող մի հատված կա։ Պրոֆ. Ք. Պատկանյանն այդ հատվածը ռուսերենի թարգմանելու դժվարությունների մասին իր Ներածության մեջ գրում է.

«Սկզբում կարծում էի, թե այս հատվածը թարգմանելն այնքան էլ դժվար չի լինելու, բայց ձեռնարկելով գործին, համոզվեցի, որ Առաքելի կես գրքի թարգմանությունն ավելի քիչ աշխատանք է պահանջում, քան այս 19 երեսներինը։ Գլխավոր դժվարությունները հետևյալներն էին.

ա) Այս փոքրիկ հատվածի մեջ գտնվում էին 200-ի չափ ինձ անհասկանալի արաբական, պարսկական և թուրքական բառեր, որոնք ճիշտ տառադարձված չլինելու պատճառով, շատ դժվար էր նրանց ճիշտ իմաստը պարզելը։

բ) Արդի ակնագործական արվեստի տեխնիկական տերմիններին ծանոթ չլինելս է՛լ ավելի էր դժվարացնում բնագրերի մեջ հանդիպող, մահմեդական արևելքից փոխառած, տեխնիկական արտահայտությունների հասկանալը։

գ) Տարբեր ժողովուրդների կողմից տարբեր ժամանակներում քարերին տրված անունների խառնաշփոթությունն ու անորոշությունը և արևելյան ու եվրոպական անունների միջև եղած տարբերությունները»[1]։

Այնուամենայնիվ, Պատկանյանը կարողացել է տալ այդ 200 բառի բացատրությունը, հաղթահարելով իր թված դժվարությունները։

Ամենից մեծ դժվարությունների է հանդիպում մետաղաձուլության վերաբերող ձեռագրերով պարապողը, որովհետև այս դեպքում Պատկանյանի հիշատակած դժվարություններին ավելանում է նաև մի այլ բարդություն, այն է՝ ծածկագրերն ու գաղտնանունները, որոնք անհասկանալի բառերով ու նշանագրերով չափազանց խճողում են բովանդակությունը և բոլորովին անհասկանալի դարձնում գրվածքի միտքը։

Այդ ձեռագրերը ծածկագրել ու գաղտնանուններով մթագնել են, որպեսզի ամեն մի կողմնակի մարդ չկարողանա կարդալ և յուրացնել վարպետության գաղտնիքները։ Այս բանն իրենց ձեռագրերում խոստովանում են նույնիսկ իրենք՝ այդ ձեռագրերը կազմողները։

Մի ալքիմիկոս գրել է.

---

[1] Патканов К. П., Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII веке. СПБ, 1873.

«Վարդապետք և երգողք արուեստիս այս մթին և տարակուսանօք խօսեալ են, զի եթէ յայտնի և պարզ խօսեալ էին՝ ամենեքեան իմանային և ուսանէին, և արուեստս այս անարժան լինէր։ Եւ կամ պատճառ մի այլ կա-գի մի որ զկնի իմաստասիրացն ընթեռնոյր և իմանայր և ուսանէր, և վասն նախանձու այլէր կամ կորուսանէր և զինքն իմաստուն ցուցանէր»[1]։

Մի այլ ձեռագրի մեջ կարդում ենք.

«Եթէ զգաղտնիսն բնութեան, որով ծածկեալ կայ ամենայն իմաստասիրութիւն աշխարհիս, ամէն ոք գիտէր՝ դադարէր զգլրութիւն, վարդապետութիւն, իմաստութիւն և անուն, վասն որոյս ամենայն ոք տանջի և ջանայ, զի այսոքիկ ընկալցի և ստասցի։ Զնոյն և արհամար[հ]եալ լինայր իմաստութիւն աշխարհիս և իմաստունն և անիմաստն մի լինայր, և ոչ կամենայր ուսանիլ, և այսպէս կորնչէր համբաւն, անուն, և փառք, և հարգիքն աշխարհիս և ամենայնքն հաւասար լինէին»[2]։

Մի այլ ձեռագրի մեջ վարպետն իր աշակերտին սովորեցնելով ոսկեգույն մետաղ ստանալու եղանակներից մեկը, չի մոռանում հիշեցնել նրան, որ այդ կերպն «սուտ փորձված է, բայց ամեն մարդու մի ասեր»[3]։

Վերոհիշյալ մեջբերումներից երևում է, որ այդ ձեռագրերը կազմված են ոչ թե հասարակության լայն խավերի, այլ միայն գործող վարպետի և նրա հաջորդի առօրյա գործնական աշխատանքներին օժանդակելու համար։

Վարպետի հաջորդը լինում էր վարպետի որդին կամ նրա մոտիկ ազգականներից մեկը։

Ձեռագրերի մեջ բազմաթիվ տեղեկություններ կան այն մասին, որ այդ արվեստները, գլխավորապես «ծածուկ արուեստք» համարվածները, ընտանեկան մենաշնորհ էին համարվում և սերնդից սերունդ փոխանցվում էին միայն ամենահարազատ ազգականների միջոցով։ Բերենք մի քանի վկայություններ։ Ավելի հոգհամին վերագրվող հատվածներից մեկն ունի այսպիսի մի վերնագիր.

1 ՀՍՍՌ Պետական Գրական Թանգարանի Զ-իր Բ., էջ 18բ.—19ա։ Այժմ այդ ձեռագրերը հանձնված են Հին Ձեռագրերի ուսումնասիրության ինստիտուտին։

2 ՀՍՍՌ Պետ. Գր. Թանգարանի Զ-իր Դ., էջ 17—18ա։

3 ՀՍՍՌ Պետ. Գր. Թանգարանի Զ-իր Ա., էջ 31։

«Գիր, որ պատուիրեաց ուղիղն որդւոյ իւրոյ Ավեյհողհամ»[1]:

Կղիտի պատվերքն սկսվում են այսպես.

«Պատուէրքն Կղիտի, զոր պատուիրեաց որդւոյ իւրոյ այսպէս... և խօսեցաւ և ասէ—«Որդեակ, քո քեռին արեդայ էր և աստուած ողորմութեամբ զայս եառւր ինմայ և ինքն զիս ուսոյց և էր ինքն մեծ վարդապետ և իմաստուն, որ իւր նման չկար: Եւ աստուած արար ինձ մեծ ողորմութիւն և նրաց զիմ միտս և ես ուսայ զայս գովելի արուեստս և մեկնեցի զայս գիրքս և թողի քեզ մեծ փարթամութիւն, որ չէ հայր որդոյ այսպիսի տուեալ, զի զամենայն աշխարհ հայրենիքն քեզ եմ տուեր»:

Սակայն, դրանից չպիտի յենթադրել, որ այդ գործնական գիտությունները Հայաստանում մասնավոր երևույթներ են եղել: Ընդհանրապես, բազմապիսի արհեստները, բամազան բնագրերը, նշանավոր հայ բժիշկների, քիմիկոսների, ներկագործների, ծաղկողների (մանրանկարիչների), մետաղագործների բազմաթիվ անուններն ու մեզ հասած իրական մնացորդներն ապացույց են այն բանի, որ այդ արհեստների զարգացումը սերտորեն կապված է եղել իրենց դարաշրջանի տեխնիկայի և կուլտուրայի հետ: Իսկ վարպետության գաղտնիքներն արդյունք են դասակարգային հարաբերությունների:

Իրենց գրածը գաղտնի պահելու համար վարպետներն արտադրության մեջ գործածվող բաղադրիչ գլխավոր նյութերի համար հնարել են անհասկանալի անուններ և մի քանի տեսակ այբուբեններ:

Ծածկագրեր կան նաև սովորական ձեռագրերի հիշատակարաններում, որոնք, գլխավորապես, հիշատակում են ձեռագիրը կազմող անհատի անունը: Այս ծածկագրերը հորինված են հիշատակարանում նշված անունները կեղծելու վտանգից ազատ պահելու համար: Շատ ձեռագրերի մեջ գրիչ—անձի անունը ջնջված է, և նրա փոխարեն ջնջողն իր անունն է գրել որպես գրիչ, բայց երբ սովորական գրության կողքին կա նաև իսկական գրչի ծածկագրված անունը, այդ դեպքում խարդախողը ծածկագրի միջոցով բռնվում է իր կեղծիքի մեջ, և իսկական գրչի անունը վերականգնվում է:

---

1 ՀՍՍՌ Պետ. Գր. Թանգարանի Ձ-իր Ա., էջ 104:

Կան նաև քաղաքական հողի վրա առաջ եկած ծածկագրեր: Դրանք հասկանալի են եղել միայն միևնույն հոսանքին պատկանող անձնավորություններին: Այդպիսիններից է, օրինակ՝ ներսիսյան ծածկագիրը, որ Ներսես Աշտարակցին հնարեց Դավիթ-Դանիելյան պայքարի միջոցին: Այս ծածկագրի բանալին գտավ ու Էջմիածնի «Արարատ» ամսագրում հրատարակեց Գալուստ Տեր-Մկրտչյանը, և այդ ծածկագրով գրված թղթերը մի շարք նորություններ մտցրին պատմության համար գաղտնի մնացած կետերի լուսաբանության գործում, բայց այդ ծածկագրերի մեծ մասը դեռևս հրատարակված չէ:

Ըստ իրենց կազմության՝ հայերեն ծածկագրերը բաժանվում են երեք տեսակի: Առաջին տեսակին պատկանում են այն ծածկագրերը, որոնք կազմված են հայերեն տառերով կամ ծագում են նրանցից: Այդպիսիք են գիտությանն արդեն հայտնի թվագիր, թվարժեք ծածկագիր, փոխարինագիր, գումարագիր, կետագիր, եղբայրագիր, եռագիր, սյունագիր, կոտորակագիր և շըրջագիր ծածկագրերը[1]: Այս տեսակին պատկանող հնագույն ծածկագիրը գիտությանը ծանոթ է 12-րդ դարի կեսերից: Երկրորդ տեսակին պատկանում են այն ծածկագրերը, որոնք կազմված են հորինված այբուբենների հիման վրա: Մինչև այժմ սրանցից հրատարակված են երեք տեսակ (աղավնագիր կամ աղվանագիր, դավթյան, ներսիսյան): Երրորդ տեսակին պատկանում են ձեռագրերում գործածված 500-ի չափ գաղափարագրեր, որոնք կոչվում են իմաստնոց նշանագրեր, և մեծ մասամբ ծառայում են համառոտագրության համար[2]: Բժշկական ձեռագրերի մեջ այդ գաղափարագրերից միքանիսը փոխաբերական իմաստ են ստացել և ծառայել են իբրև գաղտնանուններ:

Արդ, անցնենք նորահայտ ծածկագրերի քննությանը:

ՀՍՍՌ Պետական Գրական թանգարանի մեր համարագրած Դ․ ալքիմիական ձեռագիրն ունի մի շրջագիր, որը, գլխավորապես, հայկական բոլորագրի և նոտրագրի վրայից է կազմված: Գիտությանն արդեն հայտնի է շրջագրի մի այլ տեսակ, որ հայերեն գլխագրի շուռ տված ձեն է և մեծ տարբերություններ

---

1 Հ. Աճառյան—Հայոց գրերը, Վիեննա, 1927 թ.:

2 Նույնը

ունի նորահայտ շրջագրի հետ։ Օրինակ՝ հրատարակված շրջագրով

Մխիթար բառը գրվում է,

իսկ նորահայտ շրջագրով՝ 

Նորահայտ շրջագրի մեջ ա, ե, գ, է, խ, ծ, կ և ճ գրերն այնքան մեծ ձևափոխությունների են ենթարկվել, որ այլևս անճանաչելի են դարձել։

Ահա այդ շրջագրի այբուբենն ամբողջությամբ.



Այս ծածկագրերով են գրված հիշյալ ձեռագրի մեջ հիշատակված գլխավոր նյութերի անունները, և գործածությունն այնքան շատ է, որ հնարավոր է այբուբենն ամբողջությամբ վերականգնել և ստուգել այբուբենական ցանկի ճշտությունը։

Պետական Գրական Թանգարանի մի այլ ձեռագիր ժողովածու, որ բովանդակում է տաղեր, ալքիմիա, ժամանց և այլն, ունի գավազանագիր ծածկագիր, որը մինչև այժմ անհայտ է գիտությանը։ Բարեբախտաբար նույն ձեռագրի մեջ գտանք նրա բանալին, այսինքն՝ այդ գավազանագրի այբուբենական կարգով դասավորությունը, որ լրիվն համապատասխանում է գործածության դրած նշանագրերին։

Այդ նույն ծածկագիրը մեզ հանդիպել է Ե. Լալայանի կազ-

մած «Ձեռագրաց ցուցակ»-ի մեջ, № 359 ձեռագրի հիշատակարանում, որի վերծանությունը լիովին համապատասխանում է Պետական Գրական Թանգարանի վերը հիշված ձեռագրի մեջ գործածված նշանագրերին[1]։

Ահա այդ ծածկագրի այբուբենը.



Ինչպես տեսնում ենք, այս ծածկագրի մեջ իրապես կան միայն ինը նշաններ, որոնք միավորների շարքում գտնվում են առանց կետերի, տասնավորների շարքում՝ մեկ կետով, հարյուրավորների շարքում՝ երկու կետով, իսկ հազարավորների շարքում՝ երեք կետով։ Մինչև այժմ այս սիստեմը ծանոթ չէր հնարված այբուբեն ունեցող ծածկագրերին, թեև կան այս ծածկագրին որոշ չափով նմանվող այլ ծածկագրեր։ Ամենից շատ նման են սյունագիր և կետագիր ծածկագրերը, որոնց մեջ, սակայն, միայն չորս նշաններ կան և այդ չորս նշանները կետերի օգնությամբ արտահայտում են մեր բոլոր 36 գրերը։ Այսպես օրինակ՝

ա—ա.	ժ—ժ.	ճ—ճ.	ռ—ռ.
բ—ա..	ի—ժ..	մ—ճ..	ս—ռ..
գ—ա...	լ—ժ...	յ—ճ...	վ—ռ...
. . . .	. . . .	. . . .	. . . .
թ ա.........	ղ—ժ.........	չ—ճ........,	ք—ռ::::::

1 Ն. Ղալայան—Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, № 359. Թիֆլիս, 1915 թ.։

կամ սյունագիր.

ա—| ժ—||. ճ—|||. ու—||||.
բ—|.. ի—||.. մ—|||.. ս—||||:
գ—|⁝ լ—||... յ—|||... վ—||||...
. . . .
թ—|⁞⁞ ղ—||⁞⁞ չ—|||⁞⁞ ք—||||⁞⁞

Նորահայտ գաղտնագիր ծածկագրի սխեման ունի նաև Հալայանի «Ձեռագրաց ցուցակ»-ի №359 ավետարանի հիշատակարանում (1611 թվին գրված) գործածված ծածկագրություններից մեկը, որ, զուգահեռաբար հայատառ բնագիր ունենալու շնորհիվ, կարողացանք ստուգել մեր վերծանության ճշտությունը։ Այդ ծածկագրի բնագրում գործածված է միայն 12 նշան. ահա այդ գրերով ծածկագրված տեքստը.



Շարունակությունն այլ ծածկագրերով է։

Նշաններն ունեն ամենաշատը միայն երեք կետ. դա ցույց է տալիս, որ դրանք, ըստ գրերի թվական արժեքի, պետք է լինեն հազարավորների շարքից, իսկ կետեր չունեցողները՝ միավորների։ Ուստի առաջին բառը կարող է լինել գծողս (տես 21 էջի աղյուսակը)։

Այս աղյուսակից պետք է դուրս բերվեր այնպիսի հայերեն բառ, որ միաժամանակ նրա միջոցով կարդացվեին և մնացած ծածկագրերը։ Այստեղ կոնտրոլ դեր պիտի կատարեր մանավանդ երկրորդ խումբը, որտեղ երեք նույն նշանները տարբեր կետադրությամբ իրար կողքի կրկնվում են երեք անգամ, որոնց կողքին ընկած են դարձյալ երկու նույնատիպ նշաններ. դրանք լինելու էին՝ մի բերան (տես 22 էջի աղյուսակը)։

Ստացվող բառերի միջից առանձնացրինք առաջին աղյուսակում «գծողս» և երկրորդ աղյուսակում՝ «մի բերան» բառերը, որոնք ամենից շատ էին համապատասխանում հիշատակարանի բովանդակությանը։ Այսպիսով, գրության մեջ գտնվող 12 գրերն

էլ հնարավոր եղավ վերծանել, որ են՝ Ա, Բ, Գ, Ե, Ի, Ծ, Ղ, Մ, Յ, Ն, Ո, Ս. Մնում էր չվերծանված միայն մի գիր, որ նույն ա նշանն էր և վրան ուներ երեք կետ։ Դժվար չէր եզրակացնել, որ դա Ռ գիրն է։ Այսպիսով, այդ 13 գրերի հիման վրա վեր–



կանգնեցինք 15 գիր։ Ամբողջ այբուբենից պակաս են մնում միայն 7-րդ և 8-րդ շարքի 8 գրերը։ Տալիս ենք այդ ծածկագրի այբուբենը. քառակուսիների մեջ առնված գրերը վերականգնել ենք մենք (տես 23 էջի աղյուսակը)։

Այբբենական ծածկագրերը, մանավանդ մի քիչ շատ գործածված տեսակները, հնում շատերին են ծանոթ եղել, այդ պատճառով էլ ծածկագրերի սովորական տեսակները գործածելու դեպքում հեղինակները երբեմն կրկնակի կերպով են ծածկագրել, այնպես

որ, երբ բաց ես անում ծածկագիրը, կարդացվածը դարձյալ ծած-



կագիր է ստացվում։ Օրինակ՝ Աղթամարից բերած ավետարան-ներից մեկն ունի՝



Հին ձեռագրերում պատահող գաղափարանշանների մի մասը ծագել է հայկական փակագրերից։ Մի մասն էլ պատկերագիր է, ինչպես, օրինակ՝  տաճար, գավազան, և այլն։



Կան նաև հունարենից փոխառած նշաններ[1], որոնք գլխավորապես աստղաբաշխական պայմանական գաղափարանիշեր են։

1 Տես Հր. Աճառյան—Հայոց գրերը, Վիեննա, 1927 թ.։

Դրանք են՝

Աստղ

Արեվ

Լուսին

 Հրատ

Փայլածու

Լուսաբեր

Լուսնթագ

Երևակ

Իմաստոնց նշանագրերի գաղտնագրած այդ առումներն աղբյուր են ծառայել մետաղներն այլ կերպ ծածկագրելու։

Սակայն, այս նշանագրերը, բացի իրենց բուն իմաստով գործածվելը՝ ալքիմիայի մեջ ունեցել են նաև իրենց պայմանական իմաստը. սրանցով են գաղտնագրված 7 մետաղները։

Նշանագիր	Իմաստը	Գաղտնագրված իմաստը
	Արև	Ոսկի
	Լուսին	Արծաթ
	Հրատ	Երկաթ
	Փայլածու	Սնդիկ
	Արուսյակ	Պղինձ
	Լուսնթագ	Անագ
	Երևակ	Արճիճ

Ինչպես հայտնի է, շաբաթվա օրերը հաշվելու երկու սիստեմ գոյություն ունի։ Ըստ մի սիստեմի, որ նաև հայերի ընդունած ձևն է, շաբաթվա օրերը հաշվում են թվահամարներով՝ միաշաբթի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, իսկ մյուս սիստեմի համաձայն, որ առաջ է եկել սումեր—ակկադական ժողովուրդներից, շաբաթվա օրերը հաշվում են արեգակնային համակարգին պատկանող երկնային մարմինների անուններով. կիրակին՝ արևի օր և այլն։ Այդ պատճառով էլ իմաստոնց նշանագրերի տեղ, ոսկին փոխանակ արևի նշանով ծածկագրելու, շատ դեպքերում գաղտնագրել են միաշաբթի կամ կիրակի բառով։

Մնացած նշաններն էլ նույն եղանակով ծածկագրել են հետևյալ կերպ.

Կիրակի՝	Արևի	օր	—	նշանակել	է	ոսկի
Երկուշաբթի՝	Լուսնի	»	—	»	»	արծաթ
Երեքշաբթի՝	Հրատի	»	—	»	»	երկաթ
Չորեքշաբթի՝	Փայլածուի	»	—	»	»	անդիկ
Հինգշաբթի՝	Լուսնթագի	»	—	»	»	կլայեկ
Ուրբաթ՝	Արուսյակի	»	—	»	»	պղինձ
Շաբաթ՝	Երևակի	»	—	»	»	արճիճ

Այս մետաղները գաղտնագրվել են նաև հիշյալ մոլորակների արաբական անուններով. օրինակ՝

Արաբ.	Շամս	նշանակել է	Արև,	գաղտնագր.	մեջ՝	ոսկի
»	Ղամեր	»	» Լուսին	»	»	արծաթ
»	Մառեխ	»	» Հրատ	»	»	երկաթ
»	Օտարիտ	»	» Փայլածու	»	»	անդիկ
»	Մուշթարի	»	» Լուսնթագ	»	»	անագ
»	Զոհրե	»	» Արուսյակ	»	»	պղինձ
»	Զոհալ	»	» Երևակ	»	»	արճիճ

Առհասարակ, գործածվող նյութերի անունները շատ են գաղտնագրված։ Այդ գաղտանունների բազմազանության մասին գաղափար կարելի է կազմել բառարանից, որ բերում ենք գրքույկիս վերջում։

Ալքիմիայի մեջ գործածվող գրեթե բոլոր նյութերն էլ ունեն գաղտնանուններ. դրանցից մինչև օրս զանազան ձեռագրերից հավաքել ենք մոտ 800 անուն։

Արդ, ավելորդ չէր լինի հիշատակել, թե ինչպես ենք մենք բաց անում այդ գաղտնանունները։ Այդ գաղտնիքը գտնելու համար մենք ձեռքի տակ ունեցել ենք հետևյալ աղբյուրները.

1. Ալքիմիական ձեռագրերից մեկն ուներ մի համառոտ բառարան, որը պարունակում էր 62 բառերի բացատրություն։ Այդ բառարանը վերնագրված էր՝ «Բառք պիտանիք արուեստիս քաւ», և սկսվում էր այսպես՝

Ալամ, որ է ղենեխ։

Ալումէն ջամէն՝ պաղլեղն, որ է շիպն։

Աղբերաց արիւն, որ է զաֆրան երկաթի։
Ապիկի, որ է շուշա։
Ապիկի կոչի կապեալ սնդիկն ի շատ տեղ։
Արծիւ, որ է նշատիրն...

Սակայն, այդ բառարանի մեջ տեղ էին գտել մի քանի սխալ մեկնումներ, որոնք ուղղեցինք այլ տվյալների հիման վրա։ Օրինակ՝ այդ բառարանում արծաթի կեղծանուններից մեկը հիշատակված էր «Հերմես իմաստասեր», բայց հայտնի է, որ Հերմեսը հունական փայլածուն է, որի անունը սնդիկի հետ է կապված։ Մենք բնագրերի մեջ գտանք «հերմես» բառի գործածությունը սնդիկ իմաստով, որոնց հիման վրա էլ ուղղեցինք բառարան կազմողի կամ գուցե բառարանն արտագրողի այդ սխալը, վոր առաջ է եկել այն ոչ ճիշտ ենթադրությունից, թե սնդիկն արծաթի հեղուկ վիճակն է։

2. Ձեռագրաց բնագրերի մեջ երբեմն կան գաղտնանունների ուղղակի բացատրություններ։ Օրինակ՝ այն գործողությունների մեջ, որտեղ երկաթը երկրորդական դեր է խաղում, հեղինակը չի վախեցել նրա գաղտնանվան կողքին հիշատակել, որ այդ նույնը երկաթն է։ Ձեռագրերից մեկի մեջ կան այսպիսի տեղեկություններ. «Առ նուկի մի պնդակրոն, որ է երկաթն», կամ «սատուծով առ բ մաս մահ, որ է մառախն», և այլն։

3. Տեխնոլոգիական միևույն բնագիրը երբեմն տարբեր կերպ են գաղտնագրել տարբեր ձեռագրերում, որոնց համեմատությունը, իհարկե, խոսքը զգուշավոր համեմատության մասին է, որոշ չափով օժանդակում է գաղտնանունների վերծանության գործին։

4. Հայերենում կան լատիներենից և արաբերենից թարգմանված մի քանի բնագրեր, որոնք երկու անգամ են թարգմանված։ Այդ տարբեր թարգմանությունների համեմատությունը նույնպես օժանդակում է գաղտնանունների վերծանությանը։

5. Ձեռագիր բժշկարանները և բժշկական բառարանները, որոնցով հարուստ են մեր ձեռագրական ժողովածուները, մանավանդ Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» բժշկական մեծածավալ բառարանը, մեծապես օգնում են գործածվող նյութերի անունների ստուգությունը որոշելու և նրանց իմաստը հասկանալու գործում։

6. Միաժամանակ ձեռքի տակ ունեցել ենք Ղ. վ. Ալի-

շանի «Հայ բուսակ» և Նորայր Բյուզանդացու «Քննութիւն հայ բուսակին» աշխատությունները, ինչպես նաև Երեմիայի բառարանը (հրատարակված 17-րդ դ.), Գալիանոսի բառերը, Ս. Ամատունու «Բառ ու բան», Հր. Աճառյանի «Գավառական բառարանը», Քաջունու երկհատոր արվեստաբանական բառարանը, ինչպես նաև մի շարք այլ ձեռագիր բառարաններ։

7. Օտարամուտ բառերի համար օգտագործել ենք մի շարք օտարլեզվյան բառարաններ, որոնց տվյալները վերցրել ենք մեծ զգուշությամբ։

* * *

Հնում ալքիմիան զբաղվել է ոչ միայն ոչ-ազնիվ մետաղներից ազնիվ մետաղներ ստանալու փորձերով, այլև ներկագործության, մետաղների ձուլման, օքսիդացման, մաքրման, լուծման, ինչպես նաև մի շարք նյութեր՝ կիր, օճառ, ապակի, կավ, ձեթեր, աղերի այլևայլ լուծույթներ, խեժեր, յուղեր, ձյութ, թանաք ստանալու վերաբերյալ խնդիրներով ու գործողություններով։ Ալքիմիան զբաղվել է նաև քարերի, մետաղների, աղերի և այլ նյութերի նկարագրություններով ու դասակարգումով։

Հետաքրքրական է ծանոթանալ, թե հայ ալքիմիկոսներն իրենց գործն ինչ են անվանել։

Ձեռագրերի մեջ, համարյա ամենուրեք, «արուեստս այս» է կոչված։ Բայց այն ժամանակ արվեստ և արհեստ բառերը դեռևս տարբեր իմաստներ չէին ստացել։ Սակայն այս «արուեստը» հասարակ և յուրաքանչյուրին մատչելի գործերից չէր համարվում, այլ դասվում էր ամենապատվավոր զբաղմունքների շարքը։

Ալքիմիկոսներից մեկը գրում է. «Արուեստս յոյժ գերագոյն է քան զամենայն արուեստս, և պարծանք, պատուական և ազնիւ»։

Այս «պատուական» արհեստով պարապողները, սովորաբար, իրենց անվանում էին՝ «իմաստասէր», «փիլիսոփայ», «Խորու հասկացող», «մտացի» և այլն։ ՀՍՍՌ Պետական Գրական Թանգարանի № 1291 ձեռագիրն այդ մասին ունի հետևյալ հատվածը՝ «Պարտ է մարդկանց, որ զարուեստս զայս գործեն զի մտացի իցեն, և նուրբ, և խորու հասկանան և իմանան»[1]։

---

1 Էջ 6ա.

Ալքիմիայով զբաղվողներից պահանջվում էր բազմակողմանի զարգացում՝ ծանոթություն այլ արվեստների։ Վարպետներից մեկն այսպես է խրատում սկսնակներին. «Իսկ ամենքն, որ արուեստիս այս հետևին և գործեն՝ պարտ է և այլ արուեստս իմաստասիրացն գիտենալ. սահմանք և բանալիք իմաստասիրութեան, զի պարտ է մարդկանցն որ զարուեստս այս գործեն՝ իմաստուն լինին»[1]։

Ամիրտովլաթ Ամասիացին ալքիմիկոսներին անվանել է աքսիր շինողներ։ Նա Զէպախ բառի տակ թվարկում է սնդիկի մի շարք ծածկանունները և վերջում ավելացնում՝ «Այս ամէնն աքսիր շինողներուն բանն է»[2]։

1619 թվին գրված մի Ձ-րի մեջ ալքիմիկոսները կոչվել են «քիմիականք»[3], որ բառացի համապատասխանում է Ամասիացու «Աքսիր շինողներ» անունին, որովհետև քիմիա բառն այն ժամանակ նշանակում էր էլեքսիր կամ փիլիսոփայական քար[4]։

Արվեստաբանական ուսմունքին վերաբերող գիրքը հնում կոչվել է «աքսիրի գիրք» և «քիմիական գիրք», որ մեր այսօրվա լեզվով էլեքսիրի գիրք է հասկացվում։

Մի այլ տեղ, ալքիմիական մատյանը կոչվում է «վկայական գիրք», որի մասին ՀՍՍՌ Գրական Թանգարանի № 1291 Ձ-րի մեջ ասված է՝ «և չէ արուեստս այս երկրայ, այլ ճշմարիտ է և ստոյգ, և բազում ուսուցողք և վարդապետք կալել է արուեստս, և ունի այժմ որպէս կեցուցանեմք գրովք մի, որ կոչի վկայական գիրք յայտնապէս, զի ամէն իմաստասէրքն իւրեանց յաացուածքն ի գրովին յիշեալ են»։

«Վկայական գրքի» մեջ վարպետները երդվում են իրենց գործի ստույգ և աներկրա լինելու մասին։ Եվ իրոք, մի շարք

---

[1] ՀՍՍՌ Գր. Թանգ. Ձ-իր № 752։

[2] Ամիրտովլաթի Ամասիացւոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց։ Ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբք Կ. Յ. Բասմաջեան Վիեննա, 1927 թ., էջ 151։

[3] Տես ՀՍՍՌ Պետ. Գր. Թանգարանի № 1291 Ձ-իր, որի 36բ էջում գրած է. «Աղամաս վարդապետն քիմիական», իսկ 40ա էջում «Քիմիականք հասցեն կամացն իւրեանց»։

[4] Մեր Դ Ձ-րի էջ 3ա-ում գրված է՝ «Զդեղ այս կամ նիւթս որպէս արասցես՝ ի գիրքն իքսիրի, այսինքն քիմիական գացես»։

հատվածների սկզբում պատահում են երդման խոսքեր: Օրինակ՝ «Այս է դուռն Ամիրաթին, որ շատ երդմամբ ասաց թէ փորձեալ է բազում անգամ»[1]: Մի ուրիշ ալքիմիկոս աստուծո անունով է երդվում, որ իր ասածների մեջ սուտ չկա: Ահա նրա խոսքերը. «Եւ յիշեմ զանունն, որ առաջ է քան զյաւիտյանս, որ զինչ ասեմ ճշմարիտ է և սուտ չկայ և չեմ պահեր խորհուրդ ի խորհրդոցդ. այլ ճշմարիտ է զոր ասեմ»: Կամ՝ «Աղամոս վարդապետն քիմիական և գործողն արուեստիս առեալ զորդին իւր ի վերայ պարանոցի իւրոյ և երդուաւ յաստուածն երկնից և երկրի վասն քարի այս և ասէ...» Եւ կամ՝ «կենդանի է աստուած, որդեակ, որ չեմ խաբեր զքեզ և երդմնեցուցանեմ զքեզ, որ լինիս ինձ բարի յիշատակ, զի յառաջ քան զիս այլ մարդ զայս բանս չէ յայտնէր մարդոյ և ես քեզ յայտնեցի»:

* * *

Ալքիմիան Հայաստանի հնագույն արհեստներից է:

Հնում Հայաստանը հայտնի էր մետաղների առատությամբ: Դեռևս նախահայկական դարաշրջանում պարապել են մետաղաձուլությամբ: Այդ են վկայում պեղումների միջոցով հայտաբերված բրոնզե ու երկաթե, ինչպես նաև ծարիրե բազմաթիվ զենքերն ու զարդարանքները, որոնցով զարդարված են ոչ միայն մեր թանգարանները, այլև արտասահմանյան բազմաթիվ թանգարաններ: 1934 թվին, Լենինականի մոտ կոմբինատի շինարարական աշխատանքների ժամանակ, բացվեց մետաղաձուլական մի արհեստանոց, որտեղ գտնվեց նույնիսկ բրոնզե կացինների կաղապար: Այդպիսի մի կաղապար էլ 1936 թվին մենք գտանք Կարմիր-բլրում (Զարբախ գյուղի մոտ). այդ կաղապարը, Կարմիր-բլրի հիմնական կուլտուրական շերտի հետ միասին պատկանել է խալդական դարաշրջանին:

Հին Հայաստանում մետաղները գործ են ածվել ոչ միայն զանազան գործիքների ու զարդարանքների համար, այլև, իբրև անհրաժեշտ շինանյութեր, մեծ չափով գործադրվել են խոշոր ճարտարապետական կառուցումների համար:

---

1 § 203:

Մեր թվականության առաջին դարին պատկանող Երվանդաշատի հնագույն պարսպի մեծադանգված անտաշ քարերը միմյանց հետ կապված են եղել երկաթե կապերով։ Նույն ժամանակներին պատկանող Գառնիի հեթանոսական տաճարի քարկապերը երկաթից ու կապարից են։ 7-րդ դարին պատկանող Զվարթնոցի սյունակապերը, ինչպես նաև գռան մասերը դարձյալ երկաթից ու կապարից են։ Անիի ու Ամբերդի հնագույն բաղնիքների ներքին խողովակները երկաթից են։

Մեր պատմագիրները հաճախ են հիշատակում շինարարության մեջ գործածված մետաղների մասին։ Օրինակ՝ Թովմա Արծրունին պատմում է, որ Աղթամարի պալատի շինության մեջ գործածվել է 200 հազար լիտր երկաթ։ Նա գրում է. «Եմուտ ի շինուած տաճարին երկաթ լտերս իբրև ՄՌ»[1]։

Պատմական Հայաստանում նույնպես զարգացում են ունեցել կավագործությունը, ներկարարությունը և բազմապիսի ձեթերի, խեժերի, յուղերի և այլ նյութերի արտադրությունը. հնում, տարբեր նպատակների համար գործ են ածել տարբեր տեսակի կավեր։ Կրային շաղախի մի քանի տեսակները կատարելության հասան մեր թվականության 5—7-րդ դարերում։ Դեռևս նախահայկական դարաշրջանում Հայաստանին ծանոթ են եղել մի քանի ընտիր ներկեր, որոնք մեզ հասել են գունազարդ կերամիկայի միջոցով։ Այդ կերամիկայով հարուստ են Հայաստանի հետևյալ հնավայրերը՝ Մուխանաթ-թափա, Ագամզալու, Արթիկ, Սևբլուր, Կարմիր վանք և այլն։

Արաբական ազդեցության շրջանում և հետագայում, մանավանդ 12-րդ դարից մինչև 17-րդ դարը, Հայաստանում ծաղկեց բժշկական արվեստը, ալքիմիան, գունազարդ մանածագործությունը և այլն, որոնք բազմաթիվ ձեռագրեր ու այլ հետքեր են թողել մատենագրական աղբյուրների մեջ։

Կիրառական նշանակություն ունեցող այդ արհեստներն իրենց նախնական շրջանում այնքան պարզ և հասարակ են եղել, որ յուրաքանչյուր վարպետ հնարավորություն է ունեցել իր գործին լիովին տիրապետելու, բայց ժամանակի ընթացքում, նորա-

[1] Թովմայ վրդ. Արծրունւոյ՝ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Գ. ՍՊԲ, էջ 296։

նոր փորձերի հետևանքով, այդ արհեստներից յուրաքանչյուրն այնքան է բարդացել ու խճողվել զանազան մանրամասնություններով, որ այլևս ամեն բան հիշելն անհնարին էր անհատի համար, ուստի և նրանք գրի առնվեցին։

Բերենք մի օրինակ։

Մետաղաձուլությունը, ինչպես տեսանք, Հայաստանին ծանոթ է եղել դեռևս ուրարտական դարաշրջանում և դրանից էլ մի քիչ վաղ, բայց ձուլման պրոցեսը գրի է առնվել շատ ուշ։ Այս հանգամանքը սերտ կերպով կապված է եղել ոչ-ազնիվ մետաղներից ազնիվ մետաղներ ստանալու հարցի հետ։ Ձուլման պրոցեսի նկարագիրը գրով ֆիքսացիայի է ենթարկվել միայն այն ժամանակ, երբ մետաղագործությունն անցել է «Ծածուկ արուեստների» շարքը, որպեսզի տեխնոլոգիական գաղտնիքները հորից որդուն փոխանցվեին առանց կորուստների։ Հնում, երբ սահմանափակ թվով գործողություններ էին կատարվում, հնարավոր էր եղածը հիշողության մեջ անկորուստ պահել, բայց երբ առաջ եկան «իքսիր»[1] ստանալու հետ կապված բազմաթիվ նորություններ, արդեն անհնարին էր ամեն բան մտքում պահել, ուստի և այդ գործողությունների նկարագրությունն առնվեց առանձին տեսակի ձեռագրերի մեջ, որոնք կոչվում էին «իքսիրի» կամ «վկայական գիրք»։

Այս ձևով էլ կազմվել են կիրառական գիտություններին վերաբերող մնացած ձեռագրերը, օրինակ՝ բժշկարանները և այլն։

---

[1] Է լ ե ք ս ի ր բառն է, որ երբեմն էլ ա ք ս ի ր ձևով է հանդես գալիս։ Ալքիմիկոսներն այս անունն են տալիս ոսկու և արծաթի «մակարդին»։ Իրականում այսպես են կոչվել տեխնոլոգիական միջոցներով ստացվող այն նյութերը, որոնց և ոչ-ազնիվ մետաղների բաղադրությունից ստացվել են ոսկեգույն կամ արծաթագույն մետաղներ։ Բերենք մի վկայություն. «...և առ զմէկն այս աքսիրէս և ձգէ ի վերայ տասի մինչև 10 անգամն և կապես նայ կու լինի ոսկի (ո ս կ ի բառը բնագրում գրված է գաղափարանշանով.—Կ. Ղ.) և կու ներկէ ոսկի ապրիզ» (5)։

II

ԱԼՔԻՄԻԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ալքիմիական ձեռագրերը մոնոլիտ և ամբողջական գործեր չեն. Նրանք մի ընդհանուր կմախք չունեն, որի վրա հյուսվեր ամբողջական բովանդակությունը։ Յուրաքանչյուր վարպետ նոր փորձերի հիման վրա, հորից ժառանգություն ստացած գրքի մեջ նոր գրություններ է ավելացնում և, այդպիսով, ժամանակի ընթացքում, սկզբնական փոքրիկ ձեռագիրը հարստանում է բազմաթիվ նյութերով։

Ձեռագրերը, մեծ մասամբ, քաղվածքներ են տարբեր տեղերից, որ կատարված են գործնական նպատակների համար և ոչ թե «ի վայելումն անձին իւրոյ»[1]։

Ալքիմիական ձեռագրերը ոչ թե մեր հասկացած ձևով բառացի թարգմանվել կամ արտագրվել են, այլ, մեծ մասամբ, գրիչները, իրենց հասկացած ձևով, բովանդակությունն են վերցրել և իրենց կողմից մեկնություններ արել։ Օրինակ՝ լատիներենից պարզապես փոխադրված է երևում հետևյալ հատվածը. «Առ կանաչ արջասպ կարմրացուցեալ և զպաղեղն, որ ի լատին ալումեն ռովքարին կոչի և վայրի թթու խնձորին ջուրն, և ջուրն պաղին՝ որ ի լատին իշուրպէ կոչի»[2]։

Թարգմանիչը նույնիսկ պաղի հայերեն անունը չի իմացել, ուստի բավականացել է միայն նրա լատինական անունը հիշատակելով, թեև պարզ է, որ լատիներեն բնագրի մեջ «ի լատին» բառերը չէին կարող տեղ գտած լինել։

Մի ուրիշ ալքիմիկոս իր ձեռքով կատարած գրությունների վերջում ավելացնում է. «...և այս ամէն օրինակս Իսմայէլին տեարելուն և իմ վարպետն ասաց, թէ ճշմարիտ է և գովեց գինքն»[3]։

Սովորական են նաև «ի լատին գրէ» ձևը, որից հետո սկսում է պրոցեսի նկարագրությունը։

---

1 Ոչ գործնական գիտությունների վերաբերող ձեռագրերի հիշատակարանների սովորական ֆորմուլներից մեկը։

2 Պ. Թ. Ձ-իր, № 752, 261։

3 Պ. Թ. Ձ-իր, № 753, § 5։

Ստորև զետեղում ենք մի հատված, որը երկու անգամ տարբեր ալքիմիկոսներ լատիներենից վեր են ածել հայերենի։

Յաղագս շնչերուն զի գագարիցի[նի] հուրն և մի փախիցին ի կրակէ։	Յաղագս շնչերուն զի գագարիցեն ի հուրն
Եթէ որպէս գագարին շունչքն, զի հրուն փախչին ոչ և վասն այնորիկ հարկ է գագարեցուցանել և գագարին ի նիւթ իրս, որ ի հրոյ ոչ փախչին. և ի գագարողական նիւթիցն կան բաժին մի որ հալին՝ լուսին[1], զօհալն, մուշթարին[2], զօհրան. այլ հալին և լկանան, այսինքն օրանան և լկանան ի հուրն. և կան որ ոչ հալին և ոչ լկանան, իսկ ամենայն պղնձեղէնքս լկանան և հալին։	և լատին գրէ, թէ որպէս գագարին ի հուրն շունչքն, զի մի փախիցեն ի հրոյն, վասն այնորիկ հարկ է գագարեցուցանել ի նիւթ իրս, որ ի հրոյ ոչ փախչեն։ Արեգակն[3], լուսին[1], զօհալն, զօհրան, մուշթարին այլ հալին և լկանան,
Հողն և քարն և այլ նոյն նման իրս ոչ լկանան և ոչ հալին, իսկ ի արուեստս այս և ի գործս ոչ են օգտակար — քան միայն այն որ լկանան և հալին բնական, զի թէ ոչ լկանան և հալին բնական՝ խառնումն ոչ կարէ լինել։	իսկ եթէ ոչ լկանան և հալին բնական՝ խառնումն և միանալ ոչ լինին։
Իսկ հարկաւոր է վասն այսմ զի զշունչսն ի գագարողական նիւթ գագարեցուցանեմք և լսեմք իբրև գայլիւր»[5]։	Իսկ հարկաւոր է վասն այնր զի շունչք ի գագարողական նիւթն գագարեցուցանեմք և լսեմք իբրև գայլիւր»[4]։

Երբեմն թարգմանները տեքստն այնքան մեծ փոփոխությունների են ենթարկում և իրենց ժամանակի տերմիններին ու լեզվին հարմարեցնում, որ այլևս դժվար է լինում ճանաչել երկու թարգմանությունների նույնությունը։

1 Գրված է լուսնի նշանագրով, որ արծաթ է նշանակում։
2 Գրված է լուսնթագի նշանագրով, որ անագի իմաստ ունի։
3 Գրված է արևի նշանագրով, որ ոսկու իմաստ ունի։
4 Գ. Թ. Չ-իր № 752, էջ 44—47։
5 Գ. Թ. Չ.-իր № 1291, էջ 12բ։

Բերենք մի այդպիսի օրինակ։

Հոգեշունչ քարինքն։	Յաղագս Է քարանց, որք ունին յինքեանս հոգիս.
Եւ քարինքն որ հոգիք՝ Է են և խրեանց անուանքն այս են — մաղբաժիթայ՝ որ է դեղին ծարիր, մաղնիսայ՝ որ է կարմրահերձ գունով քար, և թութիայ, և սագինայ, մագնատիս՝ որ է խանդումանդն, արջասպն և հասարակաց աղն։	Մարդաժիթայ, մղնատիս, մղասիայ, Թութիայ, շաւընայ, և զաձ՝ որ է արձասպ և մհադայ։
Իսկ զայս քարինքս յիշեցաք ամեն մէկն իւր ազգն Է են և ունին կենդանութեան մասն։	
Եւ քարինքն որ ոչ ունին մասն ի կենդանութեան հոգոյ՝ Է են, յորոց առաջին զալղն է, երկրորդն՝ ծարիրն է, երրորդն՝ սատափն է, չորրորդն՝ բլօրն է, Ե երորդն՝ զահնաձն է, Զ երորդն՝ լաճվարդն է, Է երորդն Յիջան է։	Եւ որ ոչ ունին հոգի եւ Է են, որ է այս. Թալխն, բըէզն՝ որ է ծարիրն, և սատափն, պլլօռն, զահնաձն, լազվարդն և բժհան։
Իսկ այլ քարինք շինծու են և մտանեն արուեստս. Է են. Ա զինմայն, Բ քարմատաւընկլին, Գ սիլիկոն, Դ սպիտաձն. և այս զոր յիշեցաք մի են, զի արձճէն եղանէն [1]։	Եւ այլ նիւթք արտաքոյ սոցա, որք մտանեն յայս արհեստ՝ ըղլէմիայ, և մարթաձ, սարանձըն, և ըսփիտաձն...[2]։

Մեր ձեռքի տակ եղած բնագրերի մեջ հնագույնը և ամենագրագետ անձի ձեռքով գրվածը Պ. Թ. № 1291 ձեռագիրն է, որը սկզբից մինչև վերջ միևնույն անձի ձեռքով է գրված, բայց և այդ ձեռագրի տարբեր հատվածների մեջ ուժեղ կերպով աչքի են ընկնում լեզվական տարբերությունները։

Ձեռագրի մի մասը գրված է առաջին դեմքով, այսպես՝ «Սփռէի աղ հասարակաց պատրաստեալ այնպէս որպէս ասեմ, այնչափ, որչափ դեղն էր, որ ունի, և ի վերայ այնմ աղին սփռեցի զդեղն և ի վերայ եդի զխուփն» [3]։

[1] Պ. Թ. Ձ-իր № 752, էջ 44—45։

[2] Պ. Թ. Ձ-իր № 753, Ծրար 17։

[3] Ի միջի այլոց, առաջին դեմքով է խոսվում միայն Պ. Թ. 1291 ձեռագրի այս հատվածում, էջ 19ա—33բ. ա) յաղագս պատրաստելոյ զաւկին, որ է պատուականագոյն քան զամենայն կերպ. բ) և ասա սկսանէ ուսուցանել եթէ

Հաջորդ հատվածից մինչև ձեռագրի վերջը պատմությունն արվում է երկրորդ դեմքով, որ սովորական ձևն է։

Այս ձեռագրի լեզուն մեծ մասամբ միջնադարյան գրաբարն է. իբրև բնորոշ հատված, մեջ բերենք հետևյալ տողերը. «Այս ամենեքեանս լոսեսցին հանդերձ ասպուղան ծաղկով և զաւկով, լոսեալ և մաղեալ մինչև եղիցին մարմին մի՝ այսինքն է ամենեքեան վերոհիշեալս շաղեալ ի մի, և ապայ դիցի ի ներքոյ Թրքքի աւուրս Ժ և զկնի շնչահանեա»[1]։

Մի այլ հատվածում ձեռագրի լեզուն բոլորովին աշխարհաբարի է վերածվում։ Ահա այդ աշխարհաբարից մի նմուշ.

«Թութիան ջրոտ արէ, տուր ղալեքարի աղին մէջն, որ ցեխի պես կպչի վրան հաւասար թանձր։ Ետև տուր վերան, որ հալում է թանաքն այն [արջասպ], ետև մնացած սուլեմանին կէսն այլ տուր վրան... ա տրամ երծաթ տուր, թէ լաւ կուզես՝ կէսմակէս տուր»։

Ձեռագրերն իրենց կառուցվածքով շատ նման են տաղարաններին, որոնց գրիչները քաղվածաբար ընդօրինակում են իրենց ձեռքի տակ գտնվող մի քանի տարբեր մատյաններ, ընտրում քաղում են այն, ինչն իրենց կամ ստացողին առանձնապես հաճելի է լինում։

Դպիր Միքայելն իր հիշատակարանում գրում է. «Եթէ հանդիպիք սխալ կարդալով կամ քաղելով» (Գ. Թ. ձեռագիր № 1291, վերջում) և ոչ թե «ուրինակելով», ինչպես այդ գրվում է մոնոլիտ ձեռագրերի հիշատակարաններում։ Մի այլ գրիչ իր կազմած ձեռագրի մի նոր բաժնի սկզբում հետևյալ վերտառությունն է արել. «Այլ օրինակէ առեալ» (Վ. Մ. Ձ-իր № 199, Թ. 42 ա)։

Արդ, ձեռագրերի մոնոլիտ չլինելու հետևանքով, նրանց մեջ նյութերի դասավորության մի որոշ սիստեմ չկա, այդ պատ-

---

որպէս պարտ է պատրաստել զամենայն իրս, որ պիտոյ իցէ արուեստիս. գ) նշատրին այսպէս լուանայի։

Այդ երեք հատվածների հեղինակը, ինչպես այդ իմանում ենք թարգմանչի մի ծանոթությունից, «Ռաիզարդ տէ Փունիվալն» է։ Թարգմանիչն այդ մասին գրում է. «Այս է առուտուրն, որ է Ռաիզարդ տէ Փունիվալ, որ է գործողն և վարդապետն վերոյիշեալ գործուն» (էջ 33բ)։

[1] Նույն, էջ 34ա։

ճառով միևնույն ձեռագրի մեջ հաճախ պատահում են կրկնություններ։ Օրինակ՝ Պետ. Գր. Թ. № 753 ձեռագիրն սկզբում ունի մի շարք գիտելիքներ և խրատներ՝ մետաղների, քարերի, աղերի և այլ նյութերի նկարագրություն։ Այնուհետև միևնույն ձեռագրի մեջ նորից միևնույն խրատները կրկնվում են §§ 1—83 գործողությունների նկարագրությունից հետո։ Վերջին խրատներից հետո գալիս են §§ 89—208, որոնք իրենց բովանդակությամբ նման են §§ 1—83-ի մի քանի գործողություններին և մի քանիսն էլ կրկնվում են ձեռագրի վերջում, բայց բոլորովին լեզվական նմանություններ չունեն։ Իրենց նմանությամբ ամենից ավելի աչքի են ընկնում §§ 21 և 22 ու 36 խրատները, որոնք բովանդակում են «Դուռն անուանց քարանց և ականց» գլուխը։

* * *

Ալքիմիական ձեռագրերն սկզբնական շրջանում Հայաստան են մտել Արաբիայից, արաբական ազդեցության ժամանակ, մի շարք այլ գործնական գիտությունների հետ միասին (Ձիաբուծարան, Գիրք վաստակոց և այլն)։

Այդ են վկայում հետևյալ երեք փաստերը.

1. Ալքիմիայի մեջ գործ են ածվում բազմաթիվ նյութերի արաբերեն անուններ։ Օրինակ՝ ալքիմիական գաղտնագրությունների մեջ սովորական են արաբ. Շեմս (բառացի՝ Արև)—ոսկի. Ղամեր (Լուսին)—արծաթ. Մուշթարի (Լուսնթագ)—անագ. Մառեխ (Հրատ)—երկաթ. Օտարիտ (Փայլածու)—սնդիկ. Զոհրե (Լուսաբեր)—պղինձ. Զոհալ (Երևակ)—արճիճ, և այլն։

Կան բազմաթիվ նյութեր, որոնց հայերեն անունները սովորական են, բայց ալքիմիայի մեջ հիշատակվում են իրենց արաբական անուններով. օրինակ՝ արաբ. զուճաճ—ապակի. արաբ. քպրիթ—ծծումբ. զահապ—ոսկի, և այլն։ Երբեմն, նույնիսկ Հայաստանին հատուկ նյութերն արաբական անուններով են կոչված, ինչպես օրինակ՝ տինարմանի—հայկավ։

2. Ձեռագրերը հաճախ հիշատակում են նշանավոր արաբ ալքիմիկոսների անուններ, որոնց նկատմամբ, որպես հեղինակավոր վարպետների, մեծ վստահություն է արտահայտված։ Այդպիսիք են՝ Սահակի հայր Ապալայն, Ավելհոդհամ, Շեհ Ահմադ հայրն Հա-

պաշին, Իբն Բայթար, Ապուսինա(Նպուսինա), Ճեպերիոս (Մահմեդ բեն Աֆլա), Հրմուզ, Խալետ և այլն։

3. Ուղղակի հիշատակություն ունենք նաև այն մասին, որ ձեռագրերի մի մասը թարգմանված է արաբերենից։ Մի մեծ հատվածի վերջում հայ թարգմանիչն ավելացնում է՝ «Եւ այս ամէն օրինակաւ իսմայելին տետրերուն»։

Թե ալքիմիան երբ է մուտք գործել Հայաստան, դեռևս վաղաժամ է որոշել, որովհետև մեր ձեռքի տակ եղած աղբյուրների հիման վրա այդ միանգամայն անհնարին է։ Սակայն գիտենք, որ Կիլիկյան շրջանում արդեն հայերեն թարգմանություններ կային։ Օրինակ՝ Փարիզի National Bibliotheque-ի № 248 (Ancien fond armènien, № 109) ձեռագրի 59 V° էջն սկսվում է մի հատվածով, որի մասին Fr. Macler-ը գրում է. „Aautre Traité d'alchimie, traudit (fol 98) du persan en armènien à la demande de Hetoum (1224—1269) par le diacre Etienn"[1].

«Ծածուկ արուեստք»-ի մասին հնագույն մատենագիրները հիշատակություն չունեն։ Առաջին անգամ հիշատակում են ԺԲ դարի կիլիկյան հեղինակներ Սարգիս Շնորհալին և Ներսես Լամբրոնացին[2]։

Ալքիմիան արաբներից վերցնելով, հայերը ստրկաբար չկրկնեցին միայն փոխառած ռեակցիաները, այլ նորանոր փորձերի շնորհիվ, իրենց կողմից էլ շատ բան ավելացրին եկամուտ գիտության վրա։

Հայերի մեջ նշանավոր են հետևյալ ալքիմիկոսները, որոնք հեղինակ են մի շարք գյուտերի. Դանիել աբեղա հայոց[3], Թոխաղցի Օհան[4], Էրզրումցի տեր Հարություն[5], և այլն, որոնք ձեռագրերի մեջ հիշատակվում են որպես հեղինակավոր դեմքեր։

---

1 Fr. Macler., Cataloque des manuscrits arméniens et géorgiens de la Bibliotheque National, Paris, 1908 r., № 248.

2 Տես ՆՀԲ. «Արուեստք»։

3 Դանիելն ունի «Յաղագս ոսկի անելոյ» և «Յաղագս ոսկոյ» (Գ. Թ. ձ-իր №1291, էջ 83բ—84ա)։

4 Մեզ ծանոթ է միայն մի հատված Թոխաղցի Օհանի անունով (Գ. Թ. № 1291 ձեռագրի մեջ)։

5 Սրա անունով հայտնի են (նույն ձեռագրից) յոթը հատվածներ, որոնք գաղտագրած են աղտմագրով (էջ 131—136)։

Հովսեփի որդի դպիր Միքայելն[1] իր ձեռագիրը կազմել է 1629 թվին, իսկ մնացած հայ ալքիմիկոսները, որոնց հիշատակեցինք քիչ վերևում, ապրել են 17-րդ դարից առաջ, որովհետև նրանք բոլորն էլ հիշատակվում են դպիր Միքայելի կազմած ձեռագրի մեջ։

Արաբական ազդեցությունից հետո դեռևս Կիլիկյան շրջանում (13-րդ դար), հայերն ալքիմիական ձեռագրեր են թարգմանել նաև պարսկերենից[2]. այդ մասին մենք քիչ վերևում ծանոթացանք Fr. Macler-ի ցուցակից կատարած մեջբերումից, որտեղ ասված էր, թե Հեթումի օրով և նրա խնդրանոք պարսկերենից թարգմանած մի հատված կա, որն սկսվում է Փարիզի Ազգային մատենադարանի Հայկական ժողովածուի № 248 ձեռագրի 59ա էջից։

Քիչ ավելի ուշ Եվրոպայից Հայաստան մուտք գործեց եվրոպական ալքիմիան, նոր, բազմապիսի ռեակցիաների նկարագրություններով։ Այս նոր շարժումը տեղի է ունեցել ամենաուշը 15—16-րդ դարերում, քանի որ արդեն 17-րդ դարի սկզբին ունենք ոչ միայն թարգմանություններ, այլև այդ թարգմանությունների տարբեր վարիանտներ ու խմբագրություններ, ինչպես և այդ թարգմանություններից կատարված մի շարք արտագրություններ։

Այս շրջանում Արուսինայի գործերը նորից թարգմանվում են հայերենի, բայց այս անգամ ոչ թե արաբերենից, այլ լատինական թարգմանությունից։ Օրինակ՝ § 261-ի հատվածը, որ վերագրվում է Արուսինային, թարգմանություն է լատիներենից. այդ հատվածի մեջ, փոխանակ արաբական ազդեցության, լատինական ազդեցությունն է աչքի զարնում։

Այս շրջանում եվրոպական նշանավոր ալքիմիկոսների մի քանի կարևոր աշխատություններ թարգմանվել են հայերենի։ Այդ թարգմանություններից առանձնապես հիշատակության արժանի են «Տոմինիկոսի» և «Ըռիգարտ տը ֆուռնիվալ» գործերը։

18-րդ դարում քիմիայի և ալքիմիայի պայքարը Եվրոպայից մուտք գործեց Հայաստան։

---

[1] Հեղինակն է № 1291 ձեռագրի։

[2] Այս տեղեկությունը խիստ կասկածելի է, որովհետև հնում արաբ և պարսիկ անունները հաճախ էին շփոթում։ Հավանական է, որ թարգմանությունը կատարված լինի արաբերենից։

Եթե ալքիմիկոսները դարեր շարունակ քարոզում էին, թե «Ամենայն պղնձեղէն (իմա՝ մետաղյա—Կ. Ղ.) մարմինս բնութիւն կամի ոսկի առնել և ըստ բնութեան այսպիսի լինելոց էր, այլ վասն պակասութեան նիւթին կամ կերպին, և կամ երկոցունց, ի ներքս երկրի ակար ըստ պակասութեան և ըստ ավելորդութեան՝ անկատար մնան ի ոսկոյ բնութենէ, զոր և միջոցն արուեստիս այս է եթէ որպէս զայսոսիկ ի տկարութենէ առողջութիւն բերէ և ի անկարութենէ ի կատարելութիւն»[1], այժմ եվրոպական ազդեցության ենթարկված հայ արվեստաբաններն սկսում են ալքիմիային հակադրել գիտության ավելի բարձր աստիճանը՝ քիմիան: 19-րդ դարում գրված մի հատվածի մեջ ասվում է. «Նախնի քիմիականք ալքիմիայք կոչեցեալք, ընդունայն յուսով ի խնդիր եղեն բաղադրել զոսկի ի ձեռն հրոյ։ Բայց արդի քիմիականք ի սոյն յօգուտ փիլիսոփայութեան և արուեստից. և նորին ազատահարկ եղև ուսումնականաց ծաղկեցուցանել զայս ուսումն, որ և այժմ եղև մի յօգտակար գիտութեանց»[2]: Այս հատվածի հեղինակն արդեն գիտե, որ «Յորժամ այս տարերք [ջուր, օդ, հող և հուր] քակին ի միմեանց, լուծանին և այն մարմինք»: Եվ նույնիսկ գիտե, որ գոյություն ունեն 32 տարրեր, որոնք այլևս չեն տարրալուծվում: «Նոր քիմիականք զայսոքիկ սկզբունս են լուծեալ եղին 32 առաջածին տարերս»[3]:

Քիմիայի և ալքիմիայի պայքարն սկզբնական շրջանում սահմանափակվում էր միայն տեսական խնդիրներով և մասնավորապես նյութերի հատկությունների վերաբերող մի շարք ընդհանրացումներով, իսկ գործնական աշխատանքների մեջ գրեթե արտահայտություն չէր գտնում: Այդ երևում է նրանից, որ քիմիայի կողմնակիցներն իրենց գրությունների մեջ մեծ տեղ են տվել ոսկու և արծաթի վերաբերող բազմաթիվ հատվածների, և նրանց շարադրությունների բնույթը շատ չի տարբերվում ալքիմիկոսների գրածի բնույթից:

Եթե ալքիմիկոսներն իրենց տեսական խնդիրներում ձգտել են անիրագործելի իդեալների, մյուս կողմից էլ, նրանք իրենց

---

1 Գ. Թ. ձ-իր № 1291, էջ 1բ:

2 Գ. Թ. ձ-իր № 752, էջ 22—23:

3 Նույնը, էջ 23—24:

բազմաթիվ ռեակցիաների միջոցով արել են մեծ թվով գյուտեր, որոնք հետագայում ժառանգեց արդի քիմիան։ Այդ անհավասար պայքարում վերջիվերջո տապալվեց ալքիմիան՝ իր հնացած հասկացողություններով։

Ալքիմիայի վերջնական տապալումը տեղի ունեցավ շատ ուշ։ Դեռևս 19-րդ դարի առաջին կեսում եղել են մարդիկ, որոնք իրենց ուժերը փորձել են այդ ասպարեզում։ Վանեցի Բառումիսյանը, որ ապրում էր 19-րդ դարում, պարապում էր ալքիմիայով։

Ալքիմիայի ժառանգությունը դեռ մինչև օրս էլ ապրում է գյուղական բնակչության և մանավանդ տնայնագործ արհեստավորների գործերում։ Շալ ներկելու, գալաղելու, շորան բույսից «կալիքար» հանելու[1], մետաղները տնայնագործական եղանակով փափկացնելու և հալելու այլևայլ փորձերը բոլորն էլ ժառանգություն են մնացել ալքիմիայից։ Եվ եթե կեղծ ոսկու և արծաթի չարաշահության բացասական երևույթը հաշվի չառնենք, ալքիմիան ժողովրդական տնտեսության մեջ դրական խոշոր դեր է խաղացել անցյալում։

Մեր հնագույն ներկերը, որոնք դարավոր հնության ծոցից հանդես են գալիս իրենց արտասովոր թարմությամբ և պայծառությամբ, արդյունք են հին հայերի ալքիմիական արհեստի։

III

ՆՅՈՒԹԵՐԸ ԽՄԲԱՎՈՐԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ

Մի շարք նյութեր, որոնց հետ գործ են ունեցել ալքիմիկոսները, ժամանակին աշխատել են խմբավորել ու համակարգել և որոշ հատկանիշներ վերագրել այդ նյութերին։ Դասակարգման մեջ ամենից տարածված ձևը յոթնական սիստեմն է։ Այդ սիստեմի մեջ հետաքրքրականն այն է, որ նյութերի դասակարգման

[1] Հոկտեմբերյան շրջանի գյուղական բնակչությունը մինչև օրս էլ օգտագործում է կալաքար մոխիրը, որի քիմիական քննությունը հայտաբերել է հետևյալ հիմունքային կամ «ալկալյան» աղերը,—նատրիում կարբոնատ (սոդա)՝ 20% և կալիում կարբոնատ (պոտաշ)՝ մոտ 11%։ Այդ աղերը, ի միջի այլոց, ներկայումս կիրառվում են գործարաններում օճառ պատրաստելու համար։ Նույն նպատակին է ծառայեցնում ժողովուրդը, ըստ երևույթին շատ հին ժամանակներից սկսած, կալաքար մոխիրը։

ժամանակ ամեն կերպ աշխատել են պահպանել յոթը թիվը: Նույնիսկ այն դեպքերում, երբ նույն կարգին պատկանող նյութերի թիվը պակաս է յոթից, դարձյալ յոթը թիվն են պահպանել: Օրինակ՝ հոգիների (նյութերի խմբակցության) շարքին պատկանում են չորս նյութեր, որոնք են՝ սնդիկը, նաշատիրը, մկնդեղը և ծծումբը, բայց որպեսզի յոթը թիվը չխախտվի, ծծմբի և մկնդեղի տարբեր տեսակներն առանձին են հիշատակված: 7 թվի գաղափարն առաջ է եկել աստղագիտական հասկացողություններից, ըստ այդ հասկացողության՝ երկիրն ունի յոթը երկնային մարմիններ, որոնք պատկանում են արեգակնային համակարգին: Այդ համակարգի կենտրոնում գտնվում է մեր երկրագունդը, իսկ նրա շուրջը պտույտ են գործում մնացած յոթը մարմինները, որոնք ծառայում են երկրագնդին: Դրանք են՝ Արևը, Լուսինը, Հրատը, Փայլածուն, Լուսաբերը, Լուսնթագը և Երևակը: Այդ մարմիններից յուրաքանչյուրը շաբաթվա յոթն օրերից մեկի վրա իշխողն է: Այս հասկացողությունից է առաջ եկել 7 թվի սրբության գաղափարը, որ մեր ժողովրդի հեքիաթների և բանահյուսական այլ ստեղծագործությունների մեջ ապրել է մինչև մեր օրերը (յոթը դևեր, յոթը տարի, յոթը սարի հետև և այլն):

Համեմատաբար քիչ է հիշատակված չորրորդական սխեմը: Այդ եղանակը ծանոթ է միայն մի ձեռագրի, որը բոլոր նյութերը բաժանում է չորսական խմբավորումների, իսկ երբ միևնույն կարգին պատկանող նյութերի թիվը չորսից ավելի է, այդ դեպքում չորսը թվելուց հետո ավելացնում է «Յարտաքս սոցա մտանեն արուեստս այս», և թվում է մնացած նյութերը: Այս սխեմի ծագումը կապված է էմպեդոկլեսի հասկացողության հետ, ըստ որի բնությունը բաղկացած է չորս տարրերից: Այդ հասկացողությունն ամենատարածվածն է եղել հին աշխարհում, որ ընդունել է նաև Արիստոտելը և մեր հնագույն փիլիսոփայական գրականության մեջ էլ մնացել է նույնությամբ: Օրինակ՝ Եզնիկ Կողբացին խիստ հետաքրքիր մեկնություն է տվել չորս տարրերի միասնության մասին: Ըստ Եզնիկի տեսության՝ աշխարհս կազմված է չորս տարրերից, որոնք նաև «բնություն» են կոչվում: Այդ տարրերն են՝ ջուր, հուր, երկիր և օդ[1] (Եզնիկ, 14), որոնք

[1] Եզնիկ Կողբացի — Եղծ աղանդոց, Վենետիկի հրատ.

ներկայացնում են խոնավություն, ջերմություն, ցամաքություն և ցրտություն (Եզնիկ, 17)։ Աշխարհը գոյացել է այս չորս տարրերի խառնուրդից. այդ խառնուրդն է, որ նրանց բարեխառնում է, ապա թե ոչ նրանցից յուրաքանչյուրն առանձին վնասակար է. այսպես, հուրն առանց օդի՝ այրող և չորացնող է, խոնավությունն առանց ջերմության՝ ապականող է և ջուրը ողողում է երկիրը, իսկ երկիրն առանց ջրի՝ պապակվում է և ճաքճաքում, և օդն առանց խոնավության և ջերմության՝ վնասակար (Եզնիկ, 10)։ Բայց այդ կետում Եզնիկը երևի չի օգտվել անմիջապես անտիկ աշխարհի հեղինակներից, այլ օգտվել է Բարսեղ Կեսարացուց, որն ունի մոտավորապես նույնը, «Եւ յայտ լիցի, թէ երկիր ցամաք է և ցուրտ, և ջուր խոնաւ և ցուրտ, և օդ ջերմ և խոնաւ, և հուր ջերմ և ցամաք։ Եւ այսպէս իւրաքանչիւր ոք ի նոցանէն ընդ զօրութիւն իւրոյ ընկերին հաղորդեալ են, և լծակիցք միմեանց են հաղորդութեամբ ամենայն բնութեանցն և մերձաւորք միմեանց են զօրութեամբ միաբանութեան»[1]։

Նյութերի դասակարգման մեջ կան նաև հնգորդական սիստեմի մնացորդներ, մի սիստեմ, որի ծագումը կապվում է ձեռքի հինգ մատների գաղափարի հետ։ Այս եղանակն առավելապես պահպանվել է հաշվային արվեստի մեջ։ Օրինակ՝ հայ բոշաները գործ են ածում այդ սիստեմը։ Նրանք առանձին բառերով ունեն 1, 2, 4 և 5, հնգից ավելին հաշվում են 5+1 (6), 5+2 (7), 5+2+1 (8) և այլն. օրինակ՝ 1-ակ, 2-լուի, 3-լուի ակ (2+1), 4-չդար (4), 5-աթ մը (մի ձեռք), 6-աթ մ' ու ակ (մի ձեռք ու մեկ), 7-աթ մ' ու լուի ակ (մի ձեռք ու երկուս ու մեկ), 9-աթ մ' ու չդար (մի ձեռք ու չորս), 10-լուի աթ (երկու ձեռք) և այլն[2]։

* * *

Ալքիմիկոսները բոլոր նյութերը բաժանում են չորս մեծ խմբերի։

1. Անասունք — այստեղ հավաքվում են այն բոլոր նյութերը, որոնք կենդանական ծագում ունեն։

---

[1] Բարսեղ — Ճառ Բ., էջ 77, Վենետիկ։

[2] Հր. Աճառյան. — Հաշվային կարողության զարգացումը. «Հանդէս ամսօրեայ»։

2. Բույսf — *այն նյութերը, որոնք բուսական ծագում ունեն։*

3. Մեռյալf — *այն նյութերը, որոնք կենդանական և բուսական ծագում չունեն (իրենց հասկացողությամբ՝ անօրգանական նյութեր)։*

4. Ժողովf — *այն նյութերը, որոնք բաղադրյալ են։*

Ալքիմիկոսների կարծիքով՝ բաղադրությունններն են, որ առաջացնում են նոր երևույթ, նոր որակ։ Առանց այդ խառնուրդների՝ նյութերն անօգուտ են։ Այս կետը նման է չորս տարրերի խառնուրդի մասին Եզնիկի ունեցած կարծիքին։ Պետ. Գրական Թանգարանի № 753 ձեռագիրն ունի հետևյալ հատվածը.

«Այս չորս բանս վասն այն յիշեցաք զի թէ երկու մարդ ի մէկ տեղ գայ՝ եղև ժողով, և ամէն մարդոյ բնութիւն ցեղ մ՝ է և օրէնքն ցեղ մ՝. թէ ժողովեցան՝ եղէն մէկ. և թէ այր և կին միացան՝ ծնաւ որդի, եթէ ցանեցեր ցորեն և սերմունքն բազմացաւ և թէ մեռաւ նայ՝ կենդանացաւ և կու կերակրէ զամէն արարածքս Եւ այս հերիք է քեզ»։

Հաջորդ բաժանումը կատարված է նյութերի այլ հատկանիշների հիման վրա։ Բոլոր նյութերը բաժանված են 2 մեծ խմբերի. առաջին խմբի մեջ են դրված այն բոլոր նյութերը, «որք ունին յինքեանս հոգիս», իսկ երկրորդի մեջ են բոլոր այն նյութերը, «որ ոչ ունին հոգի»։

Հոգի ունեցող նյութ, կամ պարզապես հոգի (նույնն է նաև շունչ) — այն բոլոր նյութերն են, որոնք կրակի ազդեցությունից ցնդում են և կամ գոլորշիանում (վերանում են)։ Այս մասին Պետ. Գր. Թանգ. № 753 ձեռագիրն ունի՝ «Իսկ որ ի կրակէ փախչի և թռչի, նա հոգի է, զի մարմինն հող է և ծանր, և հոգին անաւսր է և հողմ»։ Հոգիները 7 տեսակ են՝ սնդիկ, նաշատիր, մկնդեղ (զառիկ), որ երկու անգամ է թված՝ դեղին և կարմիր, ծծումբ, որ դարձյալ երկու անգամ է թված, սովորական ծծումբ և կարմիր ծծումբ։ Զորրորդական սխեմի շարքում այդ բոլորը կապմել են չորս առանձին անուններ, որովհետև ծծումբն ու զառիկը մեկական անգամ են հաշված։

Սնդիկը *շնչերի կամ հոգիների շարքում միշտ առաջինն է հիշատակված։*

Նաշատիրը *համարվել է երկրորդ հոգին, որը հայտնի է եղել 2 կերպով։*

Զառիկը (մկնդեղ) չորրորդական սիստեմի մեջ մի տեղ է գրավում, իսկ յոթնական սիստեմի մեջ՝ երկու տեղ — սև ու կարմիր, բայց ըստ բժ. a 142բ-ի՝ «Գ ազգ է՝ ա սև, ա դեղին, ա կարմիր։ Ի գեանէն ելնէ»։

Ծծումբը հոգիների մեջ համարվում է վերջինը։ Չորրորդական սիստեմի մեջ ծծումբը գրավում է մի տեղ, իսկ յոթնականի մեջ՝ երկու տեղ—սովորական ծծումբ և կարմիր ծծումբ։

Ալքիմիական մի ձեռագրի ծանոթ են երեք տեսակ ծծումբներ՝ կարմիր, սպիտակ և դեղին, իսկ մի բժշկարան (a 153բ) գիտե երկու տեսակ. «Ծծումն երկու ազգ է՝ դեղին և սպիտակ կու զարնէ քիչ մի։ Դեղինն աղէկն է»։ Ծծումբը համարվում է ոսկու գույնը մտնող նյութ։

Մարմին կոչվել են ոսկին, արծաթը, պղինձը, կլայեկը և արճիճը։

«Եւ գիտացիր զի մարմինքն հինգ են, այսինքն՝ ոսկին, արծաթն, պղինձն, կլայեկն և արճիճ, որք անուանին ի փիլիսոփայից ըստ անուանց աստեղաց վասն խորհրդաբար համեմատ բնութեանց իւրեանց և սակս չհասկանալոյ անարժանից»։

1. Ոսկի. — Ալքիմիկոսների իդեալն էր, ամենաբարձր նյութը, որին ձգտում են մյուս նյութերը, բայց չեն հասնում՝ իրենց բաղադրության մեջ ավելորդ կամ պակասող տարրեր ունենալու պատճառով։

2. Արծաթ. — Ալքիմիկոսների երկրորդ նպատակն էր արհեստականորեն արծաթ ստանալ։ Ձեռագրերի մեջ բավականաչափ խոսվում է այն բոլոր միջոցների մասին, որոնցով հնարավոր է արծաթանման մետաղներ ստանալ։

3. Պղինձ. — Համարվում է ոսկու գույնը մտնող նյութ։

4. Կլայեկ. — Համարվել է արծաթի գույնը մտնող նյութ։

5. Արճիճ. — Սա ևս արծաթի գույնը մտնող մարմիններից մեկն է։

Հոգիներից և մարմիններից հետո թվարկված են քարերը, որոնք ևս երկու մեծ խմբերի են բաժանվում՝ հոգի ունեցող քարեր («Որ յինքեանս ունին հոգի») և հոգի չունեցող քարեր («Որ ոչ ունին յինքեանս հոգի»), բայց դեռ յոթ քարեր էլ կան, որոնք այդ երկու խմբերի հաշվից դուրս են, — իսկ յուրաքանչյուր քարի տեսակ էլ ունենում է յոթ ենթատեսակներ կամ յոթը գույներ։

Մի այլ ձեռագիր քարերը բաժանում է 13 տեսակի՝ «Եւ քարինքն են երեքտասան», ապա սկսում է թվել[1], և հետո էլ ավելացնում է. «Ամենայն անուանքս այսոքիկ քարեացն ի լադինն է, քանզի ոչ են թարգմանեալ»։ Այնինչ, մյուս ձեռագրերը թվում են ասխական և մեծ մասամբ արաբական անուններ։

Հոգի ունեցող քարերի շարքում են դասվում.

1. Մարղաժիթա (հայ. լուսաքար կամ ռոշնա, ռոշնինա. լտ. Margassita)։ Այս քարի մասին № 736 Ձ-իրն (էջ 167բ) ունի՝ «Հայ. մարղաշիթայ, արաբ. մաղայշիթայ, պս. րուշնայ։ Ինքն քար է կու ցոլայ և լուս տայ։ Աղեկն հատակ լինի։ Աւէ մատինի բժիշկն թէ ինքն չորս ազգ է. զէտ ոսկի, զէտ արծաթ, զէտ երկաթ, զէտ պղինձ։ Եւ աղեկն այն է որ զէտ ոսկի լինի»։ Իսկ 17-րդ խրատի մեջ հիշատակված են այս քարի յոթ տեսակների անունները. 1. Տահապի (դեղին)։ 22-րդ խրատի մեջ ասված է՝ «Իմացիր որ զտահապին դեղին և գեղեցիկ գոյն է թէ մահանքով (փորձաքար, ամպատակ) փորձեցիր նայ, ոսկեգոյն է և թէ հալեցիր՝ սիպիքայ արիր (ձուլել, ձուլվածք) զալէքարի ազով նայ (ողայով) եղև սիպիքա կարմիր, բայց չոր։ Եւ թէ սղկեցիր զինքն նայ (ծեծել, փոշիացնել) կու սղկվի և կու մտնէ ոսկու դեղերն»։ 2. Ֆուտի (սպիտակ գույն)։ № 22 խրատի մեջ ասված է. «Փտին սպիտակ է և կու մտնէ արծաթի դեղերն»։ 3. Հատիտի (սև գույն)։ Վերոհիշյալ խրատի մեջ ասված է՝ «և երրորդն սև է և չոր և եթէ կրացուցիր [մեծ ջերմության տակ կրային քարերը կորցնում են իրենց մեջ եղած թթվածինը և դառնում են փոշի] զինքն կու մտանէ ի յաքսիրն, որ ի վերայ կլայեկին լինի և գուներն մէկ մէկի մօտ են»։ 4. Նախասի (երկաթագույն). 5. Ըռասի (կլայեկի գույն). 6. Ըռուպի (այս գույնն անծանոթ է). 7. Շպի (դարձյալ անծանոթ է)։

Ամիրտովլաթը մարղաժիթան կոչում է նաև արաբերեն հաճար ըլ նուր և պուրիտուշ, որը մեզ անծանոթ անուն է։ Շատ ձեռագրերի մեջ չի թված յոթ մարղաժիթայի տեսակների անունները, այլ բավարարված է մեջը հիշատակելով, որ մարղաժիթան յոթը տեսակներ է ունենում։

2. Մղնատիս, երկաթաքաշ, խանդամանդ քարն է. № 730

---

[1] Պետ. Գր. Թանգ. ձեռագիր № 1291, էջ 44ա։

բժշկարան ձեռագիրը 168բ էջում ունի. «ինքն քար է, երկու ազգ է՝ մեկն ի ծովէն ելնէ և մեկն ի հողէն»։ Իսկ 26-րդ խրատի մեջ ասված է. «Եւ մղնատիսն այլ եօթը ազգ է. հատիտի (սև), տահալի (դեղին), ֆտի (սպիտակ), և նխասի (երկաթագույն), և դալղի (անծանոթ է), և զխպակլի (արծաթագույն), և ղավաղ (անծանոթ է), և շատնայ (արյուն քար, դուրի քար. լատ. Lapis lentrcularis, կարմիր գույն)։

3. Մղասխայ (մագնեզիա, մագնեզիոն).—23-րդ խրատի մեջ ասված է. «Եւ գխտացիր, որ մղնէսիայ եօթն է — սև և կակուղ, սև և չոր՝ կու մտանէ յապկոց գործն, և փոշէգոյն, և քահլի (անծանոթ է), և կարմիր։ Եւ ամէն կու մտանեն ի արծաթի գործերն՝ զատ ի կարմրէն»։ Պետ. Գր. Թանգ. № 1291 ձեռագրի 45բ. էջում ասված է՝

«Եւ է քար մի այլ, որ մակնեզիա կոչի և զանազան գունով գտանի, և է խոկ մի սեաւ՝ որպէս հող, և յորժամ կոտրի երևի նմա որպէս ակունք փայլեալ, և գտանի այլ որպէս երկաթ պինդ և կոչի որձ, և է որ այլ նման է պղնձի և ունի ակունք փայլածոյ և կոչի մատակ, որ է փուխ և է լաւագոյն քան զամենայն»։

4. Թիթիայ.—թութիա քար, լտ. Tutia lollyrium: 24-րդ բացատրությունը ծանոթ է յոթ տեսակ թութիաների. «Եւ թութիաներն Է ազգ է. առաջին՝ հնդի ըլ պատահ, հնդի ըլ խասայ և մահմուտիայ, և ամիտիայ, և մրազպիայ, և ճապաչիայ (մի այլ տեղում գրված է ճապալիայ) և սպիտակ այլ կու լինի, որ կու մտանէ ի սպիտակելն» (այսինքն արծաթի գործերը)։ Պետ. Գր. Թանգ. № 1291 Զ. 45 բ. էջում պահված է տեսակների նկարագրությունը, որտեղ այլ անուններ են հիշատակված։ Բերում ենք այդ հատվածը.

«Եւ է քար թութիայ, որ զանազան գունով. մինն է կանանչ և սուր, միւսն այլ է կանանչ հերձական և կոչի եմառուզար, և նոյն գտանի միւսն այլ, որ գա ի Հրեաստանէ, և է միւս այլ դեղին, որ կոչի չիմէ մաւմի, պղուրխս մին գոյն ունի և է քար երկնագոյն և նման է ի բուրգի և ունի ծին-ծին որպէս հասք ոսկւոյ, և է այլ դեղին և զանազան գունով որ կոչի ճեսատի և է միւս այլ որ կոչի մանուչեու»։

5. Շատնայ.—Գր. Թ. № 1291 Զ-իրն այս քարի մասին

գրում է՝ «Եքսանդխանայ, այսինքն է եմաղխաես, ղանաղան գունով է, զի գտանի կարմիր և խռփթի»։

6. Զաճ որ է արճասպ. — *Արջասպն է, որին մեր ժողովուրդը շիպ և սևաքեղ անունն է տալիս։ Հնում արջասպ են կոչվել ընդհանրապես բոլոր ծծմբատները։ Գրակ. Թանգ. № 752 Ձ-իրն արջասպը բաժանում է յոթ տեսակների.*

«Իսկ արջասպն Է ազգ է. առաջինն՝ դեղին է, երկրորդն՝ կանանչ, և երրորդն՝ կարմիր, և չորրորդն սուեն զլզանդ ձև է այլ կանանչ՝ խառնեալ ընդ հողոյ և պինդ է զարաղնուն, և հինգերորդն սուեն զլզաար [դեղին արջասպն է] և վեցերորդն սուեն զլզասխ»։ «Ղլզասխ որ է սպիտակ արջասպ» «գալգանտխ է թանաք [արջասպ] սպիտակ». (1291. 46բ)։

7. Մլհնդայ, — *հնդկական աղ։*

Հոգի չունեցող քարերը.

1. *Տալղ — լտ.* Talcum:
2. *Ծարիր — ծարրաքարն է, անտիմոնի։*
3. *Սատաֆ — գաղտակուրն է։*
4. *Պիլօռ — ըստ Բասմաջյանի՝ քարյա բյուրեղ. ֆր.* Cristal de roche:
5. *Դահնաճ — պղնձի ջրարնածխատն է։*
6. *Լաջվարդ — հայերեն անվանում են նաև կապուտաքար։ Այս քարը համարվում է ոսկու գնները մտնող նյութ։ Գործ են ածել մեծ մասամբ կանացի զարդերի համար։*
7. *Բժհան [անծանոթ է]. համապատասխան տեղերում նույն անունն է։*

Բացի վերոհիշյալ երկու խումբ քարերի տեսակներից, «որք արտաքո սոցա մտանին արուեստս այս, են սոքա». —

1. *Ալլէմխա. — կաղմին է։ Այս տարրը թեև հայտնաբերված է 1819 թվին, բայց նրա խառնուրդները ծանոթ էին շատ հնուց։*
2. *Ասրանջ — կարմրադեղ։*
3. *Սպիտաճ — կապարի բեկլան է։*
4. *Մլխտալխ, ճիշտ ձևը մլհտալղ, տալղի աղն է։*
5. *Ղալի — կալեքար։*
6. *Կիր — չմարած կիր։*
7. *Աղ. — Ալքիմիայի մեջ լայն իմաստով է գործածված։*

* * *

Մի այլ ձեռագրի մեջ քարերը բաժանված են ոչ թե հոգի ունեցող և հոգի չունեցող խմբերի, այլ ըստ նրանց արժեքի։ Այդ դասակարգումը կատարված է հետևյալ կերպ. բոլոր քարերը բաժանված են երեք մեծ խմբերի — հասարակ, միջնադաս և պատվական, բայց այնուհետև, դժբախտաբար, հասարակ և միջնադաս քարերն իրարից անջատ չեն թվարկված, այլ ասված է՝ «հասարակ և միջնադաս քարինքն՝ ամենայն տեսակ չեչաքարից»։ Չեչաքարը հրաբխային ծակոտկեն պինդ քար է, լտ. Pumex, որը հնում լայն չափով օգտագործվել է պեմզայի հետ միասին և գլխավորապես կամարաձևությունների միջուկում, որպեսզի ստորին մասերի վրա նստող այդ զանգվածները մեծ ծանրություն չունենան։ Դա ամենից պարզ նկատելի է Զվարթնոցի մեծազանգված մասերի մեջ։ Այժմ էլ գյուղացիներն ոտնաքար անունն են տալիս մի թեթև հրաբխային քարի, որով ոտները մաքրում են կեղտից։ Այնուհետև հիշատակվում են կնաքար — մարմարի բոլոր տեսակները. գետաքար — հեղեղատի խիճն է, որ բարբառով կոչվում է սոր. ռմբաքար — բոլորշի խճաքար. սալքար — շերտավոր կրային տեսակներ են. հրահան — կայծքար, դայլախաղ, չախմախ. եսայն — հեսանաքարն է. սամաղաքարն — (անծանոթ). մահանքն — (փորձաքարն է, որով ոսկու իսկությունն են փորձում) «և այլ սոցին նման սալացեալ քարինքն՝ փանդզահարն [ռս. беозар], երկաթաքաշն կամ ժառատն, մակնետ և մղլատուզ քար ևս ասի։ Բուսոց քարն կամ մարջան, քահրիբար, արծուաքարն և ամենայն քարինքն, որ ի կենդանեաց առաջ գան» (Խրատ 36)։

Այնուհետև անցնում է պատվական քարերին. բայց այլևս չի թվարկում, այլ «Պատուական ակունքն, որոց անուանակոչութիւնն, գոյնն և զօրութիւն մի ըստ միոջէ քննելն տեղի և ժամանակ ոչ գոյ մեզ, եթէ կամիս երթ բաց էֆէմերդին Ահարոնի չորեքկարգեան ականակապ վակասի երկոտասան ակունս գրած է ըստ եբրայեցոց եօթանասուն երկու թարգմանչաց լեզուաւ օրինակին»։ Այնուամենայնիվ, այստեղից իմանում ենք, որ պատվական քարերի թիվը տասներկու է։

Արդ, մեր կարծիքով, քարերի դասակարգման տարբեր եղանակներն արդյունք են տարբեր ժամանակների և ոչ թե նույն

ժամանակներում գոյություն ունեցող տարբեր կարծիքների։ Եվ այն սխեմը, որ մենք հիշատակեցինք վերջում, որտեղ քարերը տեսակավորված էին ըստ իրենց արժեքի, այսինքն՝ հասարակ, միջնադաս և պատվական, դա ոչ թե նրանց տեխնոլոգիական կլասիֆիկացիան է, այլ առաջ է եկել հնում։ Դրան զուգահեռ առաջ են եկել նրանց տեխնոլոգիական դասակարգման սխեմանե-րը, որոնց պատկերները հնար եղածին չափ աշխատեցինք պարզել քիչ առաջ։

Քարերն ըստ արժեքի դասակարգելու վերաբերյալ բավականաչափ նյութեր կան մեր գրչագրերում, որտեղ գրեթե նույն երեք խմբակցություններին են բաժանված նրանք, բայց մեծ մասամբ թվարկված են պատվական քարերը։ Գրակ. Թանգ. № 871 ձեռագիրն ունի մի հատված քարեղինաց մասին, էջմիածնի Ձեռագրատան հին ժողովածուի № 1670-ի մեջ կա մի հատված հետևյալ վերնագրով. «Մեկնութիւն ինչ ինչ ականց քարեղինաց», № 1737 ձեռագիրն ունի մի հատված՝ «Մխիթար բժշկի, վասն ազնիւ քարանց» և այլն, որոնք տվյալ դեպքում, ալքիմիայի հետ կապ չունենալու պատճառով մեջ չենք բերում, սակայն, որովհետև քարեղենների ուսումնասիրությունը և հրատարակությունը մեծ կարևորություն ունի մեր կուլտուրայի պատմության համար, ուստի և բնագետ ընկերների ուշադրությանն ենք հանձնում այդ նյութերի քննության հարցը, որով մինչև այժմ զբաղվել են միայն շատ քչերը, այն էլ ոչ մասնագիտական բնագիտական կրթություն ունեցող մարդիկ։

Ալքիմիայի նյութերի մեջ գործ են ածվել նաև անկիզելի օժանդակ նյութեր. դրանցից մեկն ազբեստն է, որ կոչվել է նաև ամիանթ. ահա թե ինչ է գրված նրա մասին 36-րդ խրատի մեջ։

«Ամիանթն, որ և ասվեստոս, այսինքն անշէջ և անկէզ, է անեղծ և անապառ քար, որ և ոչ ի հրոյ սպառի, եղծանի կամ ապականի։ Այս ասվեստոս և անշէջ քարս է նման թեփաւոր պաղեղին, յորմէ կերտի, շինի և գործի պատրոյք թուղթ և կտաւ անկիզանելի և անապական ի հրոյ. թվի թէ անշէջ քարս այս բաղկացեալ իցէ թեփաւոր պաղեղէ կամ թալխէ և ունի տարածեալ բամբակագոյն թելս և շերտս, ուստի թելաւոր և թեփաւոր շապ ասի այլոց»։

Ալքիմիային ծանոթ են բազմաթիվ բույսեր, բայց մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում նրանք խմբավորումների չեն ենթարկված։ Միայն նրանց մի որոշ մասն է նկարագրված և նրանց անունները բերված են մի քանի լեզուներով, գլխավորապես հայերեն (որ մեծ մասամբ պարսկերենից փոխառած բառեր են), պարսկերեն, արաբերեն և միջին լատիներեն լեզուներով, բայց մեջ չենք բերում այստեղ, որովհետև նրանց քննությունն ավելի մեծ չափով կապված է բժշկության, քան ալքիմիայի հետ։

* * *

Հայկական ալքիմիային ծանոթ են ներքոհիշյալ հայ և հայերենի թարգմանված օտար ալքիմիկոսների գործերը.—

1. Ալի Աբու Սինայ *(գրված է նաև Ապուսինայ, Ապու Ալի Պու Սինայ, Եւպուսնայ, իշխան Այպուլայի Եպօնինայ, Այպուլայի Եւպօնսինայ և այլն)։—«Սկսանեմք ըստ Աբուսինայի։ Յաղագս մարմնոց և շնչերոյ»։ Եւպուսինայ «Յաղագս Իգսիրի ասէ՝ որ է քիմիայ»։ Գ. Թ. Ձ-իր № 1291, 33բ և 36ա։ Նույնը Վ. Մ. Ձ-իր № 121, 20ա և 23բ։*

2. Աղամոս—*«Աղամոս վարդապետին քիմիական»։ Գ. Թ. Ձ-իր № 1291, 36բ.*

3. Ամիրաք—*«Այս է գուռն Ամիրաթին»։ Գ. Թ. Ձ-իր № 753, § 203։*

4. Ապելենիաս—*«Ապելենիասին խոսքն»։ «Ապելենիասին է բանս»։ Վ. Մ. Ձ-իր № 121, 123բ և 124ա։*

5. Ապողոն իմաստասէր.—*«Ջայս արար Ապողոն իմաստասէրն և շինեց բաղանիս առանց վառելոյ»։ Գ. Թ. Ձ-իր № 752, § 234։*

6. Ապսլային հայրն Սահակի որդին.—*«Ապսլային հայրն Սահակի որդին արար զայս իմաստութիւնս»։ Գ. Թ. Ձ-իր № 753, § 105։*

7. Ավելհողհամ.—*«Գիր որ պատուիրեց ուղիղն որդոյ Ավելհողհամ»։ Գ. Թ. Ձ-իր № 753, § 104։*

8. Դանիէլ Աբեղայ հայոց.—*«Յաղագս ոսկի առնելոյ ըստ գործողին գայլին (Քայլին), որում անունն էր Դանիէլ և էր աբեղայ ի հայոց ազգէն»։ Գ. Թ. Ձ-իր № 1291, թ. 83բ։ Նույնը նաև Վ. Մ. Ձ-իր № 121, էջ 56բ։*

9. Չէպիռ (Ջեպեռ).—«Բանք Չէպխոյ։ ...և այլ ասաց Չէպեռն»։ «Չէպխոյին ասացուածքն»։ Վ. Մ. Ձ-իր № 121, Թ.Թ. 116բ և 115ա։ Կարծում ենք, որ սա նույն Ճեպերիոսն է ըստ Գ. Թ. Ձ-իր № 1291, էջ 36բ։

10. Էլգազի իմաստասէր.—«Էլգազի իմաստասէրն, որ դայս արուեստս շինեց, նա ալ երկար ոչ քննէ»։ Գ. Թ. Ձ-իր։

11. Էրզրումցի տէր Յարութիւն.—«Էրզրումցի տէր Յարութիւնին բանն է այս»։ Գ. Թ. Ձ-իր № 1291, Թ. 131ա և 136ա։

12. Ըռազիզ.—«Ասէ վարդապետն Ըռազիզ, եթէ լուսին է պարզել նոյն լուսալ մասերուն»։ Գ. Թ. Ձ-իր № 1291, Թ. 39բ։ Նույն անունն ունի Վ. Մ. Ձ-իր № 121, Թղ. 27ա, Ըռազիս ձևով։ Սրանից թարգմանված չէ որևէ բան, այլ մեջ է բերված նրա կարծիքը։

13. Ըռիզարտ տր փուռնիվալ.—«Այս է Առուտուրն Ըռիզարտ տը Ֆուռնիվալ, որ է գործողն և վարդապետն վերոյիշեալ գործոյս»։ Գ. Թ. Ձ-իր № 1291, Թղ. 33բ։ Նույնն ունի նաև Վ. Մ. Ձ-իր № 121, Թղ. 20ա։

14. Թոտուր.—«Թատուրին բանն է լաւ ընտիր»։ Գ. Թ. Ձ-իր № 1291, Թղ. 136ա։

15. Իբն Բայթար. — „Traité d'alchimi d' idn Baïtar, NB, Ձ-իր № 248 (հին ժողովածու, № 109)[1] Թղ. 34v°։

16. Իգիար (Էգիդ) որդի.—«Գիրք որ կայ յինքն Խալէտի պատուէրքն, Իգիար [Էգիդ] որդոյն, զոր ինքն իւր որդւոյն պատուիրեաց»։ Վ. Մ. Ձ-իր № 121, Թղ. 101բ։

Սրան է վերագրվում այն հատվածը, որը Գ. Թ. Ձ-իր 1291-ի, Թղ. 132ա-ում վերնագրված է՝ «Պատուէրքն Կղիտի զոր պատուիրեաց որդւոյ իւրոյ». ուստի կարծում ենք, որ Իգիար (Էգիդ) անվան ճիշտ ձևը Կղիտ է։

17. Իսայի կամ Եսայի.—«Դարձեալ դուռն Իսայի ասածն». Գ. Թ. Ձ-իր № 753, § 21։

18. Խալետ.—«Ասաց Խալետն, թէ». Գ. Թ. Ձ-իր № 753, § 16, «Գիրք, որ կայ յինքն Խալետի պատուէրքն»։ Վ. Մ. Ձ-իր № 121, Թ. 101բ։

---

1 Տես, Fr. Macler—Cataioque de Manuscrits arme'niens et Ge'orgiens d' la BN. P., 1908.

19. Կղիտ.—«Պատուէրքն Կղիտի, զոր պատուիրեաց որդւոյ իւրոյ»: Պ. Թ. Ձ-իր № 1291, թ. 132ա. Նույն անունը Վ. Մ. Ձ-ում գրչասխալի հետեւանքով գրած է Էղիդ—Իղիար:

20. Հրմուզ.—«Ասաց Հրմուզն: Իմացիր որ...» Պ. Թ. Ձ-իր № 763, § 21:

21. Ղազար եպիսկոպոս.—«Դուռն Ղազար եպիսկոպոսին Քուռիեայէ»: Ձ-իր Պ. Թ. № 1291, թղ. 124բ:

22. Ճապըր.—«...և ասաց Ճապըրն, թէ առ քանի կամիս»: Պ. Թ. Ձ-իր № 753. § 234: «Ասաց Ճապըրըն որդի Յիանին, թէ չէ հասէր ի յայս իւղս»: Պ. Թ. Ձ-իր № 753, § 104 (հմմտ. Ջէպիռ և Ճեպերիոս):

23. Ճեպերիոս վարդապետ.—«...և ասաց Ճեպերիոս վարդապետն արուեստիս»: Պ. Թ. Ձ-իր № 1291, էջ 36բ (հմմտ. Ջէպիռ և Ճապըր):

24. Մէրէտէմ իմաստասէր.—«Իմաստասէրն Մէրէտէմ ասաց, եթէ միանալն մարմնոյն» և այլն, Վ. Մ. Ձ-իր, № 121, թղ. 40ա:

25. Միքայէլ դպիր որդի Յովսեփի.—«Պահչիսարայ մեծ քաղաքի» բնակիչ, հեղինակ Պ. Թ. № 1291 ձեռագրի. գրել է 1624 թվին:

26. Յիւսէին տէտէ.—«Դուռն լուսնի* Յիւսէին տէտէին», «Թուղթի Յուսէին պաշային գործն է ի ձեռն Յուսէին տէտէին»: Պ. Թ. Ձ-իր № 1291, թղ. 126բ:

27. Յովհաննէս Գրիզօակ (կամ Կիրիզօկ).—«Յովհաննէս Գրիզօակն: Այսպէս արար զկիր զօհալին»: Պ. Թ. Ձ-իր № 752, § 243: Նույնը Վ. Մ. Ձ-իր № 121, թ. 52բ:

28. Շեհ Ահմադ.—«Դուռն մուշթարոյ զոր եդուր Շեհ Ահմադի հայրն հապաշին»: Պ. Թ. Ձ-իր № 753, § 22:

29. Պաւնուփաց.—«Ասաց Պաւնուֆացն» Պ. Թ. Ձ-իր № 752, § 281:

30. Պուլիդարայ.—«Ջուր Մուրատասանկի ըստ գրոցն Պուլիդարայի»: Ձ-իր Պ. Թ. № 1291, թղ. 73բ. Նույն ձեռագրի 43 էջում կա «Պուլի դարա (կամ Պոփդարա) որդոյ Ջէթարի աբի Ջէթադու». այսպէս.—ըսկսանի գիրքն Պուլիդարա որդոյ Ջէթարի աբի Ջէթադու: Ըստ երևույթին սա նույն Պուլիդարան է, որի հայրանունն աղճատված է վերջին վկայության մեջ:

31. Սեաւ վարդապետ.—«Զհնարս զայս կալաւ զպղնձագործն ի Սեաւ վարդապետէ». Վ. Մ. Ձ-իր № 121, էջ 52բ:

32. Սէնէկլա իմաստասէր.—«Ասէ Սէնէկլա իմաստասէրն», Գ. Թ. Ձ-իր № 1291, թղ. 41ա:

33. Տոմինիկոս.—«Ասէ Տոմինիկոս», Գ. Թ. Ձ-իր № 1291, թ. 90բ. հայտնի է մեջբերումով:

34. Օհան Թոխաղցի.—«Թոխաղցի Օհանին բանն է այս», Գ. Թ. Ձ-իր № 1291, թղ. 132բ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ալքիմիան Հայաստան մուտք է գործել Արաբիայից և լայն տարածում գտել ամբողջ Հայաստանում:

2. Ալքիմիան դասված է եղել «Ծածուկ արվեստ»-ների շարքը: Նրանով զբաղվող «իմաստասերները», «փիլիսոփաները» կոչվել են աքսիր շինողներ (15-րդ դար), քիմիականք (16-րդ դար): Ալքիմիական ձեռագիրը կոչվել է «Վկայական գիրք», «Աքսիրի գիրք» և «Քիմիական գիրք»:

3. Ալքիմիական տեխնոլոգիան խիստ գաղտնի էր պահվում և ժառանգաբար անցնում էր հորից որդուն կամ ազգականից ամենամոտիկ ազգականին:

4. Ալքիմիական տեքստերը պարունակում են ոչ միայն կեղծ արծաթ և ոսկի ստանալու ձևերի նկարագրություն, այլև մի շարք պիտանի նյութերի նկարագրության և կլասիֆիկացիայի փորձեր:

5. Ալքիմիական ձեռագրերը փոխադրություններ և քաղվածքներ են տարբեր լեզուներից և տարբեր ձեռագրերից, որոնց մեջ կարևոր նյութերի անունները միշտ գաղտնագրված են լինում: Սկզբնական թարգմանությունները կատարված են արաբերենից և պարսկերենից. ավելի ուշ՝ 14—15-րդ դարերում, թարգմանված են նաև մի շարք լատինական հատվածներ:

6. Հայ ալքիմիկոսները ոչ միայն կատարողներ են եղել, այլև հեղինակներ են մի շարք գյուտերի:

7. Ձեռագրերի տարբեր խմբագրությունների համեմատությունը բանալի հանդիսացավ ալքիմիական գաղտնագրությունները վերծանելու և նյութերի հայկական ու եվրոպական անունները

ճշտելու գործում։ Այս խնդրում կարևոր օժանդակ աղբյուր եղան Կ. Հ. Բասմաջյանի հրատարակած Ամասիացու «Անգիտաց Անպէտը» և բժշկական բազմաթիվ ձեռագիր մատյաններ։

8. 18-րդ դարում սկսվեց ալքիմիայի և քիմիայի պայքարը, որի ընթացքում, 19-րդ դարի առաջին կեսում, վերջնականապես տապալվեց ալքիմիան։

9. Ալքիմիայի հարուստ փորձերը ժառանգություն մնացին արդի քիմիային և տնայնագործ արհեստներին։

Մ Ա Ս Ն

Բ

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

ՔԱՂԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ

I

ԽՐԱՏՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

ՀԱՏՎԱԾ Ա.

(Ձեռ. Դ. 1ա—6բ)

Աւգնեա ինձ աստուած, որ է օգնական և գործող բնութեան եօթն ազգ իրվուն որ ի քանէ ելանէ՝ ոսկին, արծաթն, պղինձն, կլայեկն, արճիճն, երկաթն և անագն որ է այսոց ամենեցուն մայր և կոչին այս վերոյիշեալ իրվուս ըստ հողոյ աստղաբաշխութեան. արեգակն՝ ոսկոյ, լուսինն՝ արծաթուն, զօհրան՝ պղինձն, մուշթարին՝ կլայեկն է, զօհալ՝ արճիճին, մառեխ՝ երկաթին, օտարիտ՝ անագին։ Եւ ժամ ժամ պղինձն կոչէ օտարիտ։ Եւ այլ է արուեստ, որ ունի ի յինք ուսուցանել և լնուլ զթիւրութիւն զվերոյիշեալ մարմինրուն և կերպերուն և բերել կատարելութիւն բնական։ Զվերոյայտնեալս այսպէս իմանամք, զի արուեստ ասացաք զի համարակաց է առանց երկբայութեան, զի նախ քան զգործելն ղանազան են և զկնի գործելուն միանան։ Եւ վասն զի գիտացուք եթէ յաղագս ինչ իրվոյ գործի արվեստ այս, մեք դրաք անուանք ամենայն պղնձեղինացն, զի ի ճշմարիտ բնութիւն իւրեանց չորս իրս իմանամք. այսինքն՝ զնիւթն, և զծնունդն, և զպտուղն և զանազանութիւն, որպէս այլ լիակատար քաներո գիրքն ուսուցանէ։ Զթիւրութիւն և զլրումն այսպէս իմանամք, զի ամենայն պղնձեղեն մարմինս բնութիւն կամի ոսկի առնել, և ըստ բնութեան այսպիսի լինելոց էր, այլ վասն պակասութեան նիւթին կամ կերպին և կամ երկուցունցն, ի ներքոյ երկրի տկար՝ ըստ պակասութեան և ըստ ավելորդութեան՝ անկատար մնան ի ոսկոյ բնութենէ. զոր և միտքն արվեստիս այս է, եթէ որպէս զայսոսիկ ի տկարութենէ առողջութիւն բերէ և

[1] *Լիապես պահպանել ենք բնագրերի ուղղագրությունը, իսկ որտեղ հարկ է եղել որոշ փոփոխություն մտցնելու, այդ նշել ենք ծանոթությամբ նույն էջի տակին և կամ ճիշտ ձևը գրել ենք քառակուսի փակագծերի մեջ։ Հեղինակ*

ի անկատարութենէ ի կատարելութիւն։ Եւս առաւել զպակասութիւն լնլով և զաւելորդութիւն սակաւեցուցանելով, զի արուեստս զայս և զպղինձեղինացն նութիւն և իւրեանց կերպարանափոխութեան, որպէս վերոյ ասացաք, ունի արուեստս այս կերպարանափոխութիւն փոխել զպղինձեղէնսն։

Երկու ազգ է կերպս այս արուեստախ. առաջին է գիտենալ, զի ամենայն պղընձեղէնսն ի սնտիկէն և ի գուգուրդոյ ներկին եփել, ըստ զանազան յատկութեանն ի յարգանդէ յերկրի ծնանի և դարձեալ ամենայնն քակտելով ի սնտիկ դառնա զարդ զգունսն, և զգունսն հանել ի նոցանէ իմաստնոցն է, նախ էին յառաջ քան զերկըն, որպէս պաղն ջերմութեամբ լքանա և ի ջուր դառնա որպէս նախ էր. նոյնպէս և զպղընձեղէնսն գոյանան զանազան ի նոյն նիւթէ այլ և այլ։ Եթէ սնտիկն մաքուր լինի և գոյն գուգուրդին միջակ և ժամանակ միջակ՝ նա ոսկի ծնանի. եւթէ այս ամենայնս իցէ, այսինքն է՝ մաքուր սնտիկն, և միջակ գոյնն գուգուրդին և միջակ ժամանակն ոչ իցէ, զի սակաւ եփի՝ նա արծաթ լինի։ Եւ թէ սնտիկն մաքուր լինի և քուգուրդն թանձր և եփն սակաւ՝ նա կլայեկ լինի։ Ապա եթէ երկու նիւթն, այսինքն է սնտիկն և գուգուրդն թանձր լինի և սակաւ եփի՝ նա արճիճ լինին։ Եւ թէ նիւթն թանձր է և յոյժ գոյնով, աւելի եփին՝ նա պղինձ լինի։ Եւ թէ նիւթն թանձր և անսահման ջերմութիւն, երկար ժամանակաւ եփին՝ նա երկաթ լինի։ Եւ ի նոյն նիւթէս ցեղ մի այլ պղնձեղէն ծնանի, որ կոչի ի լադինն ադադնիյ, որ ի հետ այլ պղնձեղինացն թըվի, որ ոչ է երկաթ և ոչ պղինձ, և վասն զի ոչ գտանի նայ։ Էլգաղի իմաստասէրն, որ զայս արուեստս շինեց, նա այլ երկար ոչ քննէ։

Երկրորդ կերպն արուեստիս այս է. որ զինչ ի վերոյիշեալ պղնձեղէնքն տկարութիւն կայ և պակասութիւն կամ աւատ նայ՝ հակառակ դեղերով և հնարիւք ի առողջութիւն և կատարումն բերել հանապազ նոյն ինքն, որ ըստ բնութեան ի յինքն պակասութիւն կա նա՝ հնարիւք կատարի ի նոյն նիւթն, մանաւանդ փոշովն, որ իքսիր կոչի, այսինքն է քիմիա։

Քիմիայն դեղ է, որ ի բազում ընչից ժողովի և գոյանայ, զորս զդեղս իմաստասէրքն ոչ ամենեքին թաքուցանեն, և եթէ յայտնեն՝ ոչ ամենևին պարզ յայտնեն, այլ բազում և ազգի ազգի տարակուսիւք, զի մի ամենեքեան գիտասցեն, բայց միայն այ-

նոքիկ, որ բաղում չարչարանօք, ջանիւք, և աքնութեամբ և սրամտութեամբ իմացեն: Նոյն դեղս այս պղինձեղինացն տկարութիւն այնպէս բժշկէ որպէս թրեկեան զմարդկան տկարութիւնն: Որ և զնոյն դեղս ոմանք մի իմաստասէրքն թոյնք կոչեն վասն այսր պատճառի, զի որպէս թոյնքն ի մարդկային մարմինն ներգործէ, նոյնպէս և զդեղս և պղնձեղինացն ի մարմինն: Եւ թէ սակաւ մի լիցի՝ ընդ ամենայն մարմինն ցրւի փութով և ցրուելով ի յայլ ցեղ պղինձեղինին կերպարան փոխէ, և այս լինի կամ հալելով և խառնելով զդեղն և կամ նախ մանրելով, զկնի մանրելուն հալել հանդերձ դեղովն: Եթէ զդեղս այս և կամ զնիւթս որպէս արարցես՝ ի գիրքն իքսիրի այսինքն է՝ քիմիական գացես, և եթէ հասկանաս՝ լաւ միտս առ հասկացիր:

Աւգտակարութիւն արուեստիս այս երկու տակ է, զի և հոգին յորժամ արատեալ է՝ զնա ուրախութիւն պարգևէ, և զմարմինն ի յաղքատութեան ծառայութենէ ազատէ: Եւ դարձեալ երկրորդ է, եթէ արուեստս այս ունայն է և դատարկ, ասէ, եթէ պղնձեղէնս մինն ի միւս այլն ոչ կարէ փոխել, զմարմինս պղինձեղինացն բնականքն են, այսինքն է գործ բնութեան, և գործ մարդկան արուեստական է և ոչ բնական: Արդ, որպէս բնականն ի արուեստականէն զանազան է, նոյնպէս ոչ կարէ բնականն արուեստական լինել և ոչ արուեստականն՝ բնական, զնոյն և ոչ պղնձեղէնան կարեն արուեստիւ գոյանալ: Եւ դարձեալ, պղինձեղինացն խառնումն ըստ բնութեանն չափով է և չքօք, և իւր սահման ունի, և զայս ոչ ոք մահկանացու կարէ գիտել, ապա և թէ ոչ ոք գիտէ՝ ոչ ոք կարէ գործել: Եւ դարձեալ, զի տեղն ծննդեանն և գոյանալոյ պղինձեղինացն յարգանդ և ի մէջ երկրի է, որպէս գոյանալ ամենայն կենդանոյ և ծննդեան ի յարգանդ մօրէ: Եւ ոչ ի ծննդական կարէ ծնանել և գոյանալ առանց արգանդի մօր, նոյնպէս և պղնձեղինքն կարեն ծնանիլ և գոյանալ՝ եթէ ոչ յարգանդի մէջ երկրի: Եւ դարձեալ, զի պղընձեղէնան թըվեալ ժամանակ ունին ի բնութեան մինչև գոյանան. այլ ժամանակն այն և թիւն ի մարդկանէ ծածուկ է, նոյնպէս և պղինձ[եղինացն գործել ի մարդկանէ ծածուկ է: Եւ դարձեալ. զի պղընձեղինացն բնութիւնք զանազան են, որպէս մարդոյն և իշոյն, և որպէս մարդն էշ կամ էշն մարդ ոչ կարէ լինել, նոյնպէս և նոյն պղընձեղէնն ի միւս ոչ կարէ փոխել: Եւ դարձեալ. եթէ մի պղնձե-

զԷնն ի միւս այլ փոխի, հարկ է զի գոյնն այլ փոխեսցի և կրակն զգոյնսն այլայլէ և աւիրէ, և եթէ գոյնսն այլայլեն և աւիրեն՝ դադարկ է և ունայն փոխումն պղնձեղինաց։ Եւ դարձեալ, եթէ իմաստասէրքն իմացեալ էին և գիտացեալ, եթէ արուեստս այս ճշմարիտ է նա՝ յայտնի և պարզ տուեալ էին մեզ և ուսուցել որպէս զայլ արուեստն. և ոչ զոք գտանեմք յիմաստասիրացն, որ զարուեստս այս յայտնի և պարզ տուեալ են մեզ։ Նոյնն Հետևողքն արուեստիս այս վարդապետ և ուսուցիչ յայտնի ոչ ունին, այլ հին թղթեր և բանկներ ծածուկ և մթիլին բաներ անհասկանալի, մանաւանդ որպէս թէ պատմեց այր մի եթէ առ զայս և զայս, և խառնէ զայս ի յայս՝ և լինի այս յայսոր։ Եւ դարձեալ, եթէ արուեստս այս ճշմարիտ է ոչ կարէր թաքչել և պահել այնչափ ժամանակ երկար և այնչափ չարչարանաւք և յօժարութեամբ քննեալ և պտռեալ ի բազմաց և ոչ գտեալ յումեքէ։

Պատասխանեմ և ասեմ, եթէ ճշմարիտ է արուեստս և թէպէտ ծնունդն պղնձեղինացն ի յերկիր բնական է, բայց և արուեստիւ կարեն գոյացուցանել, զի գործն մարդկան հանդերձ բնական գործաւքն ի բազում իրս զնոյնն գործեն, մանաւանդ որպէս յայտնի է ի հուր, ի յօդ, ի ջուր և ի հող, ի քաներ, ի ծառք և յանասունք այսու ամենայնէն կարէ յայտնիլ [ինձ հուրն կայծակմանն բնական է և հուրն որ քանէ ելանէ՝ արուեստական է և երկոքեան հուր են. և աւդս այս հասարակաց որ ընդ մեզ է, և շոքին որ յեփելոյ ելանէ՝ երկոքեան աւդ են. և հողս այս, որ վաստակիմք և կոխեմք և հողն այն, որ յատակն ջրոյն ժողովի և մնայ զկնի եփելոյ]՝[1] երկոքեանն հող են։ Զնոյն և թութիան և նշատիրն. կան որ բնական են՝ ի քանէ, և կան որ հնարիւք և արուեստիւ գոյանան՝ նա այլ ազնիւ են քան բնականն, ևս առաւել նշատիրն։ Եւ ծառն վայրի բնական է և ծառն որ տնկեալ է և պատրուսեալ՝ արուեստական է, և երկոքեան ծառ են։ Եւ մեղուն որ բնական է և այն որ յնջղուն ծնանի՝ երկոքեան մեղու են։

Ոչ թէ արուեստն զամենայնսն զայս գործէ, այլ գործական բնութեան օգնէ, զի գերագոյն գործեսցէ. զի բնական գործն

[1] Դ ձեռագրի 4-րդ թերթն ընկած է, այդ պատճառով էլ քառակուսի փակագծի մեջ առած հատվածը լրացրինք էջմ. մատենադարանի 2527/2527 ձեռագրից, որ միանգամայն նույն բովանդակությունն ունի ինչ մեր Դ ձեռագիրը։

օգտակարութեամբ վերագոյն է քան թէ առանց օգնութեան. իսկ օգտակարութիւն արուեստիս այս զբնութիւն իւրոյն ոչ փոխէ, այլ գործուն բնութեանն օգնէ, իսկ մարդկան գործ և բնական. ըստ էութեան՝ պատահական, ըստ արուեստին՝ նոյնն։

Յաղագս չափուն և խառնմանն պատասխանի, զի զնշաւորին զթիւնն թէ որչափ է կամ թէ որպէս թիւ բնութիւն ի քանն ոչ գիտեմք, բայց թեպէտ ոչ գիտեմք օրէ գործեմք նշաւիր արուեստով, որ վերագուն է քան զբնականն, որ ի քանէ։

Եւ յաղագս տեղուն ծնընդեանն պատասխանեմք, զի որպէս անասունն ի անասունի յարգանդն ծնանի, զնոյն և ի ներքո ծըծերուն և կամ ի յաղբին մէջն կենդանի ծնանի։

Յաղագս ժամանակին պատասխանի, զի թէպէտ զթըվեալ ժամանակին, որ ըստ բնութենէ ոչ գիտեմք, այլ զոր բնութենն ի բազում ժամանակս ներգործէ, արուեստն՝ սակաւ։

Յաղագս զանազանութեան պղնձեղինացն. թէպէտ ի գոյնսն զանազան են, այլ նիւթն հասարակաց է և ամենայնն ի մի նիւթէ ընծային և գոյանան մանաւանդ որպէս պղնձեղէնն ի հուր հալեալ և թափեալ և կաղըեալ ինչ կերպարանի և ձև առնու, զնոյնն և ցեղ մի այլ պղնձեղէն ծեծեալ կռանաւն, առանց հալելոյ, զնոյն կերպն և ձևն առնու. և թէպէտ զանազան են պատահմամբ, բայց խառնին և միաւորին ընդ միմեանս։

Եւ յաղագս հրոյն պատասխանի. զի շփոթէ և այլայլէ զգոյնսն, ընդհակառակն տեսանեմք, զի հուրն ոչ շփոթէ և այլայլէ զգոյնսն, այլ հանդերձ թութիայովն գոյնն տայ պղնձին։

Զինչ զարմանալի է եթէ մարդիկն յաղագս արուեստիս այս ժլատ են, զի ուսուցանէ արծաթ և ոսկի գործել, զի եթէ ի փոքրագոյն և ի թեթև իրվուն զոր ժառանգեն մարդիկն ժլատ են, որչափ ևս այս, որ այնչափ պատուական է։ Ճշմարիտ է, զիմաստասէրքն զարուեստս զայս իմացան և ճշմարտեցին և կամեցան տարակուս և ի թագուստ ունել։ Եւ չէ արուեստս այս երկրայ, այլ ճշմարիտ է և ստոյգ, և բազում ուսուցանողք և վարդապետք կալեալ է արուեստս և ունի այժմ որպէս կեցուցանեմք զրովք մի, որ կոչի վկայական գիրք յայտնապէս, զի ամէն իմաստասէրքն իւրեանց տասցվածքն և ի գրովին յիշեալ են։ Մանաւանդ զի գիտեմք, որ կան քարինք, որ զպղնձեղինացն գոյնն փոխեն ի այլ գոյն հաստատ և մնացական։ Որպէս գիտեմք, եթէ ոք զթու-

թիայն ի յեռացեալ պղինձն արկանէ նա՝ զկարմրութիւն ի գեղ-
նութիւն դարձուցանէ: Եւ եթէ զառիկն ի յեռացեալ պղինձն
արկանես նա՝ զկարմրութիւն սպիտակութիւն դարձուցանէ, թէպէտ
և սակաւ մի ապականէ, զնոյն ապականութիւնն բժշկել իմաստ-
նոցն է, և սակաւ մի կլայեկ զբաղում մանրուծս պղնձի ի
սպիտակութիւն փոխէ, թէպէտ և յոյժ չորացուցանէ: Եւ կեղև
նռան զերկաթն պողպատ պագեցուցանէ: Եւ ամենայն ապացոյցս
այս գործողացն յայտնի է. եթէ ամենայնս այս առանց իմաստուն
հնարից և խառնուն կու ածած գործին, զինչ զարմանալի է և
կամ անհնարին: Եւ ըստ իմաստասիրացն այլ կատարեալ և պա-
տուականագոյն է փոխել զպղնձեղէնսն:

Արուեստս այս յոյժ վերագոյն է և պիտուրական, քան զայլ
բազում արուեստս, զի ծախքն սակաւ է և շահն բազում, և զնուենն
և զհալածն սակաւ է և հանգիստն՝ բազում, ժամանակն կարճ
և անհոգութիւն՝ երկար և ցնծութիւն բազում: Ամենքեան այ-
նոքիկ, որ արուեստիս այս հմուտ են, և ճշմարիտ գիտեն՝ յաղքա-
տութենէ ազատին, և այնոքիկ, որ գործեն վասն այնր գործեն,
զի բազում զանձս առասցեն. զոր նոյնպէս բազում յոլով և ան-
խնայ զանձ առանց արուեստիս այս անել դժար է:

Իսկ ամենեքեան որ արուեստիս այս հետևին և գործեն,
պարտ է և զայլ արուեստն իմաստասիրաց գիտել, եւ առաւել
զլուի կաթն, որ Թարգմանի և բանլիք իմաստասիրութեան: Զի
պարտ է մարդկանցն, որ զարուեստս զայս գործեն, զի մաքրի
իցեն և նուրբ, և խորու հասկանան և իմանան, զի վարդապետքն
և երգօղքն արուեստիս մըթլին և տարակուսիւք խօսեալ են, զի
եթէ յայտնի և պարզ խօսեալ էին ամենեքեան իմանային և ու-
սուցանէին, և արուեստս այս անարժան լինէր: Եւ կամ պատճառ
մի այլ կայ. զի մի ոք զկնի իմաստասիրացն ընթեռնուր և վասն
նախանձու այրեր և կամ կորուսանէր: Վասն այսորիկ մի հուսայ-
հատիք եթէ տապրա մի կամ բազում խաբիք, որպէս իմաստա-
սէրն ասէ, եթէ յուսայ՝ և հասցես ցանկութեանդ աստուծով:

ՀԱՏՎԱԾ Բ

(Ձ-իր Ա էջք 46—57)

Աստուծով ձեռնարկութիւն իմն արհեստի ստրկականի երումն սիտանուսրութեան և պաշտօն տա ի հարկաւորումն որ և իցէ, և ցանկութենէ բանիցն բժշկաց և խաստառիրացն սւէտամատց և ի զանխութենէ արտադրութեանցն համառօտաբար բացատրութիւն

Խրատ 1. *Հարկաւոր է որպէս վարկանիմ պահել զայս արհեստս ի ծածուկ և մի ումեք յայտնել, այլ թէ ամենայն իւիք փորձեալ ոք լիցի և հաւատարիմ և ապա տացի ճահաւոր, յորում ոչ մացի ամենեին ոսք ումեք։*

Խրատ 2. *Այլ անօթք և նիւթք պատրաստական թւոց լիցի ի կարմիր կամ սպիտակ հողոյ բրտոց, կանգուն մի երկար և երէք մասն լայն, և զուռն ի ներքուստ ձեռնամուտ մի, և ի ներքոյ վերին շրթանն ծակունք չորք մատնաչափ մի, և ի բերանն առհան ինքնաչափ, և խառնուածն չեխեալ կաւոյն, և ի մէջ բրտեայ առհանին մանր փոշի՝ յորում դիցես զղարայն ի մէջն և լից ի փոշին ի ներքոյ մառ մի և զբոլորխն գ մատ. և կրակն մեղմ՝ բարկ արեւ մի չափ։*

Խրատ 3. *Եւ ղարայն լիցի երկայն բ թիզ, և բերանն լայն՝ ձեռնամուտ, և ինքն աղիկլի, և ծեփեա զինքն կաւով ի ներքուստ և վեր՝ այնչափ որչափ զղաթրեալին ընլոց ես. և ղաթրելոյ նիւթն ի մէջ ղարային լից ի դ մատ և ոչ աւելի. և ըմպեղն, որ ի բերան ղարային և խառնուածքն չեխեալ, և շիշ աղիկլի ի ներքոյ կաթվածոյն յուր հաւաքի ջուրն։*

Խրատ 4. *Այլ և ամանք մամլոյ, որ նա ինքն է թաշմիշ, լինիցին կթխային աղիկլիք, դիցես զմոմեալին ի մէջ միոյ կթխայի և կթխայ մի ես դիր ի բերանն, բայց ներքի կթխայն անցնի ի վերինի մէջն. և խառնուածն ծեփեայ ամուր. և ներքին կթխայն լից ի չամռեալ և դիր ի վերայ կրակին, և տես երբ վերանայ ծուխն ի վերի կթխայն, ապա առ և ողկէ խմցնելով, և նորուն դիր ի կթխայն և արայ որպէս զառաջն, և նորուն ողկէ։ Եւ այսպէս բազմիցս դարձնելով և վերջն իջնու որպէս մամի կալիպի տակն, և այն է։ Բայց այսպէս դիցես ի վերայ հրոյն. լից ի պուտուկ մի մանր փոշի՝ մինչ ի կէսն և դիր զկթխայքն ի մէջն և դիր զպուտուկն ի վերայ կրակին և նկատ, հալեաց ի կթխայն*

վերին. և երբ ծուխն վերանայ առ և դիր զպուտուկն ի յետ, մինչ պաղի, ապա հան զկթխայքն որ չի բեկանին և այն է:

Խրատ 5. *Եւ սայատելոյ ամանքն լիցին ապխկածք, ներքի ամանն լիցի բարձր թըղաչափ մի, և լայն դ մատ և բերանն շուրթ, որ վերի ամանն հանգչի ի վերայ. և վերի ամանն զմըէ-թաձև և ծակ մի ի գագաթն մախթի մի չափ. և ծեփէ զներքի ամանն չամռով և դիր զսայատելին ի մէջն, և դիր ի վերայ կրակին. և յառաջ մի ծեփեր զխառնուածն, զի քանի մի անգամ վերցնես զխուփ, որ կու սև մխոտի, սրբէ և դիր ի վերայ մինչ որ այլ չի սևանայ, և ապա ծեփէ զխառնուածն ամուր և խառէ զկրակն և տես, թէ զէձ զոլորշի ելնու ընդ ծակն գագաթան՝ նայ թող մնայ ի բաց մինչ որ սպառի զինձութիւն և մուխն. ապայ ամ-բացոյ զծակն կաւով և խառէ զկրակն և նայ սայատի բան մի ի վերի ամանն: Դու առ զվերին և զներքնի խառն ընդ իրար և սղկէ ի վերայ սալին, և խմցնելով լինի սղկելն. և նորուն դիր ամանն որպէս զառաջն՝ կրկնելով գ անգամ, բայց ամէն դիր, օր մի և գիշեր մի վառէ զկրակն. և կրակի զօրն այնչափ լինի որ ձեռքդ դնես ի վերայ վերի ամանին նայ՝ դիմանայ ձեռքդ և ոչ թէ աւելի առնես—ավերի գործն: Եւ զկնի գ անգամ սայատե-լոյն, այսինքն է Թաշմիշ և Թաղիտ անելոյն, նայ սպիտակի մաքուր ներքոյ և արտաքոյ: Այն է: Եւ են որ սև մաղ դնեն ի վերայ ծակին, և երբ մաղն սպիտակի նայ սկսեալ է սայատել և այնժամ կալնուն զծակն: Եւ այն է կերպն Թաղիտի:*

Խրատ 6. Եւ այս է աղբով արձակել: *Արայ ի մէջ տանփոս մի խորութիւն կանգուն մի և լայնութիւն նոյնպէս, և լից ի մէջն Թապայ աղբ ձիոց և ի մէջ տեղն դիր փոքր աման մի, և կոխկռտէ զաղբն որ պնդի. յետոյ հան զամանն և դիր ի տեղի ամնին զշիշն. և են որ ձիու մաղով կախեն զշիշն ի մէջ կաֆասի (վանդակ). և այնպէս դնեն յաղբն և լնուն զաղբն ի վերայ և կոխեն զերեսն հաւասար փոսին և ծածկեն Թաղքով, որ զինձու-Թիւն յինքն մնայ: Եւ են որ դ օրն մի անգամ տաք ջուր ցանեն վերայ բոլոր աղբին: Բայց փոսքն բ պիտեր լինի, որ ամէն է օր փոխես զինքն փոսէ ի փոս: բ օր առաջ լից զաղբն ի փոսն որ տաքնայ և հան զշիշն տաք տաք դիր ի մէջն. և այն է աղբով բորբոսցնել և արձակել:*

Խրատ 7. Եւ այս է բաղանեօք արձակելն: *Առ պուտուկ մի և*

լից ի մէջն յարդախառն ջուր և դիր ի վերայ կրակին։ Եւ առ պուտուկ մի այլ և արայ ծակտիկ ի յոռքն, և լից մէջն կիսով թեփ թրջեալ և դիր ի բերան միւս պուտկին, յորմէ յարդախառն ջուրն որ մինչ ի կէսն իջնու ի ներքի պուտկին մէջն։ Եւ դիր պշիշն ի մէջ թրջեալ թեփին ի վերի պուտուկն, կապէ զբերանն թաղքով և խըով[1]. նաև զներքի խառնուածն ևս ծեփէ և դիր ի վերայ կակուղ կրակի պահրի[2] մնի եփելու չափ կամ այլ աւելի՝ նայ արձակի։ Եւ են որք միս դնեն ի ներքի պուտուկն, կամ բակլայ, կերպիւ կերպիւ արձակմունք, որպէս և իւրաքանչիւր նիւթքն պահանջեն։

Խրատ 8. Եւ զաղերն արձակեայ ասպէս: *Ամէն աղ որ արձակած և կապած լինի ինքնաչափ ջրով առ ի մաքրելոյ յաղտից և յետ կրանալոյն թէ կամիս արձակել առ աղիք սաղ և լից ի մէջն և դիր ի մէջ ամանի մի, և լից ի վերայ հորու ջուր և կապ բերանին թող ի դուրս. նայ արձակի օր մի։ Եւ զշիշայի բերանն այսպէս կալ։ Յարձակելոյ ժամն դիր ի բերանն խուփ ապիկի ինքնաչափ, ապա առ կիր բաժին մի և բամբակ կտրատեալ բաժին մի, և ի գիտնոց չամռէն բաժին մի, և ձէթ բ բաժին, թաթխէ զբամբակն ի ձէթն և ծեծէ ի մէջն հաւանին ցանելով ի վերայ զկիրն. թէ ջրի լինի կիր կերցու ինքեան, և թէ պինդ լինի՝ ձէթ խմցոյ իւրն. և երբ կատարի ծեծն՝ խառնէ զչամուռն ի հետ և ծեփէ այնու զշշի բերան և չորացոյ լաւ, և ապայ դիր յաղբն կամ ի բաղանիսն։ Եւ է այլ իմն կերպ լոկուն, որ սայատելոյ կամ արձակելոյ, կամ զարայի բերանոյ, եւ եթէ այլ իմն շիշայի ծեփի պիտենայ, առ աղ կրացեալ մասն մի, և փոշի փայտից մասն մի, և կաւ գիտնոց մասն մի և շաղղէ զաղն և զփոշին ձվի սպիտակուցով և խառնէ ի հետն զկաւ և ծեփէ զխառնուածսն շիշայից. և առ կտաւ բ մատի լայնք և թաթխէ ի ձէթ և պատատէ վերայ ծեփին և նորուն ծեփէ ի կաւէն, և այն է լաւն։*

Խրատ 9. Այս է կաւն իմաստասիրաց: *Առ զհող կճճի կամ լաւ կաղձին որ բնաւին քար չի լինի ի մէջն, և արայ կաւ և խառնէ ի հետ քան զիւր ռուպն փոշի փայտից, և զթեմեն աղ, և սակաւ մի ձիու աղբ փշրէ ի վերայ. և առ բուրդ և մկրատէ խիստ մանր ի վերայ, և աճռէ ձեռօք շատ անգամ. քանի որ հնա-*

---

1 Խուփ։

2 Պախրա։

նայ թաց պահես և ածես՝ լաւանայ, և այնու չեխես զթաղլուր ներքի ամանն և զմոմելու ներքին կթխայն և զղարայն ի ներքուստ դ մատ: Նայ է կաւ, որ է չամուռ և կաւ գիտնոց ասի:

Խրատ 10. Յաղագս կնիքն շինելոյ որ է բոքայ: *Առ հող բոթայի, և խառնէ ի հետն մկրատած բամպակ և ծեծէ ի վերայ սալի և խմցոյ յինքեան ջուր և ծեծէ որ լինի որպէս զմլխամ. ապա առ և շինէ որպէս կամիս, թող որ չորանայ և ապայ թրծէ զինքն ի բարկ կրակ, որ կարմրի և այն է:*

Եւ քուրայն արայ որպէս ոսկերչու, և ի նմայ արասցես զկճճիւ հալուն և զկիր առնելն, և զսաֆիխայ ջերմացնելն և այլ բազում իրակութիւնք, որք յարմարին այնու, բայց զբոթայն յորժամ դնես ի կրակն՝ նախ սակաւ սակաւ ջերմացոյ մերձ ի հուրն, և ապայ դիր. նոյնպէս և երբ հանես ի հրոյ մի դարներ ի պաղ տեղ, որ չի բեկլի. նոյնպէս արայ և զչուշայ ապիկլի ամանիքն. տաքցոյ սակաւ սակաւ և ապայ դիր ի կրակն, և երբ վերուցես՝ թող որ մաղմանդի կրակն և պաղի ապիկլին, յետոյ վեր կալ որ չի բեկլի անօթն:

Խրատ 11. Խրատ սալին որոյ վերայ զնիւթսն աղկես: *Լից ինքն մարմառ ընտիր կոկեալ, զերեսն որպէս զապիկլի, բոլորն շուրթ մատնաչափ, և բռնաքարն ևս մարմառ, և աղկելն բ կերպ է. է որ չոր, և է որ խմցնելով: Եւ խմցնելն այնչափ որ չի ճապղի ի վերայ սալին. նաև յաճախ աղկելն զինքն կէս արհեստին է:*

Խրատ 12. Եւ կրակքն են զանազան, *զի է կրակ զաթրելոյ, և այլ է կրակ մոմելոյ, և այլ է կրակ թաղլուր, և այլ է կրակ տամսի, և այլ է կրակ բաղանեաց, և այլ է կրակ կիր անելոյ, և այլ է կրակ հալելոյ, բայց մոմելոյ և զաթրելոյ և բաղանեաց միապէս են՝ որպէս արեգական* տաքութիւն լինի. նաև կապելոյ կրակն կարի ևս կակուղ պիտոյ է, այլ և վերացնելոյ և սայատելոյ մեղմ պիտիր յառաջ. և էն որ ճրաք դնեն ի փուռն և այնու զաթրեն: Բայց զայս իմայ, զի զաթրելն զառաջին քանի մեղմ բռնես զկրակն՝ լաւ է. և կապելն, և մոմելն և բաղանիքն միշտ կակուղ լաւ է, որպէս թխսանիստ հաւու տաքութիւն:*

Խրատ 13. *Ասելի է այսուհետ աղիցն զօրս գիտունքն ծբ ազգ ասեն լինիլ աղ, բայց ոչ է այլ ըստ տարազու նիւթիցն է և աղն, այսինքն ոչ գոյ նիւթ տարարկան*[1], *որ ունիցի յին-*

---

[1] *Տարրական:*

քեան զաղն ըստ այնմ թէ, ամենայն ինչ աղիւ աղեսցի: Բայց մեք ասեմք սեռաբար գոլ զինքն Դ ազգ. այսինքն՝ մատանի, և ծովային, ի բուսոյ, և ի կենդանեաց: Եւ իւրաքանչիւրն ի սոցանէ բազումք են. մատանի, որ է անտրանի, է որ կապուտակերպ է, է որ սպիտակ է, և է որ իբրու դպիլոր է, և է որ կարմիր է, բայց ամէնի ընտիրն կարմիրն է: Եւ բուսոյն՝ որչափ են բոյսք, այնչափ են ազք նոցին, որոց ընտիրն է փալուսին: Եւ ծովայինքն, այսինքն ջրայինքն յաջախք են, այլ լաւն հայոց ծովինն է, որ է Վանայ բորակն: Իսկ կենդանեացն ամենայն նիւթիցն լինի, այլ լաւն ոսկերացն է և ուղեղանն: Արդ, մատանիքն յայտի[1] են. ինքնակապ ելանէն յերկրէ[2]. և ջրայինքն կապին ջերմութեամբ և բուսականքն լինին այրեցեալ փոշոցն, յորժամ ջրով եփես և տղրկես կապես ջերմութեամբ: Նաև կենդանեացն նիւթք ջրով եփին և սփեալ կապին ջերմութեամբ:

Խրատ 14. Եւ զի չիպքն ես աղ համարին, որովհետև յազգ իմն քարից կրացեալ և ջրացեալ կապին և են զանազանք ըստ նիւթից քարանցն, զորս յոմանց Է ազգ ասին գոլ չիպ, բայց զինչ և իցէ: Գիտացիր զի մաքրութիւնք աղիցն լինի կապելով և արձակելով, յորժամ տղրկեալ սփի յատակ ջուրն և նորուն կապի. և որք ոչ են դիւրահալք՝ կիր անելով դիւր հալին, և ոչ ճարճատին, և ոչ փրփրան յորժամ ի վերայ ջերմ սաֆիխայի ձգես առ ի փորձել զհալելն: Են և այլ արարողութիւնք զորս տեսցես ի թատալիրսն դրանց:

Խրատ. 15. Եւ գիտացիր զի մարմինքն Ե են, այսինքն՝ ոսկին, արծաթն, պղինձն, կլայեկն և արճիճ, որք անուանին ի փիլիսոփայիցն ըստ անուանց աստեղաց վասն խորհրդաբար համեմատ բնութեանց իւրեանց, և սակս չը հասկանալոյ անարժանից որ ասի ոսկոյ՝ արեգակն*, և արծաթի՝ լուսին* և կլայեկին՝ մուշթարի, և պղնձին՝ զօհրայ, և արճճին զօհալ: Նաև հոգոցն ես այլ և այլ անուանք ասին շատ կերպիւ. որպէս նշատրին՝ արծիւ և հվարիղ և այլք բազումք և սնտկին՝ օտարիտ և ծառայ և դապիրլի և այլք յաճախք. Նաև զռնեխն ասի ալամ և զառեկ և

1 Հայտնի:

2 Անծանոթ պաղափարանշանով է գրած, որ պետք է նշանակէ ի հողէ, ի գետնէ, յերկրէ:

այլք, և քկրդին՝ ծծումբ և կարիճ և այլք, իսկ ոսկոյն ևս շատ անուանք ասեն, որք խիտ ի գործածեն արեգակն* և պահելլոյ և արծաթին՝ լուսին* և հաթֆ, և արճճին՝ զօհալ, մեծ ալեոր և սարտոլայ և այլք բազումք:

Խրատ 16. Եւ են այլ ևս նիւթք, որք ուրեք ուրեք մտանեն յարեստս սատնաճ՝ որ է նատամ՝ և բրնճ՝ որ է պղղուն ասի. և տահնաճ՝ որ է հաճար ըլ նախաս ասի. և տալկ՝ որ է քովքապ ասի, և տալկի աղն՝ որ է քովքապ ըլ մայ ասի, և հաւկիթ՝ որ է մատաթ ըլ պահր վոմնլիայի ասեն, և հաւկթի կեղեն՝ որ է ամեռ բլ հուդ և վրպապլմոինայ[1] ասի:

Խրատ 17. Յաղագս է քարանց, որք ունին յինքեանս հոգիս. մարգաժիթայ, մղնատիս, մղասիայ, Թիթիայ, շատընայ, և զաճ, որ է արճասպ և մլհաղայ: Եւ որ ոչ ունեն հոգի ևս է են, որ է այս. Թալխն, քրէզն որ է ծարիրն և սատափն, պիլօռն, դահնաճն, լաջվարդն և քմհան: Եւ է այլ նիւթք արտաքոյ սոցայ, որք մտանեն յայս արհեստս. ըղլէմիայ, և մարթաճ, սարանճն, և բաֆիտաճ, մլխտախն, ղալին, և կիր և շեղրախն:

Բայց քարինքն ասացեալք ամէն մէկ յաճախ ցեղ ու ցեղ են. որպէս մարգաժիթայն զոլ բազում կերպս գոյնոց. ես տեսեմ զորս լուայ. տահապի, ֆուտի, հատխտի, նախասի, ըռսասի, բատուպի, շպի. և այսպէս ասեն գիտունքն, թէ ամէն մէկ է կերպ են. այլ զի զնոսայ յորժամ կամիցիս առնուլ ի գործ, և կամ ընտրել թէ ի գործ մաքրութեան մուծանիցես սպիտակութեան և փայլուն սղրկութեան հետևեաց և թէ ի գրուես լուսնի* մուծանիցես նոյնպէս սպիտակութեան և փայլունութեան հետևեսայ: Եւ թէ գրուես արեգական* մուծանիցես զնիւթ ինչ, առ զդեղին փայլունսն և զորակերպ կարմիրսն, բայց յայնցանէ որք յերկու գուսն ևս մտանեն որպէս անդիկն, արծիւն և ղալին, աղն և Թութիայն և այլ նմանք:

Խրատ 18. Եւ ասեմ զբովրաղներն, որք ձգեալ ի վերայ մարմնոցն դուրսէ հալին: Եւ են ցեղ ու ցեղ, զի է որ հողի կերպ է, և է որ սպիտակ է, և է որ կարմիր է, և է որ ոսկերիչքն առնուն ի գործ վասն շուտահալութեան, այլ զի և մաքրեն զմարմինսն: Եւ զի ինչ աղ որ պիտոյ է կերակրելոյ այսպէս արայ,

---

[1] Ըստ երևույթին պետք է լինի վրպապ ըլ մոինայ:

առ զինքն և ողկէ խիստ լաւ և արձակէ քան զինքն ջրով և կապէ արեգակն* կամ ի կակուղ կրակ, և ողկէ և բովէ, որ բնաւ գիճութիւն չի մնայ յինքն, և նոր ողկէ և բովէ և դարձեալ ողկէ մինչ որ այլ չի ողկվի. և լից փառչ մի և չամուէ զբերանն, և դիր ի փուռ կամ ի թօրվան տակն հորէ և ծածկէ խեցաւով, և վառէ կարի սաստիկ կրակ ի վերայ և երբ կատարի գ օրն կամ այլ աւելի, հան որ պաղի[1] և ողկէ մանր և նորուն դիր ի կրակն որպէս զառաջին, և դարձեալ ողկէ, մինչ որ լինի կիր սպիտակ որ ձգես ի վերայ սաֆիխայի նա հալի և կնայ։

ՀԱՏՎԱԾ Գ.

Խրատ 19. Դուռն որ պիտոյ է այս արուեստիս. և արուեստաւորիս. *լուսին*, արեգակն*, ոտարիտն*, զօհալն*, զոհրէն*, մառեխն*, մուշթարին*։*

Եւ ասած է, թե լուսինն արձակած սնդիկն է և երկաթն կապած լուսին* է։ Եւ տես որ մարդիկ կասեն այս արուեստս սուտ է նայ՝ տուր զօրինակն իւրեանց զդեղին պղինձն և ասայ, թէ այն կարմիր էր, որպէս ոչինչ բանով դեղնաւ և եղև ոսկէգոյն. այնպես իմաստասիրաց թատալիրն կու փոխէ զմարմիներն գունէ ի գոյն և խասլիաթէ ի խասլիաթ։ Եւ տես, որ բորբոսցնեն զկաւն, կենայ ի նմանէ մեղու. այսպէս այս արուեստս՝ և հաւկթէն կու լինի վիշապ։ Եւ այս վասն այն ասացի քեզ, որ աւատաս թէ այս արուեստս ճշմարիտ է և կու կանգնեցնէ մէկն զն, զռ և զբիւրն. և դու իմացիր և գործեայ անձանձիր, զի իմաստնոցն խիստ դիւրին է որպէս զապրի եփել մի և այլ դիւր։*

Խրատ 20. Դուռն որ իմացնեմ զմարմներն և զհոգիքն և զքարերն. *Իմացիր, որ այս ամենայն արարածքս դ ազգ են. անասունք, և մեռեալք և ժողովք և բոյսք, որ այս արուեստիս պետք են։ Այս դ բանս վասն այն յիշեցաք, զի թէ բ մարդ ի մէկ տեղ գայ՝ եղև ժողով. և ամեն մարդոյ բնութիւն ցեղ մ՚է և օրէնքն ցեղմ, թէ ժողովեցան՝ եղէն մէկ։ Եւ թէ այր և կին միացան՝ ծնաւ որդի, և թէ ցանեցիր ցորեն և սերմանքն բազմացաւ, և թէ մեռաւ նայ՝ կենդանացաւ և կու կերակրէ զամէն արարածքս։ Եւ այս հերիք է քեզ, և դու մտախոհ լեր, և իմացիր, որ մարմիներն*

---

1 Պաղի։

է են, և հոգիքն է, և քարինքն է, և Թարքիպ անելն է։ Եւ այս ամեն կու մտանէ ի այս արուեստս, որ ասացի է է և կու կատարի այսոքիւք այս արուեստիս Թարքիպն։

Խրատ 21. Դուռն անուանց որ պիտոյ է այս արուեստիս. սատնաճն, որ և նատամ՝ զլհաւաթլպահր. և անուն սրնճին՝ սլաղուն [պաղուն], և անուն տահնաճին՝ հաճարլ նախաս, և անուն տալխին՝ քովքապ, և տալխի ագին՝ քովքաբ ըլ մայ, և անուն հավկթին՝ մըըթ ըլ պահր մոխայիլահի, և անուն հավկթի կեղևին՝ ամիըլ հնդ, վոպապ ըլ մոխնայ։

Խրատ 22. Դուռն անուանցն քարերուն. Երկու ցեղ քար կայ. կա, որ հոգի ունի, և կայ որ չունի։ Եւ այն որ հոգի ունի է ցեղ է. առաջին՝ մաղրաշիթայն, և մղնադիսն, և մաղնասիայն, և Թոթիայն, և շատնայ, և զաճ և մլհնդայ։ Եւ այս է քարս ամէն մէկ է գոյն ունին և է ցեղ են։

Եւ այն որ հոգի չունին է են. Թալղն, և քըխլն՝ որ է ծարիրն, և սատաֆն, պիլոռն, տահնաճն, լազվարդն և քմհան։

Եւ է քար է, որ մտնայ ի յայս արուեստս. զլէմիայն, և մարթաճն, ասրանճն, և սֆիտաճն, և մըհտալխն, և զալլին, և կիրն, և շեզրախն և այլ այսպիսիք։

Եւ այս ամէն չոգծու [սուգծու] են ի արճճէն, և ի զնձփրէն, զնճարէն, ըռսուխտէն, մի ի զճաճեն, և հուկթի բանճարն կու մտանէ ի յայս արուեստս։

Խրատ 23. Դուռն քարերու, որ ասացաք թէ ամէն մէկ է ցեղ է. մաղրաժիթայ.— տահապի, ֆուտի, հատիտի, նըխասի, ըռսասի, ըըռուպի, շըպհի։ Եւ իմացիր, որ զտահապին դեղին և դեղեցիկ գոյն է և թէ մահանքով փորձեցիր նայ՝ ոսկէգոյն է, և թէ հալեցիր, սիպիքայ արիր զալէյարի ագով նայ՝ եղև սիպիքայ կարմիր, բայց չոր. և թէ աղկեցիր զինքն՝ նայ կու աղկվի և կու մտնէ ոսկու գանիրն և կայ յինքն զարմանալի գործ։

Եւ ասեն, զմաղրաժիթայն ֆաին՝ սպիտակ է և կու մտանէ արծաթի գանիրն և երրորդն սև է, չոր. և թէ կրացուցիր զինքն, կու մտանէ ի յաքսիրն որ ի վերայ կլայեկին լինի և գուներն մէկ մէկի մօտ են։ Եւ պիտի որ կրացվի և արճակվի կամ սայյատվի և ապայ մտնեն ի գործ։ Եւ գիտացիր, որ մղնէսիայն է է. սև և կակուղ, սև և չոր՝ կու մտանէ ի յապիկոց գործն, և

փոշեգոյն, և քահլի և կարմիր։ Եւ ամէնն կու մտնեն ի արծաթի գուներն զատ ի կարմրէն։

Խրատ 24. Եւ թութիաներն է ազգ է. առաջին՝ հնտի ըլ պատահ, հնտի ըլ խառայ, և մահմուտիայ, և ամիտիայ, և մրզպիայ, և ճապալիայ և սպիտակ այլ կու լինի, որ կու մտանէ ի սպիտակելն։

Խրատ 25. Եւ մղնատիսն այլ է ազգ է. հատիտի, տահալի, և փտի, և նիասի, և ղալղի, և զիպակի, և ղավաղ և շարընայ այլ։ Ջերկաթի մղնատիսն յիշեր է Արիստոտելն ի քարերն։ Եւ շատնան բ ազգ է՝ էգ և որձ. էգն կակուղ է և որձն՝ չոր։ Եւ զաճերն է ազգ է. սավառ, ախմառ, ախտառ, և ղալղանդ, և խալգըռ և ղլղատիս, և շահիռայ։ Եւ այս ամէնն ի յոսկոյ գուներն կը մտանեն։

Խրատ 26. Եւ աղերն է ազգ են. ապրի աղ, ոսկերչու աղ, անտռանի աղ, նեֆթի աղ, նաթռուն աղ, մունխրանի աղ, հնդի աղ։

Եւ ասեմ զայն աղերն որ կու հանեն. ղալի աղ, կրի աղ, գողի աղ, շեզրի աղ, և փոշու աղ որ ինքն է սպընճն, և պատի աղն, թնքառ աղն։ Եւ այս ամէն աղերս կու մտանէ ի մաքրումն և ի սպիտակութիւն, և կու հանեն զսեւութիւն, և կու օգնեն և կարծակեն զմարմիներն, և զհոգիքն. և այս է իւրեանց գործն։

Խրատ 27. Եւ ասեմ զշպերուն անուանքն և զպովքաղնուն. շպ լեռան սպիտակ, և շպ մսրի, և դեղինն, և եամանին, և ճառճարին, և կարմիրն և սպիտակ թապիթն։ Եւ պովրաղ սպիտակ, թխագոյն և կարմիր։ Եւ պովրաղն կու մաքրէ զամէնայն մարմիներն աստուծոյ կարողութեամբ։

Խրատ 28. Դունն անուանց որ կու մտանեն ի արեգական* դուներն. ոսկին, երկաթն, դեղին պղինձն և սոցին նման։

Եւ հոգոցն. զիպաք, քպրիթ զռնեխ, նշատր։

Եւ քարերուն. մաղնիսիայն՝ կարմիրն, մաղրաժիթայն՝ տահալին, և մղնատիսն՝ կարմիրն և շատնան։

Եւ ի թութիաներուն. զնճառն, ըռասուխտն, զնճուփրն և ամէն զաճերն և ղալղանդ կու մտանեն ի սպիտակցելն և ի կարմրցնելն։

Եւ մղնատիսն, և քմհայն, և տահնաճն, և լազվարդ, և

գաֆրան երկաթի. այսոք ամէն կու մտանէն ի արեգական գոներն։*

Խրատ 29. Դուռն անուանց որ մտանեն ի լուսնի* դռներն։
Մարմներուն. լուսինն, և արճիճն և սոցին նմանքն։*
Եւ հոգոցն. զռնեխն, նշատրն։

Եւ քարերուն[1]. *զռնեխն, նշատրն և մարթաճ։ Այս գս կու մտանէն ի կարմրացնելն և սպիտակցնելն։ Եւ ամէն աղերն կու մտանէն ի մաքրելն։*

Եւ այնոք որ կու մտանեն երկու արուեստս. թութիայ, ծառայ, նշատր, կարմիր զռնեխ, և շպ, և ժանկեառ և հանած աղերն։ Այսոքիկ պիտոյ են այս երկու արուեստս։

ՀԱՏՎԱԾ Դ

Ձեռ. № 753. էջ 161—180

Խրատ 30. Եւ յիշեմ գթատպիրն և գործելոյ ամաններն. *այս արուեստիս ամաներն Է են և թատպիրն Է։ Պուտուկներն, և կթխաներն, և ղարաներն և ապալու սալն։ Եւ երկու ցեղ ամաններ կան՝ ի հողէ և յապիկէ, ղարայ ըմպեղն և իւր կթղաներումն որ է կոր ըմպեղն։ Եւ այն օճաղն որ ղղարայ և ըմպեղն ի վերայ դնես։ Եւ ի թատպիրն այս է. մոմելն, որ իմանաս զկրակի զօրութիւն, և գթասղիտ անելն և թաղտիր անելն։ Եւ ի արճակելն և թասղիտ անելն Բ ազգ են՝ թասղիտ անել զմարբերն և թասղիտ անել զհոգիներն. և թաղտիր անել՝ կայ որ կակուղ կրակով և կայ որ ուժով։ Եւ արճակելն երկու ցեղ. կախած և անկախած։ Եւ կապելն՝ ինչ ցեղ որ բերէ իմաստութիւնդ։*

Խրատ 31. Եւ յիշեմ գամանները թէ որպէս պիտի լինի. *Ղարայն շիտակ և խուփն աղէկ առնու ի բերանն և ամանն արտաքան չի կենայ։ Եւ թէ սայատած լինի գեղն, որ լնուս ի մէջն, ըռուպն լինի ղարային։ Եւ թէ խորված նայ՝ կէսն։ Եւ կավէ ղղարայն իմաստասիրաց կավով. առ կարմիր չամուռ բաժին մի, և Գ բաժին յարդի մանրուք, և խթմու տերև, և օշնայ և լից ի վերաներն ջուր, և թող օր մի գիշեր մի։ Ծեծէ, և աճռէ և ծեփէ*

---

[1] *Ձեռագրում քարերի շարքի մեջ արտագրողը սխալվել և նորից է գրել «Զռնեխն և նշատրն»։*

խըմով զղարայն, և չորցու և ծեփէ քանի մի հետ, որ չի կոտրի ի կրակն։ Եւ ղարայի երկայնքն կանգուն մի լինի կամ այլ պակաս, բերանն ու մէջն և ուքն հաւասար լինի, լայնութիւն այնչափ, որ ձեռք մի մտանի։ Եւ ըմպեղին խանտակն լայն լինի և խորլկեկ. և երբ զղարայն դնես ի ըմպեղն, և ըմպեղի պատն չորս մատ լինի, որ երկու մատն մտանէ ի ղարայի բերանն և բ մատ մնայ ի վեր, որ եծած լինի ի ղարայի բերանն, որ թէ չծեփես զբերանն՝ նայ չի պիտի (sic)։ Եւ թէ ղամիայ լինի, որ է կուրն, նայ վերինն հաւասար լինի ի հետ ղարային որպէս զթասղիտի անելու ամանն։ Եւ կթխաներու ուքն որպէս ղարային լինի, որ զջուրն կու քաշեն՝ կմրեթաձև, և բարձրութիւն նորա քան զկէս ղարային պօյն։ Եւ վերի կթխայն մտնայ ի վերայ ներքի կթխին դրուցէ, և ներքինն կաված լինի և վերինն՝ ոչ։ Եւ կթխաներն մտնելու համար պիտի և կապելու։ Եւ սալն լինի հաւասար. երկայնքն կանգուն մի, և լայնքն գ ռուպ։ Եւ սալի շրթունքն բարցրկեկ։ Եւ այս մարմառս վասն այն է, որ զթասղխած դեղերն աղես՝ և զչոր դեղերն և զգէճ դեղերն և զամէն դեղերն։ Եւ կայ դեղ որ ի հավան այլ կու ծեծվի, և կա դեղ, որ ամենևին պարտ չէ, որ ի հաւանն ծեծել։ Եւ կրակն այլ պատրաստութեամբ պիտի։ Այս վասն խորովելոյ. զի բ ցեղ է խորովելն։ Մէկ ցեղն որ եղով կու խորվեն, երիկամաց եղով կամ այլ եղով և կամ կալէքարի աղի ջրով, այսոր կրակն անխտիր է՝ թէ խիստ և թէ միջակ, բայց միջակն լաւ է։ Եւ հանց լինի ջուրն կամ եղն ի վերայ դեղին, որ կամ ծածկէ կամ չծածկէ որ գիճացնէ. և լինի ի կէս պտկին կամ այլ պակաս, կամ աւելի։ Եւ լինի ի վերայ պտկին խուփ, և ամրացուցած զփակն, և կրակն աղբի լինի. և թող ի վերայ կրակին ժամէ ի ժամ։ Եւ արայ այսպէս որպէս պատուիրեցի քեզ և հասանիս աստուծոյ կարողութեամբն։

Խրատ 32. Դուռն որ յիշեմ զթաղսիտ անելն. Թասղիտն կու լինի ի յապկկի աման, և բրտի աման։ Եւ ծեփէ զուքն և լինի թանձր և ամանն բոլոր, և իւր երկայնքն թիզ մի լինի և լայնքն թիզ մի։ Եւ թվայքն այլ լինի բոլոր թիզ մի երկայնքն և թիզ մի լայնքն։ Եւ ամանի խուփն կուպայն ծակ լինի ի վերն, և թասղիտի ամանին լինի շրթունքն, որ վերինն ի վերայ հեծնու կամ ապիկի լինի, կամ ապիկած։

ՀԱՏՎԱԾ Ե[1]

Խրատ 33. *Եղբայր, ասեմ քեզ բան մի գովելի.*
Եթէ մըտանես արուեստս է ցանկալի,
Յայնմ և տես ի ժամ արեգակն ապա գործէ ոսկի,*
Թէ մանզիլ բարի՝ ամէն ինչ կատարեալ է։

Խոհեմ, իմաստուն լինիլ ամենայնի գուն,
Ոչ կատարի արուեստս այս ամէն ժամուն,
Զը լինիս որ աշխատ առնես իբրև ի քուն,
Այլ քընընեայ ապա գործի լինիս արթուն։

Օտարիտ ասեմ միշտ է փոփոխական,
Կայ ինք ծածուկ բան պիտական,
Ոչ ոք գիտէ, քեզ կու յայտնեմ, ով սիրական,
Ըստ իւր ժամուն քեզ լինի պիտան։

Խրատ 34. *Ամենայն ծնունդ՝ բեր, պտուղ, երակ և հատուած հողոյն առաջանայ ի գէճ և ի տամուկ, ի մեղկ և ի խժոտ, ի կպուն և ի օծուն, ի կայուն և ի հաստատուն շնչոց։*

Տամուկ *շունչն ի քիմիայից ասի փայլածու, ծառայ, փախըստական ջուր, կապ. ջրային շունչ անգիկ բնութեան։*

Օծուն *շունչն ասի կարիճ, քար քըօրէական, հոգի, իւղհրային շունչ և ծծումբ բնութեան։*

Հաստատուն *շունչ ասի արծիւ, հող, մարմին, հողային շունչ և աղ բնութեան։*

Այս երեքեան շունչս միով բառիւ ծծմբաղանդկեայ սկզբնասերմն ձայնի։

Բաց ի յայս եռադիմի ծծմբաղանդիկ սկզբնասերմանէն գոյ այլ ծծմբաղանդիկ շունչ։ Ճարտարապետ բազմահնար և կերպաւորիչ էակաց՝ սրընդածին և բնաւորեալ բնութեամբ զենթական յայս կամ յայն տեսակ էակաց կերպաւորէ ըստ ընդունակութեան նիւթոյն, քանզի ամենախնամ աստուած բաց ի հակառակ և միաբան քառից տարերաց ի չորից դակութեանց և երից ծծմբաղանդկեայ շնչոցն ետ երկրագունդ աշխարհիս զօրութիւն իմն կերպաւորիչ և բազմահնար, որ ուրանօր հրահալելեաց յարմար նիւթ գտանէ զանազան հրահալելիս, ուր քարանց պատշաճ

[1] *Հանված է № 752 ձեռագրից։*

նիւթոյ հանդիպի զայլ և այլ քարինս օրինէ, ուր ականց ընդունակ ենթակայ երևի զակունս պատուականս յարդարէ, իսկ ուր ուղղալի հողոց պատկան ենթակայ գտանէ զայլ և այլ հողս ճարտարագործէ: Առ այս իմա. ճշմարիտ իմն է, զի յստեղծուածս գոլ բնաւորեալ համակիր և հակակիր բնութեան, որով առ միմեանս բերին կամ հակառակին: Նաև ստոյգ իմն է, զի գոլորշիք և շոգիք, որք են բարակ, փուղծ, նուրբ, ճենճեր և անզգայ շունչ, յերկրագունդ աշխարհիս պատճառեն զմեծամեծ և զանազան փոփոխմունս ի քոյս և յէս, քանզի գոլորշիք և շոգիք ուրանօր ինքեանց նմանութիւն գտանեն, իսկոյն շաղկապին ընդ այնպիսի համարուն էութեանց, յորս գոյ բնաւորեալ ծծմբաղասնդիկ շունչն կերպաւորիչ և զճարտարագործ, որ ըստ ընդունակութեան նիւթոյ ընձեռէ նոցա զպատկան կերպս արծնելոյն, զպատշաճ ձևս գունելոյն և զյարմար գոյն նկարելոյն՝ թէ ի զգայուն և եթէ յանըզգայ գոյացեալ ստեղծուածս:

Հ Ա Տ Վ Ա Ծ Ե.

(Ձեռ. Բ. սկսվում է 22 էջից)

Թէ զինչ է Քիմիականութիւն

Քիմիականութիւն է գիտութիւն, որ ուսուցանէ քակել զմարմինս և անդրէն բաղադրել, որ լա ևս հասու լինիմք յատկութեանց և որպիսութեանց մարմնոց, որոյ առարկայ է բաժանել զմարմինս և վերածել յառաջին սկզբունս ի ձեռն հրոյ, որ մարթ[1] է կոչել անդամազննութիւն բնական մարմնոց. որովհետև մարմինք բաղկացեալ են յայլասեռ մասանց, քիմիականութիւն քակել[2] ի միմեանց զմասունս, ուրոյն ուրոյն զննէ:

Նախնի քիմիականք, ալքիմիայք կոչեցեալք, ընդունայն յուսով ի խնդիր եղեն բաղադրել զոսկի ի ձեռն հրոյ, բայց արդի քիմիականք շահեկանութեամբ իմն դեգերեցան ի սոյն յօգուտ փիլիսոփայութեան և արուեստից, և նորին աղագաւ հարկ եղև ուսումնականաց ծաղկեցուցանել զայս ուսումն, որ և այժմ եղև մի յօգտակար գիտութեանց որոյ համարի Թոբել գտիչ դարբնութեան, և յետ Ջրհեղեղին համարի Քամ գտիչ սորայ, յորմէ և կոչեցաւ քիմիայ:

---

[1] Ձեռագրում գրված է մարդ:

[2] կ-ի փոխարեն գրված է ք:

Սքանչելի զօրութիւն ժանտաջրոյ ծագի ի կծու ոգեաց շնչբորակին և արջասպին, որ լուծեալ ի ձեռն հրոյ քայքայէ զամենայն հրահրելիս բաց յոսկւոյ։ Սակայն, եթէ լուծցի ի ժանտաջուրն անուշադր, կարի խիստ բարկ լինի, մինչև ընդմռեալ մասունս ոսկւոյ քայքայէ և լուծանէ զայն։ Իսկ արքունի ջուրն լուծանէ նաև զոսկի և զամենայն հրահալելիս, բաց յարծաթոյ, որ և ելուզանի յերկիր մասանց ծովային աղի և ի միոյ մասնէ խղոյ արջասպի։ Եթէ փոքրիկ կտոր պղնձոյ դիցի ի բաժակ ապակի, կաթեցու ի վերայ ունկի մի ժանտաջրոյ, իսկ և իսկ յեռանդն հարկանի, զի ժանտաջուրն սաստիկ բռնութեամբ մխեալ ի մասունս իբրև զսլաք, քայքայէ զայնս, ջերանի և վերանայ հեղուկն ի շոգի կանաչորակ։ Դարձեալ, եթէ դիցի յապակի բաժակ կտորակ ոսկոյ կաթեցուցեալ ի վերայ կէս ունկի արքունի ջրոյ, մասունք այսր ջրոյ իբրև մի մի խյթոցք ընդմռեալ ի ծակոտիս ոսկոյ՝ բաժանեն զտարերս նորա և լուծանեն։

Քիմիականք միջին դարու, զառաջին տարերս մարմնոց եդին հինգ։

ա) Անդիկ կամ ոգի, որ է թռչնական շոգի ելեալ ի մարմնոց։

բ) Մաղաս, որ է հեղուկ ջրեղէն և ոչ դիւրավառ։

գ) Ծծումբ, որ է զինչեիցէ վառելի նիւթ մածուցիկ։

դ) Աղ կամ նիւթ աղային, որ է մխիր մնացեալ յանօթն։

ե) Հող, որ սերտ մարմին, հուսկ յետոյ մնացեալ ի յատակն ի քակուածոց։

Եւ այն, զի ամենայն մարմինք եդեալ ի քիմիական անօթն լուծմամբ ի սոյնս վերածին, սորին վասն ամենայն մարմնոց սկիզբն զսոսա համարեցան։ Սակայն, տեսեալ այլ քիմիականաց, թէ այսոքիք սկզբունք ևս են բաղադրեալք, և տակաւին քակտելիք, զուն գործեցին նորոգ լուծմամբ պարզագոյնս առնել զնոսա, ուստի, ի ձեռն փորձից լուծեալ զմարմինս, եդին զառաջածին տարերս լինել՝ ջուր, օդ, հող և հուր, քանզի զոհիցէ մարմին, եթէ ի քակուած մատուցեն, այս քառեակ գոյացութիւնք ելանեն։

Իբրև զի մասունք հրոյ յարաշարժ թեթևութեամբ ընդմռեալ ի մարմինս միաբանին և միաւորին զնոսա։ Նոյնպէս և օդն թե-

թեութեամբ մտեալ ի ծակոտիս մարմնոյ՝ միանայ ընդ ջրոյ և ընդ հողոյ, իսկ ջուրն զանգեալ ընդ հողոյ՝ խառնի ի նայ։ Բայց հողն տարրական գոլով խարիսխ և հիմն մարմնոց, ընդգրկէ զայլ տարերս առնելութեամբ հրոյ։ Եւ այսպէս այս դ տարերք կացուցանեն զամենայն մարմինս, և ըստ այլ և այլ բաղադրութեան նոցա այլ և այլ մարմինք բաղկանան՝ սերտ, լոյծ, ծանր, թեթև և այլն։ Եւ յորժամ այս տարերք քակլին ի միմեանց՝ լուծանին և այն մարմինք։ Ի վերայ այսր ամենայնի նոր քիմիականք զայսոքիկ սկզբունս եւ լուծեալ եգին 32 առաջածին տարերս։

II

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐ

Հ Ա Տ Վ Ա Ծ Ա.

(Զ-իր ա. էջք 9—16)

§ 1. Գուռն ժ″վ [ժիվայի]. *Լաճվարդ մեղրով աղկէ, ջրով հան, ատլասի մէջն դիր, նարորէ, մէկ օխայ քաղքին քացախ,* դ ե *հաւկիթ ձգէ մէջն մինչև* դ ե *օր, հան ի բաց ձգէ, մէկ օխայ խալայ թավայով հալէ, լից ի քացախն մինչև իրիկուն կենայ՝ լինի ժ″վ [ժիվայ]։*

§ 2. Զնջուփր. ժ *տրամ քուքուրթ փոթայի մէջն հալէ,* բ *տրամ էլ ժիվայ ձգէ մէջն, թող որ լաւ եփի* լ *[լաւն] այս է։*

§ 3. Այլ։ *և առ Կաստամպօլու քուքուրդ* ժ *տրամ. դիր թաւայի մէջ որ լաւ հալի մինչև կարմրի, յետոյ լից մէջն* ե *տրամ ժվայ եփի որ լինի։*

§ 4. Սարը սապո. *առ մէկ կովու լեղի,* ի *տրամ մեղր,* ի *տրամ մոմ,* խ *տրամ չամ սախչի դեղին,* ե *տրամ զիւթ. զամէն միաւորէ, դիր որ հալի ու քամէ մէկ չանաղի մէջ, դիր որ պաղի. և առ ապիկի կթխայ մի և ծեփէ չամռով և թող որ ցամքի, և լից ի մէջն զնշատրն և դիր ի վերայ կակուղ կրակի և աղկէ զդեղին քպրիթն լաւ և ձգէ ի մէջ կթխային ի վերայ նշատրին և արձակի և լինի իւղ։ Աղկէ զկարմիր զանեխն և ձգէ ի մէջն նա կարձակի ամէնն և կու լինի իւղ՝ ի վերայ կակուղ կրակի, և խմցոյ զինքն սայատած սնդկին խմցնելով և՛ աղկելով և՛ մոմելով հետեր մինչ որ արձակի, և կապէ զինքն՝ նայ կապի կարմիր, ձգէ զա ի վերայ* ծ *լուսնի* նա կու լինի աքսիր։*

§ 5. *Առ զա այս աքսիրէս և ձգէ ի վերայ Ժ-նի մինչև ի Ժ անգամն և կապէս նայ կու լինի արեգակն* և կու ներկէ ոսկի ապրիզ: Եւ թէ արձակեցիր զայն կապած սնդիկն և կապեցիր հետեր նա, աստուած գիտէ, և ասաց թէ կաթրեցիր զինքն հետեր և լցիր զզաթրածն ի վերայ զաթրվածին և արիր այդպէս Է անգամ՝ կու լինի իբրև զմոմ գեղին և կու ներկէ արեգակն* գեղեցիկ: Եւ այս ամէն օրինակաւ խմայէլին տետրերուն. և իմ վարպետն ասաց թէ ճշմարիտ է և գովեց զինքն, և զու պահէ զինքն, որ ամէնի հիմ է:*

§ 6. Վասն նշատրի իւղ թափիթի. *Առ նշատր որչափ որ կամիս, աղէ զինքն և լից ի վերայ ջուր և քաշէ ապրկով և կապէ որ ցամքի, և կշռէ զինքն և դիր ի յաման մանր աղած և ամրացոյ զփակն լաւ և չամռած լինիս ամանի տակն. և դիր զինքն ի տամս գիշեր մի զպլի կրակն. առ զինքն և կշռէ և տես թէ ինչ պակսեր է նայ՝ լից զպակասն մինչեւ Ե անգամ, որ այլ չի պակսիր: Առ զթափիթս և աղէ ի վերայ սալին տաքութենի վերայ, մինչ որ գիճանայ, առ և լից շիշ մի և դիր ի մէջ ջրի, նայ արձակի և այս է նշատրի իւղ թափիթ: Եւ ինքն քան զամէն զոներ գեղեցիկ է, և քանի արձակես և կապես նայ՝ զօրանայ:*

§ 7. Դուռն լուսնի*. *Առ սնդիկ և լից երկաթէ շերեփ ի կրակն, և լից ի վերայ այսիւ աղն կարճով, նայ կապի սնդիկն: Առ խըմէն* ա *և ձգէ ի վերայ Ժ կլայեկի եղանէ լուսին*: Եւ թէ կրացուցիր զսնդիկն իւղովս շատ եփելով՝ նայ կրանայ, աղէ և ձգէ զա ի վերայ Լ մուշթարոյ՝ եղանէ լուսին* գեղեցիկ:*

§ 8. Դուռն որ կանգնեցնէ զկլայեկն արծաթ. *հալէ զինքն և թափէ Ե հետ ի յաղի ջուրն լինի լուսին*:*

§ 9. Սպիտակցնել կլայեկին: *Արձակէ զարճապսն և զշիպն աղի ջրով, հալէ զկլայեկն և թափէ ի յինքն հետեր պնդեցնէ զինքն և տանի զխեր սարսալայութիւն և լինի պինդ որպէս զլուսին*: Այլ և հալէ զկլայեկն և թափէ ի քուռխաթի ջուրն Ժ հետ՝ երթայ իւր հոտածութիւն: Հալէ զկլայեկն և թափէ ի քթան քթէթն և թէ չէ աղեկնայ՝ այրի:*

§ 10. Դուռն արեգական*. *Առ ոռհի թիւթիայէն Ժ տրամ և, ապա Ե տրամ, արայ ոռհի թիւթիայէն թաս մի կթխայի նման և առ փոքր պուտուկ մի և լից զինքն ապրի աղով. սակաւ մի*

նստոյ զԹասն ի մէջ աղին և լից ի բոլոր Թասին այլ աղի մէջ պտկին, հանց որ պտկի շրԹունքն և աղն և Թասի շուրԹն հավասար գան. նախ Թասի մէջն քաղցր ջրով[1], յետոյ լից զծառայն ի մէջ Թասին և բռնէ արեգակն* և այնչափ եփար տուր, որ խմէ Թասն զհողին, որ այլ չի մնայ, և ապա նստոյ զԹասն ի պուտուկն ի մէջ աղին և դիր ի վերայ օճաղին, և լից զԹասն լիմոնի ջրով և վառէ կրակն հանդարտ այնչափ որ ցամքի լիմոնի ջուրն. և արայ այսպէս դ անգամ լիմոնի ջրով։ Յետ այսոր լից զԹասն պախրու գօզով և արայ զայդ այլ դ անգամ, յետոյ լից էշու գօզով, յետոյ լից տղայոց գօզով։ Յետ այսոր առ սապռ բաղուԹրի զդեղինն և հարէ զինքն ի ջուրն և արայ այդպէս շարպաԹ և լից ի յայն Թասն, որ ի վերայ կրակին և եփէ դ անգամ որ լինի Ն ազգ երբ եփեալ ի Թասն, որ լինի ընդ ամենն ի. դիր լցեալ և եփեալ որ խմէ Թասն զամէնն որ ապխտակ դառնայ Թասն որպէս զձիւն. լից ա ի վերայ ծե պղնձի և լինի ստտուածով կատարեալ ամենայն։

§ 11. Դուռն արվեստ արճճի, որ լինի ախիր. Առ տրամ մի արճիճ և հալէ զինքն և լից ի վերայ տրամ մի ապտ և իջոյ ի կրակէն և լից յաման և ողկէ աղով խիստ լաւ և լից ի վերայ ջուր և լվայ և սփէ զջուրն և դարձեալ լից ի վերայ աղ և ողկէ և լվայ կրկնելով, մինչ որ ապխտակի մաքուր քան զլուսին*։ Ասոր ասեն արճճի լուանալ, իմացիր զայս և սերտէ։ Յետ լուանալոյն լից ի վերայ տրամ մի ապտ և ողկէ խիստ և լից ի վերայ տրամ մի նշատր և ողկէ յոյժ և լից ի վերայ տրամ մի քպրիԹ և ողկէ զինքն խիստ որ լինի որպէս փոշի, և դիր զինքն ի զամեայն և կալցոյ զբերանն իմաստնոց կավով և ամրացոյ որ չելնէ իւրմէն շունչն։ Եւ յետ տամսելոյն յաւել ի վերայ տրամ մի ապտ և ողկէ և ցանէ ի վերայ նշատրի ջուր և ողկէ և լից ի զարայն և քաշէ զջուրն։

§ 12. Մուրտասանկ շինել. Առ սև արճիճ լիտր մի և հալէ և ձգէ ի վերայ բ լիտր դեղին զառիկ, և վառէ ի ներքեն փայտ մինչ որ հալի, և խառնէ աղէկ. Թափէ զինքն ի վերայ սալին լինի աղնիւ։

§ 13. Ղալաղանդ շինել. Առ զաճ և արձակէ զինքն ի ջուրն

1 Մի բառ (բայը) մոռացմամբ չի գրած բնագրում։

և ափէ և ձգէ ի մէջն պղնձի խարտուք, և խառնէ, և եփէ զինքն մինչ որ թանձրանայ, և ափէ և դիր պղնձէ պուտուկ մի և ձգէ ամէն Ժ տրամի տրամ մի նշատր. և այն է։

§ 14. Առ ժանկեառ արձակած նշատրով և քացախով, և ողկէ հաւկթի դեղնուցով որ լինի ի հետն դեղին զաճ, և ցամքեցոյ զինքն կակուղ կրակով և ողկէ և ցամքեցոյ և կերոյ լուսնին*. լինի գեղեցիկ գոյն։

Եւ իմացիր, թէ հալես և կերցնես իւրն մաղ՝ որպէս լուսին* կու կակղացնէ և շրչէ զինքն ոսկի գեղեցիկ։ Բայց մեր ասելն թէ երկաթն խառլի ի հետ արեգական* չի բաժանի իւրմէն ի խալառն և ոչ ի յայլ տեղ։ Եւ թէ իմացար և կարցար ներկել զլուսին* որ կենայ ի հետն խառնուկ ոսկի, չի բաժանի իւրմէն յաւիտեան. և այս քեզ իմացնում է վերոյ ասածին. ապայ պիտի քեզ հին զնճփր։ Եւ ասեմք քեզ. առ քացախ բաժին մի զաթրած ապխտակ և լից ի պտուկ, և առ զօհրայի խարտուք և երկաթի, և Ժ տրամ շըպ, Ժ տրամ զաճ դեղին, ողկէ զամենն և լից ի մէջ քացախին և դիր ի շիշ մի և դիր արեգակն* Խ օր և ամէն օր Բ Գ անգամ շարժէ և յետոյ դիր ի կրակն որ ցամքի. նա կու ներկէ հանց ներկ, որ այլ չի բաժանի։

§ 15. Վասն նշատրին, որ իւր բնութեամբն արձակի. *Ասաց Հրմուզն. իմացիր որ նշատրն ընկերող է և կու ընկերանայ ամէնի. և տասց, թէ թատպիրէս զինքն ի թատպիր իւր բնութեամբն կու կանգնեցնէ զգետնին հողն. և ով գիտաց զնշատրն արձակել իւր բնութեամբն և կանգնեցնէ զաքսիրն։ Որ մի թէ առնուս զայս նշատրն և ձգես ի մէջն զառեկ կամ կարիճ, նայ արձակի իւր կարմիր, և թէ առնուս զսայյատած սնդիկն և դնես երկաթէ շերեփ կամ ապակի աման. և դիր ի վերայ կրակին որ շողնայ և կաթեցոյ ի վերայ այս իւղէն որ լինի իբրև զմոմ և խմցոյ արձակեալ զառեկն և կարճին, և խորովէ, և արձակի, և նորու խորվէ ողկելով և խառնելով։ Եւ թէ սայյատես զառեկն և զկարիճն և կաթեցնես ի վերայ այս նշատրէն, նայ արձակվի, կու կապի ի քամին և արձակի ի կրակն։ Եւ առ սայյատած սնդիկ և ողկէ այն իւղովն զայս սնդիկն և արայ զոսկին էլ այսպէս նայ կու կանգնեցնէ զաքսիրն ի* ա *օրն այս նշատրս։*

§ 16. Դուռն[1]. *Առ նշատր որչափ որ կամիս և կորաւէ*

[1] Շարունակությունը չի գրած։

զինքն փոքր կտորներ և լից ի յաման մի և ծածկէ զամանի ոտքն և դիր ի մէջ պուտկի մի այլ զինքն և պուտուկ մ այլ կործէ ի վերայ, հանց որ միջի ամանն ներքի ամանին խուփ լինի, որ ի մէջն իջնայ և կէս ձմերկի կործէ ի վերայ նշատրին որ մէջն հանած լինի և ամրացոյ զփակն և դիր ի վերայ կակուղ կրակի, որ հալի և ճռայ ի ներքի ամանն, առ և պահէ. և արայ այնչափ, որ քեզ բաւ է. և դիր և զաթրէ՝ զաթրվի կապած. և առ զայտ կապածն և նորու արձակէ որպէս զառաջինն և նոր զաթրէ և արայ այսպէս Ե անգամ, նայ արձակի որ այլ չի կապւի յաւիտեան փառք աստուծոյ։ Թէ յինչ համար, որ այս իւղս կու վերցնէ զամէն աքսիրներն՝ զկարմիր և զսպիտակն և այս է արձակել զնշատրն իւր բնութեամբն և այս է, որ կանգնեցնէ զաքսիրն յօրն, և այս է որ ասացին հաքիմներն օգտութիւն։ Ասաց Խալէտն, թէ որ արձակէ զնշատրն իւր բնութեամբն և չի խառնէ ի հետն այլ դեղ, բայց կրակով լինի. դիր ի կրակն որ կարմրի[1] զ Ե հետ արկ ի յայտ ջուրտ՝ նա խիստ լաւ սպիտակի և թէ դեղ ունիս շինած, ձգէ ի վերայ և թէ ոչ ունիս դեղ նա՝ հետ լուսնին* պարապար խառնէ և բանիր և այտ է լաւ պղինձ*։

§ 17. Դուռն որ մաքրէ զօհրայ յոյժ լաւ. Առ ա բաժին գինոյ մրուր և գ բաժին խիստ բարկ քացախ և մէկ ունց պարզեալ անզիկ* և եփէ զամէն ի միասին մինչև որ գ բաժին երթայ և լից անդ դ ունց նշատր և բ ունց հասարակաց աղ պատրաստեալ. և անդ շիջուցի տախտակունս պղնձի* և մաքրեսցի յոյժ լաւ մաքուր։

§ 18. Դուռն որ մաքրէ պղինձ* խիստ լաւ և սպիտակ. Առ զառիկ, Փրպլոն, սապոն և նշատիր. զայսոք եփեսցեն ի ձիթապտղի ձէթն և ապայ շիջուցի զօհրան ի ձէթս այս, անչափ որ մինչև սպիտակեսցի լաւ. և որ յորժամ որ ձէթն պակասի՝ այլ ձէթ վերայ լից և այսպէս արայ և ապա խառնեսցի որչափ կէս զօհրանին իցէ լուսին* և ամեն լիցի լուսին լաւ աստուծով։

§ 19. Դուռն որ մաքրէ պղինձն սպիտակ. Առ բ մաս զառեկ, մէկ մաս աղնիտր. ա մաս նշատր և սպիտակ գինոյ մրուր. երկու մասն զայսոք աղայ ի վերայ մարմարին, օր մի քցխով և թող անդ որ մինչև լաւ չորանայ և ցամաքի և ապա առ ձկլի սպիտակուց և զամեն վերայ յիշեալս շաղըղայ որպէս խմոր և արայ բաղարճ,

---

1 Բնագրում՝ կ ա մ ր ի։

չորացուր և պահէ, ապա հալէ զօհրան և այնմանէ սակաւ մի արկ ի վերայ նորա. նա եղիցի սպիտակ կիսա[լուսի]ն:*

§ *20.* Դուռն վասն զօհրայի մաքրելոյ, որ լաւ սպիտակի և կակղանայ և մաքրի աստուծով. *Առ զօհրայի սալքն և դիր թըթու-մածուն գ օր և ապա առ կլէքարի աղն և մեղրն, առ սալքն զօհ-րային և թաթղէ ի մեղ(ր)ն երկու երեսն այլ. և յետոյ թաթղէ ի կլէքարի աղն և դիր ի կրակն որ լաւ կարմրի երեսն, և այն-չափ արայ այդպէս, վոր մինչև լաւ սպիտակի, որ կակղանայ և հաւանիս:*

§ *21.* Դարձեալ դուռն Իսայի ասածն վասն զօհրայի սպի-տակուցնելոյ և կակղանալոյ. *Առ զօհրայ քանի որ կամիս, ծեծէ նօսր և արայ տախտակունս բարակ և ապա առ արծիւ և նամակ թուրքի, և սալնիտր վանեցի և լից ի վերայ ջուր և լաւ եփցուր, որ ջրի կէսն մնայ և ապայ զայն տախտակունս դիր ի կրակն որ կարմրի և մհէ[1] ի յայտ ջուրտ, այնչափ արայ, որ մինչև լաւ սպիտակի իբրև զլուսին և արայ զինչ և կամիս աստուծով:*

§ *22.* Դուռն մուշքարոյ* զոր ետուր Շեհ Ահմեդի հայրն Հապաշին. ասաց՝ *Առ կրի ջուր և լից ինք ի շիշ մի և դիր ի յաղբն է օր և հան ազկէ խըմովդ զկարիճն այնչափ, մինչև կրակն զի-մանայ և թափիթ լինի և կրացոյ խըմօվտ զլուսին* և երբ կրա-նայ լուսին* ազկէ ի հետ սնդիկին*, այնչափ խմցուր և տրորէ որ այլ չխմէ ի յիւրմէն բան և ապայ դիր ի յաման մի և թաղէ ի յաղբն որ արձակի. հան կապէ զինքն և արայ այդպէս գ ան-գամ, և արայ պատկերքներ ի մուշթարիէ* և օծնէ զինքն այս իւղովս և դիր զինքն ի գարէ հացի մէջն և թող որ եփի հացն. հան զինքն և տեսանես սեւացեալ, և օծնէ այս իւղովս հետ մի այլ և դիր ի վերայ կայծերու և փչէ կամաց կամաց բէրանովտ և հան. ելանէ ի կրակէն սպիտակ և մաքուր կատարեալ կարո-ղութեամբ աստուծոյ:*

§ *23.* Դուռն մուշքարոյ* մաքրումն. *Առ զմուշթարին* հալէ զինքն լաւ և կերցոյ իւրն ազկած ապիկի. այսպէս արայ գ ան-գամ, որ լինի իբրև զհող և ամէն անգամ արայ զինքն ալիքայ նայ կու լինի որպէս զլուսին* և դու ձգէ ի վերայ զինչ որ մուշ-թարոյ* աքսիր, որ շինես նա լինի լուսին* աննման:*

---

[1] *Մխել, կոխել*

§ 24. Դուռն մուշքարոյ*. Առ լուացած մառեհ և հալած լինի ալամով բաժին մի, և կրոցուցած լուսին* ալամով բաժին մի, և զերկու հալածն ի միատեղ որ լինի մէկ ալիքայ և հալէ զմուշ-թարին* Բ տրամ և ձգէ ի վերայ տրամի այդ ալիքիցն. նա լինի լուսին* գեղեցիկ աստուծով։

§ 25. Դուռն որ մաքրէ զմուշքարին* լաւ. Առ աղ անդրանի ալխտակ և առ թժայ մածուն և լից զաղն ի մէջ և դիր արե-գակն* ոք մինչև արձակի և թող գիշեր մի յօդն ի աստեղքն և ապայ հալէ մուշթարին* և լից ի մէջն ե և գ հետ որ մաքրի իւր սևութենէն և իւր ամենայն աղտեղութենէն խիստ լաւ։

§ 26. Դուռն մուշքարոյ* որ մաքրի և լինի լուսին* խիստ լաւ և ընտիր. Առ թրթու լիմոնի ջուր և լից ի մէջն քիչ մի[1] խառնէ լաւ և թող օր մի հալի լաւ, յետոյ բեր հաւկիթ մի և կեղևովն դիր մէջն այն ջրին և թող որ լաւ արձակի. յետոյ բեր զմուշթարին*, հալէ և թափէ ի յայս ջուրդ ժե անգամ. նա խիստ լաւ լուսին լինի և արայ զինչ կամիս։

§ 27. Դուռն զարմանալի մուշքարուն*. Առ կէս նուկի դե-ղին զառնեկ և կէս նուկի կարիճ և լաւ ողկէ զերկուքն մանր, և արայ զմուշթարին* նոսր սաֆիխաներ և շաղախէ զդեղերն թա-ժայ լիմոնի ջրով և արայ փակուստուկ հետ մուշթարուն* և դիր ի յապկած աման մի և դիր դամս գ օր և ապայ հան զինքն և հալէ. ապա առ խւրմէտ բն տրամ և մառեհի հարտուք ի տրամ, արճիճ ի տրամ. բայց մաքրած լինի արճիճն։ Այսպէս մաքրէ. զոհալ* հալէ, զոհալ* անցոյ ի աղի ջուրն և կատարեցաւ. է ան-գամ անցոյ։

§ 28. Ջուր որ արձակէ զամէն մարմին և զհոգին. Առ ապուրի աղն, ուշպն ու նաթրօն միայնչափ, ողկէ և հարթէ և դարձոյ վերայ որպես յառաջն և արայ այսպես է անգամ. և առ խւրմէն կաթ մի և կաթեցոյ ի վերայ անդկին երկաթէ չերեփ մի. նա արձակի յիստակ ջուր. և այս ջուրս կու արձակէ զապրդն ի նոյն ժամն, և կու արձակէ զկարիճն և կու արձակէ արեգակն*։ Եւ թէ առար այդ արձակածդ և արիր զզոհալ պատկերք և կա-թուցիր ի յայս արձակածէն ի վերայ նա կայնեցնէ զինքն և թէ ձգեցիր մեջն լուսին* նա կու արձակվի և լինի ջուր. և այս

1 Բնագրում այստեղ բառ է ընկած երևում։

վասն սպիտակացնելոյ է և առար ի արձակածներուն և ձգեցէր զինքն ի մուշթարուն* նա կանգնեցնէ զինքն աստուծով:

§ 29. Դուռն յուսնի. Առ նուկի մի ըռաստահ, շողյոյ և անցոյ ի պտղի ձէթն ե անգամ և ի կաթրանն ե անգամ. և ողկէ ի հետն գ օտարիտ*, այնչափ տրորէ որ օտարիտն* չերևի. յետոյ առ թառթեր և պօվրախ և զռնեհ, ամէն մեկէ գ տրամ, մարթաք ըռուպ տրամ, ողկէ և միաւորէ զխըրխանքն և ձգէ ա ի վերայ գ տրամ մաքրած զօհրայի և խառնէ ի հետն տրամ մի լուսին* կոյս. ելանէ խիստ գեղեցիկ լուսին աստուծով:

§ 30. Դուռն արեգական*. Առ զօհրայի խառտուք որչափ որ կամիս և քան զինքն օտարիտ* և արայ մաղլամայ միատեղ. և ապա առ զաճ և քան զինքն հուկլիթ և հարթէ և առ ջուրն և մամէ մալղամայն այս ջրովս այնչափ մինչ որ հալի ի վերայ ալքի. և առ ա տրամ յասկեց և ձգէ ի վերայ ի տրամի և խառնէ ի հետն ա տրամ արեգակ*. նա զօհրան* ըռուպ ասած լինի:

§ 31. Դուռն զարմանալի արեգական* և ստոյգ փորցած, բայց ամէն մարդոյ մի ասեր. Առ զնճուֆր, ըռաստահ, կարմիր զառիկ և կանանչ զաճ ժբ տրամ, զաֆրանի հասխտ ե տրամ. այսօք ուրիշ ուրիշ խիստ լաւ լոսէ և խառնէ ի միմեանց հետ. և առ գ հատ եզան լեղի և լից յայտ զեղերուս քիչ քիչ և լոսէ և դիր ի յապիկած աման և դիր ի կրակն գործելոյ, որ բարձրութիւն կրակէն թիզ մի լինի վեր, այնչափ եփէ, որ միս զառնայ, զճճութիւն չմնայ. առ ասկեց ա տրամ և տուր ծ տրամ լուսնի* լինի խիստ ընտիր արեգակ* և լաւ. խիստ փորձած է:

§ 32. Դուռն արեգական*[1]. Առ բ տրամ սրմայ լուսին* և ա տրամ ջ"րի[2] արեգակն* և հալէ զերկուքն ի միատեղ և դարձեալ արայ զինքն հարտուք և լից ի վերայ հարտուկին գ տրամ օտարիտ* և արայ մաղլամայ. ապա առ տրամ մի կարիճ և տրամ մի արծիւ և լոսէ զերկուքն ի միատեղ խիստ լաւ և ապայ խառնէ ի հետ խարտուկին և կրկին լոսէ և լից ի կճիճն և կակուղ թացուր. և դարձեալ կարիճ և արծիւ լից ի վերայ և լոսէ և թացուր և արայ այսպես գ անգամ լոսելով խիստ և թացնելով, և հալէ զինք և արայ ալիքայ. նա ելանէ գեղեցիկ արեգակն*:

§ 33. Դուռն որ գոյն տայ արեգական*. Առ երկաթի զաֆ-

---

[1] «Արեգականն»-ից հետո գրված է մի անվերծանելի բառ (Թլթոյ):

[2] Ջուհարի—հանքային?

ըան, որ է անհերաց աղիւն բաժին մի, և դեղին ծըծումբ բաժին մի, զինքն լից ի հաւկիթն, հանած է սպիտակուցն և հնացեր է դեղնուցն, և հալէ զինքն շող ջրով և ծեփէ քո կաւոյն և դիր ի վերայ կղմինտրին և տաք թուներն, որ լաւ եփէ և հալէ զարեգակն և դիր ի վերայ ամեն մսխլի*[1] կուտ մի այս դեղէս. նա կարմրացնէ զինքն խիստ լաւ աստուծով:*

§ *34.* Դուռն որ ներկ եւ գոյն տայ արեգական* է խիստ լաւ. *Առ կարմիր զարեկ մաար լոսած բաժին մի և քուռիթի ջուր բաժին մի, սոխի սերմ բաժին մի, դիր ի վերայ կակուղ կրակին, յետոյ առ զվատ արեգակն* շողցուր և մխէ ի յայտ ջուրտ գ հետ. նա լինի արեգակն* ազնիւ և բարձր աստուծով:*

§ **35.** Դուռն որ կակղացնէ արեգակն*. *Առ նշադր, բռաստուհ, փարսի ծծումբ, պօրակ և ապխկի, բարաբար[2] լոսէ, հալէ արեգակն* և ի ներս ձգէ, նա կակղանայ լաւ:*

§ *36.* Դուռն որ արծիւն քաբիք անեն կրով. *Առ գ նուկի արծիւ և գ նուկի կիր, խիստ շատ լոսէ զերկուքն ի միասին հաւկթի սպիտակուցով և ած զինքն ի ապխկած պուտուկ մի և կործէ ի վերայ ապխկած քասէ մի, ամրացոյ զփակն և դիր ի հացպան փուռն գիշեր մի. և հան լոսէ, կշռէ և տես թէ ինչ է պակսեր նա՝ դու յաւելցուր իւր ծվէն և դիր ի փուռն որպէս յառաջն գիշեր մի և արայ այսպէս գ հետ. և ապա հան և լից ի վրայ հորի եռման ջուր, և լաւ խառնէ զինքն և թող օր մի որ լաւ սփռի, և քաշէ զջուրն աղրկով և կապէ կակուղ կրակով ի մէջ պուտիկին և դիր ի վայր, որ արձակի քան զշերիկ ձէթ. առ պահէ ամուր, մինչև որ պիտոյ լինի և այս է:*

§ *37.* Դուռն մի այլ արծւի. *Վասն նոյն գործոյ, որ կրով լինի, բայց կիրն հաւկթի պլտիր, և դիր ապխկած աման և յառաջն ամանն օծնէ մեղրով և ապա լից ի զհաւկթի կիրն ի վերայ և փշրէ զդեղն ի վերայ, և դիր ի գէճ տեղ և թող որ արձակի. ապա հաթրէ և առ զջուրն և մոմէ իւրմովս զմաղլամայն. խիստ լաւ փորձած է:*

§ *38.* Այլ դուռն որ նշատիր սապուք յինի. *Առ ծ տրամ նշադր և եփէ ի մէջ քացախին կակուղ և մեղմ կրակով մինչ որ ցամաքի և լինի քան զշիպ. յետոյ դիր ի վերայ մարմարին և ազկէ լաւ. ապա դիր է մէջ սուր քացախին որ գ օր կենայ, յետոյ*

---

1 *Մսղալ—կշռաչափ—*1/96 *փունտ:*

2 *Հավասար, համապատասխան, միատեղ:*

լից ի մէջ կափախով շուշինն և քացխին գ մատ բարձր լինի վերայ նշադրին և պինդ ծեփէ զկափախն չորս բոլորն և դիր ի վերայ տաք մաղմաղին մինչ որ քացախն ցամաքի և զարնէ զջու-հարն ի վերի գեղն. և լինի շուշայ շուշայ կարողութեամբն աստուծոյ։

§ 39. Այլևի դուռն որ նշատր սապուք անես. *Առ նշադր ա բաժին, և լաւ կիր ա բաժին և կիրն անցոյ ջրով ի հետ նշադրին. երկար աղէկ արայ և լից ի մէջ կանաչ քասայի մի և կործէ քասէմ այլ ի վերայ և զփակն լաւ ծեփէ և գիշեր մի դամս արայ, որ լաւ եփի. ապա հան և լից ի նաման ջուրն որ լավ հալի և թող որ նստի և բռավաղի, և տղրկով քաշէ զջուրն և առ կակուղ կրակով կապէ, դարձեալ առ զայդ կապածդ կրկին խառնէ ի նոր կիրն, լոսէ երկար և արայ յառաջին թաթպիրն գ հետ. և այդ է լաւն. և թէ կամիս արձակէ։*

§ 40. Դուռն որ սպիտակացուցէ զկարիճն. *Առ նուկի մի կարիճ, գ լիտր սպիտակ սոխ, գ նուկի շապ, ա նուկի լեղի աղ. աղէկ զամէնն և բողկի ջուր ի հետն խառնէ և աղէ զխմբեանքն. և առ դ լուսին**, ժ *տրամ ծառայ և դիր երկաթէ շերեփն և լից ի վերայ սակաւ մի որ կապի մինչ։*

§ 41. Դուռն որ արձակէ զունանն որ է ապիկի. *Առ կալիքարի ջուրն և հորոմէ զապակին և անցոյ ի յայս ջուրս մինչ որ կրանայ և ապա լոսէ ի վերայ սալին* ե *օր և դիր ի շիշն և ամրացոյ զբերանն և թաղէ ի յաղբն գ շաբաթ և ամեն շաբաթ փոհէ զաղբն և ամեն դ օր տաք ջուր ցանէ ի վերայ աղբին. նա արձակի և կապէ խումոլտ զօտարիտն** *քար. ապա առ խուրմէտ, ձգէ ի վերայ ինչ մարմնոյ որ ուզես նա կայնեցնէ զինքն աստուծով։*

§ 42. Դուռն որ մաքրէ զերկաթն որ է մառնխսն. *Առ ուտելոյ աղ և կարիճ բարաբար և շաղախէ քացախով և ծեփէ զերկաթի սաֆինաներն և ցանէ ի վերայ աղկած ապիկի, և շողցոյ լաւ* է *անգամ, նա կու լինի քան զմաղլամայ արծաթ։ Ապա առ բուրմէն* ժ *տրամ և լուսին** բ *տրամ և արեգակն** *ըռուպ տրամ, հալէ զինքն միատեղ որ լինի սպիքայ։ Առ խուրմեա* ա *տրամ և տուր* թ *տրամ մաքուր մուշթարոյ** *ելնէ լուսին** *գեղեցիկ։*

§ 43. Դուռն որ հալէ զմառնխսն. *Առ բաժին մի պօղպատի հարտուկ և դիր ի հետն ալամի արճիճ և դիր դամս բարկ կրակ գիշեր մի. և արայ այդպէս գ անգամ և յետոյ դիր ի ծակ ծակ*

ուք կճիճ մի և զայն ծակ ուք կճիճն լից զեղն և դիր ուքն ի մէջ սաղոռ կճիճին և խիստ ուժովցուր կրակն որ հալի մառեխն և իջանէ սպիտակ ջուր ի սաղ կճիճն և լինի սպիքայ սպիքայ որպէս լուսին*։ Եւ թէ կամիս զպղնձէ հարտուքն արայ մառեխի անեղը նա կայնեցնէ զմուշթարին* լավ լուսին* աստուծով։

§ 44. Դուռն որ արծակէ զտալղն որ լինի ջուր. Առ զտալղն և օծնէ ընկուզի ծիթով և դիր զինքն ի կճիճ մի նա կու հալէ որպէս զձէթ։ Կաթեցոյ զինքն ի վերայ տաք մուշթարույ* որ հալած լինի տաք. ի վերայ տաքի կու մաքրէ ամեն աղտեղութենէ լաւ աստուծով։

§ 45. Դուռ մի այլ որ արծակէ զտալղն որպէս զջուր աստուծով. Առ զհալթիթ [կամ հալթեթ] և զաղտոր և բորակ, և լից ի վերայ թըթու թուրնջի ջուր և լաւէ խըմօվս լաւ. տալղն կու արծակի ի նոյն ժամն աստուծով, որպէս զջուր դառնայ։

46. Դուռն լուսնի* ճշմարտապէս աստուծոյ էլ յայտ է. Առ ճ տրամ սուլֆուր, լաւ աղէ և լից ի շիշիլի աման մի[1]. և լից կաթ ի վէրայ որ ծածկէ բ մատ և եփէ մինչ որ կտրի կաթն. զէն կտրածն թափէ, այլեւ լից կաթն, այլեւ եփէ, այլեւ թափէ, այնքան լից թափէ մինչ որ չէ կտրի կաթն, ցամքեցուր էրածն, յետոյ ձէթ լից ի վերայ ճ տրամին զճ տրամ քիչ քիչ լից, որ ծածկէ և եփէ մինչ որ ձէթն հատնի, յետոյ բեր բ նուկի պաշքացախ, մէկ նուկին լից ի վերայ և եփէ մինչ որ ձէթն ելնէ քացխի երեսն. զայն թափէ զմէկել նուկի քացախն լից ի վերայ, այնչափ եփէ մինչ որ ցամաքի, յետոյ բեր ճ տրամ արծիւ ձգէ ի ջուրն և կապէ ու դիր ի հետն և տորըէ լաւ. թէ թուցես նա լաւ է, թէ չէ նա՝ զարար[2] չունի, լաւ աղէ մինչ որ կորուսի մէջ մէկու և լից ի յաղիքն. և դիր ի տաք ջուրն, և յիշար կացիր, որ չի ծակվիր մինչ որ հալի, լից ի շիշիլի կարէն, ըմպեզով քաշէ, մինչ որ ջուրն կտրի, հան զտուրտին, լաւ աղէ, լից ի էն ջուրն և դիր ի զէճ տեղ բ գ օր, այլեւ քաշէ, այլեւ զտուրտինն հան, աղէ, լից ի ջուրն, թող բ գ օր. այլեւ քաշէ մինչ որ ամէն քաշուի, յետակ ջուր դիր ի յետ, յետոյ առ ճ տրամ սնտիկ, ճ տրամ արծիւ, բճ տրամ շապ քաշէ զթէզապն, լից օտարիտն* ի թէզապի մէջն և եփէ մինչ որ թէզապն հատնի՝ լինի

---

1 Բնագրում գրած է ամամի։

2 Վնաս։

սպիտակ հող։ Եւ լից ի վերայ յիշեալ ջուրն, դիր ի կարէն, քաշէ, հան զթլֆն, տրորէ ի ջուրն և թող գիշեր մի որ է կատարեալ աքսիր։

§ 47. Դուռն որ ներկ եւ գոյն տայ արեգական* խիստ լաւ. *Առ շիտանէ նիատիզի և աղայ զինքն գինոյ քացախով խիստ լաւ և առ սպիտակ արեգակն* շողցուր, մխէ ի յայտ դեղտ. նա առնու գոյն. և քանի որ մխես առաւել պայծառանայ աստուծով։*

§ 56[1]. Դուռն լուսնի* որ է յառաջին տարանանն. *Առ զոհրայի* սաֆխիեայ, որ յիստակ լինի և նօսր, և մխէ գ[2] դիր ի քացախն, յետոյ վերայ ջուրն որ է կատարեալ աքսիր, որ ելանէ կատարեալ լուսին*, որ ի կրակէն սպիտակ ելանէ աստուծով։*

§ 57. Երկրորդ տարանանն որ ելանէ բոպասէն. *Առ բահճինու օտարիտին* ջուր դ բաժին, լուսնի* կիր ա բաժին, լից ի ջուրն և դիր ի թաց փշկին կամ ի գէջ տեղ գ օր որ հալի, եղաւ քեզ կատարեալ աքսիր։ Առ ծ տրամ մաքուր օտարիտ*, ա տրամ լուսին*, էրայ մաղլամայ, խմցուր ի յայս ջրէս․ բ գ և դիր կակուղ դամս որ լինի սպիտակ հող. ա տրամ իքսիրէն առ ծ տրամ զոհրայի* և կամ մուշթարոյ* ելանէ բոպասէն ճշմարիտ. լաւ պահող սոն աստուած օրհնէ։*

§ 59[3]. Դուռն զարմանալի, որ կայացնէ զմուշքարին* խիստ ընտիր և լաւ լուսին* աստուծով. *Առ մուշթարի* և հալէ [խառնէ] զինքն և խառնէ ի հետն քան զինքն արծիւ. և լուծ զինքն լաւ միատեղ և հաթրէ զինքն զինճութեան՝ նա կու հաթրվի գորշ ջուր մի, և հան յատակն և հառնէ ի հետն քան զիւր կէսն արծիւ, լաւ ազկէ և հաթրէ. նա կու հաթրուի դեղին ջուր, առ զայն ջուրն և պահեայ ամուր և դարձեալ խառնէ ի հետն քան զինքն դ արծիւ. և այլուի հաթրէ. նա կու հաթրուի սպիտակ ջուր և մնայ զմուշթարին* կիր բոպիտակ և առ զամէնն պահէ։*

Եւ առ երկաթի շերեփ մի և դիր ի վերայ կակուղ կրակին և լից ի մէջն լուացած սնդիկ որ լուացած լինի օր մի և եփած,

---

[1] *48—55 հատվածները կրկնություն են §§ 34—41, այդ պատճառով էլ չենք հրատարակում։*

[2] *Պետք է կարդալ. «մխէ Գ անգամ»։*

[3] *§ 58-ը չենք դնում մեծ մասամբ թուրքերեն աղավաղված լեզվով գրած լինելու պատճառով։*

և լից ի վերայ այն սպիտակ ջրէն որ հաթրվեր է ի նշատրէն և ի մուշթարիէն*, կաթ կաթ կաթեցոյ վերայ, նա կու կապի անտիկն գեղեցիկ։ Առ զինքն և բեր երկաթ կակղեցեալ հարտման և քան զինքն վերացուցեալ զաւիկ, և արայ զինքն գ բաժին և խորովէ զերկաթն ամեն իրիկուն զմէկ բաժին, որ գ գիշեր գ բաժին հորովէ, և հալէ զինքն ձիթով և նաթրոնով՝ նա կու հալի քան զլուսին* սպիտակ։ Եւ ձգէ զհալածն ի մէջ ձիթին և այլւի հալէ, և առ ի այն կրացեալ կլայիկէն խ տրամ և լից ի կճիճն, և առ ի այն հալեալ երկաթէն ժ տրամ և ի այն կապած օտարիտէն* բ տրամ ու կէս, որ ամէն լինի ծբ տրամ ու կես, և դիր ի վերայ փութկլի երեսին նօսրացուցած և տապկացուցած լաւ արեզակն* և ամրացոյ զփակն և դիր ի դամս կրակն, և հան ի դամսէն և դիր ի բռուպառն. նա ելանէ բռպառէն ծ մաքուր և հալած լուսին* այլ քան զայն որ հանեն հալոցքն ի հողէն աստուծով։

§ 60. Դուռն արեզական*, լուսնի*. Առ մառեխի հարտուկ, կարմիր զոնխս, զեղին զոնխս միաչափ, միատեղ սաղկէ և դիր դամս օր մի և գիշեր մի, յետոյ հան և լուայ ջրով և աղով, և դարձեալ արայ յառաջի պէս գ հետ. և առ թուղթ մի նաթռոն և շաղղէ ձիթով, և հալէ և արայ այդպէս է անգամ, նա լինի ք.. խնդրած։ Եւ թէ կամիս լուսին* նա, սպիտակ զաճ և նշատր միաչափ շաղղէ, կերոյ այտար մինչ որ սպիտակի* նա լինի լուսին*. առ և փորձած է աստուծով։

§ 61. Դուռն օտարիտ* կապելոյ. Առ ժ տրամ շապ, ժ տրամ ժպրիթ, ժ տրամ աղամ, ժ հաւկթի սպիտակուց, բ տրամ ժարգոյ գող լից ի վերայ, այնչափ եփէ որ կէս մնայ, յետոյ այտ ջրովտ եփէ օտարիտն* որ կապի աստուծով։

§ 62. Դուռն վասն օտարիտ* կապելոյ. Առ ապտ և աղայ իւր չափ զաճով և դիր երկաթէ աման մի քացախով, օր և գիշեր մի եփէ և եթէ չեղաւ նայ մայիռաստայով եփէ, նա կու լինի աստուծով։

§ 63. Այս է մայիռասն. Առ կլէքար բ բաժին և քրաճ ա բաժին և լից ի վերայ նոցա ջուր և եփէ որ մնայ կէս ջրին, տղրկէ և առ զջուրն և այտ է մայիռասն և այտով եփէ օտարիտն* որ թանձրանայ աստուծով։

§ 64. Վասն օտարիտ կապելոյ։ Առ ընկուզի ծառի ծըծի

ջուրն Ժ տրամ, և Ե տրամ օտարխտ* ձգէ ի մէջն և եռացոյ որ կապէ օտարխտն*. յետոյ ողկէ և տուր ամենի։

§ 65. Դուռն որ խալքի կեճեպն կիր առնես. Առ հուկթէ կեճեպն և դիր ի ջուրն Գ օր. ապա լուայ և աճուայ ձեռօքդ խիստ շատ որ խկլի փառ չի մնայ ի մէջն. դիր արեգակն* որ լաւ չորանայ, մանր լոսէ, լից ի փուքթայքն և կավով բերան ծեփէ, դիր ի կրակն, այնչափ փչէ, որ թվլի թէ հող հալավ. հան լոսէ և այլևս այտպէս արայ մինչ հաճիս։

§ 66. Դուռն լուսնի*. Առ Լ տրամ զօհրա*, ԺԵ տրամ բահճ, ԺԵ տրամ թարթխռ, ԺԵ տրամ ապտ, ԺԵ տրամ կլէտուզի և Ի տրամ սապոն և աղայ խուխանքն Ա ձվի սպիտակուցով և բեր օծնէ Լ տրամ պղնձի սաֆիհաներն Բ երեսն այլ և դիր ի յաման և լից ի վերայ Բ հուկթի սպիտակուց և դարձեալ լից ի վերայ ձէթ որ ծածկէ զինքն և դիր խուփն ի վերայ և չամուռէ լաւ և հիան գլուխն փոքր ծակ մի արայ և դիր ի վերայ կրակին և թող այնչափ մնայ որ մուխն կտրի և ապայ կալ գլխիան ծակն և արայ դամս գիշեր մի և հան աղայ զամէնն և դիր Ա տրամ ի վերայ Ծ տրամ զոհրայի* որ լինի լուսին* սատուծով։

§ 67. Դուռն լուսնի*. Առ Ժ տրամ սնտիկ, Ժ տրամ սպիտակ բահճ և աղայ զերկուքն ի միատեղ որ լաւ միաւորին. Ժ տրամ կլէտուզի, Ժ տրամ թարթխռ ևս խառնէ հետն, և աղայ լաւ որ միաւորին, ապա առ թըթու նուռն և չողան և սումախ, բարկ և հին քացախով թրջէ զտոքայ Գ օր և առ սոցա ջուրն և յխտակէ, լից յորեշ աման, ապա շողացոյ զզոհրայի* սաֆիխաներն և մխէ ի յայն քացխով և նոան չօղանի ջուրն մինչ որ լաւ մաքրի. և առ ձվի սպիտակուց, զարկ ի հետն նշադրին որ դառնայ ջուր և զայն յառաջին Դ դեղն այս ջրովս շաղաղէ և ծեփէ զայն զոհրայի* սաֆիհաներու Բ երեսն թանձր և սաֆիհաներն ամէն տասն տրամ, և թող որ լաւ չորանայ և դիր ի յաման մի տակ տակ և կաւէ զբերանն ամուր և թող որ չորանայ, և դիր ի դամս գիշեր մի շուշկով կրակն, կանուխ հան և տեսանես ջուհարօրայ Ա տրամ Ե զոհրայի* տուր լաւ սպիտակի և լուսին* դառնայ և տրամ այլ կոյս դիր ի հետն։

§ 68. Դուռն արեգական*. Առ Գ տրամ սրմայ լուսին*, Գ տրամ բռաստհ տաշի, Գ տրամ գնջուֆ, Ա տրամ ոլէհմանի, զամէնն լաւ լոսէ և լից ի փուքթաքն և ի վերայ ապիկի լից, և ի վրայէն

կրակ արայ մինչ որ հալի. հան և տես խիստ կարմիր է փութաքն, և նոր փութաք մի լից և հալէ և մէկ ու կէս լիւլաֆէ տուր և օրհնէ զաստուածն ամէնի։ Եւ թէ սորայ վերայի կրակն ձիու փայենով վառես՝ այլ լաւ կու լինի աստուծով։

§ *69.* Դուռն արեգական*. *Առ ժանգառ, արձակէ և կալէ որ լինի քար. և առ զնջուֆր* ի *տրամ, զառեկ ժ տրամ, ծըծումպ՝ ժ տրամ, լաւէ խառնի յիրար և արայ թասայիտ։ Ապա առ արձակած ժանգառէտ տրամ մի և երկաթի զաֆրան տրամ մի, խառնէ յիրար և արձակէ ի մարխմայ բաղնիսն. հան և լից ամանն, հորովէ որ ցամաքի և այլ չի մնայ,* բ *անգամ արայ։ Սորայ* ա *տրամ ժ տրամ լուսին* ներկէ արեգական անմխալ աստուծով։*

§ *70.* Դուռն արեգական*. *Առ* իե յղկյ[1] *քպրիթ և փորէ ի գետինն փոս մի և վառէ կրակ ի մէջ փոսին և ի մէջ փոսին վառէ փառփուռի քասա մի ի վերայ կրակին և զու զդեղն զդալով լից՝ ի վերայ կրակին մինչ որ հատնի, ճուհար մի կու եղանէ ի քասայն, զու քերայ զայն ճուհարն և* ա *ի ժ տուր անմնման արեգակն* կու լինի աստուծով։*

§ *71.* Դուռն արեգական*. *Առ ոչխարի մածուն սերով և պահէ* Է *օր, լաւ թըթվի, ըրաղի հան. և առ պղնձէ հարտուկ և կամ երկաթէ փետուր, լից ի շիշն և զայն ըրաղն քիչ քիչ լից ի վերայ ...[2] մինչև քառասուն օր որ սպիտակի. սորայ* ա *տրամն ձգէ ի վերայ* ճ *տրամ յխատակած հալեալ զօհալի զառնայ արեգակն ողորմութեամբն աստուծոյ։*

§ *72.* Կապուտէլ հում կիր կամ ճիր. *Առ բաժին մի ծըծումպ և խեր չափովն մուրտասանկ և երկուքին չափովն նշատր. և խոռովէ զինքն ի ծեփած աման գիշեր մի և տուր զմէկն* ճ *լուսնի* լինի արեգակն աստուծով։*

§ *73.* Դուռ մի գեղեցիկ. *Առ լիտր մի հաւկթի ջուր և դիր ի վերայ նորայ նուկիմ նշատր,* բ *նուկի կլէտուզի,* բ *նուկի շպլեղ,* բ *նուկի աղ, արձակէ և հաթրէ զինքն. և այլ դիր ի վերայ քան զառաջին հաւկթի ջուր. արձակէ և հաթրէ* գ *հետ, և մոմէ խըրովտ զըրիթն որ ճոռ և սպիտակեցնէ զօհրան* և կալէ օտարխտն*. և դիր ի վերայ կրակին օր մի և գիշեր մի, նա եղանէ։ Զգէ զմէկն* շ՝ *լինիցի զինչ որ կամիս աստուծով։*

---

[1] *Այս համառոտագրած բառը մնում է անհասկանալի։*

[2] *Այստեղ պակասավոր է, թվում է՝ պետք է ավելացնել «դիր ի դամոծ»։*

§ 74. Դուռն լուսնի*. *Առ մուրտասանկ որչափ որ կամիս և նոյն չափովն նշատր. և հորովէ զխուրեանքն միատեղ ի ծեփած աման մի. հան և ձգէ խուրմէտ* ա *ի վերայ* ծ *տրամ մուշթարոյ** *նա կանգնեցնէ. յխտակեալ կլայեկն հալէ յոլով անգամ և թափէ ի քացախն, նոյնպէս ի սխտորի ջուրն, նոյնպէս ի աղայոց գողն և լինի մաքրեալ աստուծով։*

§ 75. Դուռն արեգական*. *Առ թութիա* ա *բաժին, արծիւ կէս բաժին և քան զինքն զաճ և քան զինքն շապ. աղայ զխուրեանքն և շաղաղէ կաթրանով և խորովէ զինքն գիշեր մի, որ այրի և սևանայ*[1]. *ձգէ խուրմէտ ի վերայ զօհալին՝ լինի արեգակն** *անպատճառ և չունի կասկած ի հալելու ժամն. զայս բառոյդ շինեն մազրուպիքն։*

§ 76. Դուռն լուսինի. *Առ քպրիթ և ալամ միաչափ, և դիր ի կանանչ ապիկի աման մի և աղջուր լից ի վերայ և սղկէ* գ *օր և յետ* գ *աւուրն լուայ զինքն հորի ջրով այնչափ, որ խակի աղութիւն չի մնայ ի յինքն. և դիր որ լաւ չորանայ. և այլւի դիր ապիկած աման. և կրկին աղջուր լից վերան և սղկէ* գ *օր և այնչափ արայ, որ դնես ի վերայ շողացուցած սաֆիհայի նա որպէս մոմ հալի այս իմաստնոց զանեխն. սորայ մէկն ի վերայ* ծ *տրամ զոհրայի** *տաս՝ լինի լուսին**. *և յորժամ սպիտակ եղև կարիճն և ալամն նա մոմէ այս ջրովս, որ հաստնիս աստուծով։*

§ 77. Զոհալի* ջուր. *Առ արճըճի հարտուքն և կամ տափակացուցածն և քան զինքն սուր քացախ լից ի վերայ և բաժին մի արծիւ. ամէն օր սղկէ մինչ որ արձակի. և թող որ նստի. առ զջուրն ապրկով, և այս ջուրս է զարմանալի, որ արձակէ զամենայն հոգիքն։ Եւ այս ջրովս մոմացո և հորովէ զայս զեղն որ ի մեկալ երեսն եմ գրեր, որ իմաստնոց զանեխ կու տաէ, խմցնելով սաղկ էնելով և խորովելով արձակէ զինքն և կապէ և ձգէ զինքն ի վերայ* զճ *տրամի. և թէ արձակեցիր և կապեցիր՝ նա երթայ մինն ի վերայ* ռ *աստուծով։*

§ 78. Զոհալի* մաքրել.— Դուռն արճիճ մաքրելոյ. *Առ բարկ քացախ և աղ և շաքրի պղպեղ, լուծայ քաջ և խառնէ ի նոյն քացախն. ապա հալեա զոհալ** *և լից ի այն քացախն և զարձեալ հան զայն զոհալ** *և կրկին հալէ և սթափէ ի քացախն. այսպէս արայ* Է *անգամ այնժամ լինի յոյժ մաքուր. բայց ամէն [անգամ]*

---

[1] *Բնագրում՝ ո հ ա ն ա յ*

դքացալխն փոխէ և ապա ձգէ զաքսիրն և արայ զինչ և կամիս աստուծով։

§ 79. Վասն զնջուփրին որ սապուր անես, այսպէս արայ. *Առ գ տրամ զնջուֆր, դ տրամ մազ և* ա *տրամ նշատր. յառաջ զնշատրն և զմազն ի մէկ տեղ լաւ աղայ և զնջուֆրն ի մէջ դնես և զաւելին ի վերայ լնուս. և դնես ի դամս օր մի տաք ի հողի մէջն. Ե անգամ այդպէս առնես, մազն և զնշատրն նորես. Թամամ զնջուֆրն սապուտ կելնի աստուծով։*

§ 80. Լուսին* կակղանալ. *Եւ թէ լուսին չոր և սարթ լինի լաւ հալէ զինքն փոգոնի (?) կաթն կերցուր որ կակղանայ լաւ։*

§ 81. Մաքրումն բղբթին. *Առ լիտր մի քպրիթ, եփէ զինքն ի մէջ ձէթի և լից ի վերայ քացախ շատ եռման ժամն և խառնէ, ձէթն ելանէ երեսն. և սֆէ որ ձէթ և քացախ չի մնայ վերայ, և արայ այդպէս գ անգամ, որ այլ օծ չի մնայ յինք. և առ զարէ հատի չափ և ձգէ ի վերայ շողացեալ սաֆիդայի. թէ հալի զնա չի մխայ և տեղն ի սպիտակացաւ՝ կատարեալ է գործ, և թէ սևացաւ նա՝ կրկնէ գործդ մինչ որ կատարի և այն է։*

§ 82. Դուռն լուսնի*. *Առ աստուծոյ կարողութեամբ իշուզրթէին զդեղինն, լից ի մէջ շշի մի և ամրացոյ զփակն և դիր ի յաղբն* գ *շաբաթ, և հան զինք տեսանես ջրացեալ։ Առ սնտիկ և լից երկաթի շերեփ և լից ի վերայ այս ջրէս. և դիր ի վերայ կրակին որ ցամքի և նորու լից ի ջրէն* գ *անգամ նայ՝ կու կրանայ սնտիկն. առ խւրմէ տրամ մի և ձգէ ի վերայ* ճ *տրամ զօծրայի՝ ելանէ յուսպասէն։ Եւ այս դուռն ի հետ բարի մարդոյ մի էր և չէր տար ի խնդրողաց, և* դ *օր քան զմեռանիլն յառաջ ասաց թէ առ զայս փորձած դուռն և իմացիր զիւր հարկերն և քանի կարես պահէ։*

§ 83. Դուռն ղալղանդ շինելոյ. *Սղկէ զաճն որ Կիպրոսի լինի և արձակէ զինքն ի ջուրն և քաշէ ապրկով և դիր ի վերայ կրակին, որ եփի, և դիր ի վայր որ պաղի. և սղկէ արծիւ. Ժ տրամ զաճին տրամ նի արծիւ լից ի պուտուկն և դիր ի վերայ կրակին մինչ որ ցամաքի ջուրն և մնայ աղն դեղին. և այս է ղալղանդ Կիպրոսի։*

ՀԱՏՎԱԾ Բ.

(Ձեռ. Ա. էջք 58—67)

§ *84.* Եւ կրացոյ զարեգակն* այսպէս. *Առ զարճիճն և հալէ և լից ի մէջ սակաւ մի ջրոյ, Է անգամ հալէ և լից յայն ջուրն և յետոյ հալէ զարեգակն* և լից յայն ջուրն, և ցամքեցոյ, և աղէ, նա աղւոր կրացեալ։*

§ *85.* Վասն ճլայի արեգական*. *Առ բաժին մի արջասպ և բաժին մի ժանկառ, աղէ միատեղ և լից ի վերայ բաժին մի նշադրի ջուր. և տաքացոյ զինքն և մխէ ի ջուրն քանի մի հետ. նայ ելանէ լաւ. և առ զինքն և տուր փառս։*

§ *86.* Վասն ճլայի և ծանրացնելոյ: *Եւ պայծառեցոյ սպիտակ արեգակն* այսպէս։ Առ շատանայտասպին և աղէ զինքն քացախով և շաղացոյ զարեգակն* և զարկ յինքն, և քանի կրկնես լաւանայ։ Եթէ կամիս որ զպակաս արեգակն* կշիռն ծանրացնես՝ տաքցոյ զինքն և զարկ ի գէճ հինայն դ Ե հետ. նա ծանրանայ կրաթ մի։*

§ *87.* *Եւ թէ կամիս որ կակղացնես զարեգակն* առ նշադր և ռասուխտ, և փարսի քքուրդ և բորակ, և ապիկլ. լսէ միատեղ և հալէ արեգակն* և ձգէ ի մէջն քանի մի հետ՝ նա կակղի։ Եւ թէ հալես և սպիտակ սոխի ջուրն ձգես՝ ես կակղի։ Եւ իմացիր զայն ես զի սոխի ջուրն ինչ մարմին որ հալես և ի մէջն լնուս՝ կակղին անպատճառ։*

§ *88.* Եւ մաքրէ զպղինձն այսպէս. *Առ գինու քացախ զլաւն և գ բաժին նշադր ձգէ ի մէջն որ արձակլի. հալէ զինքն և լից ի մէջն գ դ անգամ. այս մաքրումս լաւ է քան զամենայն մաքրումն։*

§ *89.* Այլ իմն կերպ. *Առ բաժին մի շիպ և բաժին մի սըլխտորի ջուր, խառնէ և լից ի մէջ սուր քացախի, հալէ զինքն, լից ի մէջն գ դ հետ։*

§ *90.* Մաքրէ զկլայեկն այսպէս. *Առ բաժին մի սխտոր և բաժին մի շիպ։ Ծեծէ միատեղ և խառնէ ի հետն մեղր, հալէ զինքն և լից ի մէջն Է հետ։ Մաքրի լաւ։*

§ *91.* Այլ իմն կերպ. *Առ զաղբերայ արիւնն և զաթրէ և օծ այնու զկլայեկն և հալէ և արայ քանի մի հետ, նա մաքրի։*

§ *92.* Եւ կրացոյ զկլայեկն այսպէս. *Առ զինքն և արայ սա-*

ֆիխայ և դիր ի հետ ձվի կրին տակ ու տակ, և փակէ զկճիճն և դիր ի տամս. ժամէ ի ժամ նայ եղանէ սպիտակ լաւ։ Եւ թէ անդիկ գնես ի տեղն կրին, այլ շուտ կրանայ։

§ 93. Այլ իմն կերպ. *Մանրէ զինքն և դիր ի կճիճ և լից ի վերայ քպրիթ և փակէ և դիր ի կրակն մինչ որ կարմրի. բաց և տեսանես զեղլին։ Լվայ զինքն որ սպիտակի լաւ։ Եւ կիրս այս լաւ է քան զամենայն կիրս։*

§ 94. *Եւ թէ կամիս պայծառացնել զպղինձն որպէս արեգակն**, *առ կարմիր մարթակ բ բաժին և կարմիր զօնեխ բ բաժին և ալբերաց արիւն բ բաժին, աղկէ միատեղ և շաղղէ այծու արիւնով։ Եւ առ կարմիր պղինձն զմաքուրն և արայ ռաֆիխայ և շապկէ այս դեղովս և ծեփէ ի վերայ քո կաւովն և դիր ի տամս բարկ կրակ բ ժամ. և հան թաղէ ի ջուրն և լւայ գ կամ դ հետ. նայ կարմրի պայծառ որպէս ոսկի։ Եւ զմալղամայն պղնձին որպէս լուսին** *արայ։*

§ 95. Արճիճ սպիտակացնել. *Առ շիպեմանի և նայթռուն և նշադր, միապէս աղկէ և խմցոյ քացախ և խորվէ, եւ աղկէ գ օր և դիր ի կթխայ մի և մի եւ կործէ ի վերայ և ծեփէ, և դիր ի թոնիր գիշեր մի և հալէ զարճիճն ի շերեփն և կերցոյ իւր որ սպիտակի։*

§ 96. *Ասացին իմաստունքն, թէ գտաք ի Բաղդատ քար մի արձան, յորում գրեալ էր բանք նախնի իմաստնոց. այսինքն յԱդամայ և Սեթայ և այլոց քաղդէերէն լեզվաւ որ է արապի. զգիտութիւն մոլորակացն և բնութեանց նոցին, և զատոց գնացիցն, և զանուանս տարերաց և՛ երկնի և՛ երկրի, և գլխաւոր իրաց, և կշիռ, և չափ, և համարողութիւն, և արհեստք և հալողութիւնք զորս իգիւտովն Ադամայ ասեն մնացեալ և անցեալ մինչ ի Նոյ. և պահեալ ծածկէին յանզգամաց և չտային թոյլ գիտել, և զի հասեալ էին գլխաւոր գիտութիւնք մինչ ի Սեմ, որ ունէր զվիճակ յերկրի ի Բաբիլոնէ մինչ ի Պալեստին, և մինչ ի ծովն և մինչ ի մուտս յԵգիպտոսի, և մինչ ի Հնդիկս. և մեծագոյն թագաւորութեան երկրի և մեծ արհեստքն աստեղագիտութեան*[1] *և այլ ազատականաց արհեստից, վասն որոյ և ոչ էր մեծ ազգ և իշխանութիւն ընդ յերկրի քան զքաղդեացիսն, զոր և Դանիէլ գլուխ ոսկի ասաց ամենայն թագաւորութեանց ընդ երազոյն։ Յորմէ ազգէ և՛ Աբրահամ, և՛ Մովսէս, և՛ ամենայն Իսրայէլ և՛*

---

1 *Բնագրում՝ *գիտութե։*

մարգարէքն· յորմէ և տէր Քրիստոս ըստ մարմնոյ, ի զաւակէն Աբրահամու, որ և ինքն էր վէմն առանց ձեռին ձգեալ, այսինքն մարմին ի կուսէն առեալ առանց սերման, և փշրեաց զթագաւորութիւն մարմնոյ և զիշխանութիւն Բելիարայ և ինքն լեռնացեալ ելից զերկիր։

Եւ արդ, ասեն թէ և ընդ այլ գիտութեանց և այս արհեստին կերպ գրեալ կայր ի վիմին, զի մի եղծցի ի ջուրց հեղեղէն, զի գիտէին ի քարոզութենէն Նոյին և ասաց թէ ապականելոց է երկիր* ըստ այնմ թէ ոչ առնէ աստուած իր ինչ երկրի, թէ ոչ զի նախ յայտնեսցէ զխրատն զգաղտնիս ծառայից իւրոց մակ ունէր զօրինակն այս գրեալ ի վիմին։

Առ աստուծով զմուխն լերդացեալ և ղաթրէ որ նախ ելանէ սպիտակ ջուր, և ապա դեղին և յետոյ խստէ զկրակն՝ նայ ելանէ կարմիր ջուր· և ապա փակէ զղարայն և վառէ՝ նա սպիտակի սայատեալ նշատր յմպեղն, և ունի այլ ճանապարհ, որ է երեք տարաճան փալաքին· և ղաթրէ զինքն կարմիր և պահէ։ Եւ ունի այլ շավիղ ի դ տարաճան արեգակն*։

Առ, ասէ, զչորրորդ բաժին՝ այսինքն զքարն մնացյալ յատակ ղարային և լվայ ի սնութենէ և աղկէ և տամսէ յապիկի աման կաւեալ գիշեր մի, հան և տես սպիտակեալ, առ և պահէ։ Եւ զկարմիր ջուրն ղաթրէ և դարձոյ ի վերայ մինչ միանայ կարմիր կապեալ· առ և պահէ։ Եւ առ սպիտակ քարն լից ի վերայ սպիտակ ջրէն և ղաթրէ, և դարձոյ ի վերայ մինչ որ ցամաքի· և ապայ առ նշատր և լից ի վերայ սպիտակ ջրէն և թաղէ յաղբն մինչ որ արձակի· և ապա հան, աղկէ ի հետն մոմ և դարձոյ յաղբն գ Ե և ի լուսնոյ Ե-ին կատարի, և հանես յաղբէն։ Եւ առ խսպիտակ քարէն բաժին մի և կարմրէն ծ բաժին, և սպիտակ ջրէն Ը բաժին և այս նշատրէս Ե բաժին. և աղկէ միատեղ, արձակէ յաղբն Ե օր և կապէ ի կակուղ կրակն գ օր, և արայ շատ հետ և հասանիս խնդրելոյն աստուծով։

§ 97. Առ աստուծոյ կարողութեամբն նուկի մի անտիկ և նուկի մի զավալի և աղկէ զերկուքն միատեղ մինչ որ անտիկն չերևի, և դիր ի դէճ տեղ մի և դիր ի ղարայն և խաթրէ կակուղ կրակով· ղաթրվի սպիտակ։ Պահէ զինքն և առ զատակն և նորու աղկէ և հետն անտիկ և զավալի, և զայս ղաթրածն սպիտակն դիր ի հետն և աղկէ միատեղ և որպէս յառաջն դիր ի վերայ կրակին։

Եւ առ նորա գիւր սպիտակն և ալկէ ի հետ ատակին և առ կրկին նուկի մի սնտիկ և նուկի մի զալալի և ալկէ ի հետն և զաթրէ։ Է անգամ արայ այսպէս. յետի անգամն շատ ջուր կու զաթրվի։ Երբ կտրի զաթրվիլն, խառէ կրակն, նա կու սայատվի սնտիկն և նշատր և կեւանէ յըմպեղն. առ զսայատածն և զջուրն և պահէ։

Եւ տեղ մի այլ այսպէս գրած։ Եւ երբ ջուրն որ զաթրվի առ և պահէ, և թող զպարայն որ պաղի։ Առ զգետինն և դիր սայատելու աման և սայատէ, նա կու սայատվի սնտիկ մեռած։ Առ և ձգէ յամէն նուկի ջրի մէջ զայս յիշեալ սնտիկն և նշատրն՝ նա կարձակվի ի նոյն ժամն. և իմացիր, որ քառսպ նուկի ի սայատածէն ի նուկի ջրի մէջն ձգես։ Առ և պահէ զայս ջուրս, որ արձակեցաւ ի մէջն նշատրն և սնտիկն։

§ 98. Եւ թէ կամիս թարքիպ անել դու լուսնի* առ խըմէ նուկի մի, լից ի զարայն և կերու իւրն քառսպ նուկի նշատիր՝ զայն յիշեալ նշատիրն, և քառսպ նուկի արծաթի վարաղ(ք). կակուղ կրակով, աստուծոյ կարողութեամբ ի նոյն ժամն հալի ամենն։ Առ մուշթարու սխլիքայ, շողցու զինքն և օծէ այս արձակած ջրէս թէպրով, և դիր ի կրակն, հան և նորա օծէ և դիր ի կրակն, նա կու փոխէ զինքն արծաթ աստուծոյ կարողութեամբն խալաս[1] կատարեալ։

§ 99. Արեգակն* մոմելն. Եւ թէ կամիս ոսկու ճանապարհ երթալ առ ի յայն ջրէն, որ յառաջն յիշեցաք՝ կես նուկի և դիր ի թազմեդ անելու զարայն և դիր ի վերայ կակուղ կրակի և կերու իւրն մթղալ մի ոսկու վարաղ և մթղալ մի յիշած նշատրէն՝ նա արձակի ի նոյն ժամն։ Եւ շինէ ի արճճէ դ տղարջնի և կաթեցոյ այս ջրէն ի վերայ կաթ մի կամ երկու՝ նա կու դարձնէ զինքն արեգակն* աստուծոյ կարողութեամբն։

Եւ թէ կամիս, առ նուկի մի ի ջրէն և մթխալ մի զնջուֆր և գ նուկի ոսկի, և արայ մալղամայ, և դիր զինքն ի զարայն, և այն ջրէն լից ի վերայ որ ծածկէ զինքն և զաթրէ և դարձոյ ի վերայ գետնին ի զարայն և նորա զաթրէ. գ անգամ այսպէս արայ։ Առ զաթրածն և բաց զպարային բերանն, և տեսանես կարմիր թապիթ. յանկից ձգէ մթխալ մի ի վերայ ԵՆ լուսնի* դարձնէ զինքն արեգակն* աստուծոյ կարողութեամբն։

1 Ազատվել, վերջացնել, ավարտել։

§ 100. Եւ իւր սքանչելիքն այս է որ զայս ջուրս ունի. *Առ Ե տրամ լուսին**, Ե տրամ սնտիկ և Ե տրամ զունեխի արճիճ, և դիր ի զարայն, և լից ի վերայ այն զաթրած ջրէն նուկի մի և զաթրէ և դարձո ի վերայ. արայ այդպէս Գ անգամ, հան և ձգէ խուրմէն մթխալ մի ի վերայ Ճ մթխալ զլայեկին եղանէ ի խալասն։*

§ 101. *Եւ թէ կամիս շողցու զոսկին և թաղէ ի մէջ այս ջրիս, ի յայն ժամն կարձակի։*

§ 102. *Եւ թէ կամիս առ քպրիթ բաժին մի և Գ բաժին ի ջրէն, և դիր ի զարայն և զաթրէ և դարձոյ ի վերայ և զաթրէ, և շողցու Ե տրամ արծաթի սաֆիդայ և օծէ զինքն այս ջրովս նա կրանայ։ Առ ի յայդկից տրամ մի ի հետ նուկի մի սնտկի, արայ մալղամայ, և դիր զինքն զարայն, և լից ի վերայ այս քպրթի ջրէն և զաթրէ զինքն Գ անգամ։ Ձգէ ի այս մաղլամէս մէկ մի ի վերայ Ծ մուշթարոյ՝ եղանէ կատարեալ։*

§ 103. *Եւ մէկն ի վերայ Ծ զօհալի եղանէ ի տալեղն։ Եւ ինքն է գեղեցիկ ջուր և կարձակէ զամենայն մայտանի զգնճըփրն, զքպրիթն, զզունեխն, զպլինձն, զերկաթն, զլուսինն**, *զարեգակն**, *զարճիճն, զտալքն և կեղանէ խուրմէ սքանչելի սքանչելիք։*

Եւ իմացիր, ո՛վ բժիշկ, որ կարձակես խուրմով զոլամաթներն, կու փախցնես խուրմով զգազաններն։ Եւ է ինքն բանալիք ամենայն իմաստութեան. և խուրմէն է այս ամենայն զանձքն, և պահէ զինքն անզգամ մարդվէ։ Ո՛վ որդեակ իմ, այս քեզ պատվիրեցի և մի իմացներ մարդոյ իսկի, որ զոդ լինի և կաւիրեն զիմաստութիւնն։

ՀԱՏՎԱԾ Դ

§ 104

(Ջ-իր Ա, էջք 67—72)

Գիր որ պատուիրեց ուղիղն որդւոյ Ավելհոդհամ

Եւ յիշեմ զանունն որ յառաջ է քան զյաւիտեանս, որ զինչ ասեմ ճշմարիտ է և սուտ չկայ և չեմ պահեր խորհուրդ ի խորհրդոցդ, այլ ճշմարիտ է զոր ասեմ։

Առ սնդիկ կենդանի մաքրեալ ի յայլ ընչէ բաժին մի, և բաժին մի դեղին քկուրդ, որ մաքրեալ լինի ի քարէ և ի հողէ, առ երկուքէն կշռով իմաստասիրաց և աղկէ զինքն խիստ, որ

մնասնի սնտիկ ի մէջ քկրդին և լինի սև հող. և դիր յապիկի աման մի որ չամուած լինի մինչևն ի դեղն և չորացոյ։ Եւ լինի ամանն երկայն վիզ և ամրացոյ զբերանն լիֆով և արայ ի ներքուստ աման մի, և արայ փոս մի և զերկու ամանի բերանն մէջ ի մէջ մուռ, և ամրացու ամուր, որ չելնէ ամենևին մուխն, և թէ ելանէ՝ քո գործն կաւէրի և չելանէ խումէն քեզ ներկ։ Եւ այսպէս արայ. ծեծէ մանր զգործելիս և լից ի վերայ այն ամանի ռուացն որ գլխի վայր դրիր և յայտ շուշայի բերան ի վայր կիջանէ դեղն։

Եւ առ նշատր մատանի, և զպլոռն, որ սաֆրա և սավառ չուննեայ ի յինքն՝ բաժին մի, և ի հաւկթի սպիտակ կրէն բաժին մի, և կշռէ զիրենք իմաստասիրաց կշռով, և աղկէ զիրենք միատեղ լաւ, և ժողովէ զիրենք, և դիր ի յօկած պուտուկ մի նոր, և լվայ զքարն ի մէջ պուտկին, և լից ի վերայ այլ ջուր քան զինքն վեց, և դիր զպտուկն ի վերայ կրակին, և թող որ եփի մինչ ի կէսն զադրի. առ ի վայր, թող որ պաղի և նստի, ջուրն քաշէ տղրկով ի յայլ աման և ի այն ամանէն քաշէ ի յայլ աման մինչ որ մաքրի և այլ աղտ չի մնայ յատակն, և ծածկէ զինքն ի փոշոյ և լաւ պահէ։ Եւ լից զինքն ի մէջ պուտկի մի, և դիր ի վերայ կրակի մինչ որ կապի սպիտակ աղ սաֆի փայլուն քան զպլլոռ։ Առ զայս աղն և դիր ի շիշ մի ապիկի և փակէ զբերանն, և արայ փոս մի ի գետինն, և դիր զշիշն ի մէջն, և դիր ի վերայ մանր գործելու կրակ, որ է տամսի կրակ։ Թող զինքն գիշեր մի, հան զինքն և աղկէ և դիր ի շիշ մի և ամրացոյ զփակն, և դիր ի տամս, և արայ այսպէս ծդ անգամ։ Եւ յետ ծդ անգամին աղկէ զինքը և դիր յերկայն վիզ շիշա մի մէջ և ամրացոյ զբերանն լըֆով և կործէ գլխի վայր ի մէջ ամանին, և ամրացոյ զբերանն և արայ ի վերայ ռուացն կրակ մանր գործելով, բայց առաջն փոշի լից ի վրայ ռուացն ապա զկրակն արա, որ կակուղ լինի տաքութիւն՝ որպէս հաւու տաքութիւն։ Եւ իջանէ խումէ խուղ մի թափանցիկ՝ թափիթ կու կապի ի քամին, և հալի ի վերայ կրակին։ Եւ իմացիր, որ այս խուղս ունի խորհուրդ պատուական ի մեծ խորհրդոցն և է կատարեալ։

Եւ թէ կամիս որ փորձես զայս խուղս, առ պաըղէն[1] բաժին մի և այս խուղէն Ե բաժին և աղկէ ի վերայ քարին որ ապիկի

1 Պաղէն ? պատըղէն?

լինի և կաթեցո կաթ կաթ զջուրն ի վերայ և ազկէ խիստ մանր և ժողովէ ի յապլիկի կճղայ որ կաված լինի իմաստասիրած կավով. և արայ իւրն խուփ մի քան զինքն է, և դիր ի վերայ կճխային, և ամրացո՛ զփակն խիստ լաւ որ պուխրուն չելնէ, և դիր զինքն ի վերայ խիստ կակուղ կրակի քան զարեգական *չափ, և թող որ պաղի, բաց զբերանն, հան և ազկէ, և դիր ի կճխայն, և դիր ի վերայ կրակին: Եւ արայ այսպէս ի դ անգամ երեք օրն և գ գիշեր՝ նա թշնամին կու հաշտի ի հետդ և կու հալի ի կրակն, և կու պաղի ի քամին կատարեալ գործ իւղ ի յեղէ, և տեսանես զքո թառալիրն այգպէս. փառք տուր աստուծոյ:

Եւ դիր զինքն ի մէջ զամհային և վառէ ի ներքեն կանթեղն, և կանթեղի պատրուքն հաստ չը լինի, որ տաքնայ խիստ. կամ կակուղ կրակ լինի, և քանի որ տեսանես որ ցամաքի՝ յայն ջրէն կաթեցու ի վերայ. թէ կանթեղ լինի թէ կրակ՝ գ օր և գիշեր հանապազ կակուղ լինի որպէս արեգական* տաքութիւն, նա կու հալի իւղ թափանցիկ՝ իւղ մահացուցիչ, իւղ կենդանացուցիչ. և չը լինի թէ մաս հասնի ի յինքն՝ առ ժամանայն փլուքի: Եւ իմացիր որ այս առաջին տարաձան է, ով բժիշկ, և կատարեալ, որ հեշտացաւ քեզ ամէն ակար իմաստութիւն: Եւ իմացիր, որ ամէն տարաձայ գործ մի ունի և զօրութիւն: Եւ ունի է ոսմաթ և ամէն տարաձայ պատմութիւն մի ունի, և գործ մի ի ոսմաթն:

Առ ասիւծին ձակատի մաղէն, և աղ, և սանտարօս, և լղան, և լինի աւուր առաջին ժամն, և գործէ զինչ որ կու գործես: Եւ իմացիր, որ այս իւղն որ հանեցաք, բազում իմաստունք դադարեցան զայս իւղի հանելն, և բազում բժշկներն և փիլիսոփայք և առաջինք չիմացան զայս իւղի խորհուրդն և ոչ թառալիրն և այս ասացվածիս բանով իմաստունքն պակասութիւն չը գտան: Ասաց Ճապըրըն որդի Հիանին, թէ չէ հասեր ի յայս իւղս: Ո՛չ Ճալինոս, և ո՛չ Բագարատն, և ո՛չ Հրմուզն և ո՛չ Արիստոտելն այս քան զիւրեանց գրեանքն ի վեր է և արձակէ զիւրեանց բռամգերն[1]: Եւ իմացիր, որ այս իւղս խասլիաթով կու գործէ: Եւ իմացիր. ճշմարիտ է աստուծոյ անունն, որ յառաջ է քան զյաւի-

---

[1] Կախարդանք:

տեսանես որ քան զայս խաղս աղէկ՝ մարդ չէ յայտներ և իւրմէ է թարքիպ։

Առաջին տարաճան. *Առ կլայեկի սաֆիխաներ և օծնէ զինքն այս խաղովս, և ի դիր ի վերայ կրակին, նա խաղն դարձնէ զինքն լուսին* խալաս։*

Երկրորդ տարաճան. *Առաց, թէ առ լուսին** ճ *բաժին և արայ զինքն սաֆիխաներ և օծէ զինքն այս խաղովս թեպրով*[1] *մի, և դիր ի խեցի աման մի, և դիր ի վերայ խուփ, և չամռէ զինքն իմաստասիրաց կաւով, և դիր զինքն ի խիստ կրակն՝ նա կրանայ քան զկիրն այլ սպիտակ, և աղկէ զինքն, և վերու, և արայ իւրմէն բաժին մի մալղամայ ի հետ ծ բաժին սնտկի, որ մաքուր լինի. և դիր զինքն ի ապիկի շիշ մի, և խաղէն մթխալ մի լից ի վերայ և ամրացոյ զշշի բերանն և դիր ի տամս գիշեր մի. հան զինքն և թող որ պաղի, բաց և տեսանես սպիտակ կիր. աղկէ զինքն խիստ մանր և կաթեցոյ ի վերայ խաղէն կաթ կաթ. նա ամէնն կու հալի և կարձակի գ օրն։ Եւ ձգէ ի վերայ մթխալ մի մուշթարի՝ եկանէ յերրորդ աստիճան. և ձգէ յիւրմէն* ա *ի վերայ բազում մուշթարոյ՝ եկանէ կատարեալ։*

Երրորդ տարաճան. *Առ իւրմէն* բ *բաժին, և ի յիւղէ բաժին մի և յառաջի նշատրի խաղէն գ բաժին, և աղկէ զամէնն ի միատեղ, և լից ի մէջ շուշայի մի, և ամրացոյ զբերանն, և թաղէ զինքն ի դէճ աղբն* է *օր, և հան՝ նա արձակեալ է։ Եւ կապէ զինքն ի վերայ կակուղ կրակի, ձգէ իւրմէն մթխալ մի ի վերայ ռ մթխալի յինչ մարմնոյ որ ուզես՝ եկանէ ի խալսան ստուծոյ կարողութեամբն։*

ՀԱՏՎԱԾ Դ

(Ձ-իր Ա, էջք 73—90)

Ապսյային հայրն Սահակի որդին արար զայս իմաստութիւնս, որ մարդոյ իմ ած[2]

§ 105. Դուռն արճզական*. *Առ ատուծոյ կարողութեամբն տանհաճ լուացած, և երկաթի խարտուք քան զինքն, և աղկէ զիրենք ուրիշ ուրիշ և բաց զիրենք քացախով, և թող մինչ որ*

---

1 Փետուր։

2 Վերջին «իմ ած» բառերի իմաստը պարզ չէ։ Ըստ երևույթին նախորդ բառերից մի քանիսն ընկել են։

հալի և քաշէ զնուրեանց ջուրն։ Եւ առ բաժին մի արեգակն* և բաժին մի սնտրկ, և բաժին մի կարիճ և դիր զինքն ի տամս. և հան ի տամսէն և դիր ի վերայ կրակին, որ թռ(չ)ի կարիճն յիրնէ[1]. և խմցոյ խուրն զայս երկու քաշած ջուրն սղկելով, խմցնելով գ անգամ. և ամեն անգամ զաթրէ զջուրն ի վրայէն, նա լինի և թապիթ. առ զան[2] ձգէ ի վերայ Ե լուսնի* եղանէ արեգակն* լաւ։

§ 106. Դուռն արեգական*. Առ դ մթխալ արեգակն* և դ մթխալ սնտրկ, դ մթխալ կլէքարի աղ, դ մթխալ կարիճ դեղին. սղկէ զիրենք սպահրու լեղով գ օր սղկելով խմցնելով և խորովելով, և դիր զինենք ի կթխայ մի ապիկի և ամրացոյ զխուփն. և դիր ի պուտուկ մի որ լինի ի մէջն փոշի, և ամրացոյ զխուփն պուտկին և դիր ի վերայ կրակին ի տամս գ օր և գ գիշեր։ Հան և տեսանես կապած. և առ խումէն ա մի [և դիր] ի վերայ խդ լուսնի* եղանէ ապրիզ և պահէ լաւ։

§ 107. Դուռն արեգական*. Առ արծիւ բաժին մի, և կարմիր զառնեկ բաժին մի, և դեղին զառնեկ բաժին մի, զնջուֆր բաժին մի և լից ի վերայ թուրունջի ջուր և սղկէ լաւ, և դիր ի մէջ ապիկի ամանի մի, և կալ զփակն, և դիր ի ձիու փորն, և թող Է օր, հան և զաթրէ։ Եւ առ ի զաթրածէն և կաթեցոյ ի վերայ սնտրկին փետրով՝ ի վերայ կակուղ կրակի. առ և սղկէ զինքն, և խմցու ի զաթրած ջրէն գ անգամ, և դիր ի մէջ ապիկի ամանի մի, և դիր զինքն ի կակուղ տամսն գիշեր մի, և հան սղկէ զինքն և խմցոյ ի ջրէն, և նոր դիր ի կակուղ տամսն. հան զինքն և առ խումէն տրամ մի և ձգէ ի վերայ ի տրամ լուսնի* եղանէ ապրիզ աստուծով։

§ 108. Դուռն լուսնի*. Առ բահճ և արծիւ, յամէն մէկէ նուկի մի, և սղկէ ուրիշ ուրիշ և միատեղէ, և խմցոյ խուրեանց սուր քացախ նուկի մի, դիր զիրեանքն ի յաղբն որ հալի. նա կու հալի շուտ քան զամէն բան, և խմցոյ զինք նուկի մի կարճի և դիր ի հալն որ արձակի։ Եւ առ խումէ մէկ մի և լից ի վերայ խ սնտկի և դիր ի տամս. նա կապի օր մի և գիշեր մի։ Առ խումէ մէկ մի և ձգէ ի վերայ խ կլայեկի՝ նա եղանէ յուսպաղէն լաւ։

§ 109. Դուռն լուսնի*. Առ բաժին մի դեղին զառնեկ, և բա-

[1] Իրանից։
[2] Ջմէկն։

ժին մի կարմիր, և թրչէ զինքն ի սուր քացախն գ օր, և ցամքեցոյ զինքն և աղկէ. և շաղէ զինքն պալատի սապնով, և դիր ի տամս, և հան զինքն և լուայ, և նոր դիր ի տամս սապնով, և հան լուայ և արայ այդպէս գ անգամ, և լուայ խիստ լաւ և ցամքեցոյ, և խառնէ ի հետն քան զինքն անուխ և շաղղէ զինքն հաւկթի դեղնուցով և արայ գուրսխպաս, և աղկէ կլէքարի աղ, և լից ի ներքեն, և դիր զինքն ի մեջ պղնձի ամանի մի և ցանէ ի վերայ կարիճ սակաւ մի, և լից ի վերայ շիրիկ ձէթ և եփէ զինքն գ օր և լից ի վերայ ճրագու և եփէ է օր, և յետոյ եփէ ձիթով գ օր՝ կու լինի իբրև զարճիճ: Առ յիրմէ տրամ մի և ձգէ ի վերայ Ճ պղնձի եղանէ յռուպասէն և ա մի ի վերայ Ճ կլայեկի եղանէ գեղեցիկ աստուծով:

§ 110. Դուռն լուսնի*. Առ բաժին մի լուսին*, դ բաժին անուխ, արայ մալղամայ. և առ շիպ և հաւկթի սպիտակուց, և խառնէ ի հետ, լից ի շիշ մի և չամռէ զշիշն, կալ զբերանն, խորովէ ի կակուղ կրակն: Զիպակի կէսն[1] սայատած զռնեխ խառնէ ի հետ մալղամին, և նշադրի ջրով աղայ ամէն ի մէկ տեղ, չորացոյ և արայ թասայիտ, որ այլ յատակն չի մնայ, ամենն վերանայ մինչ ի է անգամն լինի. հան լից ի կթխայ մի և ցուցոյ կրակով, լից ի շիշ և թաղէ ի յաղբն որ հալի. հան և կապէ: ա տրամ ԽՃ տրամ պղնձի ձգէ՝ լինի զուտ աստուծով:

§ 111. Դուռն լուսնի*. Առ քպրիթ և ալամ միաչափ, և դիր ի կանաչ ամանի մի, և աղ ջուր լից ի վերայ և աղկէ գ օր: Եւ յետ գ աւուրն լուայ զինքն հորու ջրով որ աղութիւն չի մնայ ի յինքն և դիր որ լաւ չորանայ, և կրկին դարձոյ ի գործն գ օր, և այնչափ արայ, որ դնես ի վերայ շողացեալ սաֆիխայի՝ նա որպէս մոմ հալի: Այս է իմաստասիրաց զռնեխն, սորա ա ի վերայ Ժ զօհրայի տաս՝ լինի լաւ լուսին*: Եւ յորժամ սպիտակ եղև կարիճն և ալամն, նա մոմէ այս ջրովս, որ հասանիս աստուծով:

§ 112. Առ արճճի խարտուք հ՞մ[2] փափկցուցած, և քան զինքն սուր քացախ լից ի վերայ որ արձակի, և բաժին մի արծիւ, ամէն օր աղկէ մինչ որ արձակի, և թող որ նստի, և առ ջուրն ազրկով: Եւ այս ջուրս է զարմանալի, որ արձակէ զամէն

---

1 Թվում է, այստեղ բառեր են ընկել և նախադասությունը չի ամբողջանում:

2 Այս բառը չի հասկացվում, երևի խամ:

հոգւքն, և այս ջրովս մոմացոյ և խորովէ զայս վերին գեղս՝ խմցնելով, սաղկ էնելով և խորովելով արճակէ զինքն և կապէ, և ձգէ ի վերայ զճ տրամի։ Եւ թէ արճակես և կապես նա՝ երթայ մին տրամն ի վերայ ռ.ի աստուծով։

§ 113. Դուռն .արճիճ մաքրելու. Առ բարկ քացախ, և աղ, և շաքրի պաղլեղ, լուծս քաշ և խառնէ ի նոյն քացախն։ Ապա հալէ զարճիճն և լից ի յայն քացախն. և դարձեալ հան զայն արճիճն և կրկին հալէ և թափէ ի քացախն. այսպէս արայ է ան-գամ, յայնժամ լինի յոյժ մաքուր. բայց ամէն հետ զքացախն փոխէ, ապայ ձգէ զաքսիրն և արայ զինչ և կամիս։

§ 114. Զիպաղի լուանալ. Ի՞նչ է իմաստնոց խնդիրքն որ մաքրեցին զշնչերն։ Այն էր խնդիրքն, զի այրեր ի մտանելն ի վերայ մարմնոցն։ Երբ լուացվի շունչն և մանրերն[1], նա յետ այսոր կու լինի աքսիր։ Իմացիր, որ մարմներն չի փոփոխիր ազգ և ազգ մինչ որ շունչն չմտանէ ի վերայ։

Եւ ասաց ի զիպաղին լուանալն, որ յառաջինքն ժողովեցան միաբան և ասացին, թէ լաւ լուանալն է՝ թէ ձիթով լուանաս. և յետինքն ասացին թէ՝ գաղով. և յերրորդքն ասացին թէ՝ քա-ցախով. և չորրորդքն ասացին թէ՝ կալիքարի ջրով. Ե երրորդքն ասացին թէ՝ աղի ջրով։ Եւ ամենեցուն ասելն ասոյք է, այլ ի մէջմնլին ձէթն է և քացախն զօրաւոր է, որ երբ լուանաս այսով և սայատես նա կու լինի կենդանի և կեանք։

Եւ թէ հարհրեցիր զինքն հետ կրի ջրով այնչափ, որ բաժնվի մանտրկներն, լից ի վերայ լաթի մի և լից ի վերայ բուռ մի կիր, և լից զայն մանրած զիպաղն ի վերայ և խառնէ, և ցանէ ի վերայ կրի ջուր, և քամէ, և հան դիր ի յաման և կու տեսա-նես ի վերայ զիպաղին քանց զկիր, որ սակաւ մի ծածկեր է զգոյնն. եացոյ աղի ջրով լաւ և տես թէ խոտկաւ և գոյնն պայ-ծառացաւ նա՝ առ, և թէ չէ, դարձոյ այնչափ, որ այլ չի մնայ։

Եւ իմացիր ձէթով լուանալն. լից ի վերայ ձէթ քան զիր չափն և պատրաստ ի կրակէն հանց որ չի թաչի և չպակասի իւրմէն բան. և այնչափ վառէ, որ այլ ձէթ չի մնայ, և դարձեալ հան, և լվայ աղի ջրով, այնչափ որ սակի. և յառաջ քան զլուա-նալն լից ի վերայ մուռ, որ ցամքեցնէ իւրմէ զձէթն։

---

[1] Պետք է լինի մարմներն (մարմինները)։

Եւ իմացիր զգոյն լուանալն, այլ քան զձէթինն է, և քացախինն այլ այնպէս. և ասաց զարմանք մի, թէ շատ անգամ եռցնես ձէթով ի վերայ կրակին՝ ծառ կապի ի վերայ բուսպասին: Դարձեալ ասացաք, թէ ձիթով լուանալն հանէ զսևութիւնն և կապէ. և իմացիր, որ գոյն այլ լաւ է քան զամէն ազգ որ յիշեցաք: Եւ դարձեալ ասացաք, թէ եփես քացախով, նա կու կապէ արծաթ: Եւ թէ գործն քիչ մի դժար է, ապա քեզ ազգ մ՛ այլ կու յիշեմ. եթէ մաղզամայ անես Ա բաժին թեղ արծաթ, և Ե բաժին զիպաղի հետ լաւ մաղզամայ արա և դիր ի փոքր պուտուկ մի և լից ի վերայ զինոյ քացախ որ արձակած լինի, ի հետն շլպե ամանի և զաթրած, և լից քան զայն դեղերն բուսպ այն քացախէն և եդցոյ Գ օր և գիշեր՝ նա կապվի. և դարձոյ ի վերայ զգործն Բ և Գ անգամ՝ ելանէ արծաթ սպիտակ: Եւ ի կրակն խորհուրդ կայ. չը լինի թէ խստես զկրակն: Եւ զայս գործս չի ծածկեցի ի քէն և դու ամէն մարդու մի յայտներ, և այս բոլորդ է և ճշմարիտ: Իմացիր, որ առաջինքն ծածկեալ էին և կամիմ բանալ քեզ: Իմացիր, որ բազումք ի գործ կու տանեն զզիպակն, ապա ի հետն արճիճ կու մնայ: Եւ սևութիւն՝ ազգ և ազգ սևութիւն կու լինի ի մէջն, և այն որ ասացի քեզ թէ լուայ և ասացի, թէ Ե ազգ լուանալ կայ, այսոր համար է լուանալն, և քիչ մի տանջանք է, ապայ պիտի լուանալ որ սպտկի, և թէ ինչով որ լուանաս այս Ե ազգ լուանալովն՝ մէկ է: Եւ իմացիր, որ լաւն այն է, որ հարես զհասարակաց սապոնն ի ջուրն և եփես խրմով զզիպաղն, նա ելանէ զսևութիւնն: Եւ խիստ լաւն ի լուանալն. առ զաղէկ աղն և աղկէ, ապա խիստ լաւ աղ լինի, քան զզիպաղին կշռով, և աղկէ սուր քացախով և ձգէ ի վերայ սակաւ մի, և խորովէ ի վերայ կակուղ կրակի, և հան աղկէ, և դիր ի հետն քիչ մ՛այլ զիպակ, և դարձեալ արայ և հան աղկէ, մինչ որ լինի ԺԱ անգամ այսպէս, և յետոյ լից ի վերայ հոլու ջուր և եռացոյ. որ հալի աղն ի մէջ ջրին, որ ելնէ զիպակին սևութիւն, և ափէ զջուրն ի վրայէն՝ նա կու լինի սպիտակ և լաւ. և թէ դարձուցիր զլուանալն Գ անգամ՝ այլ լաւ է: Եւ թէ այն մաքրած աղովն լինի այլ լաւ է: Եւ թէ աղկեցիր զինքն մաքրած աղով և մոմած, և զճացուցիր զինքն այն քացախովն, որ արձակած լինի ի մէջն զաճ կիպրոսի, և ափեցիր կամ զաթրեցիր և լցիր ի վերայ, և ի գործ ածեցիր, և յետոյ

դարձուցիր ի հովվեն՝ նա կու մաքրի և կապի։ Եւ իմացիր, որ զայս խօսքերն այլ տեղ չենք խօսացեր այս գրքես ի զատ։ Իմացիր, թէ զքացախն զաթարեա զաճ կխլլոսով գ անգամ կամ է անգամ, և յետոյ արձակէ ի մէջն շպեամանի, և զաթրէ, և այս քացախն կու չորանայ ի զաճին և ի շպին զօրութենէն։ Եւ թէ զայս քացախս այն մալզամայ արծաթին վրայ լնուս հանց որ մատ մի ծածկէ, և դիր ի վերայ միջակ կրակի և եացոյ, հանց որ խիստ չլինի կրակն, և քանի որ պակասի սակաւ սակաւ լից և մուհտատիլ վառէ. և թէ այս գործովս առնես, եղև նայ յստակ արծաթ ի վերայ բոուպասի, այնոր համար կու դառնայ արծաթ, և մեք հաւատացաք, որ այն սնտիկն արծաթ եղև, ապայ սակաւ մի գիճութիւն մնայ և մեք անոր համար յառաջն մալզամայ արաք արծաթով, և յետոյ այս քացախովս արաք, որ այս քացախն կարմրացնէ, կարձակէ և կապէ։ Եւ իմացիր, որ յառաջն արաք մալզամայ՝ նա պղտոր գոյն ունէր, և մեք անոր համար այս քացախովս արաք, որ մաքրեցաւ և եղև կատարեալ, և միաւորեցան ընդ իրար և այլ չի փախիր՝ և եղև ճօհար և արծաթ։ Եւ տասց իմաստուն մի. սակաւ սակաւ արայ. և մեք, ո՞վ գիտէ, շատ առնեմք ա արծաթ և գ սնտիկ։ Եւ թէ կամիս այդ կշռովդ շատ արայ, մինչ ի գ արամ արծաթն և այլ աւելի։ Իմացիր և փորձէ, ի փորձելն կու բացուի քեզ ստոյքն և չէ պարտ որ այս ասածէս ի վեր բան ավելցնես, և չէ պարտ, որ բանաս զայս մարդոյ ամենեին, և ինչպէս որ ցուցի քեզ, այսպես արայ և այս է։

§ *115*. Ցալի զիպադն թաղիտ անելն. *Ա՜ռ զաղն և արձակէ հորու ջրով, և քաշէ տզրկով, և կապէ զաղն, և ապայ կիր արայ, և առ այդ կիր եղած աղեր քան զսնտիկն, և սղկէ այսով. և գիճացոյ սակաւ մի զաթրած քացախով, և խորվէ է անգամ, և դիր ի յաման, և դիր ի յայս ամանի ուքն աղ, և ապա դիր ի վերայ զայն սնտիկն, և սայտէ խախանդ կրակով այնչափ, որ յիստակի և մնայ կեղտն ի յաղն յամանին յատակն. և դարձոյ ի վերայ գործն է անգամ՝ նա կու կապի գեղեցիկ կակուղ ուաճ. ուաճ՝ որ է դողդողան։ Եւ թէ զայս ի գործ ածեր, որ եղև դողդողան։ Եւ թէ կալիքարի աղով արիր՝ այլ լաւ է։ Եւ թէ դարձուցիր զգործն՝ նա կու լինի քու ուզածդ։ Եւ կամ թէ արիր այլ ուրիշ աղերով՝ կամ նաթռունով, կամ անտրանի, կամ ծովու փրփրով, կամ ապիկլի աղով, կամ պարուտով, կամ շպով, և այս*

Է աղերս մեկ են և ամենն ի գործ կու մտանեն։ Եւ թէ անաս-նոց աղ լինի՝ այլ լաւ է։ Եւ ի՞նչ է կամքն ի թասղիտ անելն. այն է, որ կու մաքրէ և է կեանք, և գործող, և մաքրած ի սևութենէն, և կապած, զօղզօղան քանց հարբած։ Եւ այս զօղզօղանն և հարբած զօրութիւն ունի, և չի թռչիր. և զայս մաքրելն ի թասղիտ անելն վասն որ կա ևոր այլ չի թռչիր։ Իմացիր զայս և արայ ինչպես ասացի քեզ, և այսով կու հասանիս ի ճանապարհն, և այսով արայ զինչ որ կամիս և ուրախացիր։

Ֆասլի զիպակն թասղիտն և գործն. Յառաջ քան զամենն առ ի զիպակէն բաժին մի, և քան զինքն զաճ, և քան զինքն աղ, և աղն կիր արածն լաւ է և կամ տապկած, որ չի ճաթճթէ, և ոզկէ զաղն և զաճն և խառնէ ընդ իրար, և քամէ ի վերայ զզիպակն թամթով, և սակաւ սակաւ զիճացոյ քացխով, և ոզկէ զամէնն մինչ որ միաւորին, և խորվէ ի վերայ կակուղ կրակի, և նորու ոզկէ, և դարձեալ խորվէ այնչափ որ մեռնի զիպակն ի մէջ աղին և զաճին և չի շարժի ամենևին։ Եւ առ ի տապակած աղէն և փռէ ի յամանն, և դիր զայն խառնած զիպակն ի մէջն ի վերայ աղին, և դիր զխուփն ի վերայ, և կալոյ լաւ զբոլորն։ Առ աղ և հարէ ի ջուրն, և հաւկթի սպիտակուց, և իմաստասիրաց կաւ, և ճպսին և շրէժ, եթէ աղն կիր եղած լինի՝ լաւ է, այսով ծեփէ զամանն և զբոլորն, և վառէ զկրակն ի ներքեն նա կու սայատմիի։ Եւ դու ծակ մի շինէ ի խուփն, որ ամէն անգամ տեսանես, որ թէ այլ զինճութիւն և շոգի չելանէ՝ ամբացոյ զծակն և թող որ պաղի մինչ ի գ ժամն, և յետոյ բաց և ժողովէ։ Եւ թէ Է անգամ այսպէս առնես նա՝ լաւ է։

Ասաց ճապարն ի թասղիտ, ի հինգհարիւր գրոց մէկի մէջն է, և ասաց, թէ առ յերմէն ինչ չափ որ ուզես, և ոզկէ ի հետն քան զինքն զաճ և աղ, և դիր ի յաման, և դիր զխուփն խծուծ և խփի վերն լայն լինի քան զամանն, և խփին մէջն կոկ լինի, և վառէ ի ներքեն կակուղ կրակ, և մի աւել վառիր զկրակն, այլ ը ժամ, և վերայ զկրակն ի ներքեէն, և թող որ պաղի։ Եւ վայ քեզ, թէ բանաս զինքն ի տաք ժամն, և երբ աղէկ պաղի, բաց զբերանն և ժողովէ ինչ որ ի խուփն է կպեր և ի բոլորն, եթէ զեռ կենդանութիւն կայ և կամ մանր հատիկներ կենդանի լինի, և կամ խառնած լինի ի հետն սևութիւն և կենդանութիւն, դար-

ձոյ զինքն մինչ որ լինի գան[1] ակռայ, և վերոյ զինքն վասն քո բանիդ, և այս կու լինի ի գ թասղխ անելն, և այլ շատ այլ կու լինի. մինչ ի զն յանկարծ կավիրի նա, ամէն ի զն կերթայ կատարեալ կու լինի, ճշմարիտ որ կու սոյասվի մեռած, ինչպէս որ յիշեցի քեզ յառաջի անգամն և է աքանչելիք:

§ 116. Եւ իմացիր, որ այլ ասեմ քեզ ի մեռած զիպաղին քաղիտն. *Եւ ասաց, թէ առ քանի որ կամիս, և դիկէ ի հետն աղ, և քան զինքն զճաճ այնչափ, որ չի մնայ ի զիպակէն երևոյթ: Եւ թէ եղև այսպէս, դիր ի կանաչ աման և դիր ի վերայ ըմպեղ ի դարայն, և քաշէ խումէ զամէն զխճութիւնն մինչ որ չորնայ, և իջոյ ի վայր, և դիր զինքն ի յաման, և վառէ ի ներքեն կրակ ինչպէս որ ասացի քեզ. և ի ծեփելն և վառելն մի կորեր զկրակն մինչ ը ժամն կամ ծ և կորէ զկրակն, և թող որ պաղի մինչ ի մէկայլ օրն, և առ զինքն ի պուտկէն, և կայ ի մէջն այլ լաւ քանց որ գ անգամն կամ Ե անգամն թասղխն անելն և այսպէս արայ: Եւ իմացիր, որ ասեմ ի յայս դուռս, որ ի յաղն կայ զօրութիւն լուանալոյ և կու չորցնէ զաւելի զխճութիւն, և կայ զօրութիւն, որ կու տաքցնէ և կու մաքրէ զսնտիկին պաղութիւն: Այս է աղի զօրութիւնն, լաւ իմացիր ով սիրելի:*

Եւ իմացիր զզաճին զօրութիւն որ մօտ է արծաթին, և քպրիթին կապօղ է և այրող, և այս բ որ միաւորին ի վերայ զիպաղին ի վերայ կրակին, նա կու կապվի զիպաղն, և կու մաքրի իւր սեւութիւնէն և կու սոյասվի և կու մաքրի, և ցամքի աւելի զխճութիւն և կու չորնայ, և կու լինի ինչպէս որ կտեսնես, և արժան կու լինի խորվելու, և ինչպէս որ թասղխն է ասոր նման խորմելն ըստ խորվելոյն: Եւ իմացիր, որ զիպակն կու միաւորի հետ դեղերուն, և մինչ որ չի ողկւի և խորվի և դարձվի ի վերայ՝ գործն չի լինիր, և պիտի երկայն լեղի ի գործելն: Եւ իմացիր, որ ասացի թէ դաթրէ զինքն ի պատ այն որ է կանաչ աման ինչ, պատճառ այն է՛ որ ամէն անգամ դարձնէս ի վերայ զջուրն, նայ կօգտէ իւրն, որ է աղի ջուր և զաճի, և օգտէ իւրն ամեն բանի այս երկու աղս ի յայս արվեստս: Եւ ինչ է ի սոցանէ օգուտն. այն է, որ զգխճուտութիւնն կու կորէ. առաջ

---

[1] Երևի «կնա»:

գիճութիւն պիտի կորի, ապայ թաղիտ լինի, որ զամանն չի կոտրէ:

§ 117. Ֆաղի զիպակին թաղիտ անելն՝ զմեռած զիպակն. Առ քանի որ կամիս և քան զինքն զաճ զլաւն, և քան զինքն աղ, և թէ աղն կիր արած է այլ լաւ է: Սղկէ աղէկ զաղն և զաճն, և խառնէ ընդ իրար, և քամէ ի վերայ զիպակն սակաւ սակաւ, և գիճացոյ քացախով և սղկէ զամէն անչափ մինչ որ միաւորին, և խորվէ ի վերայ կակուղ կրակի, և դարձոյ ի սղկելն և ի խորովելն այնչափ, որ մեռնի զիպակն յաղն և ի զաճն, և չի մնայ յինքն շարժողութիւն. և բեր զամանն, և լից ի յոքն այս աղէն որ խառնեցիր, և դիր ի վերայ զայս խառնած անոթկդ, և դիր զխուփն ի վերայ, և առ այն աղէն, և հաւկթի սպիտակուց, և խառնէ ի հետ իմաստնոց կաւէն, ճպսին, և շրէժ, բայց աղն կիր եղած լինի լաւ է, և վառէ զկրակն որ սայամլի, և դու մօտ դիր և հոյեաց ի խփին ծակն և տես թէ այլ շոգի չելնար նայ՝ այլ մի վառեր և թող որ պաղի մինչ ի զ ժամն, և բաց և ժողովէ. և թէ Ե անգամ այսպէս արիր նա՝ լաւ է:

§ 118. Աստուծով առ ի հնոտի թիւթիայ բաժին մի զկանանչն, և բաժին մի ռասուխ, բաժին մի արտաշ, որ է զապիրլմ, և բաժին մի զնձուֆր, և քան ամէնն ապրի աղ մաքրեալ, և սղկէ զամէնն և դիր ապիկի շիշ մի. և առ թեփ թրչէ, և դիր ապիկած պուտուկ մի, որ ոտքն ծակ ծակ մախթի չափ: Եւ առ զայն շիշն և խմայ զկշեռն և դիր շիշն ի մէջ թեփին, և դիր զթեփով պուտուկն ի բերան պուտուկի մ՚այլ որ մինչ ի կէսն իջնու ի մէջ, և ի ներքին ամանն լից պախրու միս և ջուր, և վառէ ի ներքին կրակ մինչ որ միսն եփի, և հան տես, թէ արձակվեր է նայ՝ կշռէ, թէ պակասեր է նա՝ լից զպակասն ի թիւթիայէն և արայ այսպէս մինչ որ գտանես զամէն արձակեալ և կշիռն թամամ: Յետ այսոր առ արճիճ և արայ մանր բաղձներ, և առ մախթի ծայրի չափով ի շուշային ջրէն և կաթեցոյ ամէն բլթի կաթ մի. և չը լինի թէ շատ կաթեցնես, որ կու կրանայ: Եւ ապայ առ զարէ ալիւր բաժին մի և բաժին մի աղ, և արայ բ մեծ բաղարճ. շարէ զարճճի բաղարճներն ի վերայ և զմեկալն դիր ի վերայ, և բեր կրակախառն մոխիր սաճով և թաղէ զմեծ բաղարճն զարեղէնի մէջն, և դիր հաւկիթ մի ի վերայ, և երբ եփի, ձուն առ, զբաղարճն յետ դիր, թող պաղի և

բաց տես լի աստուծոյ ողորմութեամբ, և տուր փառս աստծոյ, և արայ գրալի։

ՀԱՏՎԱԾ Ե

§ 119. Սապոն շինել. *Առ դքոլիկոնն և եփէ ջրով և զջուրն քամէ ի մաթրաթ մի և Ե ի այդ ջրէն և Ա պախրու լեղի միաւորէ և դիր որ եռայ. և լից քիչ մի նշա ի ներս, որ թանձրանայ՝ խառնելով եփէ և ի վայր առ, լից ի վերայ սպիտակ մարմառի որ պաղի. և այս է սապոնն։*

§ 120. Բաֆուրի շինելն. *Առ թապաշիր բաժին մի՝ և քան զինքն անտրանի աղ, և քան զերկուսն սև քաֆուր, և աղէ միատեղ, և դիր ի կթղայ մի, և ծեփէ, և ամրացոյ զփակն. և դիր յաղբի կրակ ի փուռն Բ ժամ, և հան որ պաղի, և տես հալած քան զձիւն սպիտակ. և այն է։*

§ 121. Ձեռուփի թափիտ անել. *Առ քան զինքն քլբիթ. և Դ քան զամենն քացախ, և եփէ զքացախն, որ Գ էն Ա մնայ, առ և խմցոյ զնձուֆրին, և կարճին աղելով և այն է։ Կուտ մի ի վերայ մխլի։*

§ 122. Սնտիկ մեռցնել և սայատել. *Առ զաճ արձակեալ և կապեալ, և աղ կրացեալ, դիր ի հետ սնտկի և աղէ որ այլ չերևի՝ ցամաք առանց քացախի։ Եւ երբ տեսնաս որ այլ չերևիր, դիր և սայատէ չոր։ Մխանդամ որ սայատի մեռած և զարմանալի. և տես որ թէ հասուցիր այսպէս անձանձրաբար*[1] *խիստ լաւ է։*

§ 123. Մաքրումն կարճի զարմանալի. *Առ զինքն և աղէ, և դիր ի հետն քան զիւր կէսն արծիւ, և քան զինքն շիպ, և քան զինքն աղ կրացեալ և սայատէ։*

§ 124. Ուտելու աղ շինել. *Եւ թէ կամիս որ աղն զօրանայ և առողջ պահէ զքեզ ի քամէ, ի ջուտամէ և այլ իրաց. աղէ զինքն և լից ի վերայ քացախ որ ծածկէ, և եփէ մինչ որ ցամքի, և նոր արայ այդպէս մինչև Ե հետ, որ սևագունի, և ապա աղէ և լից ի բոքն, լավ բովէ քանի մի հետ, սպիտակի և զօրանայ և առողջ պահէ լաւ։*

§ 125. Այլ իմն կերպ երկաթի զափրան խիստ ընտիր. *Առ պողպատի խարտհուք, և քան զինքն զառեկ և աղէ և դիր ի տամս կճճով դիշեր մի և հան, դիր ի հետն Ժ տրամ խարտուքին Ա*

---

1 *Անձանձրաբար։*

տրամ նաթռուն և աղէ ընկուզի ձիթով, նախ զտամսելն դիր ի հետն այծու եղջերի խարտուք և ապայ տամէ. և աղեցիր ձիթիւ առ զինքն և արայ սխպիրայ, և հան աղէ մանր և դիր յապիկի աման, և լից ի վերայ պաթրած քացախ և խառնէ, և դիր յարեգակն* գ օր կարմրի քացախն, և ափէ ուրիշ աման, և քացախ նոր լից ի վերայ, և արայ այնպէս, որ նայ ես կարմիր լինի, և ափէ մինչ որ խարտուքն մաշի և գոյն տայ ի քացախն, և ապայ լից զքացախն յօկած աման մի, և դիր ի վերայ մեղմ կրակի և կամ յարեգակն* մինչ որ մաշի և մնայ ներկն. և թէ զնես ի հետն քան զինքն կիր ոսկոյ և ձգես կուտ մի ի վերայ լուսնի*, եղանէ արեգակն* խիստ լաւ։ Բայց զքացախն երբ զաթրես՝ դիր ի մէջն զաճ և արծիլ։

§ 126. Զանի աղ շինելն. Վասն զանի աղին[1]. Առ և աղէ [զինքն], և լից ի վերայ ջուր որ արձակի, տղրկէ, և առ զջուրն և կապէ և այն է աղ զաճին. լաւ իմացիր։

§ 127. Սովր շինել. Կարմիր զանն որ ասեն սօվր այսպէս. Առ զինքն և աղէ մանր, և դիր երկաթի շերեփ, և դիր ի վերայ կրակին որ տաքնայ. առ և դիր ի վերայ ջրին որպէս զարծիլն քանի մի հետ՝ կարմրի լաւ։

§ 128. Կարմրացնել ճպրթին. Դիր ի հետն կարմիր զաճ և աղէ, և լից ի վերայ քացախ և եփէ, և երբ ցամաքի՝ աղէ և սայատէ, և զարձոյ գ հետ, լաւ կարմրի և այն է։

§ 129. Զնջուփ արձակել. Առ զքպրիթն և աղէ ի հետ արծուի, և թաղէ յաղբն ի օր՝ արձակվի։

§ 130. Բպրիք արձակել. Բպրքի արձակել. Աղէ ի հետ նշատրի, և դիր յաղիք, և կախէ ի ջուրն գ օր. հան և աղէ հետ խուր ջրին, և դիր արեգակն* օր մի և այս է։

§ 130բ.[2] Բահնի արձակել. Աղէ ի հետ նշատրին և արձակէ ի մառխմայ բաղնիսն ժդ օր. հան և պահէ լաւ։

§ 131. Սնտիկ դաքրել. Խաշէ զձուն և առ զսպիտակուցն, և դիր ի հետ սնդկին ի զարայն, և զաթրէ, որ և զաթրվի ձուն և մնայ սնտիկն. առ զինքն և թաղէ յաղբն և վառէ ի վերայ կրակ

---

1 Այս երկու վերնագիրն էլ գրած է բնագրում։

2 Այս հատվածը մոռացմամբ չէինք համարակալել, այժմ ամբողջ համարակարգությունը չփոխելու համար դրինք 130բ։

որ տաքնայ, և թող է օր, հան և դիր ի վերայ սալխկուց, և ղաթրէ, և արայ մինչ որ արձակի սնդիկն և ղաթրվի։

§ *132.* Ջիբի ղաթրելն այսպես. *Առ զհին ձէթն, և դիր ի հետն կիր և ղաթրէ սակաւ սակաւ և ղաթրածս մաքրէ զքըղ-րիթն։*

§ *132բ.* Եւ զանուշահոտ ծաղիկսն ղաթրէ այսպես. *Մանրէ զինքն և դիր կոխուն ի ղարայն, և դիր զղարայն ի մէջ պղնձի ջրին և ամրացոյ և ղաթրէ մեղմ. և այն է։*

§ *133.* Ռասուտ շինել. *Առ պղնձի սաֆիխայ և քան զինքն քպրիթ և լեռան աղ, և աղկէ, և գիճացոյ զպղինձն, և ցանէ ի վերայ, և դիր տակ ու տակ ի մէջ կճճին, և փակէ լաւ զբերանն, և վառէ կրակ ի վերայ գ օր. հան և տես գեղեցիկ։*

§ *134.* [Դուռն] սիլիկոն շինելոյ. *Առ արճիճ և արայ սաֆի-խայ նօսր, և առ քան զինքն քպրիթ, և քան զինքն զաճ, և շաղղէ քացխով, և դիր տակ ու տակ, և ծեփէ զամանն լաւ և դիր փուռն որպէս սպիտաճն, և հան որ պաղի և տես լաւ [է]. առ և պահէ։*

§ *135.* Սպիտակ շինել. *Առ արճիճ և արայ սաֆիխայ նօսր, և քան զինքն ձվի կիր շաղղէ քացխով, և դիր տակ ու տակ ի մէջ ամանի մի և ամրացոյ զփակն, և դիր ի փուռն որ կարմրի-թող որ պաղի. հան տես լաւ։*

§ *136.* [Դուռն] բահն շինելոյ. *Առ զոնեխ բաժին մի, և սնտիկ բաժին մի, և կիր բ բաժին, և ծովու փրփուր քան զա-մենքն, և սակաւ մի աղ, և լից ի վերայ աղաւնոյ արիւն և աղկէ միատեղ։ Եւ առ սապոնի ջուր և խմցոյ իւրն Է հետ, և դիր ի վե-րայ ամեն նուկոյ արամ մի այրած թանուքար և շաղղէ կովու լեղով և դիր ի տամս գիշեր մի և հան քեզ բահճ։*

§ *137.* [Դուռն] ժանկեառ շինելոյ. *Առ բաժին մի ռասուտ, և բ բաժին նշատր, և բ բաժին զարոյ մանրուք, և բաժին մի աղ, և բաժին մի զաճ, և բաժին մի թթու ջուր, և աղկէ միատեղ և խմցոյ քացախ Է անգամ, և շաղղէ ձվի սպիտակուցով և արայ կաղպար, և չորցու ի շուք և այն քեզ ժանկեառ։*

§ *138.* Ափիոն շինել. *Առ բաժին մի զաֆրան, և բաժին մի քարդաւոյ գէճ, և առ խաշխաշի կաթ, և աղկէ միատեղ, և ցամ-քեցոյ վասն քո բանից։*

§ *139.* Նաքռոն շինել, որ է զուգծու լաւ քան զբուսականն-

Առ հուլթմ բաժին մի, և թնքառ ի բաժին և ջրի նաթառուն կէս բաժին. սղկէ զամէնն միատեղ և զաթրէ, և խմցոյ իւր զջուրն մինչ է հետ և. կապէ և դիր ի կճին, և թափէ սեպիքայ, և այն է։

§ 140. **Մուրի շինել՝ որ է ապուլիպի.** Առ գարոյ ալիւր և ցորենի, և շաղղէ միատեղ, և առ թզի տերև և փաթաթէ զխմորն և թող որ բորբոսնի և չորանայ. և առ լից ի վերայ դ. քան զինքն ջուր և դիր ի յարեգակն* և խառնէ թթի փայտով, և առ զթզի խակն և լից ի մէջն, և դիր արեգակն խ օր, և քանի ջուրն ցամաքի լից, և առ վասն քո բանիդ։

§ 141. **Հուրմ շինել.** Եւ թէ կամիս հուլթմ շինել, որ է ղալէքար և լինի ի ծառէ մի, որ է աղի։ Եւ դու արայ փոս մի ներքև ծառին և կրակէ զծառի պտոն, որ և հալի ջուր մի, իջանէ ի փոսն, և պաղի և այն է։

§ 142. **Աղի արճին շինել.** Եւ թէ, կամիս որ աղի արճին շինել, առ լեռան աղ, և դիր ի հետ ժ նեն մեկ հինայ և սղկէ լաւ, և խմցոյ իւրն ձվի սպիտակուց և սղկէ և ապա՛յ լից ի շոր մի և դիր ի կճին, և վառէ կրակ բարկ՝ որ հալի. առ և պահէ։ Նայ է որ կրացնէ զպողվատ և կայ յինքն այլ և զորութիւնք և դու իմայ խելօքդ։

§ 143. **Սալիմ արճին շինել.** Եւ թէ կամիս սալիմ արճին շինել, առ սալիմ և այրած թնքառ, և կովու լեղի, և սապոն. և կոտրատէ զսալիմն և զամէնն դիր ի կճին և հալէ և թափէ սեպիքայ. և այն է։

§ 144. **Նշատր շինել.** Եւ թէ կամիս նշատր շինել, առ առքի մուրն և դիր ի պուտուկ և սայատէ և այն է։ Եւ հան, արձակէ, և կապէ, և սպիտակի լաւ։

§ 145. **Դուռն սապոնի վասն քատպիրի.** Առ բաժին մի ձէթ, և բաժին մի գլուխ ջուր. դիր զձէթն յաման և լից սակաւ սակաւ զջուրն ի վերայ, և եփէ մինչ որ ցամաքի, առ և արայ կաղպար այլ դի օր մի վառէ մեղմ կրակ մինչ որ հասնի։

Է և այլ իմն կերպ սապոն շինել. քանզի սապոն բ ցեղ է՝ դէճ և չոր։ Առ ձէթ և թէզ ջուր, որ ասի արապի ռասխալի, և լինի միաչափ, և լից յաման և եփէ մեղմ մինչ լինի քան զխաւդայ, և առ շոր մի և պարզէ ի գետին, և լից ի վերայ կիր մաղած, և փռէ, հան զեփածն և լից ի վերայ որ պաղի և ապայ կոտրատէ լարով։

§ 146. Թապաշիր շինել. *Եւ թէ կամիս թապաշիր շինել, իմաց, որ Բ ցեղ է՝ մատանի և բուսծու: Մատանին նմանու երկրէն բերեն. կավ է, և ցամքեցնելով ևս շինեն և բերեն յայս աշխարհս*: Սպիտակ այլ այս երկրին բուսծու է, որ է սուսամն սպիտակ. առ զկեղեն և ծեծէ մանր, և արայ կաղպըներ, և դիր ամանն, և ամրացոյ զփակն, և դիր ի փուռն: Հան և տես որպէս այրած փայտ, և խիստ լաւ է, առ և պահէ:*

§ 147. Շատանայ ատասի շինել. *Եւ թէ կամիս որ շատանայ ատասի շինես, իմաց, որ Բ ազգ է, մատանի և շինովի. ի առ զմատանին և շաղցոյ, և թաղէ յաղախի ջուրն Ե հետ, և ապա ցամքեցու և խմցոյ լուրն աղոխի ջուր՝ ողկելով և խմցնելով Ե հետ, և արայ որպէս զոսպան հատեր և պահէ, բայց վերջն ձվե սպիտակուցով շաղղէ և արայ հատեր, և չոր պահէ:*

§ 148. Ղազիա շինել: *Եւ թէ կամիս ղազիա շինել, առ ի շամսի հնուէն, քան զինքն խիր տերեէն, և քան զամէն քըրիթ և ողկէ միատեղ, և շաղղէ ձվի սպիտակուցով և արայ կաղպըներ մանր, և չորացոյ և պահէ:*

§ 149. Սապռ շինել. *Եւ թէ կամիս սապռ շինել, առ սապռ և ողկէ, և լից ջուր ի վերայ, և եփէ մեղմ, և իջոյ, քամէ զջուրն և նոր դիր ի կրակ որ թանձրանայ և կապի, և այն է:*

§ 150. Ղահամաճ շինել. *Իմաց, որ Բ ազգ է՝ մատանի և շինովի: Շինովին. առ ձվի սպիտակուց, և ներկէ զաֆրանով, և ողկէ լաւ. և առ աղիք բարակ և լուայ և շրջէ, լից ի մէջն, և կախէ արեգակն*, որ չորնայ, առ և կեղեւէ զաղիքն ի վրայէն, առ պահէ և այն է:*

§ 151. Ցաքուխճ շինել. *Առ ապըշխմի շիպ, և կարմիր շիպ, և շիպեմանի, և նաթառուն, և բորակ մորի, և բորակ արմանի, և զալի աղ և անդրանի աղ և ողկէ միաչափ, և քան զգեղերն թարթիռ, և դիր յաղիք և կախէ ի քացախն գ օր, որ արձակի, և հան, կապէ արեգակն* և պահէ:*

§ 152. Ղանտիլուզ շինել. *Ղանտիլուզ շինել, որ է լաւ ներկ արեգական* գոներուն: Առ ի գաճերուն զգեղին, կիպրոսին, և զկանանչն, և սպիտակն, և զսեն. և սակաւ մի նշատր, և ողկէ միատեղ, և լից ջուր ի վերայ, և արձակէ, տըրկէ, և կապէ, և այն է: Կարմիր պղնձի ամանի մէջ կապէ:*

§ 153. Սնտիկ կապել. *Սնտիկ կապել կամ անասնոց թրեաք*

շինել, որ և զհոգիքն մաքրէ։ Առ զօձու ճիկեալն, և քան զինքն բահճ, և քան զինքն նշադր, սղկէ միատեղ և շաղղէ ձվի սպիտակուցով. և նայէ որ մաքրէ զհոգիսն, և կապէ զոնդիկն, և այն է։

§ *154.* Ռապ շինել. *Առ սանտարոզ և կոտրատէ, և դիր երկաթէ աման կամ խեցի, և լից ի վերայ ձէթ և կալ զփակն, և վառէ ի ներքևն գործելի, և թող որ պաղի, և այն է, և կու բռնէ զոտք ձիթի տեղն*[1]*։*

§ *155.* Սփուտ շինել. *Առ զարի ալիւր, և սղկէ, և շաղկէ քացախով, և մնայ* գ *օր, և լից ի վերայ քացախ, որ ծածկէ, և դիր արեգակն* որ ցամաքի և այն է։*

§ *156.* Ձվի իւղ հանել. *Ձվի իւղ հանելն* դ *կերպ է. է որ արեգակն* դնեն զխաշած ձուն և հանէ իւղն, և է որ ի կրակ, և է որ ղաթրէն, իսկ Փալաքին կերպն այն է, որ որպէս զղաթրան հանելն. և արայ որպէս կամիս։ Է և այլ խմն իւղ օգտակար. առ կ իր կամ բրտի հող և լից ձվի վերայ և ղաթրէ՝ ելանէ իւղ լաւ։*

§ *157.* Գոզի աղ շինել. *Գոզի աղ շինել՝ դիր ի կրակ ամանով մի, որ կապի, այն է։*

§ *158.* Հորու ջրի աղ շինել. *Առ սակաւ մի լեռան աղ և դիր աման մի, և լից ի վերայ հորու ջուր, դիր ի վերայ մեղմ կրակի կամ արեգակն*, և քանի մաշի ջուրն՝ լից. որ երթալով յաւելանայ աղն, այն է։*

§ *159.* Կարմրցնել զերկաթն. *Առ զպօղպատի խարտուքն, և բաժին մի շիպ, բաժին մի նշադր, բաժին մի զաճ, բաժին մի նաթռուն, բաժին մի ռախսուտ, բաժին մի ժանկեառ, բաժին մի աղ, և բաժին մի թուրունճի (բաց է թողնված) մէջ, և սղկէ միատեղ և տաքցոյ, մինչ որ հաւանիս, և նա կարմրի ներսէն և դըրսէն՝ քան զպղինձ այլ լաւ։ Եւ առ զինքն յարեգական* դոներն, զի երկաթի նիւթն, որ հետ ներկին լինի արեգակն* նայ ի զուռն մտնողն՝ ոչ բաժանի իւրմէն ներկն։*

§ *160.* Հնացնելու զնոր շինածն. *Առ զաճ Կիպրոսի, և նշադր, և նռան կեղև, սղկէ միատեղ, և լից ի վերայ պտղի ձէթ, և խառնէ և ծեփէ իւրմով զնոր նիւթն և դիր յաղբն* է *օր և հնանայ լաւ։*

§ *161.* Թապիք զնչուփրի. *Դիր ի հետն* ե *էն* ա *նշադր և*

1 *Բնագրում՝ ս ե ղ ն։*

ողկէ, և շաղղէ սուր քացախով, և լից կիր ի մէջ պուտկիմ, և թաղէ ի մէջն, և դիր ի կրակն է օր, և հան նոր ողկէ, և դիր ի հետն ե էն ա նշատր, և ողկէ քացախով, և արայ գունդ որպէս զառաջին, և թաղէ ի կիրն, նոյնպէս տամսէ է օր մինչ ի գ հետ, որ լինի խա օր, և ապայ լվայ զինքն, և արայ զինչ որ կամիս, բայց ամէն հետ զկիրն փոխեա:

§ 162. Զվի կենեպի կիր անել. Առ զինքն և քերէ ի միջի բարակ թերթոյն և լվայ աղջրով կամ ծովու ջրով, լաւ շփէ բ ձեռօքդ, որ ի բաց թօղու զնաստ տեսակ մղեղն, և ապա դիր որ ցամաքի լաւ և գիճութիւն չի մնայ. առ և լից ի բրուտի փառջ մի և ծեփէ զբերանն լաւ զիտնոց կաւով, և դիր ի բրուտի փուռն կամ բարկ թօնիր, որ օր մի վառի կրակն, և ապայ հան և տես կիր եղեալ սպիտակ և զարմանալի: Եւ թէ սև գովլի ի մէջն՝ նորուն դարձոյ ի կրակն և թող մինչ որ կրանայ լաւ:

§ 163. Կերպ իմն դեղնեցուցանելոյ զպղինձն. Առ թութեայ բաժին մի, և արծիւ կես բաժին, և քան զինքն զաճ, և քան զինքն շապ. ողկէ զամէնն և շաղղէ զաթրանով, և խորվէ զիշեր մի՝ եղանէ սև այրած: Հալէ զկարմիր պղինձն, և ձգէ ի վերայ խու-մէն, և տես թէ ինչ եղանէ. և շինեն զինքն ըըղացիքն լաւ:

§ 164. Արջապսի արծակել. Առ զաղէկ արջապսն և նշատր հաւասար, և կտրէ զբողկի կէսն կամ սոտպղնի և զմէջն փորէ այնչափ, որ տանի զերկու դեղն: Լից ի ներսն և դիր զմէկայլ կէսն ի վերան և թող պահ մի՝ նայ արծակի, և իւրմոլո խմցու զսայյատած սնդիկն՝ նայ լինի զինչ կամիս:

§ 165. Վերացնել սնդկի լաւ-բան զմէկ այլ կերպերն. Առ զինքն և լից ի նոր և պինդ շոր մի, և քամէ, որ դուրս տայ և զաղն սրբէ: Արայ այդպէս քանի մի անգամ և ապայ դիր ի հետն զաճի աղ, և կրացեալ աղ հասարակաց, և ողկէ և դիր ի տամս, և նոր ողկէ՝ մինչ որ ցրվի սնդիկն և չերևի, և նորուն դիր ի վերայ կրակին և խառնէ. թէ երևայ սնդիկն նայ, նորուն տամսէ և ողկէ տաք տաք, որ մեռնի ցամաք: Եւ թէ չի կարայիր չոր մեռուցանել նայ, կաթ կաթ քացախ կաթեցոյ վերան և ողկէ և մոոյ ի տամս մինչ որ մեռանի: Եւ մեռանելու նշանն այն է, որ երբ զգիճութիւն հանես կրակով և խառնես այլ չի հաւաքի: Եւ ապայ դիր ի սայյատելոյ ամանն, որ լինի ապիկի կամ ապիկած, և իւր բարձրութիւն թիզ մի, և լայնութիւն դ մատ և ծեփէ զամանն

քո կավոճն տակուատակ, և դիր խուփ ի բերանն՝ կամ ապիկի և
կամ ապիկած, որոյ գլուխն լինի ծակ մախաթի չափ, դիր ի բե-
րանն և դիր ի վերայ գործելոյ կրակի, որ փոշով ծածկեած լինի։
Յառաջ մի ծեփեր զխուփն մինչ որ զսնութիւն հանես, քանի որ
խփի մէջն սևանայ՝ սրբէ և դիր ի վերայ մինչ որ չի սևանայ, և
ապայ ամրացոյ զփակն խփին։ Առ աղ կրացեալ և ի գխոնոց կա-
ւէն միաչափ, և շաղղէ ձվի սպիտակուցով, և ծեփէ։ Եւ առ շոր մի
բ մատ լայն, թաթխէ ի ձէթն և փաթթէ բոլոր ծեփին, և նորուն
ծեփէ վերան. և գլխոյ ծակն մի բռնէր մինչ որ հատնի գոլոր-
շին, և դիր քանի մի մաղ ի վերայ, երբ սկսի սայատել՝ սպի-
տակլի մաղն, յայն ժամ կալ զծակն ամուր, և կրակն այնչափ, որ
ձեռքդ դիմանայ վերայ խփին։ Եւ վառէ ժամէ ի ժամ և բաց
խառնէ զվերին ի ներքինն, և դարձոյ զգործն գ անգամ. և այն
է կատարեալ։

§ 166. Ղաքրան շինել. Առ ի պտղի փայտէն, կամ ինչ փայտ
որ խաղով է, առ պչորն և լաւ մանրէ։ Եւ լից աման մի և լփէ
զբերանն, և արայ փոս մի և դիր ի մէջն դատարկ աման մի։ Եւ
դիր զխփի վայր զլի ամանն որ մտանէ վերի ամանի բերանն ի
ներքի ամանն և ծեփէ խեցատով, և վառէ ի վերայ կրակ, որ
իջանէ ղաթրան ի ներքի ամանն։

§ 167. Ապիկու կրացնել. Առ ապիկի յխտակ, որ չէ բան-
ցուցած բնաւ, շողցու զինքն և թաղէ ի ղալէքարի ջուրն՝ նայ
կրանայ։ Առ և սղկէ ի հետն քան զինքն աղ, և խմցոյ իւր ձվի
սպիտակուց և չորացոյ, և դիր ի պուտուկ մի, և դիր ի կրակ օր
մի և գիշեր մի։ Հան և սղկէ և նորու խմցոյ իւր ձվի սպիտա-
կուց և սղկէ ի հետն աղ և դարձոյ ի կրակն որպէս զառաջն։ Եւ
արայ այնպէս Ե հետ։ Առ և գործէ զինչ որ կամիս։

§ 168. Դուռն փզի աղ շինելոյ. Առ ուղայոց զող ծ լիտր և
դիր ի ղարայ մի ապիկի կամ ապիկած[1] և դիր արեգակն* Խ օր։
Եւ թէ չը կապի, դիր ի վերայ փոշոյ, կրկին կապէ։ Այլ կերպ.
հնացոյ զինքն ամիս մի և դիր յամէն լտրի մէջ դ նուկի կալէ-
քարի աղ և կապէ ի վերայ կակուղ կրակի, նայ լինի որպէս
ՊՂԸՊ զպլխակապոյն քան զպլոռ։

---

1 Բնագրում՝ մի զմի ապիկի կամ ապիկած։

Մ Ա Ս Ն

Գ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ, ԳԱՂՏՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ

Աբիոն—տես աֆիոն։

Ադամայ որդոյ քար—ոսկու գաղտնագրած անուններից մեկը։
«Ձի ոսկին է ադամայ որդու քարն» (Զ-իր Բ, վերջում)։

Ագրեստոյ—տես ամիանթ։

Ազոխի ջուր—որևէ թթու ջուր կամ խակ խաղողի հյութ, ֆր. suc de verjus. Ամասիացին ունի՝ «Ամյայխուն՝ որ է հելենացի բառով ազոխի ջուր կասեն» Ունի նաև Ալ Հր Ամասիացուց առած։ Բառս ծանոթ է նաև ՆՀԲ., որ բացատրում է՝«Երբ որթոյ տհաս և թթու, խակն խաղողոյ»։ Գրաբարում Ազոխ բառից կան բարդություններ. «Ազոխանալ»—տհաս և խակ գտնվել։ «Ազոխացուցանել»—թթվեցնել։ Երեմիայի բառք. «Ազոխ. ժուռ. կամ խակ կամ տհաս»։

Ագուրիոս—թութիաքարերի տեսակներից մեկը։ Նրա մասին գրած է հետևյալը. «Ագուրիոս մին գուն ունի և է քար երկնագուն և նմանի բուրգիլ և ունի ծին ծին ոսպէս հատք ոսկոյ» (Զ-իր Դ, 45բ և 46ա)։

Աթալ—ալուտել ամանի անունն է։ ՊԹ № 1291 ձեռագրի մէջ Աթալ անվան տեղ համապատասխան հատվածում գրված է՝ ալուտել։

Ալաթ—գործիներ, սարք ու կարգ։ Թուրք. Alat. «Դուքն ալաթի, որ պիտոյ է արուեստիս։ Պիտոյ է յամէն մարմններոյ ի մոտն և ամէն գեղերն և աղերն և ալաթ, որ հալէ իրմով՝ որ է փուքս, և օճախ, և կճիճ, և խարտոց, և մկրատ, և մհաք և կթխայք՝ որ թաշմիշ լինի ի յինքն. և ի վերն ասացեալ գեղերն և աստ պիտոյ չէ։ Եւ փուքսն մեծ պիտի և լուլան սաղ և օճաղն մեծ և գործելի» (§ 207)։

Ալամ—տես դառիկ։

Ալամբիկ—թորելու համար գործածվող աման. տես լամբիկ։

Ալեոր—արճճի գաղտնանուններից մեկը։

Ալնիտր—գործածված է միայն մեկ անգամ։ Լինելու է սալնիտր, որը է բորակի աղ։

Ալումբեն պատեստր—տես պաղլեղ։

Ալումէն—տես պաղլեղ։

Ալումէն ջէմինի—լա. Alumen Gemini. տես պաղլեղ. գրած է նաև ալումէն ճամենի։

Ալումէն սուքարինում—գրած է նաև ալումէն սոկքարին. տես պաղլեղ։

Ալուտել—տես ըղգում։

Ալպոթ—դժվարահալ նյութեր հալելու ամաններից մեկը, որի գործածության մասին տես պոթպարպատ։

Ախմառ—արջասպի տեսակներից մեկը, որը կանաչ է. «գալգանդում է թանաք կանանչ» (46բ., Դ Ձ-իր)։

Ախտառ—արջասպի տեսակներից մեկը, որը Բ. Ձ-րի մեջ կարմիր է (§ 2), և Դ. Ձ-րի մեջ՝ «սէհլի՝ այսինքն է սէհլի թանաք» (44ա) և «դանակըն սինելցի՝ կարմիր է» (46բ)։

Ածուող—արհեստական, ցանովի, մշակած։

Ակլիմա—«աղտ է, որ ի հալել ոսկոյ և արծաթոյ ելանէ» (Բռ. 701). Վաստակոց գիրքն ունի ագլիմիեա։

Աղ—ալքիմիայի մեջ աղ բառը գործ է ածվել լայն առումով։ Մեր Ա ձեռագրի № 13 բացատրության մեջ ասված է՝ որ աղն չորս ցեղ է. — ա. մայտանի (հանքային—Կ. Ղ.), բ. բուսոց, գ. անասնոց և դ. ծովային։ Իսկ նույն ձեռագրի № 26 բաց. մեջ ասված է. «և աղերն Է ազգ են. ապրի աղ, ոսկերչու աղ, անտռանի աղ, նաֆտի աղ, նաթռոն աղ, մունխրանի աղ, հնդի աղ»։ Ալքիմիայի մեջ աղը գլխավորապես օժանդակ դեր է խաղում. նա օժանդակում է նյութերի մաքրելուն, սպիտակացնելուն և լուծելուն՝ այսինքն նյութերի լվանալուն։ Այս մասին ա ձեռագրի № 26 բացատրության մեջ ասված է. «և այս ամէն աղերս կու մտանէ ի մաքրումն և ի սպիտակութիւն, և կու հանեն զսևութիւն և կու օգնեն և կարձակեն զմարմներն, և զհոգիքն. և այդ է իւրեանց գործն»։

Աղ անունը գաղտնագրելու համար, ալքիմիկոսները չերբեմն գրել են նրա օտարլեզվյան անունները, ինչպես օրինակ՝ արաբ. մլհ, լատալաս, թրք. տուզ։ Բացի աղի ընդհանուր անունից՝ նրա յուրաքանչյուր տեսակն ունեցել է իր հատուկ անունը։ Ստորև դնում ենք այդ անունները։

«լեռան աղ՝ որ է քարաղն»։

«շեղրախ՝ մաշկաթևի գողի աղն է» (գաղտնանուն),

«սալձեմայ՝ կողբացի աղն է փայլուն»,

«հեհալամ՝ որ է ղալէքարի աղն»,

«հուրըմ՝ որ է ղալաքարի աղն»,

«սալտարգրի՝ գինոյ մրրի աղն է»,

«սալնիտր՝ որ է բորակի աղն»։

Բացի վերոհիշյալ անուններից, ձեռագրերի մեջ պատահում են հետևյալ բառերը. «Ապիկի աղով» (§ 115), որը բյուրեղացած հանքային աղն է։

«Եւ թէ անասնոց աղ լինի՝ այլ լաւ է» (§ 115)։ «Անասնոց աղը» գլխավորապես մեզի նստվածքից էին պատրաստում, բայց հիշատակվում են նաև անասնոց ոսկրից հանված աղեր։

«Հորու Ջրի աղ» (§ 158)—հորի ջրի նստվածքն է։ Մի քանի տեսակի անուններ են պարունակում նաև հետևյալ հատվածները.

Աղն չորս ցեղ է՝ ա. մայտանի, բ. բուսոց, գ. անասնոց և դ. ծովային։ Եւ մայտանի աղն 2 ցեղ է. — ա. փայլուն պլոռի պէս է, որ է անտռանի աղն և բ. սպիտակ աղն որպէս պլլոր, որ ներսն էլ կերևի և դուրսն էլ։ Բայց գոյն Գ կայ՝ սպիտակ, կարմիր և լուրջ։ Եւ բուսոցն

որ պղնձի աղն և քալքար և ամենայն բուսոց։ Եւ անասնոցն, որ ի գողէն կու հանեն և ոսկրէ կու հանեն և ի պաղլամէ և ի ելնքէ և յղեղէ կու հանեն։ Եւ ծովուցն, որ բաղում ակ կելնէ, բայց չի հալի և սիպիքայ չի լինի. և որ կու հալի և սիպիքայ կու լինի՝ մատանին աղերն է» [հմմտ. № 13 խրատ]։

«Եւ աղերն Է ազգ են». ապրի աղ, ոսկերչու աղ, անտռանի աղ, նեֆտի աղ, նաթռուն աղ, մունխրսանի աղ, հնդի աղ։ Եւ ասեմ զայն աղերն որ կու հանեն՝ զալի աղ, կրի աղ, գողի աղ, շեղրի աղ և փոշու աղ՝ որ ինքն է սպրընձն, և պատի աղն, թնքառ աղն (№ 26 խրատ)։

«Մահլ (sel), որ է և պ. նամաք ասէ և հռ. ալաս ասէ, և թ. տուզ ասէ, և ինքն ցեղ ու ցեղ լինի... Եւ մէկ ցեղն անդրանին է, և մէկ ցեղին այլ մէհ յաճին կասեն, և Գ ցեղն նաֆտի է՝ սև է, և Դ դիրնաֆտի է և Ե ցեղն՝ հնտի է և կարմրժեռ է. և մէհի մուռ՝ այն որ լեղի է որպէս մոտիկ Է պորային համովն» (Անգ. Անպ. 2077)։

№ 14 բացատրության մեջ ասվում է, որ «չիպքն ևս աղ համարին, որովհետև յազգ իմն քարից կրացեալ և ջրացեալ կապին և են զանազանք ըստ նիւթից քարանցն»։

«Այլ և աղն Է ազգն է, հասարակաց աղն, անդրանի աղ որ է դեղձնցի, աղ հնդկացի, և աղ նավթի, կարմիր աղ, և խորասանի աղ, լեղի աղ, և ոսկէրչի աղ։ Բայց կան և այլ աղք, որ արուեստիւ հանեն իմաստունք Է ազգ, որոց անուանքն այս են. աղ կալէքարի և աղ կրի, աղ շաբ, և աղ մազի, աղ մաշկաթեի և զայլ գոյնոն սրբեն և հալողք են և սրբողք հողոց և մարմնոց» [Զ-իր Բ, էջ 52—53]։

«Աղք բազում ազգ են. է աղ հասարակաց, զոր ուտեմք, և է աղ դառն, որ ոսկերչերուն պիտոյ է, և է աղ մաքուր փայլուն և սուր և աղս այս սրբէ, և է աղ նեփտէ՝ որ է սև, պինդ և սուր, բայց ոչ փայլուն և ունի հոտ նեֆտոյ. և է աղ լեղղուն, որ է սեաւ, և է աղ որ սալարզարի կոչի, և է աղ կրի, և է աղ կրակաց ծաղկի, և է աղ գողոյ» (Զ-իր Դ, 47բ.—48ա)։

Աղալու սալ—տես սալ։

Աղարջնի—հաղարջենի. հաղարջի բույսը, լտ. ribos, ռուս. смородинный куст.

Աղբերաց արիւն—բույսի անուն։ Իբրև գաղտնանուն՝ երկաթի զաֆրանն է։ «Աղբերաց արիւն՝ որ է երկաթի զաֆրան» (բռ.). տես երկաթ։

Աղբով արձակել—տան մեջ փորվում էր մի խորանարդ մետրաչափ փոս, որի մեջ լցվում էր ձիու աղբ։ «Արձակելու» ենթակա նյութը փակ շշով[1] դրվում էր այդ աղբի մեջ և աղբը կոխելով պնդացվում էր, որպեսզի դրսի օդը քիչ ազդեցություն գործի փոսի վրա։ Աղբի ներքին ջերմությունը չպակասի, չորս օրը մի անգամ աղբի վրա տաք ջուր էր ցանվում։

Եթէ աղբի մեջ թաղվող նյութը երկար ժամանակ էր մնալու այն-

---

[1] Այդ շիշը Դ. Զ-րի 52ա էջում կոչված է տաշտ

տեղ, այդ դեպքում փորվում էր մեկի փոխարեն յերկու փոս և 7—10 օրը մի անգամ նյութը մի փոսից մյուսն էր փոխադրվում։

Աղբը փոսի մեջ էր լցվում յերկու օր առաջ, որպեսզի այդ յերկու օրվա ընթացքում աղբն ինքը տաքանա։ Այդ փոսերի մեջ նյութը պահվում էր մինչև 40 օր (Բաց. № 6)։

Աղի արճիճ—նյութ, որը պատրաստվում է լեռան աղի, հինայի ու ձվի սպիտակուցի խառնուրդից (տես § 142)։

Աղլեմիա—կադմիա, հն. Καδμεία, հիշվում է № 17 բացատրության մեջ իբրև ալքիմիայի մեջ գործածվող նյութ. այսպես՝ «և այլ նիւթք արտաքոյ սոցա, որք մտանեն յայս արհեստս—ըղլէմիայ»...

Բառս ունի Անգ. Անպ. 96 «Աղլէմիա (Cadmie), որ է Ղլէմիան և ինքն շատ ցեղ է, արծթի, ոսկու և պղնձի, և մառէնի, և սուզծու, և սուզծուն արծթէ, և ոսկու, և պղնձէ և մարդաշիշայէ կու շինուի. և լաւն այն է որ Կիպրոսու կղզին կու լինայ. և ղինքն ի Ջրին մէջն կու գտնուն, և այլ կայ որ ի քարէն կու ելնէ, և գունն լաղիվարդին գունովն է»։

«Եւ Է քար է որ մտնայ ի յայս արուեստս՝ Ղլէմիայն», և այլն (№ 22 բաց.)։

Բաշ. գ. Բ. գրում է «Հին տարրագետք տային զայս անուն զանազան գոյութեանց, որպէս կոչէին cadmie fossile—կադմիա բրածոյ, զկոբալտ՝ cadmie naturelle կամ pierre calaminaire կադմիայ բնական կամ Թութիաքար, զթթուուկ զընկոյ։

Cadmie artificielle կամ des fourneaux կադմիա արուեստական կամ հնոցաց, է թթուուկ զընկոյ վերացեալ ի հալել մետաղին և զնստեալ ի վերայ կողից անօթոյն։ Կոչի եւս ծաղիկ զընկոյ։ Անուանս այս տեսեալ լինի առ հասարակ և ամենայն մետաղական վերացմանց»։

Աղութ—տես եղութ։

Աղպար—տես Թութիայ։ Ամասիացին գրում է՝ «Աղպար՝ ինքն Թութիան է»։

Աղջուր—եղջուր, պոզ։

Աղտոր—Ֆր. Sumac, լտ. Rhus, հն. ῥοῦς. «Աղտոր, որ է սումախն, որ է թաթրին» (Անգ. Անպ. 118)։ «Թուփ և պտուղ նորա ոդկուզաձև կարմրահատ թթու զովացուցիչ» (ՆՀԲ)։ «Եւ լինի ի Տայս՝ թուզ և նուռն, աղտոր... (Մխ Աշխարհացոյց)։

Աղրապ—տես ծծումբ։

Աճռեցնել—աճռել, ճմռել, շաղախել, տրորել։

Ամեռ ըլ հուդ—կա նաև ամիռ ըլ հնդ։ Ջվի կեղևն է։ «Եւ հուկթի կեղևն որ և ամեռ ըլ հուդ և վըպապ ըլ մոխնայ» (Խրատ № 16)։ «Ամիռ ըլ հնդ վօպապ ըլ մոխնայ հուկթի կեղևն է» (Խրատ № 21)։

Ամիաթ—գրած է նաև ամիանթ։ Կտավաքար. ռս. горный лен, լտ. asbestinum, հն. ασβεστος. «Ամիաթն որ և ասվեստոս, այսինքն անշէջ և անկէզ է, անեղծ և անպառ քար» (Խրատ № 38)։

Այլուտել—տես ալուտել։

Անագ—լտ. Stannum. կլայեկ, կլայեկ։ Ալքիմիայի մեջ ունի բազմաթիվ գաղտնագրած անուններ. Մուշթարի, Լուսնթագ, ճղընչող կիթ, Թու-

լաստղ, սպիտակ գետին, ծաղիկ սպիտակ, հինգշաբթի (Լուսնթագի օր) «Ղազտիլ որ է կլայեկ» (բռ.)։ Բժ. a-ի մեջ 159բ. թերթում կա. «հյ. կլայեկ, արաբ. խօլայ, պս. ապլիզ։ Ի փռանկաց գայ»։

Անագն ալքիմիայի մեջ գործ է ածված գլխավորապես արծաթագույն մետաղ ստանալու համար։

Անաղած ծարուր—տես Թութիայ։ «Անաղած ծարուր՝ որ է Թութիան» (§ 264)։

Անբեղ—տես ըմպեղ։

Անգրութ—ճիշտը անծրութ, գործ է ածվել անծրութ ծառից ստացվող խեժի համար։ Լտ. Sarcocolla.

Անուշադր—տես Նիշադիր։

Անտրանի աղ—հանքային բյուրեղացած աղ։

Անփուք—արճճի գաղտնանուններից մեկը։

Ապականող մարմնոյ—ծծումբի ծածկանուններից մեկը։ Այս անունն առաջացել է այն համոզմունքից, որ ծծումբի գոյությունն է խանգարում ոչ-ազնիվ մետաղներին ազնիվ մետաղներ դառնալու։

Ապակի—մեծ մասամբ գրած է ապիկի։ Բժ. a 128բ. ապակու մասին գրում է հյ. «ապիկի, հռոմ. կատմինայ, արաբ. զուճաճ, պրս. ապկինայ։ Աղէկն ի Սէս լինի։ Ի Սիս որպէս ասաց կայ, կու հալեն և այնտեղ այլ կու շինեն շատ ոք»։ Գաղտնագրած է մեծ մասամբ զուճաճ բառով։ Բռ. «Ապիկի՝ որ է շուշայ»։

Ապիկի սալ—հախճապակի տախտակ, որի վրա մանրացնում էին նյութերը։

Ապուղան—ծաղկի անուն է. Փր. Onogra. Բառս ծանօթ է Ամասիացուն անգարա անունով, որի տակ գրում է՝ «Սաէ պատէհին թէ այս խոտիս պարսկերէն անուսար կասեն, և ապուղան այլ կասեն»։

Ապուլիպ—արվեստականորեն պատրաստվող նյութ, որը կոչվել է նաև մուր։ «Մուրի շինել՝ որ է ապուլիպի» (§ 148)։ Բժշկական և բուսաբանական գրվածքների մեջ չի գործածված. ունի միայն պրս. բռ. «Ապուտ—սինպիլ և ոմանք ասեն թէ ծաղիկն նոնոֆար»։

Ապրիզ—ըստ երևույթին ապրիզ կոչվել է այն ոսկեգույն մետաղը, որն ստացվել է ալքիմիական միջոցներով, որովհետև ոսկի շինելու համաձայն (§ 106) ասված է. «առ յուրմեն [նրանից] մէկ մի ի վերայներից մեկում ոսկի։

խ Դ [44] արծաթի՝ ելանէ ապրիզ», այսինքն՝ ոսկի։

Ապրշիմի շիպ—տես պաղլեղ։

Աջողցնել—ումեղացնել, բորբոքել, կրակն ավելացնել։

Առիւծ—ծծմբի գաղտնանուններից մեկը։ Բռ. «Գայլ և առիւծ առի քպրիթն»։

Աուքի մուր—ամաններին վերին մասում նստած մուր, առաստաղի մուրը։ Այսպես է կոչվում այն նյութը, վորը սայատելով, արձակելով և կապելով՝ ստացվում է նշատիր (տես § 144)։

Ասպուղան ծաղիկ—համապատասխանում է Բ. Ջ-րի ապուղան ծաղկի անվանը, որոնցից մեկը գրչասխալ է։

Ասովցի—ասորեցի։

Ասվառ—արջասպի տեսակներից մեկի անունը։ «Եւ զաճերն է ազգ է՝ ասվառ, ախտառ»... (Խրատ № 25)։

Ասվեստոս—տես ամիանթ։ «Ամիանթն որ և ասվեստոս» (Խրատ № 38)։

Աստրայ—տես խալիզոն։

Ասրանջ—կարմրադեղ, սուսր, նօթ[1], ըստ Անգ. Անդ. այրած սպիտան։ Կապարի փխրուն թթվուկն է. լտ. minium։ Տես նաև պաղուն։

Ասրունճ—տես սիլիկոն։ Ամասիացին գրում է «Ասրունճ որ է ուսրունճն որ է սիլիկոն»։

Ասփիտաճ—տես սպիտաճ։

Ատակ—ամանների հատակին առաջացած նստվածք։ Բառս հիշվում է միայն յերեք տեղ, այսպես՝ «Եւ առ նորա գլուխ սպիտակն և սղկէ ի հետ ատակին»։

«Եւ առ զատակն և նորա սղկէ» «և քամէ ի վերայէն զեղն՝ կու մնայ ատակն» (§ 228)։

Արեգակն—ոսկու գաղտնագրած անուններից մեկը, բայց շատ տեղերում գործ է ածված նաև իսկական իմաստով՝ իբրև արև։

Արծաթ—ալքիմիկոսների իղձերից մեկն է եղել արհեստականորեն արծաթ ստանալը։ Ձեռագրերի մեջ բավականաչափ խոսվում է բոլոր այն միջոցների մասին, որոնցով հնարավոր է արծաթանման մետաղներ ստանալ։ Արծաթանման մետաղ ստանում էին գլխավորապես անդիկի և անագի միջոցով։ Արծաթը, իբրև իդեալ ծառայող մետաղ, ստացել է բազմաթիվ ծածկանուններ, դամեր[2], լուսին[3], լուսաւոր ակ[4], հերմես իմաստասէր, սպիտակ, մոմեղէն, ընտանի առիւծ, քարտէս, երկուշաբթի[5], կամար[6], հաթըփ և այլն։

Արծիւ—նիշադրի գաղտնանուններից մեկը։

Արծուաքար—գրած է նաև արծուաքար. սև սաթ, կակաղիս, սև քահրիբար։ Լտ. Gagates, հն. γαγατης

Արճակել—բառացի նշանակում է լուծել։ Պետ. թանգարանի № 701 ձեռագիր (1675 թ. գրած) բառարանը լուծանել բառի դիմաց ունի ճարճակել կամ թօթափել։

Ալքիմիկոսները նյութը լուծում էին զանազան միջոցներով, ինչպես, օրինակ՝ հասարակ ջրի մեջ, աղբի մեջ թաղելով, կրակի օգնությամբ և թթվուտներով։

Արճապս—տես արջասպ։

Արճիճ—կապար. լատ. Plumbum. Ունի բազմաթիվ ծածկանուններ, որոնք

---

1 Պետք է կարդալ նավթ։

2 Դամերը արաբերեն լուսնի անունն է։

3 Արծաթն իր սառն սպիտակ փայլի համար կոչվում էր լուսին։

4 Ուզում է հիշեցնել լուսինը։

5 Լուսնի օրն է։

6 Լուսինն է հիշեցնում։

են՝ զօհալ[1], երեակ, անփուք ալեոր, սև գործելի, մարմին ծարրի, հում ոսկի, սպանող մարմնոց, սև բորակ, շաբաթ[2], սարսալայ, սուրպ, մեծ ալեոր:

Արճիճը համարվել է արծաթի զոհերը մեռնող մարմին:

Արճճանալ — արճճի նման լինել: «Նա կու արճճանայ և կայր իբրև զարճիճ» (№ 211):

Արջասպ — մեծ մասամբ գրած է արջապս ձևայեղ, ժողովրդական անունը չէպ: Հնում արջասպ են կոչվել ընդհանրապես բոլոր ծծմբատները (sulfates):

Արջասպը գործ էր ածվում թե ոսկեգույն և թե արծաթագույն մետաղ ստանալու համար («և ամէն զաճերն և զալզանդ կու մտանեն ի սպիտակացնելն և ի կարմրցնելն» (№ 28 բաց.): Ալքիմիայի ձեռագրերը ծանոթ են յոթն տեսակ արջասպների. այդ մասին № 25 բացատրության մեջ ասված է. «Եւ զաճերն է ազգ է. սովառ, ախմառ, ախտառ, զալզանդ, և խալդըռ, և զլզաոխ և շահիռայ»:

Ամիրդովլաթ Ամասիացին գիտե ավելին. նա գրում է՝ «Ասէ Պօլին թէ զաճն շատ ազգեր է՝ սպիտակ, կարմիր, և կանաչ, և այն որ սպիտակ է, զաճի սպետա ասեն և զալզաոխ ասեն, և շողար այլ ասեն և հոռոմն հալղիս ասէ և այն որ կարմիր է, սուրխիս կասեն, և այն որ կանանչ է, զաւլիս և զալզանդ կասեն, և զալզատար այն զաճն է որ դեղին լինի և պ. զաճի շթուրտանտան կասեն, և լաւն այն է որ մաքի լինի և փայլուն, որպէս զոնեխի պատախշի, և յորժամ ձեռաւք փշրես՝ շուտ փշրի և լաւն այն է որ յստակ լինի և հին չի լինի. և ցեղ մըն այլ կայ որ այնոր զաճի սուրի կասեն և պ. բարուճկըրերու զաճ կասեն, և ի Շիրազ զաճի սիահ կաւեն... և զաճ մըն այլ կայ որ հռ. Մասիղ կասէ» (Անգ. Անպ. 694), բա«ծլալեղ որ է զաճ»: «Իսկ արջասպն է ազգ է, առաջինն՝ դեղին է, երկրորդն՝ կանանչ, և երրորդ՝ կարմիր, և չորրորդն ասեն զլզանդ, է երորդն ասեն զլզատար, Զ երորդն՝ զլզաոխ, Է երորդն՝ ասեն շահիրայ: Եւ այս ազգերս բովանդակ մտանեն արուեստս ոսկոյ[3] (Բ. Զ-իր, էջ 49—50): «Ղըլզաոխ՝ որ է սպիտակ առջասպ» (§ 294) Գ. «Զթանակ սեաւ, որ է հող Ձիրանցի» (Դ. Զ-իր, 27 բ) «Եւ թանաք են Զ, թանաք սեաւ, պաղեղ, կալկանդիս, կալկանդում, կաւլկաւլզառ, և սէհլի՝ այսինքն է սէհլի թանաք» (Դ Զ-իր, 44ա): (Սէհլին համապատասխանում է այլ տեղեր հիշված սաշահիրայ բառին): «Թանաքք են բազումք, զոհ թանաք որ դեղին սամարացի, և է այլ դեղին որ ունի ծին ծին ոսկի և ի գործ ածեն ոսկերիչքն և է այլ կանանչ խառնեալ ընդ հողոյ և պիտոյ է զաբաղնուն» (Զ-իր Դ, 46բ):

«Գալզանտխ է թանաք սպիտակ, գալզանդում է թանաք կանանչ,

---

1 Արաբ. Երեակն է.

2 Երեակի իշխանության օրն է:

3 Գրած է արևի նշանագրով:

գունդաւ է թանաք գեղին և գանակքն սինեցի՝ կարմիր է» (Զ-իր Դ, 46 բ):

Արսենիկիր — տես զառիկ: Լատ. Arsenicum.

Արտաշ — մնդկի զաղտնագրած անուններից մեկը: «Մնդիկին [սաէն] ստարիտ, և ծառայ, և զապիրլի և այլք յաճախք» (§ 118):

Արքունի ջուր — տես թեզապ: «Իսկ արքունի ջուրն լուծանէ նաև զոսկի և զամենայն հրահալելիս բաց ի արծաթոյ» (Բ. Զ-իր, § 2):

Աւազհալումն — աղբի մէջ թաղելով լուծել: Տես աղբով արձակել: «Կոչի աւազ հալմանն, որի հալիչն ներքոյ թրքքի հալի (Զ-իր Դ, 31բ):

Աւշնան — տես չողան:

Աքսիր — առացվող այն նյութը, որը ոչ-ազնիվ մետաղների հետ բաղադրվելով՝ տալիս է արծաթագույն և կամ ոսկեգույն մետաղ: Ալքիմիկոսներն աքսիրը համարել են ոսկու և արծաթի մակարդ:

Էլեքսիր բառի հայացրած ձևերից մեկը, որ երբեմն (էլ) իքսիր է տառադարձված:

Ափափիայ — «է խոտ մի որ ասի ափաէփայ և տերևն նման է ուռի, և ծղերն դեղին է որպես զաֆրան, և տերեւն կանանչ և ի վերայ տերևին մանր փշիկներ կայ» (§ 191) Ալհր. չունի: Ամասիացուն անծանոթ է Գրս. բռ. ունի՝ «Աֆթէֆիյա, տես Զէյտանդէրէ, Թրնջուկ բույս»:

Ափիոն — օպիում. լտ. Opium, հն. Οπιον.

§ 138 ունի Ափիոն շինել. «Առ բաժին մի զաֆրան և բաժին մի քարդառայ գէճ, և առ խաշխաշի կաթ, և ողէ միատեղ, և ցամքեցուվան քո բանիդ»:

Բարուճկրերու գաճ — տես արջասպ:

Բաղանիս դնել — մի կճուճի մէջ լցնում էին հարդախառն ջուր և դնում թույլ կրակի վրա: Այնուհետև վերցնում էին հատակը ծակոտած մի այլ կճուճ և մեջը կիսով չափ թրջած թեփ լցնելով՝ դնում առաջին կճուճի վրա այնպես, որ երկրորդ կճուճը կիսով չափ մտնում էր առաջինի մեջ: Այս կատարելուց հետո «բաղանիք» դրվող նյութը լցնում էին մի շիշ ու թաղում թրջած թեփի մեջ և վերին կճուճի բերանը հաստ թաղիքով պինդ փակում: Ներքևի կճուճի տակն ու սորին կողերը կավով ծեփում էին, որպեսզի կրակը թույլ ներգործություն ունենա: Այս վիճակում «բաղանիս» դրված նյութը մնում էր կրակի վրա «պախրէի մախիելու չափ» (Բաց. 7): Մի այլ տեղ ասվում է, որ «բաղանիքն միջաւ կակուղ լաւ է, որպէս թխսանիստ հաւու տաքութիւն»:

Բանափշահ — պանափշան — մանուշակ:

Բարկութիւն — ուժեղութիւն, բարկ լինել:

Բերեզի — բուսական մոխրի աղն է. տես կալեքար: «Այս է կաղնի աղ և ի լատին՝ սալարդարի, կապխտալու, բերեզի: Երեք անունս այս մի աղիս է և մենք մոխրի աղն ասեմք» (§ 266):

Բորակ — լտ. Nitrum, հն. Νιτρον. աղբորակ, բորակատ կալիի. բժ. a, էջ 134բ ունի «հյ. բորակ, հռմ. նիտրոն, արաբ. պավրախ, պրս. պորայ: Ի հայոց գայ: Ինքն զէտաղի ջրէն [ս]ուզվի և [ապ]իտակ լինի:

Ալքիմիկոսներին ծանոթ էին բորակների միքանի տեսակներ, վորոնցից ամենալավը համարվում էր հայկականը։ Վերջինս երբեմն կոչված է սալնիտր վանեցի (Վանի բորակի աղը), երբեմն՝ պորա հայոց և այլ բազմաթիվ անուններով, ինչպես օրինակ՝ լաթերոն, պուրէի էրմէնի, կէօկէրչիլէ և այլն։

Բութայ — տես փութակ և պօթպարպատ։

Բուրակ գարպէ — գրած է նաև՝ բուրակ ըլ գարպի։ Բորակի տեսակներից մեկը, որն ածուխից էր ստացվում. առաջացել է carbo (ածուխ) բառից։

Բուրաք — տես բորակ։

Բոնիկարին — տես բորակ (բառք Գալ. Գ. Թ. Ձ-իր № 761)։

Բրտակաւ — բրուտների գործածած սովորական կավ։ Տես կաւ։

Գաղան ջուր — տես թէզապ։

Գալգանդիս — գրած է նաև ղալղատիս և ղլղատիս։ Արջասպն է։ Ամասիացին գրում է՝ «Ասէ պտին թէ զաճն շատ ազգեր է. սպիտակ, և կարմիր, և կանանչ, և այն որ սպիտակ է՝ զաճի ապէտա ասեն, և ղալղատիս ասեն, և շոզար այլ ասեն և հոռոմն հալղիս ասէ»։ «Գալգանտիս է թանաք սպիտակ» (Ձ-իր Դ, 46 բ)։

Գալգանդում — գրած է նաև ղլղանդ, կալկանդում, ղալղանդ, ղալխանդ, ղալաղանդ։ Լտ. chalcantum. «Եւ այն որ կանանչ է գալիս և ղալխանդ կասեն»։ Դ. Ձ-րի 46բ. էջում ասված է՝ «Եւ է այլ կանանչ խառնեալ ընդ հողոյ և պխտոյ է ղաբաղնուն»։ Տես արջասպ։

Գամին — տես կամինէ։

Գայլ — ծծմբի գաղտնանուններից մեկը։ Բռ. «գայլ և առիւծ ասի քպրիթն»։

Գառաղի — տես կարօղի։

Գետաքար — հեղեղատի խիճ, սոր (բրբռ) (ՆՀԲ. «Ոմանք ի ռմկ. սոր կոչեն գլխոշոր խիճս հեղեղատի, չաղըլ թաշը»)։ Ֆր. Caillou, cailloux roulés.

Գայլախազային քարեր, որոնք ջրի մեջ իրար շփվելուց կորաձևություն են ստանում։

Գինոյ մրուր — տես թարթեր։

Գիտնոց չամուռ — տես կաւ իմաստասիրաց։

Գլուխ ջուր — թեզ ջուր, ռասխալի, ժանտաջուր, արքայաջուր։

Գուլնդառ — համապատասխանում է կուլկուդառ բառին (Ֆր. Colcotar)։

Դաղարեցնել — նստվածք առաջացնել կրակի ազդեցությամբ։

Դաղարողական — այսպես են կոչվել բոլոր այն նյութերը, որոնք կրակի ազդեցությունից չեն ցնդում կամ գոլորշիանում, այլ նստվածք են տալիս։

Դահնաճ — հիշվում է № 17 խրատի մեջ իբրև հոգի չունեցող յոթ քարերից մեկը։ Բառս ունի Թաջ. Գի, «մոլոշ, պահանակ, պլա. դէհնէճ, Ֆր. Malachite, հն. μαλαχη. պղնձի ջրարնածխատն է»։

Դամս — տես տամս։

Դապաշիւր — տես կաւիճ։

Դարձնել — դարձնել ի վերայ. կրկնել, նորից կատարել նույնը։
Դեղին պղինձ — դեղնապղինձ։
Դըդում — դդմաձև խողովակավոր աման, որը գործ էր ածվում դիստիլացիայի համար։
Դողդողան — սնդիկի և այլ նյութերի երերուն վիճակը։ Տես նաև՝ հալված։
Դուրդի — տես տուրտի։
Դրհանի ջուր — կրաջուր. բռ. «դրհանի ջուր՝ որն է կրաջուր»։
Դրօշ — տես դառիկ։

Եաղութ — հակինթ. ֆր. Corindon, ռս. яхонт, рубин. Վաստակոց գիրքն ունի ակունդ։
Եարաղ — գործիքներ։ Թուրքերեն բառ. տես ալաթ։
Եղմառուղար — թութիաքարերի մի տեսակը, որի մասին Դ. Զ-իր 45ա գրում է՝ «Եւ է քար թութիայ զանազան գունով, մինն՝ կանանչ և սուր, միւսն այլ է կանանչ և հերձական և կոչի եղմառուղար»։
Եծած — հեծած, նստած։
Եմանի — տես երկաթ։
Եմատիտեզ — գրած է նաև էմադիտէս։ Այս քարը կոչվում է նաև էքսանդինայ։ Հն. Αιματιτης, լտ. lapis lenticularis, հյ. արիւնաքար, արիւնի քար, ղուրի քար, թրք. մէրճիմէք տաշը։ Մեր ձեռագրերի մեջ այլ տեղերում հիշվում է շատանայ, սադինէ անունով։

«Եքսանդինայ, այսինքն է էմագիտէս զանազան գունով է, գի գտանի կարմիր և խրփթի» (Զ-իր Դ., 46ա)։
Եպրիզ — տես ապրիզ։
Եսայն — տես յեսան։
Երեակ — արճճի գաղտնանուններից մեկը, որը գրված է միայն իմաստնոց նշանագրով։
Երեքշաբթի — երկաթի գաղտնանուններից մեկը։
Երկաթ — երկաթ. լտ. Ferrum։ Երկաթի ժանգը կոչվել է աղբերաց արյուն և երկաթի զաֆրան, որը համարվել է ոսկու գույնը մտնող նյութ։ Հատիտ է կոչվել նաև մաղրամիթայի յոթ գույներից մեկը, որ սև է նշանակում։
Երկաթաքաշ — տես մինատիս։
Երկուշաբթի — արծաթի գաղտնանուններից մեկը։
Եքսանդինայ — տես եմատիտեզ։

Զաճ — տես արջասպ։
Զաճի շթուրտանտան — տես կալկանդար։
Զաճի սուրի — տես արջասպ։
Զաճի սպէտա — տես գալգանդիս։
Զաճիդրպշ — գրած է նաև շաճիդպշ. Թուրքերեն բառ, ֆր. acide sulfirique.
Զայթ — տես պտղի ձէթ։
Զայթուն — տես պտղի ձէթ։

Զանձար — տե՛ս ժանկեառ։

Զապաթ ըլ պահր — տե՛ս ծովու փրփուր։ Ամասիացին գրում է. «Զապատ ըլ պահր՝ որ է ծովու փրփուրն»։

Զաջի սիհայ — տե՛ս արջասպ։

Զառիկ — գրած է նաև զառնէկ և զարնէկ։ Մկնդեղն է. լտ. Arsenicum, ռս. Мышьяк.

Բժ. a 142բ. ունի. «հյ. Զառիկ, արաբ. զռնեխ, պրս. զռնիխ, ինքն Գ ազգ է՝ ա սև, ա դեղին, ա կարմիր։ Ի գետնէն ելնէ»։

Բառք Գալիանոսի ունի՝ «Արսենիկոն՝ զառիկ» (Գետ. Թանգ. Ձ-իր № 701, 353ա)։ Ալքիմիայի մեջ զառիկը համարվում է արծաթի գույնը մռնող նյութ (տե՛ս № 29 բաց). բռ. «Ալամ՝ որ է զռնեխ» «Զարալա՝ որ է զռնեխ»։

Զառիկին ալամ է անվանում նաև № 15 բաց. այսպես՝ «նաև զռնեխին սաի ալամ, զառիկ և այլք»։ Ամասիացին ծանոթ է զառնիխ և զառիկ անուններին. (Անգ. Անպ. 742)։ Երեմիայ բառգ. «Զառինայն. զառիկ»։

Զառնիխ — տե՛ս զառիկ։

Զարալա — տե՛ս զառիկ։

Զարգուցանել — բորբոքել, ուժեղացնել։ «Զարգուցի գնուրն՝ ի վերայ ածելով Գ կամ Դ կայծ քոմուր» (Ձ-իր Դ., 19ա)։

Զափու[ր]ա անել — Թափիթ անելու սխալ արտագրություն։

Զաֆրան — երկաթի զաֆրան. երկաթի ժանգն է։

Զէյթունի ձէթ — տե՛ս պտղի ձէթ։

Զիպագ — սնդիկն է։ Գրած է նաև զիպակ։ Ամասիացին գրում է՝ «Զեպախ՝ որ է սնդիկն»։

Զճաճ — տե՛ս ապակի։

Զնճառ — գրված է նաև զնճար. տե՛ս ժանկեառ։

Զնջուֆր — գրած է նաև զնջֆր։ Ֆր. Cinobre, ռս. киноварь, հյ. կարմիր կիր (ըստ ձեռագրերի)։

Բռ. «Զնջուֆր որ է կարմիր կիրն», բժշկարան a, 143բ. ունի՝ «հայ գնջֆր, արաբ. գնջֆր, պրս. շնկրուֆ — ինքն սազծու է ի սնդկէն. ի ֆրանկաց գայ»։

Ամասիացին ասում է. «զնջուֆրն քպրիթէն և միվայէն կու զուգուի և ինքն քանէ այլ կու ելանէ. և լաւն այն է որ նռան գունով լինի»։

Ըստ № 28 բացատրության մռնում է ոսկու գույնը։

Զուճաճ — գրած է նաև զճաճ — տե՛ս ապակի։

Զուֆր — փառ, սեր, որ համարվում է հեղուկների երեսին։

Զպունգառ — լտ. spongarium, հն. Σπογγος, հյ. սպունգ։

Զրթէին — Թրք. Zarda — լեղի, ռս. желчь. իշու զրթէին — իշու լեղի։

Զօհալ — արճճի գաղտնագրված անուններից մեկը։

Զօհրայի[1] խոտ — «է խոտ մի, որ ասի զօհրայի խոտ և բուսանի ի լերինս

---

[1] Բառացի նշանակում է Լուսաբերի (Վեներայի) խոտ, փոխաբերական մտքով՝ պղնձի խոտ։

և ի ջրեղերըն և պտուղն նման է բրադ և տերևն դեղին» (200)։ Գուցե լինի գահարայ (Baccharis), որ հիշատակված է ԱյՀԲ՝ Ամիրդովլաթի գործից առած։

Զօհրէ — պղնձի ծածկանուններից մեկն է։

Էմադիտէս — տե՛ս էմատիտէզ։

Ըզլէմիայ — տե՛ս ազլէմիա։

Ըմպեղ — կրակի վրա դրվող կավե աման, որը գործ է ածվել նյութերը չորացնելու համար։

Ընկերադ — միություն սիրող, այլ նյութերի հետ շուտ միացող։

Ընտանի ոսկուծ — արծաթի գաղտնագրված անուններից մեկը։

Ըռադ — տե՛ս բրադ։

Ըռաստըհ տաշի և ըռաստուհ — տե՛ս թութիայ. գրած է նաև ըռաստահ, ըռաստայ և ըռաստըհ։ Ծարիր, թուրք. ըռասթուք թաշը. Ֆր. Cuivre brûle թմ. a, 144բ. ունի. «Ղյ. ըռաստուխ, արաբ. նուհասմուխըրք, պրս. միսսուխտայ։ Ինքն այրած պղինձն է»։ Ամասիացին ունի ռասուխտուճ, որ է ռասուխն, այրած պղինձն է ինքն»։ Տե՛ս պղինձ և ռասուտ։

Ըռուադել — պրս. րավեգ — պարզել, զտել։ Գրս. բռ. «րավեգ՝ զուտ կամ պարզված (թէ՛ գինի, թէ՛ մեղր և թէ օշարակ)»։

Ըռխսաս — տե՛ս ըռսաս։

Ըռոշնայ — տե՛ս մարդաժիթայ։

Ըռուպ — 1. դոշաբ, բէքմէզ։ Խաղողի և այլ պտղոց մուր։ 2. Քառորդ մասն «ըռուպ նուկլի» — նուկլու մեկ քառորդ մասը։

Ըռպաս — գրած է նաև ռպաս, ռուպաս։ Նշանակությունը պարզ չէ։ Հիշված է միայն արծաթ ստանալու պրոցեսի մեջ։ Արծաթագույն մետաղ ստանալու համար գործածվող աման է, կամ մի տեղի անունն է, որտեղ գտնում են այդ ամանը։ «Եւ դիր ի դամս կրակն և հան ի դամսէն, և դիր ի ըռպասն, նա ելանէ ըռպասէն Ծ մաքուր և հալած արծաթ» (գրված է լուսնի գաղտնագրանշանով)։

Ըռսաս — № 17 և 22 բացատրությունների մեջ հիշվում է իբրև մարդաժիթայի յոթ գույներից մեկը։ Նույնն է, ինչ ըռխսաս-ըռխսաս, որ է կլայեկը (Անգ. Անգ. 2950)։

Հմմտ. հասիտ — երկաթ։

Ըռսուխտ — գրած է նաև ռախսուտ և ռասուխտ։ Այրված պղինձն է։

Ըռուպի — № 17 և 22 բացատրությունների մեջ հիշվում է իբրև մարդաժիթայի յոթ գույներից մեկը։

Ըսրինճ — տե՛ս պղղուն։

Ըսփիտաճ — տե՛ս սպիտաճ։

Ըրադ — տղրուկ։

Ըրաճ — ոնդիկ։ Տե՛ս նաև՝ րահճ։

Թադմեղ անել — գործածված է միայն մեկ տեղ՝ «դիր ի թադմեղ անելու դարայն» (§ 99). բառս պարզապես գրչի սխալ է, նորոգրի ե-ի և շ-դ-դ շփոթություններից առաջացած։ Պետք է ուղղել՝ թաշմիշ։

Թ ա թ ի ր—Թրք. tatir—մաքրել: Տես մաքրել:
Թ ա թ մ ի մ—տես ադտոր:
Թ ա թ պ ի ր—Թրք. tadbir—հնարք, միջոց, գործողության կերպ:
Թ ա թ ր ի—տես ադտոր:
Թ ա լ ի ն՝ գրած է նաև Թալյն—տես տալյն:
Թ ա ղ ի տ անել—տես մաքրել:
Թ ա ղ տ ի ր—Թրք. tagtir—Թորել, զտել, մաքրել:
Թ ա ն ա ք—տես արջասպ: «Թանաքն՝ որ է արջասպն» (§ 261):
Թ ա ն ո ւ ք ա ր—ոսկեբրակ. լտ. Borax, ռս. Бура: Ամասիացին նյութիս ծանոթ է Թանուքար (864) և մաքի-սադայ (2080) անուններով: Հալելուց հետո դառնում է անգույն ապակու նման և կոչվում է «կրացեալ Թանուքար»:
Թ ա ն ք ի ս—քամելու, Թորելու միջոց: Քաջ. Գ. Բ. ունի. «Թանքմի՝ պարկ՝ մածուն քամելու համար»: Հմմտ. Թավթ:
Թ ա շ մ ի շ անել—տես մոմել:
Թ ա պ ա շ ի ր—գրած է նաև դապաշիր. տես կաւիճ:
Թ ա պ ի թ—տես շնչահանել. բռ. «Թապիթ անելն այն է՝ որ մտանէ ի կրակն և չի ծխայ»:
Թ ա ռ թ ե ր, գրած է նաև Թարթիռ—գինեքար, «գինոյ մրուր»: Ֆր. tartre, ռս. винный камень:
Թ ա ս ա յ ի տ—տես մաքրել:
Թ ա ս խ ի տ ա ն ե լ—գրած է նաև Թասղին. տես մաքրել:
Թ ա ս ղ ի տ ի դ ա ր ա յ—մաքրելու (սայտելու կամ Թասայիտ անելու) ապակյա կամ կավե աման: Ձեի մասին տես բաց. № 32:
Թ ա վ թ—քամելու միջոց, որի ինչից շինած լինելը պարզ չէ: «Եւ քամէ ի վերայ զգիպակն Թավթով» (115):
Թ ա տ պ ի ր—տես Թաթպիր:
Թ ա ր թ ի ռ—տես Թառթեր:
Թ ա ր ք ի պ—tarkib—բաղադրություն, կազմություն:
Թ ա ք լ ի ս—Թրք. taklis. կրացնել: Տես կրացնել:
Թ ե փ ա ւ ո ր շ ա պ—տես ամիաթ:
Թ ե զ ա պ—ժանտաջուր, արքայաջուր, Թեզջուր. ռս. царская водка:
Թ է պ ո ւ ր—փետուր:
Թ է պ ր—տես ոսկի:
Թ է օ ն—տես ծծումբ: Հն. Θειον.
Թ ը ն լ ա մ ի շ ա ն ե լ—tən—կավ, Թընլամիշ անել՝ կավել, կավածեփ անել: «Եւ բերնի բոլորն Թընլամիշ արայ» (§ 58):
Թ ի Թ ի ա յ—տես Թութիայ:
Թ ի պ ր—տես ոսկի:
Թ լ ի փ—գրած է նաև Թլփն—նստվածք, մնացորդ, տիղմ:
Թ մ ե լ—նվազել, Թուլանալ, քչանալ, կրակի զորությունը պակասել:
Թ ն ք ա ռ—տես տինքար:
Թ ն ք ա ռ ա ղ—տես տինքար:
Թ ո թ ի ա յ—տես Թութիայ:

Թ ո ւ ա ն ք ն—(§ 258) տես թվայք։

Թ ո ւ թ ի ա յ—գրված է նաև թոթիայ, թիթիայ և թիւթիա. լա.tutia, collyrium (ցինկի օքսիդն է)։ Պետ. Թնգ. № 730 ձեռագիրը 145 բ-ում գրում է. «Հյ. թութիայ, արաբ. թութիայ, պրս. թիթիայ, ինքն քերիճ է և ծանդր կանանչ լինի և նաւոր (նա որ) հով է՝ չոր է»։ Ամասիացին գրում է. «ինքն մասանի է և սուգծու այլ կու լինի և հնտի այլ, և քրմանի այլ կու լինի» (895) նույն տեղ. «Աղպար, ինքն թութիայ է» (88), և «Անապած ծարուր, որ է թութիան» (264)։ № 24 բացատրությունը յոթ տեսակ թութիա է զանազանում։

ԱԲ. ունի. «թութի աչաց. տես ռասարգ թաշը»։ Զ-իր Դ. 45 բ ունի՝ «Եւ է քար թութիայ, որ զանազան գունով. մինն է կանանչ և սուր, միւսն այլ է կանանչ հերձական և կոչի եղմառուզար, և նոյն գտանի միւսն այլ որ գայ ի Հրեաստանէ, և է միւս այլ դեղին որ կոչի չիմէ մամի. ազուրիս մին գոյն ունի և է քար երկնագոյն և նման է ի բուրգիլ և ունի ծին-ծին որպէս հատք ոսկոյ, և է այլ դեղին և զանազան գունով որ կոչի ճեառտի, և է միւս այլ որ կոչի մանուչեու»։

Թ ո ւ լ ա յ ի կ ի ր—տես կիր։

Թ ո ւ լ ա ս ո ղ—անապի ծածկադրած անուններից մեկը.

Թ ո ւ լ պ ա ր ի—վայրի բակլայ. լա. Nimphaea nelumbo. «Է և խոտ մի, որ ասի թուլպարի, որ է վայրի պակլայ և տերեն նման է պակլի և ճղերն սև է որպէս թանաք և թէ բանես զինքն սևացնէ զձեռքդ և հագիւ թէ ելանէ և բուսանի և ջրի ակերն և եղերքներն» (§ 192)։ Ամասիացին ունի և պ ա խ ի լ ա յ ի ղ պ տ ի անունով։

Թ ո ւ խ տ—կշռաչափ։ «Եւ մի նուկի պղնձեղէն մի թուխտ լիցի» (Զ-իր Դ. 13 ա)։

Թ ո ւ ր ի ն ջ ի ջ ո ւ ր—գրած է թուրունջի ջուր. լա. Pomum aurantium, փորթուգալ։ Չշփոթել թուրունջ խոտի հետ։

Թ ռ չ ն ա կ ա ն ք—այն նյութերը, որոնք կրակի ազդեցությունից գոլորշիանում կամ ցնդում են։ «Եւ թռչնականք այն կոչին, որ ի հրուն փախցեն» (Զ-իր Դ, 17 բ)։

Թ ռ չ ո ւ ն—տես շունչ, հոգի. «Թռչունք են որ թռչին և ոչ այրին» (§ 239)։

Թ վ ա յ ք—ուղիղ ձևը՝ թուայ։ Ֆր. foyer կամ fourneau։ Վառարան, որի մեջ դնում են ջերմացնելու նյութը։ «Եւ դիր ի վերայ թվայքին և վառէ ի ներքեն կրակ» (§ 212)։ Այսպես է կոչվում նաև կասկարան թ ա վ ա ժողովրդական բառով։ ՆՀԲ։

Թ ր ի ք—անասունների աղբ. տես փէին, կղի։

Թ ր պ ա ք—տես ծծումբ։

Ժ ա ն կ ե ա ռ—պղնձաժանգ։

Ժ ա ն տ ա ջ ո ւ ր—տես թէզապ։ «Սակայն եթէ լուծցի ի ժանտաջուրն անուշադր կարի իմն բարկ լինի, մինչև ընդմտեալ մասունս ոսկոյ քայքայէ և լուծանէ զայն» (Զ-իր Բ, § 2)։

Ժ ա ռ ա տ—տես մխնատխ։

Ժ վ ա յ—տես սնդիկ։

Ի ա ր ա ն—տես ժանկեառ։

Իմաստասիրաց շաղախ — տես կաւ իմաստասիրաց և մուրատ վարդապետության:

Իշուրպէ — գրած է նաև շուրպէ: Մի պտղի միջին լատիններեն անուն, որ չի պարզվում: «Եւ զջուրն պտղին, որ ի լատին իշուրպէ կոչի» (§ 261):

Իջուցանող — երկու մասից բաղկացած կավե ամաններ, որոնց նկարագրությունը գտնում ենք Դ Զ-րի 26-ում, այսպես. «Ածի աման մի որ իջուցանող կոչի, որում ձեն և կերպն բոլոր է և արձակ և սակաւիկ մի խորու և մէջն կա քինթ[1], որ իջանէ ի վայր այնչափ երկայն, որչափ երկայնութիւն մատին մի և քըթին այն վերի գլհն որ ամանն է արձակ է և ներքինն նեղ յոյժ. և ընդ ներքոյ ամանն այն որ իջուցանող կոչի՝ կոկ յոյժ. վասն զի մի արգելցի ինչ ամենևին ի յամանն, զի մի իջցէ յատակն ամանին, և շինի ամանս այս ի կաւէ բրտի և հարկ է զի յոյժ կատարեալ թրծեալ լիցի, որպէս ասացի յաղագս պարզարանին: Եւ եղիցի աման մի այլ զի դիցի ի ներքո ամանիս այս ի կաւէ բրտի և յոյժ թրծեալ լիցի որում կերպն սինաձև է որպէս տուփ քաղցրուց բոլոր և ոտքն տափակ: Եւ այս Բ ամանս հանդերձ իջուցանող կոչին, որո կերպարանն այս է՝

Իսուպաս — տես ըսպաս:

Իւտլ(են) — ուղղական ձևը, երևի՝ իւտլի—նյութի անհասկանալի անուն:

Լազվարդ — կապուտաքար, պարտեզքար, ջշգաքար. լտ. Lapis lazuli, ռս. лазуревый камень, հյ. գոճագմ Բժ. a 148բ ունի. «հյ. արբ. պրս. լաճուարդ: Ինքն քար է և կապուտ և ի գետնէն ելնէ և լովլի. աղէկն ի կրակէն ելնէ: Ամասիացին գրում է՝ «հաճար ի լաճուարդ ասոր պարտեզքար կասեն» (1472):

Լաթերօն — տես բորակ: Բռ. «լաթերօն պորա հայոց»:

Լամբիկ գրած է նաև ալամբիկ: Խողովակավոր աման, որը դրվում է դդմի վրա շնչահանության ժամանակ: Սրա մեջ բարձրացող գոլորշին սառչում է և լցվում նրան հագցրած շշի մեջ: «Այս պարտ է գիտել, զի Դ ցեղ են ամանք որ ալամբիկ կոչին, զի են ալամբիկ որ պարտ է զի ունիցին կտուց, որ է լուլա արձակ և այս է վասն շնչահանելոյ օծնիչ և նշատիր, և են

---

1 Նկարի քառակուսաձև տարածությունը դրսից հագցվող տուփաձև ամանն է, իսկ ներսինը՝ քիթ ունեցողն է: Նկարը ձեռագրի մեջ զետեղված է վերջին տողերի կողքին:

այլք դի պարտ է որ ունիցին լուլայ նեղ և անցուկ, և այս է վասն շնչահանելոյ դշունչսն որ ներկեն... և ալամբիկն պարտ է դի լիցի պրուճ կթղայով ի յուր լցցի մին մասն ջուր սուր և ալամբիկն պարտ է դի բերանն դդմին լիցի» (51 ա, Զ-իր Դ.)։

«Եւ ի վերայ բերանին ալուտելին դիր զաման ավիկէ որ ալամբիկ կոչի, որոյ լիցի շրթունքն արձակ, դի ի վերայ ներքո ամանին շրթացն հեծցէ և ունիցի ծակ մի փոքր ի կատարքն որպէս կտուց» (Զ-իր Դ, 55 ա)։

Լայեխթարեխ — մի նյութի անհասկանալի անուն։

Լասվոր — տես ծծումբ։

Լեմնակաւ — կաւի մի տեսակը։ Տես կաւ։

Լեռան աղ — հանքային քարաղն է։

Լեսել — տես լոսել։

Լիդարիտուշ — տես մուրտասանկ։ Լտ. Lithagirius—քարմարցան։

Լիվր — կշռաչափ։

Լիտարնա — տես արջասպ։

Լիփ — արաբական բառ, Lif, վուշ, խծուծ, Ֆր. Lin, filasse étoupe. Թուրքական փոխառություն (տես Աճ. Թրք. բռ.)։ Ամանների բերանները փակելու համար է գործածվել։

Լոկնել — տես լուկնել։

Լոսել — գրած է նաև լեսել,—փշրել, մանրացնել, տրորել, աղկել։ Բառս ունի ԳԽԲ. «բլիրով ծեծել և լոսուք՝ մանրուք, փշրունք»։

Լուլ կաթ — էլեքսիր։ Տես աքսիր։

Լուկին — կաւ իմաստասիրաց, շաղախ, որը պատրաստվում էր խամ կրի, աղի, գաճի, նապաստակի բրդի ու ձվի սպիտակուցի խառնուրդից և գործ էր ածվում կրակի վրա դրվող ամանի բերանը ծեփելու համար։ **Լուկին** գոյականից կա **լուկնել** բայը՝ ծեփել իմաստով։

Լուկնել — կամածեփ անել։ ԳԽԲ. ունի լոկոնել—աղտոտել, ցեխով լոկոնեց։ Լոկոնուիլ աղտոտիլ։ Ցեխի մեջ լոկոնուած ոտնամաններ։

Լուսաւոր ակ — արծաթի ծածկանուններից մեկը։

Լուսին — արծաթի ծածկագրած անուններից մեկը։

Լպան — տես կայեքար.

Լօկուն — տես լուկին։

Խաթմի — տես տուղտ։

Խաթրել — տես ղաթրել։

Խալդըռ — տես կալկուդար։

Խախանդ — հանդխտ. մեղմ, թույլ, նվաղ։ Խախանդ կրակ՝ նվաղ կրակ։

Խասլիաթ — հատկություն, բնություն։

Խեճեպ — կճեպ, կեղև։

Խեցատի աման — թրծած կավե աման։

Խթմի — տես տուղտ։

Խյթոցք — խոյթ, խցան։

Խնդմնդ քար — տես մխնատիտ
Խորվկեկ — խորանիստ, խորը, խորունկ։
Խուրսաֆ — տես ոսկի. հն. Χρυσιον—ոսկի։

Ծաղիկ — մոխիր։
Ծաղիկ սպիտակ — անագի ծածկանուններից մեկը։
Ծայր — մեկ քառորդ ժամ, 15 րոպե։ «Երբև չորեքակն պահի մի կամ ծայր մի»(Զ-իր Գ, 20 բ)։ Պահ գործ է ածվել նաև 4 ժամ իմաստով, ըստ որի ծայրը մի ժամ է։
Ծարիր — ծարրաքար, քըխլն, քոհլ, հունաքար, հոնից քար (յոնից քար). լտ. stibium antimonium. № 22 բաց. մեջ հիշվում է իբրև հողի չունեցող յոթ քարերից մեկը։
Ծարրի մարմին — արճճի գաղտնագրած անուններից մեկը։
Ծլալեղ — տես արջասպ։ Բռ. «ծլալեղ որ է դաճ»։
Ծծումբ — մեծ մասամբ գրած է ծծում։ Լտ. Sulfur. Ունի բազմաթիվ անուններ—թէօն, թրպանք, քպրիթ, գայլ, առիւծ, սուլֆուր, լամար կարիճ, ղառուս։ Բժ. a 153 բ. գիտե երկու տեսակը—«ծծումն երկու ազգ է, դեղին և սպիտակ կու զարնէ քիչ մի։ Դեղինն աղեկն է»։
Ծղր — շատ մաքուր։ «Ծղր այսինքն յոյժ մաքուր» (§ 272)։
Ծովու փրփուր — լտ. Alcyonium. «կամ թէ արիր այլ ուրիշ աղերով՝ կամ նաթռոնով, կամ անուշանի, կամ ծովու փրփրով. կամ ապիկի աղով, կամ պարուտով, կամ շպով. և այս Ե աղերս մեկ են և ամենն ի գործ կու մտանեն (§ 115)։ Ամասիացին գրում է՝ «Զապատ ըլ պահր. որ է ծովու փրփուրն և ինքն Ե ցեղ է. լաւն այն է որ թեթև ու սպիտակ լինի»։
Ծվէ — պակասորդը, պակասածի չափը։ «Տես թե ինչ է պակսէր նա՝ դու յաւելացուր իւր ծվեն» (§ 36)։

Կաթն կուսից — սնդիկի գաղտնագրած անուններից մեկը։
Կալեքար — լտ. Salsola, ռս. сода, բժ. a 156 բ. ունի «հյ. կալէքար, պս. քալէքար։ Ինքն խոտ է այրի դէտ կապուտ քար լինի»։ Ամասիացին ասում է. «Ինքն քար մըն է սուգծու և լաւն այն է որ շուտ տրորի. և ի աւշնանէն սուգուի և ինքն ներկարարներուն բանն կու մտնէ» (1740)։ Մեր § 141-ի մեջ ասվում է. «Եւ թէ կամիս հութմ շինել, որ է ղալէքար և լինի ի ծառէ մի, որ է աղի։ Եւ դու արայ փոս մի ներքև ծառին և կրակէ գծառի պտան, որ և հալի. ջուր մի իջանէ ի փոսն և պաղի և այն է»։ Ձեռագրերի մեջ կոչված է նաև ղալի աղ, ղալի, հութմ, հեհալամ, լպան, չօղան, փարֆիոն, սալարգարի։
Կալկանդիս — տես գալգանդիս։
Կալկանդուժ — տես գալգանդուժ։
Կաղճին — կավ, կավային հող։
Կամար — արծաթի գաղտնանուններից մեկը։
Կամինէ — գրած է նաև գամին—ամանե։ Սրա մեջ են օքսիդացրել շունչ կոչված նյութերը։ «Եւ են ամանք որ կամինէ կոչի և շիշ են, և պարտ

է գի լեցի ոլպէս գեղէցն շրջեալ և այսոքիկ սպաննեն զշունչսն պարգեալ և վերացուցեալ»։ (Զ-եր Դ, 51 բ)։

Կանգնեցնել — 1. դադարելի դարձնել. օրինակ՝ «Զանդիկն և զկարիճն որ գործեն ի բաղում տեղիս որ դադարելի լինի կանգնեցնէ զկլայէկն զկարիճն նշատրի ջրով, որ ինքն ընդ ինքեան արձակի ի յաղիքն կամ այլ տեղի» (§ 217)։

2. Գոյացնել, առաջացնել, ստացվածք տալ։

Կանջիրակ — լտ. Carthamus tinctorius։ Բառս ունի Զիթ. հայ. ոսկէհանք «կանջրակ—Corthamus»։ Համազասպ Սափարյանը Բուս. ունի կանճրակ—Colza. Վայրի կաղամբ, լտ. Brassica Oleacea. ԳԻԹ. ունի՝ «կանճրակ մշ. մն.[1] բարդ ծաղկով տունկ մ'է, մինչև մեկ մեթր բարձրությամբ, ծայրը փշոտ և ատամնավոր տերևներով։ Արևածաղկի նման հատիկներ ունի, որ կխաշեն, սանդի մէջ կծեծեն, կաթը կհանեն և անով պահոց ապուր կամ ուրիշ կերպ կերակուրներ կշինեն։ Ըստ Աթինյան, տունկերը հտ. Ա, էջ 3—7 Carthamus tinctorius».

Կապել — նստվածք առաջացնել, նստեցնել։ Բ. ձեռագրի մէջ կապել բառի փոխարեն շատ անգամ գործածված է կալուցանել։

Կապիտալուլաւ — կարդալ՝ կապիտօլօ—բուսական մոխրի աղն է։ Տես կալիքար։

Կառակայ — տես Թիվայք։ «Եւ ամենն որ կառակայ կոչի է փուռն» (Զ-եր Դ, 52 ա)։

Կավնքիայ — տես խալիղոն։ Եւ աստրային և կամնքիային երկոքեանսն այս խալիղոնն է ծովայինք և «ի լաղին այսպէս կոչի» (Զ-եր Դ, 53 ա)։

Կարէն — մն. գրուբիկ, փարչ. առաջացել է կարուրայ—միջաման բառից (Արմտ)։

Կարիճ — ծծմբի գաղտանուններից մեկը։ «Կարիճ, որ է քպրիթն» (բռ.)։

Կարմիր աղ — հնդկական աղ։ Ամասիացին գրում է. «Եւ Ե ցեղն՝ հնդի է և կարմրամեռ է», իսկ հնդի աղը № 22 և 17 խրատների մէջ կոչված է մլհնդայ. Բ. Զ-րի համապատասխան կետում գրած է «հասարակաց աղ», որը հավանական չէ։

Կարմիր մոմեղեն — ոսկու գաղտնանուններից մեկը։

Կաւ — ալքիմիկոսները մի քանի տեսակ կավերի էին ծանոթ՝ բորակավ, լեմնակավ, հայկավ, կաւ իմաստասիրաց և այլն, որոնցից վերջին երեքը նույն իմաստն ունեին և գործ են ածվել ամանների բերանը ծեփելու համար, իսկ բորակավից շինել են ամաններ։

Կաւ իմաստասիրաց — կոչել է նաև կաւ գիտնոց, չամուռ գիտնոց և այլն։ Պատրաստվում էր այսպես. վերցնում էին սովորական կավ և, քարերից լավ մաքրելուց հետո, նրանից ցեխ էին պատրաստում հետը խառնելով իր մի քառորդի չափով փայտի փոշի, թեմեն աղ և մի քիչ էլ ձիու աղբ։ Այնուհետև վերցնում էին բուրդ և, մանր մկրատելուց հետո, խառնում էին ցեխին, և շատ տրորելուց ու հնաց-

[1] Մուշի և Վանի բարբառներում։

նելուց հետո գործ էին ածում ամանները ծեփելու համար, որպեսզի կրակի ազդեցությունը ուժեղ չլինի: Կավը լավ պահելու համար ձեռագրերում խորհուրդ է տրվում այն պահել թաց վիճակում և պարբերաբար անձել, որպեսզի էլ ավելի լավանա:

Կ ա ւ ի ճ — կրի բնածախտն է, լտ. creta: Ձեռագրերի մեջ մեծ մասամբ գրած է թ ա պ ա շ ի ր:

«Իմայ, որ (թարաշիր)— B ցեղ է՝ մատանի և բուսծու: Մատանին նմանու երկրէն բերեն, կաւ է, և ցամքեցնելով ես շինեն և բերեն յայս աշխարհս: Սպիտակ այլ այս երկրին բուսծու է, որ է սուսամն սպիտակ» (§ 146):

Կ ա ւ լ կ ա ւ դ ա ր — գրած է նաև խ ա լ դ ը ռ, ղ ա լ ղ ա տ ա ր, ղ լ ղ ա տ ա ր, գ ո ւ լ ն դ ա ռ: Ֆր. Colcotar, կ ո լ կ ո տ ա ր:

«Եւ ղալղատար այն զաճն է, որ դեղին լինի և պ. զաճի շթուրտանտան կասեն և լաւն այն է որ մարի լինի» (Անգ. Անպ.):

Կ ե ն դ ա ն ի — սնդիկի գաղտնանուններից մեկը:

Կ ե ն դ ա ն ի ա ր ծ ա թ — սնդիկի ծածկանուններից մեկը:

Կ ե ր ց ա ւ — քաղցկեղ, կեղցաւ, ժանգ, ռս. гангрена:

Կ է ս ճ ա շ ո ց — նախաճաշ, որը համապատասխանում է հայկական առավոտյան ժամի երեքին (մեր հաշվով՝ 9—10 ժ.):

Կ է օ կ է ր չ ի լ է — թրք.—բորակ: Տես բորակ:

Կ թ խ ա յ — կթղայ, ըմպանակ, թաս: Մոմելու և կապելու համար գործածվող կավե ամանի տեսակ:

Նրա ձևի մասին հետևյալն է գրում մեր № 31 բաց. «Կթխաներու ոքն որպէս ղարային լինի, որ պջուրն կու քաշեն՝ գմբէթաձև, և բարձրութիւն նորա քան զկէս ղարային պօյն: Եւ վերի կթխայն մոնայ ի վերայ ներքի կթխին դրուցէ, և ներքինն կապված լինի և վերինն՝ ոչ: Եւ կթխաներն մոմելու համար պիտի և կապելու»:

Կ ի լ Ե ր մ ա ն ի — տես հայկաւ:

Կ ի ր — այսպես է կոչվել կիրը և գաճը միասին. բժ. a 158 ունի. «հյ. կիր, արաբ. նուրայ, պս. քաճ: Ինքն B ազգ է՝ Ա բուռն է և Ա-ն կիր է»: Ձեռագրերի մեջ կա նաև «ճիր» ձևով: Մարած կիրը անվանվում է «սնուցած կիր»:

2. Բուռ. Cypsum, ալչու, գաճ, գիպս: Կ ի ր բառը լայն իմաստ է, տացել, մի շարք մարմիններ կրացվում են: Այդ մասին տես § 187: (Վառն կիր անելոյ մարմնոց յոր և իցէ) և գիտեն կիր իմաստնոց (տես § 187: Հմմտ. կավ իմաստնոց): Ծանոթ են կրաջրին (դրհանի ջուր), կրի աղին (№ 26 բաց.):

Տես գ ն ջ ո ւ փ ր, որը կոչվում է կ ա ր մ ի ր կ ի ր:

Երեմիայ, բառգ. «բուռն, կիր կամ գաճ»:

Կ ի ր ա ն ե լ — տես կրացնել:

Կ ի ր ա կ ի — ոսկու գաղտնանուններից մեկը:

Կ լ ա յ ե կ — տես անագ:

Կ լ է տ ո ւ ղ ի — կալաքարի աղն է, որ կոչվում է նաև ղ ա լ ի ա ղ:

Կ գ է — անասունների աղբ. բառս ունի ԳԻՌ, կուղի ձևով:

Կշիռ իմաստասիրաց — Նուրբ կշեռք, որով քաշում էին թանկարժեք իրեր և դեղեր:

Կողբացի աղ — Կողբ գյուղի հանքերից ստացվող քարաղը, որը կոչվում է նաև սալճեմայ:

Կովու եղ — կովի կաթից պատրաստած յուղ:

Կուպայ — խուփ, հն. γυπη. «Խոռոչավոր խուփ. բառս ունի ԳԻԲ. կուպպայ— ջուր խմելու հատուկ հողե բաժակ»:

Կուպր — կշա. լտ. bitumen. Բառս ունի ՀՀԲ. «Է նիւթ ինչ մածուցանող և ծծմբային, որ ի հուր մերձեցեալ սաստիկ բորբոքի, և հանէ զհոտ գարշ, և զբոց զարհուրելի: Եւ են սորա չորս տեսակք. մինն է կարծր և սեաւ իբրև զածուխ, որ գտանի Ասորեստան՝ ելեալ յերկրէ իբրև զկոշտս հողոյ, կամ իբրև զածուխ զարբնաց. որ հալեալ և հեղեղեալ ծեփեն զնաւս ներքոյ և արտաքոյ առ ի խցել զճեղքս և զծակտիս... ռամկ. սև ձիւթ, և տաճկերէն զիֆտ: Երկրորդ է իբրև զթանձրամած կաւ. կամ շաղախ, որ ելանէ ի ծովէն ասփալտայ կամ ասպառ. այսինքն լիճ կպրոյ: Երրորդն է հեղանուտ իբրև զձիւթ և լինի ի զԱկինթոս կղզին և առ աշխարհաւն բաբելացւոց, և վասն այսր մասնաւոր անուամբ յորջորջի կպրաձիւթ: Իսկ չորրորդն է հեղեղուկ, պարարտ և ձիւթային, որ ելանէ ի Սիկիլիայ, որ բնակիչք տեղւոյն ի գործ ածեն ի նիւթ ճրագի փոխանակ ձիթոյ»:

Կպրաձիւթ – կուպրի մի տեսակը: Գործածվել է ծակոտիներ փակելու համար (Թերատ 37):

Կջեայքար – ճիշտ ձեր՝ կճաքար: Կուճ, մարմարիոն:

Կտմալ — մեղմորեն եռալ, եռալու թույլ աստիճանի մեջ մնալ:

Կրակ — մի քանի տեսակ կրակներ էին արվում նյութերը տաքացնելու համար. մեղմ կրակ անելու համար ամանի տակ դրվում էր ճրագ կամ կանթեղ, որպեսզի «դնես ձեռքդ ի վերայ ղարային դիմանայ, և չի այրի ձեռքդ» (§ 210): Մի քիչ ավելի ուժեղ կրակ ստանալու համար վառում էին աթար (կղի, աղբ), իսկ միջակ և թեժ կրակների համար՝ փայտ: Այս մասին № 12 ձեռագրում ասված է. «և կրակքն են զանազան, զի է կրակ ղաթրելոյ, և այլ է կրակ մոմելոյ, և այլ է կրակ թասղիտի, և այլ է կրակ տամսի, և այլ է կրակ բաղանեաց, և այլ է կրակ կիր անելոյ, և այլ է կրակ հալելոյ: Բայց մոմելոյ, և ղաթրելոյ և բաղանեաց միապէս են՝ որպէս արեգական տաքութիւն լինի: Նաև կապելոյ կրակն կարի ես կակուղ պիտոյ է.այլ և վերացնելոյ և սայատելոյ մեղմ պիտի յառաջ. և էն, որ ճրաք դնեն ի փուռն և այնու ղաթրեն: Բայց դայս իմայ, զի ղաթրելն զառաջին քանի մեղմ բռնես կրակն՝ լաւ է. և կապելն, և մոմելն, և բաղանիքն միշտ կակուղ լաւ է՝ որպէս թխսանիստ հաւու տաքութիւնն»:

Կրակի դերի և զորության մասին ուշագրավ են նաև հետևյալ հատվածները.

«Եւ վասն ներքեն գործելու կրակ և այնպէս լինի կրակին զորութիւն, որ դնես ձեռքդ ի վերայ ղարային դիմանայ և չի այրի ձեռքդ» (§ 210): «Դիր զինքն ի վերայ խիստ կակուղ կրակի քան զարեգական չափ» (§ 104):

«Եւ վառէ ի ներքին կանթեղ և կանթեղի պատրոյքն հաստ չըլինի, որ տաքանայ խիստ» (210)։ «Եւ վառէ զներքին որպէս ապրի կրակն» (228)։ «Եւ եփէ զնոտիկն այդ ջրովն ի վերայ կակուղ կրակի» (260)։

Կրակի տևողության համար կա ծայր՝ 1/4 պահ, որը մի ժամ է։ Գաբրէլի մոմ եփելու չափ—ուժեղ կրակի մասին գրած է՝ «կրակն արա որպէս երկաթ հալես»։

Կրակաց ծաղիկ—1. Նյութի անուն, ինչ լինելը անորոշ։ 2. Ածուխ փայտի։

Կրացնել—նաև կիր անել—1) տապկել, ֆր. Calcination, ռուս. Прокаливание, обжигание։ Մետաղները և հանքային այլ նյութերը ենթարկել բարձր ջերմության, որպեսզի ցնդող մասերը նրանցից հեռանան։ Կրացնելու ժամանակ մետաղներից շատերը կորցնում են իրենց փայլը և դառնում են փոշի։ Միայն մի քանի մետաղներ, ինչպիսիք են՝ ոսկին, արծաթը, լուսնոսկին և այլն՝ պահում են իրենց փայլն ու գույնը։ Մետաղները ենթարկվելով բարձր ջերմության, իրենց մեջ ընդունում են թթվածին, իսկ կրային քարերը կորցնում են իրենց մեջ եղած թթվածինը։ 2) Կրային քարերը սաստիկ ջերմությամբ դարձնել կենդանի կիր։

«Կրացնելն է մարմիններուն այրելն յոյժ բարկ հրով և աղիվ, զի զատեսցին ի նոցանէ ապականող բըկուրդն և մնասցեն մաքուր իբրև զկիր» (Զ-իր Դ, 38 բ—39 ա)։

Կրուճ—պղնձի դաղտնանուններից մեկը։

Հաթըփ—արծաթի դաղտնանուններից մեկը։

Հաթրել—տես դաթրել։

Հաթփ—թաւրնջակ, թաւշածաղիկ. թուրք. դայտիֆե չիչակ։ Մի տեսակ բույս. ֆր. Amarant.

Հալըեթ—Euphorbia peplis բջ. ԲՌԳ համարում է աբարբի կամ ափարփի, կաղանչան, կաղնչան։ ՆՀԲ Աբարբի բառի դիմաց գրում է՝ «տես ափարփի», իսկ ափարփի բառը մոռացությամբ չի դրել։

Հալիզոն. գրած է նաև խալիզոն—խխունջն է (կամ խղնջուն), խեցեմորթ. ռս. улитка, ֆր. Escargot։

Ամասիացին գրում է՝ «Եւ զցամաքին հալիզոնն, որ լեռներուն մէջն կու լինի և ի ծառերն կու կպչի. այսոր հայ. կօխլօնջ կասեն» (1410)։

Հալիլաճ—բալուտ, վայրի կաղին, հն. Βαλανος: Ամասիացին գրում է. «Դեղին հալիլա որ յ. հալիլաճի ասֆար կասեն և պ. հալիլա ի զարտ կասէ և թ. սարու հալիլայ կասէ»։ Կ. Բասմաջյանը թարգմանել է Myrobolan jaune:

Հալիչ—երկաթե կամ կավե աման՝ նյութերը լուծելու կամ հալելու համար։ Ջեի մասին ունենք Դ Զ-րի 27բ. տեղեկությունը, ըստ որի՝ «Աման մի որ հալիչ կոչի և էր ամանն այն որպէս տաւփ քաղցրուց, բայց խուփն լիցի սակաւ մի գումբէթաձև։ Ծինի ամանս այս կաւէ. բըտի, բայց վասն այս ջրիս գործելոյ՝ միայն երկաթի լիցի։ Եւ ունի ի բերանքն այնպէս շուրթն որպէս տըփի քաղցրուց, նոյնպէս և խուփն երկաթի ըստ իւր չափին այնպէս լիցի որպէս տըփի, զի վերայ ագանիցի, բայց սակաւ մի գումբեթաձև լիցի որպէս վերոյ ասացի»։

Այս ամանի մեջ էին լցնում հալման կամ արձակման (լուծելու) ենթակա նյութը, բերանը կուպրով կամ սև ձյութով փակում և մի քանի օր դնում էին աղբահորի մեջ, որտեղ նյութը, քացախի ներգործությամբ, լուծվում էր հեղուկի մեջ։

Հալղիս—տես արջասպ։

Հաճար ըլ նախաս—տես տահնաճ։

Հաճար ըլ նուր—տես մարգամիթայ։

Հաճար ի լաճուարդ—տես լազվարդ։

Հայկաւ—տին Էրմանի, կիլ Էրմանի, լտ. Bolus armenius, հն. Βωλος αρμενια. կարմրորակ կաւ է։

Հայոց ծով—Վանա լիճը։ «Լաւն հայոց ծովինն է, որ է Վանայ բորակն» (Խրատ 13)։

Հայս—փոշի, խիստ մանր։ «Առ զմուրտասանկն լեաէ և արայ գերդ զհայս» (215)։

Հապ ըլ ղար—գրած է հապողատ և հապաղար դափնենին է։ Հն. δαφνη, լտ. Laurus, սարդ։

Հապ ըլ ղրթուն—գրած է հապլղրթուն։ Կտմուկի սերմ (188)։ Ալ. Հ. Բուս., -ւնի § 176-ում՝ Ասպուր, ղրտում, կրտիմ, Ֆր. Carthame, լտ. Carthamus, ռս. Софлор красильный.

Հապողար—գրած է նաև՝ հապոշար—տես հապ ըլ ղար։

Հավան—նյութերը ծեծելու և մանրացնելու գործիք։

Հավկթի ջուր—ձվի մզելուց առաջացած հեղուկ։

Հատիտ—1. մաղրամիթայի 7 գույներից մեկը. «Սև է և չոր, և թէ կրացուցիր զինքն կու մտանէ ի յաքսիրն, որ ի վերայ կլայեկին լինի. և գույներն մէկ մէկի մօտ են» (§ 22)։

2. Երկաթի ծածկանուններից մեկը։

Հարքած—երերուն։ Տես ղողդողան։

Հարել—լուծել, խառնել։

Հարհրել—1. լկել, մանրել, տրորել։

2. Նույնն է նաև հրահրել, որ նշանակում է կրակը բորբոքել, փուքսը փչել և կրակն ուժեղացնել։ Բառս ծանոթ է ԳԻԲ նույն իմաստով։

Հեհալամ—տես կալէքար։

Հեղմ—մեղմ, թույլ կրակ։

Հերմէս իմաստասէր—արծաթի գաղտնանուններից մեկը։

Հինայ—ռս. хна, Ֆր. Henné. Անգ. Անպ. «հիննայ՝ ինքն յայտնի է. լաւն այն է, որ կանաչ և նոր աղցած լինի»։

Հինգշաբթի—անագի գաղտնանուններից մեկ։

Հիօշիամուս նիճէր—լտ. Hyosciamus niger. «Եւ Թ անգամ ի ջուր մի, որ ի լատին հիօշիամուս նիճէր, իտալացոց ճիուսգիամօ ասի» (§ 281)։

Հնդիատոմ—երկաթի գաղտնանուններից մեկը։

Հնդկացի աղ—տես մլհնդայ։

Հնտի ըլ խառայ—Թութիայի մի տեսակը։

Հնտի ըլ պատահ—տես Թութիայ։

Հոգի—նույնն է նաև շունչ։ Այն բոլոր նյութերը, որոնք կրակի ազդեցու-

թյունից ցնդում են և կամ գոլորշիանում (վերանում են), կոչվել են հոգի կամ շունչ։ Այս մասին Բ Զ-րի § 2 գրում է՝ «Իսկ որ ի կրակէ փախչի և թռչի նա՝ հոգի է, զի մարմինն հող է և ծանր և հոգին անասր է և հողմ»։

«Եւ անուանք հոգոյն այս են՝ որոյ առաջին ի նոցանէ է սնդիկն, երկրորդն՝ նշատիրն, երրորդն՝ կարմիր զառիկն, չորրորդն՝ դեղին զառիկն, հինգերորդն՝ ծծումբ, Զ երդ՝ կարմիր ծըծումբ» (Զ-իր ը. § 2)։

Հոխեմ—խոհեմ բառի բարբառային արտասանությունը, վորն առաջացել է խ և հ հնչյունների շփոթությունից։

Հողմ գէճ—պղնձի գաղտնանուններից մեկը։

Հորվել—«խորովել» բառի բարբառային ձևը։

Հութըմ—տե՛ս կալեքար։ Բռ. «Հութըմ՝ որ է ղալեքարի աղն»։

Հում ոսկի—արճճի գաղտնանուններից մեկը, որ առաջացել է այն հասկացողությունից, թե արճիճը ոսկու անկատար վիճակն է։

Հուր թըրքի—ոչ թե աղբի կրակ, այլ աղբի տաքություն։ «Դիր ի հուր թըրքի, այսինքն է ի տաքութիւն թըրքի» (Դ. Զ-իր, 16ա).

Հվարիղ—նաշատիրի անուններից մեկը։

Հրահան—կայծքար, գայլախազ։ Լտ. Smuris։

Ձարէ մաղ—մազե մաղ՝ ալյուր մաղելու համար։ Գ. Դ. ունի ձարմաղ—նույն իմաստով.

Ձիթապտուղ—տե՛ս պտղի ձեթ։

Ձիւթ—Ֆր. Goudron, կպրաձյութ։ Փայտից ստացված յուղ, որ ժողովրդական լեզվի մեջ և ձեռագրերում գրած է՝ ղաթրան և սև ձիւթ։ Ստանալու մասին տե՛ս § 166 (ղաթրան շինել)։ ՀՀԲ ունի «Ձիւթ է ձիթային և կպչուն հիւթ ինչ, զոր հանեն ի մայրէ կամ յայլ եղոտ և խժաբեր փայտից իբրև զիւղ»։

Ձուի իւղ—չորս կերպ էին հանում ձվի դեղնուցից. 1. խաշած ձուն դնում էին արևի տակ, որպեսզի յուղը դուրս տա. 2. կրակի միջոցով, 3. ղաթրելով և 4. ձյութի նման (կպրաձյութի)։ Հանելու մասին տես § 156։

Ձիու փոր—տաք։

Ղադիա—արհեստականորեն պատրաստվող նյութ, շինելու մասին տե՛ս § 148։

Ղազտիլ—տե՛ս անագ։ Բռ. «Ղազտիլ, որ է կլայեկ»։

Ղաթրած—քամած, թորած։ Տե՛ս ղաթրել։

Ղաթրան—1. տե՛ս ձիւթ։ 2. Սկիպիդար։

Ղաթրել—գրած է նաև հաթրել և խաթրել. Թուրք. Gatra կաթիլ, ղաթրած—քամած, ղաթրված՝ մզած, քամած, թորած։ Տե՛ս թաղտիր։

Ղաթրված—քամված, թորված։ Տե՛ս ղաթրել։

Ղալանֆունիայ—տե՛ս ղլֆունիայ։

Ղալեա—տե՛ս կալեքար։

Ղալեքար—տե՛ս կալեքար։

Ղալի—տե՛ս կալեքար։

Ղալիս—տե՛ս գալգանդում։
Ղալլի—տե՛ս կալեքար։
Ղալխանդ—գրած է նաև ղալղանդ։ Տե՛ս գալգանդում։
Ղալղամել—սնդիկը մեռցնելը։ Կոչվում է նաև վերացնել։
Ղալղատար—տե՛ս կաւլկաւղար։
Ղալղատիս—տե՛ս գալգանդիս։
Ղալղի—26-րդ խրատի մեջ հիշվում է իբրև մխնատիս քարի յոթն տեսակներից մեկը։ Տե՛ս մխնատիս։
Ղահաման—նյութ, վորն արհեստական կերպով պատրաստում են ձվի սպիտակուցի և զաֆրանի խառնուրդով (§ 150)։
Ղամեայ—գրած է նաև ղամիայ, կրակի վրա դրվող կավե աման, որի միջոցով տամսում էին նյութերը։
Ղամէր—արծաթի գաղտնանուններից մեկը։ Արաբ. ղամէր—լուսին
Ղանթար—կշռաչափ—120 օխայ կամ 360 ֆունտ, որ անում է 150 կիլոգրամ։ «Զդէ գդրաթ յինչ մարմնոյ որ կամես ի վերայ ղանթարի» (§ 203)։
Ղանտիլուղ—մի տեսակ ներկ, որն ունի սուկու գույն։ Շիննելու մասին տե՛ս § 152։
Ղապիրլայ—գրած է նաև ղապիրլի։ Սնդկի գաղտնանուններից մեկը։
Ղառուս—ծծմբի գաղտնանուններից մեկը։
Ղավալի—մի նյութ, որը գործ է ածվել սնդիկը մեռցնելու համար (հինա?)։
Ղավաղ—մխնատիս քարի յոթ տեսակներից մեկի անունը։
Ղարայ—մի տեսակ կավե աման, որը կրակի վրա դրվելու համար է։

«Եւ յիշեմ ղամաններն թէ որպէս պիտի լինի.—ղարայն շիտակ և խուփն աղէկ առնու ի բերանն և ամանն արատ բան չի կենայ. և թէ սայատած լինի գեղն, որ լնուս ի մէջն բուսյն լինի ղարայինն։ Եւ թէ խորված նայ՝ կէսնու Եւ կավէ զղարայն իմաստասիրաց կավով։ Առ կարմիր չամուռ բաժին մի, և գ բաժին յարդի մանրուք և խմմու տերև, և օշնայ և լից ի վրաններն ջուր, և թող օր մի և գիշեր մի։ Ծեծէ, և աճռէ և ծեփէ իրմով զղարան, և չորցու և ծեփէ քանի մի հետ, որ չի կոտրի ի կրակն։ Եւ ղարայի երկայնքն կանգուն մի լինի կամ այլ պակաս, բերանն ու մէջն և ոտքն հաւասար լինի, և լայնութիւնն այնչափ, որ ձեռք մի մտնէ։ Եւ ըմպեղին խանտակն լայն լինի և խորվկեկ և երբ զղարայն դնես ի ըմպեղն, և ըմպեղի պատն չորս մատ լինի, որ երկու մատն մտանէ ի ղարայի բերանն Բ մատ մնայ ի վեր, որ եծած լինի ի ղարայի բերանն, որ թէ չծեփես զբերանն՝ նա չի պիտի (Բաց. № 31)։

Ղարդայ—զաֆրանի (safran) յուղն է։
Ղարտաշղանի—«Աղբերաց արիւն» բառի Թուրքերենն է։
Ղըղլ պոյեայ—տե՛ս ֆուվայ։
Ղիտր—տե՛ս քուախաթի ջուր։
Ղլէմիայ—տե՛ս աղլէմիայ։
Ղլհավաթ ըլ պահր—ծովի ղլհավաթ։ Նյութի անծանոթ անուն։
Ղլղատիս—տե՛ս գալգանդիս։
Ղլգանդ—տե՛ս գալգանդում։

Ղլղատար—գրած է նաև ղուլնղար. տե՛ս արջասպ։

Ղլֆունիայ—գրած է նաև ղալանֆունիայ. «Փիճոյ» խեժի մի տեսակը. ռս. Канифоль, фр. Colophane. Ալ. Հ. Բուս. ունի՝ «փիճի, գետնի փիճի» տե՛ս ճանկխոտ՝ յիշուի և փիճոյ խէժ, որով սովորաբար կիմացուի ծամելի ձութն կամ տիկնակիւն»։

Ղուրսխպաս անել—թրք. qurs—գնդակ։ Ղուրսխպաս անել—գնդակներ անել։

Ղրատ—կերատ, կշռաչափ. լտ. Carattus, հն. Κερατιον, ռս. Карат. Եղջերենու կորիզի քաշը, որը գործ է ածվել մանր չափերի կշռի համար։ «Կշիռ չորից գարեհատոց լինի միոյ կերատի կշիռ» (ՆՀԲ)։

Ղրար—«Թաղլիտի» ամանի մի տեսակը։ «Դիր ի Թաղլիտի ամանն, որ ասի ղրար» (§ 210)։

Ճապալիայ—գրված է նաև ճապաչիայ—Թութիայի յոթ տեսակներից մեկը։

Ճառճոփ—տե՛ս բորակ։

Ճեառտի—Թութիաքարերի տեսակներից մեկը, որի մասին գրած է հետևյալը. «Եւ է այլ դեղին և զանազան գունով, որ կոչի ճեառտի» (Ջ-իր Դ, 46ա)։

Ճիուսիդիամօ—տե՛ս հիօշիամուս նիճէր։

Ճիր—տե՛ս կիր։

Ճլայ—թրք. ճիլա—փայլեցնել, հղկել, ճիլալամիշ լինել. փայլփլիլ։

Ճղնչող կիթ—անագի գաղտնանուններից մեկը։

Ճուտամ—բժշկարաններում գրած է՝ ճուտար, ծաղիկ հիվանդությունն է։

Ճպսի—արաբ. ճիպս—գիպս, գաճ, գաճի քար։

Ճռալ—կաթել, հոսել, վազել. «Եւ դիր ի վերայ կակուղ կրակի, որ հալի և ճռայ ի ներքի Ա ամանն» (§ 16)։ Բառս ունի ԳԻԲ. վոր մեկնում է. «մեղմ հոսող ջրերի ձայն։ Խարբերդում՝ հորդ կաթիլներով վազել, հոսել շարունակ կայլակիլ»։

Ճրագու—կենդանիների փորի հալած յուղը։

Ճօհար—տե՛ս ջուհար։

Մաղտաքէ—հերձի ծառի ձյութը. ռս. Мастика, фр. Mastic։ Գործածված է երկաթ հալեցնելու համար։ «Խսպիտակ և թանձրամած հիւթ ինչ, որ երբև գլխէճ կաթիլ առ կաթիլ բղխի ի ծառոյն, որ կոչի հերձի»։ ՀՀԲ

Մաթրաթ—Թասաձև կավե մեծ աման։ «Մաթրաթ Վան, Երևան՝ կավէ մեծ աման, որուն մէջ կերակուր կը դնեն» (ԳԻԲ)։

Մալամա—հիմնավոր ոսկեջուր անել. արծաթին ոսկու գույն տալ։

Մալիտարնա—տե՛ս արջասպ։

Մալի պուխինա—տե՛ս նիշատիր։

Մակնէտ—տե՛ս մխնատիս։ «Երկաթաքաշն կամ ժառատն մակնէթ և մղլադուղ քար ևս ասի»։ (Խրատ 36)։

Մահ—երկաթի գաղտնանուններից մեկը։

Մահայ—տե՛ս պիլօռ։ Ամասիային գրում է. մահայ,—մինհաճին տէրն ասէ թէ քար է. և ասած է թէ պիլօրն է»։

Մահաք—գրած է նաև մհաքի քար։ Մհաք քար, փորձաքար, սմպատակ, մընակ։ Լտ. Lapis Lidius։ Այս քարով են փորձում ոսկու և արծաթի իսկու-

թյունը։ Ծարգախած ոսկուն քսելով՝ քարի վրա պղնձի կարմիր հետք է մնում, իսկ արծաթին՝ սպիտակ-կապտավուն հետք։

Մ ա հ մ ո ւ տ ի ա յ—Թուրքիայի տեսակներից մեկի անունը։

Մ ա ղ ա յ շ ի թ ա յ-տե՛ս մարղաժիթայ։

Մ ա ղ ա ս—մի անծանոթ հեղուկի անուն։

Մ ա ղ լ ա մ ա յ-գրած է նաև մաղլամայ. հն. Μαλαγμα, լտ. Malagma, սպեղանի։ 1. Մաղլամայ անել—սպեղանի անել, սպեղանի դնել մի բանի վրա։ Թրք. մեհլեմ, մելհեմ, մաղլամ, մաղլամ։ Հունարենը նշանակում է մեղմիչ, մեղմուցիչ (տե՛ս, ՆՀԲ սպեղանի)։ Մաղլամա արծաթ—փափուկ արծաթ։ 2. Արծաթին ոսկու գույն տալ։ Տե՛ս մալամա։

Մ ա ղ լ ա մ ե լ—փափկացնել, նրբացնել,—ոսկեջրել, ոսկեգույն տալ։

Մ ա ղ մ ա ղ—մոխիր։ Ճիշտ ձևը՝ մաղմանդ։

Մ ա ղ ն ա ս ի ա յ—գրած է նաև՝ մաղնսիայ, մաղինիսայ, մաղնէսիայ, մղասիայ և մղնէսիայ։ Ֆր. Magnesia, ռս. Магнезия, մագնեզիա, մագնեզիոն։ Ամասիացին գրում է՝ «մաղինիսայ. սուտ ինքն քար է ցեղ ու ցեղ. Թուղ և վատուժ. և շատն սև գուն լինի, որ ի կարմրութիւն կու քշտէ և ի վերայ սպիտակ ծնկներ ունի և գինքն ապիկի շինողնին բան կու արկանեն այնոր համար որ ապիկոմն նաղշ կու առնեն. եւ ապիկի շինողնին այսոր սանկ ի մաղնի ասեն եւ ըռանկ ի պարկան այլ կասեն» (2076)։ № 23 խրատի մեջ ասված է. «Եւ գիտացիր, որ մղնէսիայն Ե է. սեւ եւ կակուղ, սեւ եւ չոր՝ կու մտանէ ի յապիկոց գործն, եւ փոշէգոյն, եւ քահլի, եւ կարմիր։ Եւ ամէն կու մտանեն ի արծաթի դռներն զատ ի կարմրէն»։ «Եւ քար մի այլ, որ մակնէզիա կոչի եւ զանազան գունով գտանի. եւ է իսկ մի սեաւ որպէս հող, եւ յորժամ կոտրի երեւի նմա որպէս ակունք փայլեալ, եւ գտանի այլ որպէս երկաթ պինդ եւ կոչի որձ, եւ է որ այլ նման է պղնձի եւ ունի ակունք փայլածոյ եւ կոչի մատակ, որ է փուխ եւ է լաւագոյն քան զամենայն» (Զ-իր Դ, 45 բ.)։

Մ ա ղ ր ա ժ ի թ ա յ—տե՛ս մարղաժիթայ։

Մ ա ղ ր ո ւ պ ի—աղջամուղջ, մթնշաղ, մթնաղեմ։

Մ ա յ խ ա ս ա յ—գրած նաև մայխըասայ և մայխաս։ Նյութ, որ պատրաստվում է կալաքարի և կրի խառնուրդով։

Մ ա ն ա ն ե խ—ռս. Горчица, ֆր. Moutarde.

Մ ա ն կ ն է զ ի ա—տե՛ս մաղնասիա։

Մ ա ն ո ւ չ ե ո ւ—Թութիաքարերի տեսակներից մեկը։

Մ ա շ—բույս, լտ. Phaseolus migno.

Մ ա շ մ ա ք ի-տե՛ս մաշպաքի, միմյանց նման բույսեր են։

Մ ա շ պ ա ք ի բույս. «Է եւ խոտ մի, որ ասի մաշպաքի եւ տերեւն սեւ որպէս զմաշմաքի եւ ծառն նման է մաշի, թէ կտրես ելանէ դեղին ջուր» (193)։

Մ ա ռ ե խ—գրած նաև մառեհ։ Երկաթի գաղտնանուններից մեկը։

Մ ա ս ի ղ—տե՛ս արջասպ։

Մ ա տ ա թ ը լ պ ա հ ր վ ո մ ե ր ա յ ի—ձու։ 21 խրատի մեջ ասված է. «Եւ անուն հաւկթին՝ մատտ ըլ պահր մովայիլահի»։

Մատան-զրած նաև մայտան, մետեն—հանք։ Մատանի՝ հանքային։ Տե՛ս քան։

Մարգագիտա — տե՛ս մարգաժիթայ։

Մարեխ խոտ — մատուտակն է. «Է խոտ մի, որ ճիւղն սեւն մարեխի խոտ եւ բուսանի մեկ ճղի վրայ եւ տերեւն նմանի բանափշահի» [մանուշակի] (§ 199)։

Մարթակ — տե՛ս սիլիկոն։

Մարթաճ — հիշվում է իբրև ոսկու և արծաթի գույնը մռնող նյութ (ի կարմրացնելն եւ սպիտակացնելն)։ Գուցե մարթակ, որ է սիլիկոն։ Բ. Զ-րի համապատասխան տեղում գրած է քարմարտանկի։

Մարթաք — 1. ձող, 2. մուրտասանկ։ Երբեմն շփոթած է մարթակի հետ, որ է սիլիկոն։

Մարգաժիթայ — լտ. Margassita, լուսո քար, ռոշնա կամ ռուշինա, պրս. ռուշեն։ Բռ. 730, 167 բ. ունի. «Հայ Մարգաշիթայ, արաբ մաղայշիթայ, պրս. ըռոշնայ։ Ինքն քար է կու ցուլայ եւ լուս տայ։ Աղէկն հստակ լինի։ Ասէ Մատինի բժիշկն թէ ինքն Դ ազգ է զէտ ոսկի, զէտ արծաթ, զէտ երկաթ, զէտ պղինձ. եւ աղէկն այն է, որ զէտ ոսկի լինի»։

Ամասիացին մարգաժիթան կոչում է նաև արար. հաճար ըլ նուր, և պուրխուշ։

Մարմին — կրակի ազդեցությունից հալչող նյութ. բ. § 23 գրում է. «Ամենայն ինչ որ ի կրակն տեւէ եւ հալի մարմին կոչի»։

Մարմին ծարրի — տե՛ս արճիճ։

Մարջան—բուստ կամ բիստ, կորալիոն. հն. Κοραλιον, ռս. Коралл. «Բուստ քարն կամ մարջան» (Ֆրատ 36)։

Մարքագիդա — տե՛ս մարգաժիթայ։

Մաւրդել — տե՛ս մուրդեր։

Մաքի — ոչխար։

Մաքրել — զտել, մաքրազտել, «և ինչ է կամքն ի Թասղիտ անելն. այն է, որ կու մաքրէ եւ է կեանք, եւ գործող, եւ մաքրած ի սեւութենէն» (§ 115)։

Մեծ ալեւոր — արճճի գաղտնանուններից մեկը։

Մեծ խորհուրդ — ոսկի ստանալու գաղտնիքը։

Մեռանել — փոշիանալ, կրակի ազդեցության տակ չմխավորվել։ «Մեռանելու նշանն այն է, որ երբ զգիճութիւն հանես կրակով եւ խառնես այլ չի հավաքի» (§ 165)։

Մթղալ — կշռաչափ, մեկ տասներորդ ունցիա։ «Որթ մի որ Ժ մթղալ է եւ կոչի ի լաթինն ունցիայ»։

Միաբերթել — միավորել, միաձուլել դարձնել։ «Միամորթել» բառի սխալը։

Միամորթել — միավորել, միմյանց հետ շաղախել։

Միլհ ամմոնիա — տե՛ս նիշադրի աղ։

Միջնորդ — պղնձի գաղտնանուններից մեկը։

Մլխտախն — հիշված է միայն 17-րդ և 22-րդ խրատների մեջ իբրև ալքիմիայի մեջ գործածվող նյութ։ 17-րդ խրատի մեջ հիշված է «մլխտախն»,

իսկ 22-րդի մեջ՝ «մլհտալխն», ճիշտ ձևը լինելու է մահլ-տալղ, որ է՝ տալղի աղ:

Մ լ հ ն դ ա յ — գրած է նաև մլհադայ. առաջանում է արաբ. mahl-i hindi—աղ Հնդկաստանի: Համարվում է (22 և 17 խրատների մեջ) յոթը քարերից վերջինը, որ «ունեն յինքեանս հոգիս»: Բ. Զ-րի համապատասխան տեղում մլհնդայի փոխարեն գրած է «հասարակաց աղ»: Բայց այդ հավանական չի թվում մեզ, որովհետև հասարակաց աղի արտադրությունը մեծ չափերով զարգացած լինելով Հայաստանում, հնդի անունը չէր կարող ստանալ: Մեզ ավելի ճշգրիտ է թվում Ամասիացու տեղեկությունը Նա գրում է. «Եւ Ե ցեղն հնտի է եւ կարմրեխ է»:

Մ խ ե լ — կոխել, իջեցնել: «Եւ տաքացոյ զինքն եւ մխէ ի ջուրն քանի մի հետ» (§ 85)—նշանակում է՝ «տաքացրու և մի քանի անգամ ջրի մեջ իջեցրու»:

Մ խ ն ա տ ի ս — աղամանտ, խանդումանդ. ֆր. Aimànt, ռս. Магнит. բառս ունի 730 Զ-իր, 168 բ. այսպես—«հյ. մխնատիս, պս. սանկահին, ինքն քար է, Բ ազգ է Ա ի ծովէն ելնէ եւ Ա ի հողէն»:

Ամասիացին ասում է «Մղնատիս, որ է խնդմնդ քարն. ինքն քար մըն է, որ զերկաթն ինքն կու քաշէ»: Զերկաթի մղնատիսն յիշեր է Արիստոտելն ի քարերն» (25 Խրատ):

Երեմիայի բառ. «Անդամանդ. խանդումանդ քարն է, որ երկաթն յինքն կու քաշէ. զոր մկնատուղ տաշին է»:

Մ ղ ա ս խ ա յ — տե՛ս մաղնասխայ:

Մ ղ լ ա դ ո ւ զ — գրած է նաև մղնատիս: Տես մխնատիս:

Մ ղ ն է ս խ ա յ — տե՛ս մաղնասխայ:

Մ ն ծ ր ե լ — այրվել, վերջանալ, մախրանալ: «Պարզէ նժւաղ հրով, այսինքն կայծ կայծ գործելով Ա եւ Բ կայծիւք եւ յորժամ այն մնծրի այլ ած» (§ 247): Բառս ծանոթ է Գիլ. մնձրել ձևով (այրել):

Մնջա[ն]—Բ. Զ-րի § 2-ի մեջ հիշված է իբրև հոգի ունեցող քարերից վերջինը, որին համապատասխանում է այլ Զ-երի մեջ հիշվող «րմհան» անունը:

Մ շ ն ե լ — խառնել. «Եւ զինի մշնէ արդար եղով» (§ 246) և անմիջապես ավելացնում է՝ «Եւ դարձել որպես նախ՝ խառնեայ եղով»:

Մ ո մ ե լ — նյութը դյուրահալ դարձնել: Երեմիայի բառգ. ունի՝ «մոմ դիւրահալ»:

Մ ո մ ո խ — լտ. Prunus selvaticus: Վայրի սալորն է, որ Ալ. Հ. Բուս.—հայտնի է մ ա մ ո խ անունով:

Մ ո ւ հ տ ա տ ի լ — թրք. mu’tadil—չափավոր:

Մ ո ւ շ թ ա ր ի — անագի գաղտնանուններից մեկը:

Մ ո ւ ռ — զմուռ:

Մ ո ւ ր — արհեստականորեն պատրաստվող մի նյութ, որի շինելու մասին տե՛ս § 140:

Մ ո ւ ր դ — կավ:

Մ ո ւ ր դ ե լ — գրած է նաև մաւրդել, մօրտել. կավածեփ անել:

Մ ո ւ ր տ ա ս ա ն կ — արճճի պրոտօքսիդն է գաւիկի հետ։ Ֆրանսերէն՝ Litharge. Բժ. a 167բ. ունի՝ «հյ. մուրտասանկ, արաբ. մուրտասանճ, պրս. մուրտասանկ, ինքն քար է, կու հալվի արճիճ կու լինի։ Աղէկն կանաչն է» Ամասիացին գրում է. «Մուրտասանկ, որ հյ. Բարամարցանկ կասեն. Բ ցեղ կու լինի, լաւն այն է որ շուտ մանտրի։ Աւէ պտ. Թէ մարթաք կասեն եւ հռ. լիդարխուռուշ կասէ. լաւն այն է որ սպահանի լինի. փայլուն եւ կարմրգուն լինի»։ Լիդարխուռուշ—լտ. Lithargirius կամ հն. Λιϑαργυρος բառն է։ Բարմարցանկը՝ կարմիր մուրտասանկը՝ «ոսկու է» (ֆր. Litharge d'or)։ Տե՛ս սիլիկոն։

Մ ռ ե ղ — հարդի մանրուք բարակ և կարճ։ Բառս ունի Գ.Ի.Ռ. մրեղ ձևով, որը համեմատում է գրբ. մղեղ բառին։

Մ ա ը թ ը լ պ ա հ ր մ ո վ ա յ ի լ ա հ ի — ձու։

Մ ր գ պ ի ա յ — թութիայի տեսակներից մեկը։

Մ օ ր դ ե լ — տե՛ս մուրդեր։

Յ ա դ ա յ ե ա — տե՛ս սապռ։

Յ ե ղ մ ն կ ր ա կ — տե՛ս նժւադ։

Յ ե ս ա ն (քար) — հեսանաքար, մետաղներ սրելու քար։

Յ ո պ ա ս է ն — տե՛ս ըսպասէն։

Ն ա թ ռ ո ւ ն — տե՛ս բորակ։

Ն ա խ ա ս — գույն ցույց տվող բառ։ №№ 17 և 22 խրատների մեջ հիշված է իբրև մարդաժիթայի յոթ տեսակներից (գույներից) մեկը։

Ն ա մ ա կ թ ո ւ ր ք ի — աղի մի տեսակ։

Ն ա յ թ ռ ո ւ ն — տե՛ս բորակ։

Ն ա տ ա մ — տե՛ս սատնաճ։

Ն ա վ թ ի ա ղ — աղի մի տեսակը, որը սև գույն ունի։ «Եւ է աղ նեփթէ՝ որ է սև պինդ և սուր, բայց ոչ փայլուն և ունի հոտ նեվթոյ» (Զ-իր Դ, 47բ)։

Ն ա ւ թ — նավթ։ «Ինքն ի պարսկաց երկիրն լինի. սև և սպիտակ է. լաւն այն է որ սպիտակ և յստակ լինի»։ (Անգ. Անպ.)։

Ն ե ղ ա կ մ ա ղ — նեղ ծակերով մաղ։ «Մաղէ մանտր և նեղակ մաղիւ» (Բ. Զ-իր, 144)։

Ն ե ր կ — 1. Գույն տվող նյութ. 2. նյութերի «շունչը» և «հոգին»։ Այս իմաստն ստացվել է այն հասկացողությունից, ըստ որի, միայն շունչ կամ հոգի կոչվող նյութերի մասնակցությամբ կարելի է մետաղների գույնը փոխել. այսինքն ոչ-ազնիվ մետաղներից ազնիվ մետաղներ ստանալ։

Ն ե փ տ է ա ղ — տե՛ս նավթի աղ։

Ն ի շ ա տ ի ր — անուշադր, ռս. Нашатырь, ֆր. ammoniac. Բժ. a, 176բ. ունի. «հյ. նշատիր, արաբ. նշատիր, պս. նշատիր։ Ինքն սուգծու է, ի Փռանգաց գայ։ Աղէկն սպիտակ և անհող լինի և սպրկիկ»։ Բռ. ունի՝ «Արծիւ՝ որ է նշատրն, հվարիդ՝ որ է նշատր, ատտաշան՝ որ է նշատր»։ 15-րդ խրատի մեջ ասվում է. «Նաև հոգոցն են այլ և այլ անուանք ասին շատ կերպիւ, որպէս նշատրին՝ արծիւ և հվարիդ»։

«Գիտասջիր զի Բ են արծիւսն՝ այսինքն է նշատիրսն, մինն պղնձե-

զէն է և է յոյժ սուր և սպիտակ և գոյանայ ի մոմէ, որ կոչի ի լատինն կարատուլիս զարողի և մնւսն այն այլ է զեղին և փայլէ և է ապականեալ» (Զ-իր Դ, 44բ)։

Նիտր — տե՛ս բորակ։

Նշատր — տե՛ս նիշատիր։

Նշատրի ջուր — մտնում է սուր ջրերի (թթուների) շարքի մեջ։

Նշայ — լտ. Amylum, крахмал, օսլա։

ՆՀԲ. գիտե ամկ. նշաստայ, նիշաստայ։ Գրականն է համարում նաշիհ ձևը։

Ամասիացին գիտե «Ամիկոն որ յն. նշա ասեն և պրս. նշաստակ ասեն»։

Նուհաս — պղնձի գաղտնանուններից մեկը։

Նուռն — պտուղ նռնենու. ռս. гранат.

Նուրա քերէճ — տե՛ս կիր։

Շարաթ — Արճճի գաղտնանունը։

Շահիրայ — գրած է նաև շահիրայ. արջասպի տեսակներից մեկը։

Շամս — արևածաղիկ։

Շամսի հունդ — արևածաղկի կուտ։

Շամսի տերև — արևածաղկի տերև։

Շապ — տե՛ս պաղլեղ։

Շապ իյուսփուր — տե՛ս կալէքար։

Շառաւիղ լույս — ոսկու գաղտնանուններից մեկը։

Շատընայ — գրած է նաև շատնա և սադինայ — տե՛ս եմատիտէզ։

Շեզրախ — տե՛ս աղ։

Շեխել — սվաղել, ծեփել։ ԳԻԲ. ծեփով պատել։

Շեմս — ոսկու գաղտնանուններից մեկը։

Շըհըպ — տե՛ս պաղլեղ։

Շիատնէ նիատիկի — նույնն է շատնայ տասսի։

Շիպ — տե՛ս պաղլեղ։

Շիպ — 17-րդ և 22-րդ խրատների մեջ համարվում է մարգաժիթայի 7 տեսակներից մեկը։ Ըստ երևույթին իր անունն ստացել է «շիպ» — պաղլեղ բառից՝ նույն գույնին լինելու պատճառով։ Հմմտ. հատիտ և ըռսաս։

Շիպեմանի — կապույտ շիպն է. տե՛ս պաղլեղ։

Շիրիկ ձէթ — կնճիթի յուղ, շուշմայի յուղ, քունջութի ձեթ, ռս. кунжутное масло, фр. Huile de sésame.

Շնչահան — տե՛ս շոգեհան։

Շնչահանել — այնպես անել, որ կրակի ազդեցությամբ նյութի ցնդական և գոլորշիացող մասերը հեռանան։ Նույնն է թափիթ անել։

Շոգեհան — կոչվում է նաև շնչահան, պարգեչ։ Դիոսկլոյդեսյան համարեցված գործիք, որի կազմությունը ծանոթանում ենք Դ. Զ-րի 28ա—28բ երեսներում, որտեղ գրված է՝ «Շնչահանս օրինակ այնպէս, որպէս յառաջագոյն յիշեալ էի, որ վերացուցիչ և պարզիչ կոչի։ Ունի խուփն իսկ գումպէթաձև և նոյն խփանն ներքի դիճն է բոլոր ըստ չափո շրթանցն ներքո ամանին, և շուրթն խափանոն լիցի այսպէս պատրաս-

առեալ զի հեշտաւ մտցէ ի մէջ Բ շրթանցն ներքոյ ամանին, որպէս նախ յիշեալ եմ յաղագս վերացուցանողին և պարզարանին, որով պարզեցի և վերացուցի զշունչն, բայց ամանոյն այս ոչ կոչի վերացուցանող, այլ շնչահան պարզիչ կոչի, զարթ որ շրթունս շնչահանիս խըփանն ծռեալ ընդ ներքոյս է հայի, վասն զի առցէ և արգելցէ զջուրն որ ընծայի ի շոգուն, որ ելանէ յառաստաղքն շնչահանիս և ի այնմ ծռեալ շուրթն կայ քիթոյ, ի վայր հայի, որ ջուրն իջանէ ամենևին: Ամանոյն այս այնպէս է որպէս ամանն, որ վարդէջուր շինեն»:

Ծողար — տե՛ս արջասպ:

Ծորայ — տե՛ս բորակ:

Ծունչ — տե՛ս հողի:

Ծուշկի — Փշկի. տե՛ս կղի:

Ծուրպէ — տե՛ս խշուրպէ:

Ծպլեղ — տե՛ս պաղլեղ:

Ծրէժ — ուղիղ ձևը՝ շրեշ: Խոտ, որից պատրաստում են կոշկակարի սոսինձ: Հն. ασφοδελος, Ֆր. Asphodèle. Ամասիացին խունսայ բառի համար գրում է՝ «որ է աշրասն, որ է շրէշն և տերևն նման է կանդանայի տերևին. և գագաթն սպիտակ ծաղիկ ունենայ. և տակն ի կաղնոյ պտուղ կու նմանի. բայց շատ կու լինի» (1199):

Ոհանալ — հովանալ:

Ոսկերչի աղ — հիշատակվում է իբրև աղի տեսակներից մեկը:

Ոսկէքար — Հն. χρυσόλιθος, լտ. chysolithus. ոսկեքար, ոսկեակն, ոսկեբյուրեղ, Թրք. սարի եաղութ:

Ոսկի — ալքիմիկոսների նպատակն էր արհեստականորեն ոսկի ստանալ, այդ պատճառով էլ ձեռագրերի մեծագույն մասը վերաբերում է կեղծ ոսկի (ոսկենման մետաղ) ստանալուն և ժանգակ նյութերի հետ կապված գործողություններին: Ոսկուն վերաբերող գործողությունները և մասնավորապես ոսկու անունը ձեռագրերում գաղտնագրված են բազմաթիվ ծածկանուններով: Մեր ձեռքի տակ եղած ձեռագրերից քաղել ենք ոսկու հետևյալ ծածկանունները. հայր աշխարհ, շառավիղ, լույս, կարմիր մոմեղեն, արուեստ փառաւոր, կկրակի, չէմս, արեգակն, զահապ, զար, պահայլայ, թէպր, խուրսուֆ:

Ոսկրի փոշի — այրած ոսկրի փոշի:

Ոտնաքար — չեչաքար, պեմզա պարունակող քար: Նախիջևանի գյուղացիք այդպես են անվանում պեմզան:

Որձաքար — Ֆր. granit, գրանիտ:

Ունկի — շատ փոքր կշռաքար, որքան լինելն անծանոթ է:

Ունցիայ — կշռաչափ՝ մոտ 18 գրամ: «Մէկ ունց Գ մթղալ է» (Ձ-եր, Դ, 56 բ):

Ուշպ — Թրք. ʿušb — զալար խոտ:

Ուսուստում — տե՛ս ռասուխտ և պղինձ:

Ուսրունձ—տե՛ս սիլիկոն։
Ուրբաթ—պղնձի գաղտնանուններից մեկը։

Չամսախկի—մխավորակ, լուղնի ծառը։ Ֆր. Styrax, ռու. Стиракс և այժմ հայերենում էլ գործ են ածում ստիրաքս։

Չաք—չափ, քանակ։ Չափ բառի գավառական ձեն է։

Չեչաքար—լտ. Pumex, Թրք. սյունկյար տաշի։ Հրաբխային ծակոտկեն պինդ քար, որ ըստ ալքիմիկոսների, հասարակ քարերի տեսակներից մեկն է։

Չիմէ մաւմի—դեղնագույն Թութիաքար։ «Եւ է քար Թութիայ որ գանագան գունով... և է միւս այլ դեղին, որ կոչի չիմէ մաւմի» (Չ-իր, Դ, 45բ)։

Չոգծու—շինովի, արհեստական. տե՛ս սուգծու։

Չողան—գրած է նաև չօղան. 1. կալէքար, ռու. Сода. Ամասիացին գրում է. «Աւշնան որ է չողան, ինքն շատ ցեղ լինայ» (522)։
2. Թփի մի տեսակ, որից կալեքար են պատրաստում։

Չորեքշաբթի—սնդկի գաղտնանուններից մեկը։

Չօղան—տե՛ս չողան։

Պահալլայ—գրած է նաև՝ պահլալա։ Ոսկու գաղտնանուններից մեկը։

Պահրի ախգար—տե՛ս պիլօռ։

Պաղած արիւն—պղնձի գաղտնանուններից մեկը։

Պաղլեղ—շիպ, ռու. квасцы, լտ. Alumen. Բռ. «Ալումէն, ջամէն, պաղլեղն՝ որ է շիպն»։

Պաղուն—Ասրունձ, պս. խարէնձ, լտ. Minium. Ըստ Ալ. Հեուս. պաղունը՝ «վարտ ըլ ինթին է, վայրի վարդն՝ որ պեղծ հոտ ունենի», իսկ ասրունձի մասին գրում է՝ «Յովասափ հուպաքող մի գրէ այս անունս և կըսէ. սկիլիկոնն է. լտ. siligo, հասարակ ցորեն կամ ցորենի տեսակ մի նշանակէ»։ Ն. Բուզանդացին ուղղում է՝ «Ասրունձ. պարսկերէն խարէնձ է, գաղ. Minium“ և այլն։ (Բննդ. Հայ բուսակին)։

Պանաւշահ—տե՛ս բանաֆշահ։

Պարգել—տե՛ս մարբել։

Պարգիչ—կոչվում է նաև՝ պարգարան, վերացուցիչ։ Ֆիլտրացիայի համար գործածվող աման, որի ձևի մասին գրված է՝ «Եւ կալայ աման մի, որ հարկ է ունենալ ամենայն տուն, որ կամի պարգել և վերացուցանել, և կոչի պարգիչ։ Այսպէս լինի ամանս այս, զի է Բ կտոր կաւէ աման՝ մինն պնակ կոչի և միւսն այլ խուփ պարգարանի։ Եւ ձեն է պնակին այսպէս՝ իբրև սինայ ձև բոլոր այնպէս որպէս տափ որ քաղցրէք դնեն, այլ ոչ այնչափ խորու, այլ ծաւալ և այլ մեծ քան զտափ. և խուփն այսպէս լիցի որպէս գումփէթ, բայց մեծագոյն լիցի քան զներքի ամանին, զի շուրթն խփանն միայն ի ներքի ամանն մտցէ և ներքի ամանին Բ շրթուն լիցի մինն գրուցէ և բարձրագոյն և միւսն ընդ ներքսէ ցածագոյն զի շուրթն խփանն ի վերայ հաստատեսցի, զի յորժամ

գլուխն ի վերայ դիցես նայ՝ շուրթն խփանն հաջնի։ Բ շրթունսն ներքի ամանին յոյժ լաւ, զի ոչինչ փորոք ելցէ և կամ ծերպ» (Դ Զ-իր, 23ա)։

Գարուխ — տե՛ս ալխտաճ։

Գարուտ — ֆր. Baryte, ռս. Барит, ծանրահող, բարիտ։

Գարտէզքար — տե՛ս լազվարդ։

Գաւթ — տե՛ս պօթ։

Գիլոր — բյուրեղ։

Գիլօռ — ֆր. Cristal de Roche: 17-րդ և 22-րդ խրատների մեջ հիշվում է, իբրև հողի չունեցող քարերից մեկը։ Ամասիացին մահաչ բառի համար գրել է. «մինհաճին աէրն ասէ թէ քար է. և ասած է թէ պլլօրն է. և գունն, և կերպն։ Իբն ասցել է թէ ապիկի է, որ ի մաղնիսեայ կու նմանի, և մաղնիսիային մատանէն կու ելանէ և կու ժողվէն, և զինքն պահրի անգար կասեն. այն ծովէն այլ կու գտնուի։ Եւ ի սայիտու երկիրն, և ի մսըր այլ կու գտնուի. ցեղ մըն այլ է որ կերպն և գունն պակաս է և ամուր է, հանց որ հայիս՝ թէ անդրանի աղ է, և յառաջի ցեղն որ ասացաք՝ պլլոր է սուտ»։

Գիմփելիքս — երկաթի ժանգ (Բառգ. Գաղ., ԳԹ Զ-իր, 701)։

Գիստայ — բույսի անծանոթ անուն (պիստակենի՞, ֆր. pistachier). Նկարագրված է այսպես. «է խոտ մի, որ ասի պիստայ և բուսանի ի ջրեզերքն և տերևն նման է սպանդի և պտուղն որպէս հաւկիթ է և հոտն որպէս զաֆրանի» (198)։

Գլլոր — տե՛ս պիլօռ։

Գղինձ — մետաղ։ Լտ. Aes, ռս. Медь։ Ունի բազմաթիվ ծածկանուններ— զօհրէ, լուսաբեր, հողմ դէճ, եղբայր կարմիր և դեղին, կրուճ, միջնորդ, պաղած արևն, ուրբաթ, նուհաս։ Մտնում է ոսկու գանները։

Գղնձեղէնք — այս բառի տակ հասկացվում էր բոլոր մետաղների խմբակցությունը և ուներ մեր այսօրվա «մետաղներ» բառի իմաստը։ Գղնձեղենք բառն ամենուրեք հակադրված է քարեղենք, հողեղենք բառերին։ «Յաղագս պղնձեղինաց» հատվածում նկարագրված են իրենց ծանոթ բոլոր մետաղները։

Գղնձի տերև — պղնձյա թիթեղ։

Գնդակրօն — երկաթի գաղտանուններից մեկը։

Գնդուկ — կաղին։

Գողվատ — պողպատ,

Գորա հայոց — հայբորակ, տե՛ս բորակ։

Գուրէլի էրմէնի — տե՛ս բորակ։

Գուրխտուշ — տե՛ս մարդամիթայ։

Գաղի ձէթ — ձիթապտղի յուղ, լտ. Oleum Olivarum.

Գրաստ — անծանոթ նյութի անուն, երևի՝ բույս։

Գրուճ — փոքր փոս, քարի վրա արած փոքրիկ փոս։ «Եւ դարձեալ դքար փորէ և լից ի քարի գրուճն»։ Բառս ունի ԳԻՌ. գրունճ ձևով, որ նշանակում է՝ գարշապարի հետին մասը և կրունկին կոխած տեղի փոսը։

Պօթ — մի տեսակ աման: Տե՛ս պօթպարպատ:

Պօթպարպատ — գրած է նաև պօթ պարպատօ—մետաղներ հալելու երկու ամաններ, որոնք իրար վրա են հագցվում և վերին ամանի տակը ծակ է լինում, որտեղից հալած մետաղը հոսում է տակի ամանի մեջ: «Ած ի յաման մի որ պօթպարպատ կոչին որ է աման ի վերայ ամանի դրեալ ծակ» (Զ-իր Դ, 14 ա):

Նկարագրությունը գտնում ենք Դ ձեռագրի մեջ, այսպես. «Ամանք, որով մարմինքն հալին այս են. քուրա ոսկերչի, կճիճ ոսկերչի և պօթ և ալպօթ՝ որ է աման ի վերայ ամանին դրեալ, ակցանք, սալ և կռան և ամենայնքս այս գտանին առ գարբինսն և ճանաչին զարթ զպօթ պարպատօ: Եւ զպօթ և ալպօթ ամանսն որ է պօթ և ալպօթ ամանն ի վերայ ամանի դրեալ, որով եռնին, պարտ է ունել երկս և կամ Դ ծակս ի յատակն իւր, և իրն որ պարտ է հալել շաղեցի ձիթով հում և ապիկաւ. և զխուռն պարտ է ծածկել կայծիւք և այնչափ փչել որպէս եթե կամէիր հալել պղինձ և կամ այլ մարմին. և այս է գաղտնին՝ զի հարկ է զի փուքն մեծ լիցէ, վասն զի բազում փուք ելցէ ի նմանէ» (Զ-իր Դ, 49 ա):

Պօվրահ — տե՛ս բորակ:

Պօռ — ծառի արմատի մոտքերը կամ բունը:

Ջուհար — 1. գոհար, թանգարժեք քար: 2. Հանածո նյութ:

Ջուր երկաթի — քարի անուն է. տե՛ս էտայուս:

Ռախսուտ — տե՛ս ռասուխտ:

Ռաճ — տե՛ս ըրաճ:

Ռապ — նյութ, որը պատրաստվում է ձեթի և սնտարօզի խառնուրդից: Շինելու մասին տե՛ս § 154:

Ռասլխալի — ժանտաջուր, արքայաջուր, թեզապ:

Ռասուխտ — գրած է նաև ըռասուխտ, ռախըստ և ռասուտ: Տե՛ս ըռաստուհ:

Ռատաշան — տե՛ս նիշատիր:

Ռիսաս — տե՛ս ըռսաս:

Ռմբաքար — լտ. Lapides ejaculans, հն. λιθοβολος. բոլորշի խճաքար, որ աղեղով կամ բաղխտրով (նետակալով) նետում էին թշնամու վրա: Երեմիայ Բառգ.՝ «ըռմբաքար. մընջնաքար»:

Ռուպասն — տե՛ս ըռուպասն

Սադայել — տե՛ս սայատել:

Սադինայ — գրած է նաև շադընայ. տե՛ս եմատիտէզ:

Սալ — այսպես է կոչվում այն հղկած քարը, որի վրա մանրացնում էին նյութերը: Սալի ձևի մասին գրած է. «Եւ սալն լինի հաւասար, երկնայնքն կանգուն մի, և լայնքն՝ Գ ռուպ և սալի շրթունքն բարձրկեկ: Եւ այս մարմասս վասն այն է, որ զթաղխած դեղերն ողկես՝ և զչոր դեղերն և զգէճ դեղերն և զամէն դեղերն: Եւ կայ դեղ որ ի հավան այլ կու

ծեծվի, և կայ դեղ, որ ամենևին պարտ չէ, որ ի հաւանն ծեծել» (№ 31 բաց.)։

Սալաքար — գրած է սալքար, Ֆր. Carreau de pierre.

Սալիմ — 1. սալ բառի գավառական ձևը, «և կոտրատէ զսալիմն» պետք է հասկանալ «և կոտրատէ սալի վերայ»։ 2. կա նաև իբրև մի անծանոթ նյութի անուն։

Սալիմ արճիճ — նյութ, որը շինում էին սալիմի, այրած թնքառի, կովի լեղու և սապոնի խառնուրդից։ Պատրաստելու մասին տես § 143։

Սալճէմայ — քար աղն է։ Բռ. «Սալճէմայ՝ կողբացի աղն է փայլունն»։

Սալնիտր — բորակ։ Բռ. «Սալնիտր՝ որ է բորակի աղն»։ Վանի բորակը կամ պորա հայոցը կոչվել է սալնիտր վանեցի»։

Սալպէտրէ — քարաղ. լատիներեն բառ։ Կա նաև սալտէ պետրե ձևով։

Սալտարգրի — գինու մրրի աղն է։ Ֆր. sel de tartre. Բռ. «Սալտարգրի՝ գինոյ մրրի աղն է»։

Սալտէ կապիտէլօ — տես սալարգարի։

Սալքար — տես սալաքար։

Սաղկանել — նույնն է ինչ սղկել։

Սաճ — հաց (բաղարջ) եփելու գոգավոր երկու առանձին քարեր (լինում են նաև կավից), որոնց մեկի մեջ լցնում են խմորը և մյուսը պինդ փակելով բերանին՝ դնում են ածուխի կրակի մեջ՝ եփելու համար։

Սամադաքար — հասարակ քարերից մեկի անծանոթ անուն։

Սանդարօս — տես սանտարօս։

Սանկահին — տես մխնատխ։

Սանտարօս — գրած է նաև սանդարօս. ձյութի տեսակ. Ֆր. Sandarque, լտ. Sandaracha. հյ. ջնարակ, ճնարակ։ Կենածառի (thuya) խեժն է, որը գործ է ածվում մեծ մասամբ թղթի վրա ցանելու համար, որպեսզի չծրի։

Սապոն — օճառ. հնում ծանոթ էին սապոնի մի քանի տեսակներ. լավագույնը կոչվում էր «պալատի սապոն» և հասարակը՝ «հասարակաց»։

Սապութ — բյուրեղ։

Սապռ — (դեղին, սաբր)—հյ. հալուէ—հն. αλόη, լտ. Aloe. Բժ. a 192 բ. ունի «հյ. սապռ, արաբ. սաբր, պրս. սապռ։ Ինքն Բ ազգ է, Ա սև է, Ա դեղին է։ Աղէկ տրորէ ըսղուտրինն աղէկն է»։ Ըսղուտրինը դեղին սապռն է՝ այդ գիտենք § 10-ից, որտեղ գրած է. «Յետ այնոր, առ սապռն ըսղուտրի զդեղինն և հարէ զինքն ի ջուրն և արայ այդպէս շարպաթ»։ Ըսղուտրինը Socotrin կամ նույնանիշ cuccotrin բառի հայացրած ձևն է և «սապռ ըսղուտրի» նշանակում է aloès socotrin, որը Սոկոտրա (Հնդկական ծովի) կղզու դեղին հալվեն է, որտեղից առաջին անգամ սկսեցին մուծել այս խեժը։ Ամասիացին ծանոթ է բառիս յադայեայ անունով՝ «կասեն ինքն սապռն է»։ Դեղին սապռի փոխարեն գրված է նաև սաբր սապռ (§ 4)։ Սապռ շինելու մասին տես § 149։ Բառս ծանոթ է ՀՀԲ հալուէ անունով, որ բացատրում է «խոտ դառն հիւթով՝ ի կարգի դեղոց և խնկոց»։

Ս ա պ ր դ ա յ — երկաթի գաղտնանուններից մեկը։

Ս ա վ տ ա — մաղձ։

Ս ա տ ա ն ի ս ո խ — բույսի անուն։

Ս ա տ ա փ — գաղտակուր, ֆր. Coquilages, ռս. Раковина. 17-րդ և 22-րդ խրատների մեջ համարվում է հողի չունեցող յոթ քարերից մեկը։

Ս ա տ ն ա ճ — նյութի անուն, որը հիշված է միայն բացատրությունների մեջ։ «Սատնաճ որ է նատամ»։

Ս ա ր ա ն ճ — տես ասրանճ։

Ս ա ր ս ո ւ լ ա յ — արճճի գաղտնանուններից մեկը։

Ս ա ր ս ո ւ լ ա յ ո ւ թ ի ւ ն — 1. կակղություն, փափկություն, գիճություն։ «...Աղի Ջրով հալէ զկլայեկն և թափէ ի յինքն հետեր ընդեցնէ զինքն և տանի զիւր սարսուլայութիւն և լինի պինդ որպէս զլուսին» (§ 9)։ 2. Բռ. «Սարսուլայ որ է արճիճ»։

Ս ա ֆ ի խ ա յ — գրած է նաև սաֆիհայ, սաֆիէայ, սաֆիայ, սաֆխիհայ. Թրք. safiha. մետաղի չերտ, մետաղի թերթ։ «Եւ լաւ սղկէ զերկունքն՝ մանտր, և արայ զկլայեկէ[1] նօսր սաֆիհաներ և շաղախէ»։

Ս ա ֆ ր ա — մաղձ։

Ս ե կ — այծի մորթի։

Ս ե ր տ — պինդ, կարծր մարմին։

Ս և գ ո ր ծ ե լ ի — արճճի գաղտնանուններից մեկը։

Ս և ա լ ե ղ — տես արջասպ։

Ս է հ լ ի ա ր ջ ա ս պ — գրած է նաև շահիրայ։ Արջասպի տեսակներից մեկը։

Ս ի լ ի կ ո ն — նոթ, սուսր, կապարի փխրուն թթվուկն է։ Քիմ. կազմությունը՝ Pb_2O_4, լտ. և ֆր. minium, հն. μιλτος, ռս. Сурик։ Ամասիացին գրում է. «Ասրունճ՝ որ է ուսրունճն որ է սիլիկոն. լաւն այն է որ կարմիր կակուղ լինայ»։ Ձեռագրերի մեջ երբեմն շփոթած է մուրտասանկի հետ. օրինակ՝ § 177-ի մեջ գրած է. «Այլ իմն կերպ կրանալոյ որ է սիլիկոն և ի գլտնոցն մարթակ ասի», իսկ մ ա ր թ ա կ այլ տեղեր անվանվում է մուրտասանկն։

Ս ի մ ա պ — սնդիկի գաղտնանուններից մեկը։

Ս ի ն ա պ — մանանեխ. լտ. Sinapis, ռս. горчица։

Ս ի պ ի ք ա յ — տես սպիքայ։

Ս ի ս ե ռ — սիսեռն բույս։

Ս ի ւ լ ե յ մ ա ն ի — տես ղառիկ։

Ս լ ա ղ ո ւ ն — պետք է լինի պաղուն՝ «Եւ անուն սրնճին—սլաղուն»։ (Պաղուն) (§ 208-ից հետո) սրինճ-ը ասրունճն է, որ կոչված է նաև պաղուն։

Ս ղ կ ե լ — Գրած է սղկատել, սխկատել և սաղկ անել. մանրացնել, ծեծել։ Բառս ունի «Բառ ու բան» նույն իմաստով։ «Սղկէ զինքն խիստ, որ լինի որպէս փոշի» § 11։

Ս ն դ ի կ — լտ. Hydrargyrum, Argentum vivum և Mercyrius, ֆր. Mercure

[1] Գրած է Լուսնթագի գաղափարանիշով։

և vit argent[1]. հեղուկ մետաղ։ Ալքիմիայի մեջ ունի բազմաթիվ ծածկանուններ։ Մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում հանդիպում են հետևյալ ծածկանունները՝ Թռչուն, փախչող, ամփոփեալ, կայծակ, ամբջուր մանր, քաղցրահոգի, մարմին գեճ, ջուր կենդանի, կաթն կուսից, չորեքշաբթի[2], կենդանի արծաթ, կենդանի, «ապիկլի կոչի կապեալ սնդիկն ի շատ տեղ» (բռ.), «Ղապրիլի՝ որ է սնդիկ», «սիմապ որ է սնդիկ», «օտարիտ[3], որ է սնդիկն»։ Բժ. a 188 բ. ունի. « Հայ.՝ սնդիկ, արաբ.՝ զեպախ, պրս.՝ սիմապ։ Ինքն ի քանէ հանէն որպէս քրտինք։ Աղէկն ի փռանգաց գայ»։ Ամասիացին 777-ում գրում է հետևյալը.—Զէպախ, որ է սնդիկն, որ է ժիվան. ինքն ճուհար մըն է որ ի արծաթին ի քանն լինի...։ Ասէ պտին թէ ինքս շատ անուանք ունի. սիմաբ, ալյաեան, ալղապիտ, ալղամզան, ալհայը, ալմայ՝ ալսահապ, ալնուր, ալզավատուղ, ալ ըռաւհանի, յայն, ալ հայըվան, ալլին, ալհալ, ալտաւհհ, ալապախ, ալփարար, ալըռուհ, ալբուհ, ալնապիտ, ալտայեարին, այս ամէնն աքսիր շինողներուն բառն է, և ի շիրազ ժիվա կասեն»։ «Եւ սնդիկին՝ օտարիտ, և ծառայ և ղապիրլի և այլք յաճախք» (խրատ 15)։ «Առ բաժին մի արտաշ՝ որ է ղապիրլի» (§ 118)։

«Զգէ յայտ կապածէտ Ա ի վերայ Ռ-ի նա կապի զուրս և. առ այն զուրս սնդիկէն Ա ձգէ ի վերայ Ռ մարմնոյ». (§ 169)։ Սնդիկը մեծ չափով գործածվել է կեղծ արծաթ պատրաստելու համար։ Ըրաճ և բահճին եա է կոչվել սնդիկը. տես ը ր ա ճ։

Ս ո վ ր — տե՛ս սեհլի արջասպ։

Ս ո ւ լ փ ո ւ ր — տե՛ս ծծումբ. լտ. Sulfur—ծծումբ։

Ս ո ւ մ ա խ — տե՛ս աղտոր։

Ս ո ւ ս ա ն — շուշան ծաղիկ. լտ. Lilium, ֆր. Lys, հն. λειριον—սպիտակ սուսանը. ֆր. Lys blanc կամ Lys commun—սպիտակ շուշանն է, որը և գործ է ածվել Թապաշիր շինելու համար։ «Սպիտակ այլ այս երկրին բուսածու է որ է սուսան սպիտակ» (§ 146)։

Ս ո ւ ր ջ ո ւ ր — թթվուտ կամ թթվուկ։ «Եւ հարկ է այսոց լինել սուր ջրերով՝ որպէս են բորակի ջուր կամ նշատրի ջուր» (Դ. Զ-իր 15 բ)։

Ս ո ւ ր պ — արճճի գաղտնանուններից մեկը։

Ս ո ւ ք ց ո ւ — շինովի, արհեստականորեն պատրաստած։ Բառս ունի ԳԻՌ սուքուկ ձևով։

Ս պ ա ն դ — լտ. Peganum harmala և կամ ֆր. Moly, հն. μωλυ. բանջարեղենի մի տեսակ։

Ալիշանը համարում է լտ. Peganum և ֆր. Pégan, բայց Ն. Բյուզան-

---

[1] Լտ. Vivum Argentnm և ֆր. Vit argent կոչվում է այն պատճառով, որ սնդիկից էին պատրաստում կեղծ արծաթ և կարծում էին, թե սնդիկն արծաթի ջրացյալ վիճակն է։

[2] Փայլածուի օրն է, որի պատճառով լտ. և ֆր. լեզուներում սնդիկը կոչվում է այդ մոլորակի անունով։

[3] Փայլածուի արաբ. անունն է։

դալին, հիմնվելով Ամասիացու հետևյալ վկայության վրա, կարծում է, որ լտ. Moly բույսն է. «այն ցեղն, որ կարմիր է՝ հարմալի արալի ասեն, և հոտոմն մուլի» (ֆր. Moly, ժողովրդական ail d'or, որ սխտորի մի տեսակն է)։

Սպանող մարմնոց — արճճի գաղտնանուններից մեկը։

Սպիտակ գետին — անագի գաղտնանուններից մեկը։

Սպիտակ թափիթ — բորակի գաղտնանուններից մեկը։

Սպիտակ ծաղիկ — անագի գաղտնանուններից մեկը։

Սպիտակ մոմեղեն — արծաթի գաղտնանուններից մեկը։

Սպիտակ քարտես — արծաթի գաղտնանուններից մեկը։

Սպիտակացուցանել — փոշիացնել, կրացնել։ «Սպիտակացուցանելոյն մարմներոյն այրելն է յոյժ բարկ հրով, խառնեալ աղիւն, զի զատեսցի ի նոցանէ ապականող քգուրդն և մնասցէ մաքուրն իբրև զկիր։ Զարեգակն և զլուսին ոչ է հարկ կրացուցանել, քան թէ վասն հանգստութեան և պատրաստելոյ իւրեանց մասներոյն. և վասն զի չորասցին իւրեանց զխճութիւն և առ ի հալելն այլ կազմեցլին» (§ 286)։

Սպիտաճ — լտ. Cerussa. Գրած է նաև ըսփիտաճ, ասփիտաճ և սփիտաճ։ $(PbCO_3)_2 Pb(OH)_2$։ Կապարի շպարն է, ֆր. Ceruse, ռս. свинцовые белила։ Պատրաստելու մասին տե՛ս § 105 («սպիտաճ շինել») հիշատակված է նաև 17-րդ և 22-րդ խրատների մեջ իբրև ալքիմիայի մեջ գործածվող կարևոր նյութերից մեկը։

Նյութս ծանոթ է Ամասիացուն «պարուխ» և «սպիտաճ» անուններով (№ 2638). № 354-ում գրում է՝ «ասփիտաճ՝ որ է քշանն (քըշանն) և ի կլայեկէ և ի կրէ այլ լինի, և լաւն այն է, որ սպիտակ լինի և կակուղ»։

Սպիքայ — թրք. sabika — ոսկու ձույլ, ձուլվածք։

Սպրընճան — տե՛ս աղ։

Սրիկոն — սիլիկոն (Բառք Գաղ. ՊԹ № 700) — կարմրադեղ։

Սրինճ — տե՛ս սարանջ և պղուն։

Սրմայ — ոսկեթել կամ արծաթաթել. ֆր. fil d'or։

Սոմմաք — տե՛ս աղտոր։

Սովր — տե՛ս սեհլի արջասպ։

Սֆել — (թրք. ṣáf — մաքուր, պարզ). քամել, պարզել։ Նույնանիշ է ղաթրել և թաղտիր անել բառերին։

Սֆիտաճ — տե՛ս սպիտաճ։

Սփուտ — նյութ, որը պատրաստում էին գարի ալյուրը քացախով թթվեցնելով։ Շինելու մասին § 155։

Սփռել — բանալ (հեղուկի մեջ մի նյութ բանալ), լուծել։ Հայերեն ս փռե բառից է վերցրած։ Բառգ. Երեմիայ — «սփռել ճապաղել, կամ տարածել կամ ցնորել»։

Վաղմէն — առավոտվանից։ «Ի վաղմէն մինչև յերեկոյն» (241)։

Վայրի խնձորին ջուրը — ֆր. suc de pomme sovage. գործ է ածվել իբրև թթու։

Վանայ բորակ — Վանա լճի ջրից ստացված աղը, որը համարվում էր ծովային աղերից ամենաընտիրը: «Եւ ծովայինքն այսինքն ջրայինքն յաջախք են, այլ լաւն հայոց ծովինն է, որ է Վանայ բորակն»: Կոչվում է նաև հայբորակ:

Վարաղ — տերև բույսերի, կամ այլ նյութերի թերթ:

Վարդապետական մուրաղ — կավ իմաստասիրաց, որով ծեփում էին ամանները: «Ծեփելով գծերպուն վարդապետական մուրաղաւ» (248):

Վերացնել — տես պարզել: «Վերացումն այսինքն է պարզելն» (Զ-իր Դ, 54բ):

Վերացուցարան — տես պարզիչ:

Վերացուցիչ — տես պարզիչ:

Վերուս ուստուս — մի անծանոթ փոշու անուն: «Առ մի յայլ փոշոյ, որ ի լատին վերուս ուստուս կոչի» (272):

Վրպապլմաինայ — հավի ձու:

Տալղ — գրած է նաև տալղուն, լտ. Talcum կամ Lapis specularis, ֆր. Talc, Mica, ռս. Тальк.

ՆՀԲ անվանում է արհեստական պղինձ: Գետնի աստղ, «ծղնայ» քարքապ կամ քովկապ ես է անվանված: Տալղը թափանցիկ, շերտավոր թերթերից բաղկացած այն հանքային նյութն է, որը կազմված է գայլախազից և մագնեսից: № 16 խրատի մեջ ասված է՝ «Տալխ որ քովքար ասի»: Ամասիացին տալխ բառի համար գրում է. «որ ի սեաստ՝ ծղնայ կասեն, որ է գետնի աստղն որ է քավքապ ըլ յարդն», մեր № 21 խրատը ունի՝ «և անուն տալխին՝ քովկապ և տալխի աղին՝ քովկապ ըլ մայ»:

Տահապի — դեղին գույն: №№ 17 և 22 խրատների մեջ հիշվում է իբրև մարդամիթայի յոթ գույներից մեկը: № 22 խրատի մեջ ավելացնում է՝ «Իմացիր որ զտահապին դեղին և դեղեցիկ գոյն է, և թէ մահանքով փորձեցիր նայ՝ ոսկեգոյն է, և թէ հալեցիր, սիպիքայ արիր զալէքարի ազով նայ եղև սիպիքայ կարմիր, բայց չոր: Եւ թէ ոսկեցիր զինքն նայ՝ կու ոսկվի և կու մտնէ ոսկու դանըրն և կայ ինքն զարմանալի գործ»:

Տահի — կնճիթի հյութ: Նույնն է տոհնի:

Տահնաճ — զահանակ, մալախիտ. հն. Πρασῖνος, ֆր. Malachite, ռս. Малахит. հիշվում է №№ 17 և 22 խրատների մեջ իբրև ոսկու դանըը մտնող քար: № 16 խրատի մեջ ասվում է. «Տահնաճ՝ որ և հաճար ըլ նախաս ասի»: Ամասիացին տահնաճի մասին գրում է. «Տահնաճ՝ որ է տահնայ ի փառնկին, որ է հաճար ըլ տահաճն. և ինքն Բ ցեղ է, Ա՝ փառնգի և Ա քիրմանի, և լաւն այն է որ ի փառնգի լինայ. և համն քաղցր լինայ»:

Տամսել — այսպես է կոչվում մաքրելու, սայաելու, թասղիտ և թաշմիշ անելու համար կրակով կամ աղքով տաքացնելու գործողությունը: Բայական ձևը քիչ է հանդիպում, ավելի սովորական է «ի տամս դնել»:

Տաշտ — այն ամանը, որի մեջ զետեղվում էր աղքի մեջ դրվող նյութը: Տե՛ս աղքով արձակել:

Տարաճան — աստիճան, կարգ, կերպ, ձև։ «Դուռն լուսնի, որ է յառաջին տարաճանին» (48) — նշանակում է. լուսնի դառն առաջին կերպը.— արծաթ ստանալու առաջին կերպը, ձևը, կարգը։

Տարպայ — անգամ։ «Ե տարպայ» — հինգ անգամ։

Տամիշայ — գրչի սխալ, պետք է լինի քափշայ։

Տզրկել — կամ տզրկով ջուր քաշել — ջուր ծծեցնել, քամել։

Տին էրմանի — տե՛ս հայկաւ։

Տինքար — գրած է նաև Թնքար, տինկար՝ տինկքար. համարվում է բորակի մի տեսակը։ «Տինքար է բորակ օծնոտ» (Ձ-իր Դ., 47բ)։ Պատրաստելու մասին նույն էջում գրված է՝ «և գործ տինքարի։ Առ աղ որ սալարգարի կոչի սպիտակ մաս մի և սպիտակ բուրակ գամեալ մասն Գ և ած ի վերայ նոցա կաթն գոմշոյ և յոյժ լաւ ծածկէ և թող որ եփի մինչև կալվի, և արայ բաղարջ և դիր յարեգակն գի չորասցի և պահէ ի փոշոյ»։

Տլսմաթ — գաղտնիք, հնարք, կախարդանք։

Տորդի — տե՛ս տուրտի։

Տորուն — տե՛ս Փուվայ։

Տուէնէք — 13 քարերից մեկը լատիներեն հորջորջմամբ։ Այս քարի նկարագրությունը գտնում ենք Ձ-իր Դ., 46ա էջում՝ հետևյալ կերպ՝ «Տուենէք է քար կանանչ և է թիւնաւոր, գի որ ի գործ ածեն ոսկերիչքն ի մասնիս իւրեանց և զտանին նոր և հին, նորսն գան յեգիպտոսէ և յայլ Ուրմենիայ և ի Կարսուրանի, և այսոնց ամենեցուն լաւագոյն է հինն»։ Նույն յերեսի տակին գրված է բնագրի մեջ՝ «Տուէնէք՝ երկնագոյն, կապոյտ և լազվարդ գոյն. գրած է նաև տուէնէթ»։

Տուղտ — լտ. Althaea, ֆր. Guimauve, ռս. Алтея, մոլոշի (Malva) ցեղին պատկանող բույս։

Ձեռագրերի մեջ բույսս անվանված է նաև խաթմի (պրս. անունով)։ Բռ. ունի, «հյ. տուղտ, պրս. խաթմի», № °1 խրատն ունի «և Գ բաժին հարդի մանրուք և խթմու տերև»։

Տուրտի — նստվածք, տիղմ։ «Մինչ որ ջուրն կորի, հան զտուրտին, լաւ ողկէ, լից ի էն ջուրն և դիր ի դէճ տեղ Բ Գ օր, այլւի քաշէ, այլւի զտուրտինն հան, ողկէ» (§ 46) Ամասիացին պարզ կերպով բացատրում է տուրտիի նշանակությունը. նա գրում է. «տուրտի որ է մուրտն, որ ի յատակն կու իջնու ամէն իրաց» (3490)։

Տօհն — յուղ, ճեթ։

Րահճ — նյութ, որը պատրաստվել է զռնեխի, սնդիկի, կրի, ծովի փրփուր կոչվող քարի, աղի, թանաքարի և սապրի ջրի խառնուրդից։ Պատրաստելու մասին տես § 136։

Փանզահար — թանգարժեք քար. ֆր. Bézoard, ռս. безоар.

Փլորել — փարրել, փլրել, Ախց. փլխորել, Տիգրանակերտ՝ փլհորել։ «Եւ չլինի թէ մատ հասնի ի յինքն առ ժամայն փլորի»։ (§ 104)։

Փխսուս — տե՛ս ժանկեառ։

Փութակ — գրած է նաև բութակ. կրակի վրա դրվող կավե ամանի մի տեսակ։ «Լից ի փութակն և կաւով բերան ծեփէ, դիր ի կրակն, այնչափ փչէ, որ թվլի թէ հող հալով» (§ 65)։ Տե՛ս պօթ պարպատ։

Փուռ — 1. հացի փուռ։ 2. կավե աման, որի վրա էր դրվում պարգինչը և տակին կրակ արվում։ Նրա կազմության մասին Դ ձեռագրի 23բ երեսում գրված է. «Եւ հարկ է ունալ երրորդ աման, որ է փուռն և շինի ի կաւէ բրտի և ձև փռան, բայց ըստ չափուն բարձրագոյն լիցի քան զփուռն և կատարքն լիցի ծակ մի վերոյիշեալ ամանիս և պարզարանիս չափովն, և հարկ է զի կափս այս որով զփուռս շինես մնուցած լիցի յոյժ և. յորժամ շինես զփուռն թրծէ յոյժ, զի լիցի թրծեալ այնչափ որպէս կճիճ ոսկերչի, որով զարծաթն հալէ, զի դիմացի հրոյ»։

Քահլայ — տե՛ս կալէքար։

Քահլի — անծանոթ անուն, որ պետք է մի գույն նշանակի, որովհետև բառս հիշատակված է 23-րդ խրատի մեջ մղնեսիայի 7 գույների անունները թվելիս.—«Եւ փոշէգոյն, և քահլի, և կարմիր»։

Քահրիբար — սաթ, peuplier noir. բույսի խեժից պատրաստած ակն։ «Բուսոց քարն կամ մարջան, քահրիբար, արծւաքարն» (36-րդ խրատ)։

Քան — հանք։ «Ի քանէ ելանէ» — հանքային։

Քավալ — տե՛ս քուռխաթի ջուր։

Քարավս — մի տեսակ բույս։ Լտ. Apium, հն. σελινον, ռս. сельдерея, թրք. քերեվիզ։ Ձեռագրերի մեջ հիշված է 4 տեսակ. «ածուոյ, վայրի, ջրի և հոամցի»։ Ջրայինը կոչվում է՝ ֆր. Berle (Ache d'eau), ընտանին՝ ածուոյ ֆր. Cerfeuil (լտ. scaudix)։ Բույսս ծանոթ է նաև Ամասիացուն՝ նույն, անունով։

Քարմարտասնկի — քարմարցանկ. կոչվել է նաև մարթաճ, մուրտասանկ և սիլեկոն։

Քարպառայ — անծանոթ նյութի անուն։

Քարտէսսպիտակ — արծաթի գաղտնանուններից մեկը։

Քացախ — գինու քացախ։ Գազան քացախ կոչվել է արքայաջուրը և երբեմն էլ քացախ գործ է ածվել թթու իմաստով, կա քացխել — թթուանալ։

Քափշայ մի տեսակ ամանի անուն։

Քաֆուր — հն. Καφουρα, լտ. Camphora, ռս. Камфора.

Քերէճ — տե՛ս կիր։

Քըլք — գրված է նաև քլխն. նստվածք կամ երեսի սերը։

Քթանքթէթն — ֆր. Ficella, կանեփի կամ կտավի պարկուճ։

Քթիրայ — գազ, տարբայ, լտ. geran (բառք Գազ., Գ. Թ. Ջ-իր № 701)։

Քիմիա — էլեքսիր, իքսիր, փիլիսոփայական քար։ «Փոշոճն որ իքսիր կոչի այսինքն է քիմիա»։ «Քիմիան դեղ է, որ բազում ընչից ժողովի և գոյանայ» (Դ. Ջ-իր, 2բ)։

Քիրէճ — տե՛ս կիր։

Քմհան — հիշվում է №№ 17 և 22 բացատրությունների մեջ իբրև հոգի չու-

նեցող 7 քարերից վերջինը, որը մտնում է ոսկու դանգը։ «Բ. Զ-րի համապատասխան տեղում գրված է «Է երրորդ մէջան է» (Բ., § 2)։

Ք ո ս — քոս հիվանդություն։

Ք ո վ ք ա ր — տե՛ս տալք։

Ք ո վ ք ա ր ը լ մ ա յ — տալքի աղ։

Ք ո ւ լ ի ն ա ր ի փ ո շ ի — երևի խոհանոցի փոշի (լտ. Culinaris — խոհանոց), մոխիր։

Ք ո ւ ռ խ ա թ ի ջ ո ւ ր — գրված նաև քուռաթի — պրաս, լտ. Allium porrum, հն. Πρασον, ֆր. Poireau, ռս. лук-порей: Ամասիացին գրում է՝ «ըլխոր՝ որ ինքն ի քուռխաթին ցեղերուն և յայտնի է և յիշած է»։ Եւ «Քավալ՝ որ է քուռաթն»։

Ք ո ւ ռ ն ի թ ի ջ ո ւ ր — ձկնկթի ջուր։

Ք ո ւ ր ք ո ւ դ — տե՛ս ծծումբ։

Ք պ ր ի թ — տե՛ս ծծումբ։

Ք ռ ի կ ա ն — բառս ծանոթ է «Հայ բուսակին» քռիկ. քռեկան և քուռիկան ձևերով՝ «Յիշէ հին բժշկարան գուգանիշ՝ Շախրունի։ Տե՛ս ժախ և իշկաթնուկ»։ (Հյ. ժախ, ժախուկ, լտ. Apios)։

Ք ա վ ա զ լ ե ր ա ն — անծանոթ բույս. «Է խոտ մի որ ասեն իւրն լերան քավազ և բուսանի ի լերինքն և տերևն նման է ալֆլի և ինքն կարմիր է և տերևի վրա մանրկլիկ փշկներ կայ և կեյանէ իւրմէ ջուր դեղին, սպիտակ և սև» (202)։

Ք ր է զ — տե՛ս ծարուր։

Ք ր շ ա ն — տե՛ս սպիտան։

Ք օ մ ո ւ ր — ածուխ։

Օ թ ե ա յ — փուռ։ «Եւ դիր յօթեան և կամ ի փուռն որ կղմին[դր] թրծի» (273)։

Օ կ ա ծ — հարդարած, կոկած, հղկած։ «Դիր ի յօկած պուտուկ մի»։ (104)։ Բառս ունի Գ.Ի.Ռ. օկել - կոկել, Մշի բարբառով շոկել — հարդարել իմաստով։

Օ շ ն ա յ — կաղնի ծառի և այլ բույսերի կեղևի վրայի քոսն է։ Ֆր. Brion և Lichen mousse, ռս. лишай, քոս, քարաքոս։ Ամասիացին գրում է. «Կաղնուն ծառին բուրդն է»։

Օ տ ա ր ի տ — սնդկի գաղտնանուններից մեկը։

Օ ր ա ն ա լ — հալվել։ «Այսինքն օրանան և լկանան ի հուրն և կան որ ոչ հալին և ոչ լքանան»։ (Դ Զ-իր, 12բ)։

Ֆ ա թ ռ ի ո ն — մի քանի աղերի միացումով պատրաստվող նյութ։ Շինելու մասին § 151։ («Ֆաթռիոն շինել»)։ Հույն նաթռիոն է՝ ն և ֆ շփոթությունից առաջացած։

Ֆ ա շ խ ա յ — անծանոթ բույս։ «Է խոտ մի, որ ասեն իւր ֆաշխայ, որ նման է բողկի տերև ունի ջուր կարմիր որպէս գարիւն և բուսանի ի լերինս» (189)։

Ֆ ա ր ֆ ի ո ն — տե՛ս կալէքար։

Ֆլօրի — փոքր կշռաչափ։ «Ա՛ռ զօտարիտն Դ փլօրու կշռանօք և փլօրի կրայ-ցուցեալ և ած ա՛նդ Ա փլօրու կշռանով կրայցուցեալ արճիճ և մի փլօրու չափ խամ ծըծում»։ (262)։

Ֆշկի — տե՛ս կղի։

Ֆուվայ — լտ. Minium, սուսր, նօթ, կարմրադեղ։

Ֆուտի — գրած է նաև փոխ-սպիտակ գույն։ № № 17 և 22 խրատների մեջ հիշվում է իբրև մարգաժլիթայի յոթ գույներից մեկը։ № 22-ի մեջ ավելացրած է։ «Եւ սանն զմարգաժլիթայն փտին՝ սպիտակ է և կու մտանէ արծաթի զանէրն»։

Ֆրանգի հող — սև արջասպն է կոչվում։ «Եւ Առի զթանակ սեաւ, որ է ֆրանգի հող» (Զ-իր Դ., 27բ)։

Ֆրանգի սապոն — ֆր. Savon dur. մի տեսակ կարծր օճառ։

Ֆրպիոն — Արաբրի, ափարրի (Euphorbia orientalls), «որ է փարփիոնն, որ է փարպիոնն, որ է ափարպիոնն և ֆր. փարֆիում ասէ» (Ամասիացի, 9)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալ. ՀԲ — Ալիշան Ղ. վ., — «Հայ բուսակ — հայկական բուսաբանութիւն»: Վենետիկ:

Ամասիացի. (Ամիրտովլաթ, Անգ. Անպ.), — Ամիրտովլաթի Ամասիացւոյ Անգիտաց Անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց: Ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբք Կ. Հ. Բասմաջեան, Վիեննա, 1927 թ.:

Արաբ. — արաբերեն:

Արմտ — Հրաչյա Աճառյան — Արմատական բառարան:

Բ., — տես Բ. Ձ-իր:

Բառք. Գաղ, — «Բառք Գաղիանոսի բժշկապետին» ըստ Երևանի նախկին պետական Կուլտուր-Պատմական Թանգարանի № 701 ձեռագրի: Օրինակված 1675 թվին:

Բաց. — տես խրատ:

Բժ. — Բժշկարան:

Բռ. 701. — տես բառք Գաղ.:

Բռ. — «Բառք պիտանիք արհեստիս լաւ», որը գտնվում է Երևանի նախկին Պետական Կուլտուր-Պատմական Թանգարանի № 753 ձեռագրի 155—159 էջերում:

Գերմ. — գերմաներեն:

Գրբ. — գրաբար:

ԳԻՌ — Հրաչյա Աճառյանի — Հայերեն գավառական բառարան, Էմինյան ազգագրական ժողովածու, հատոր Թ., Թիֆլիս, 1913 թ.:

Երեմիայի բառք. — Բառգիրք հայոց. «արարեալ ի սուրբ էջմիածին՝ Երեմիայ վարդապետէ, և ես Սարգիս եպիսկոպոս աշխատասիրեալ և զբառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ. որ և ընթերցողացն աստուածաշունչ գրոց բաւական է լինել: Տպագրեցաւ ի յԱլիկոռնայ քաղաքի, և թուականութեանս հայոց ՌՃԽԷ և ի թուին փրկչին 1698»: Բ. տպագրություն՝ ՌՃՀԷ թվին:

Թուրք, Թրք. — թուրքերեն:

Ռս. — ռուսերեն:

ՎՄ Ձ-իր — Վիեննայի Մխիթարյանց մատենադարանի ձեռագիր ըստ Վ. Տաշյանի ցուցակի:

Պատ. խմբագիր՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Լեզվ. խմբագիր՝ Ռ. ՏՈՆՅԱՆ
Պատ. սրբագրիչ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ

Հանձնված է արտադրության 26/XI 1940 թ.
Ստորագրված է տպագրելու 29/XII 1940 թ.
Պատվեր № 269, տիրաժ 700, հրատ. № 87
Վ.Ֆ 4051. Գինը 12 ռուբլի

ԱրմՖԱՆ-ի հրատարակչության տպարան, Լենինի փող. 67

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0023457

ЦЕНА